



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:



- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**GRAD  
EREN  
873  
BUHR**

**B 1,206,713**



1. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
2. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
3. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
4. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
5. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
6. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
7. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
8. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
9. *Leucosia* *leucostoma* *leucostoma*  
10. *Leucosia* *leucostoma* *leucostoma*



# ԶԵՐՆԱՐԿԻ

## ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

Ա. ՏԱՐԻ

ԽՍՀ ԱՐՑԱԽ ՇԱՀԱԳԱՐԱԳՈՎՈՐԱԿԱՆ Ը. ԽՀԳԱՋԱՐԻ

Դարչուակի հակամատ խառը ու զբաց սաների հետ՝ աղջիկ-  
մարք եւ Ցէրումակամ զլատար տօների հնտ պատր-  
դուած:

Մայիսի 25 — Յունակի ու Կարսի ամեր համար

ԱՐՄԵՆ ԱԽԱՐ-ԲԱՀ. ԲԱԿԻՉԱՂԻՆԻ



ԹԻՎԻ 1, 19  
ԽՈՎԱՆԻ Ա. Պ. ԽՈՎԱՆԻ  
1906

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Одобрено Кавказскимъ Учебнымъ Комитетомъ, 12 Сентября 1903 г. № 13,827.

Dagrationi Arsen  
Դարտիութեան կողմէն պահպան

Dzernakar kronakan təmən նույն տվյալները  
gittelik nərim. 5/8=905.

## ԶԵՐՆԱՐԿ

### ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ


Ա. ՏԱՐԻ

ԿԱՐ ԿՐՈՆԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՎԱԿԱՆ Ա. ԲԱԺԱՆՈՒՄՆ

Քաջոյակրթական խօսք ու զրոյց սաների հետ՝ աղօթք-  
ների եւ Տէրունական գլխաւոր տօների հետ զուգոր-  
դուած:

Մարիամնան—Յովնանեան օր. Դալրոցի սաների համար

ԱՐՄԵՆ ԱՀԱԳ. ՔԱՂՐԱՑՈՒՆԻ



ԹԻՖԼԻՍ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՈՒՅՈՒՆ  
1905

*Grad*

*FRENI*

*ETC*

*BUR*


Дозволено цензурою, Тифлисъ. 13 Апрѣля 1905 г.

ԱՐԴՅ  
ԸՆ  
773  
Խ. 11. 6.

Հայոց Բարձու հրամանի նորին Ս. Օծութեան Վե-  
հսկառ Հայրապետի ազգիս Տ. Տ. Մկրտչի, Դիւանս  
թուլատրէ տպագրութիւն Կասագրոյս որ ընդ անու-  
ամքս «Ձեռնարկ Կրօնական Գիտելիքների» վաւերա-  
ցուցանելով ստորագրութեամբ եւ դրոշմամբ կնքոյ Հայ-  
րապետական Դիւանի:

Ի 18 Սեպտեմբերի 1902 ամի ի Տվիսիս:

Դիւանապետ Կողին Վարդապետ



## Ա Զ Գ

Առաջին տարուայ այս Զեռնարկը պատրաստուած է կարդալգրել շգիտցող մանուկների համար, այդ պատճառով էլ նոր, այսինքն խօսակցական կամ դրուցատրական ձևով է մշակուած, որպէս զի մատչելի լինելով սաներին՝ լինի նաև հետաքրքրական. բայց անշուշտ ուսուցչի ղեկավարութեամբ։ Հետևաբար ուրեմն, այս Զեռնարկը սաների ձեռքը տալու չէ. ի բաց առեալ այն եղբայրներն ու քոյրերը կամ հայրերն ու մայրերը՝ որոնք դպրոցական սաներ են այժմ և կամ եղած են երբեմն. ուրիշ խօսքով—'ի բաց առեալ ուսման գործի բարեկամները, որոնք կարող են օգնել իրենց ծանօթ, ազգական կամ բարեկամ սաներին այս Զեռնարկով։

Այս և Բ. ու Գ. տարուայ Զեռնարկները, թէև յատկապէս Մարիամեան-Ցովսանեան օր. Դպրոցի համար ևն յարմարեցրած՝ սակայն աւելորդ չէր լինի փորձել սոցագործադրութիւնը և այն դպրոցներում, ուր իւրաքանչիւր դասարանում շաբաթական երեք դաս է նշանակուած Կրօնի. մանաւանդ այս՝ առաջին տարուայ Զեռնարկը. թէև առանց յիշեալ յարմարութեան ևս կարելիք է օգտուել սորանից։

Նախապատրաստական բաժանման համար պատրաստած սոյն Զեռնարկի մէջ օգտակար համարեցի դնել և ծրագիրը—իրեւ մի ամփոփ համառօտութիւն իրարյացորդաբար հետևող դասերի։

Ծրագիրը բաժանուած է Ա. Բ. և Գ. բաժինների Գ. բաժնում համախմբումն է դասաւանդելի իմաստների և աղօթքների, որոնք դրուած են գրաբառ և աշխարհաբառ միայն ուսուցչի նկատողութեան համար և ոչ

սովորցնելու, որովհետեւ այս բաժանման սաները աշխարհաբառը պիտի սովորեն միայն, զրաբառը կսովորեն հետևեալ դասարանում. այստեղ զրաբառ սերտոգութիւնը բարձր է նրանց ուժերից. ի բաց տաեալ Տէրունական աղօթքը, որը պիտի դասաւանդուի այս բաժանման մէջ և զրաբառ և աշխարհաբառ։

Այս Զեռնաբարկը դասերի է բաժանուած. պարապմունքների զրեթէ մի սեմեստրի—կիսամետկի հաշտվ 47 դասերի է մասնաբառուած, որոնցից վեցը ընդհանուր կրկնութիւնների է նուիրուած։

Վստահանում եմ անկեղծօրէն խռոտովանել—որ այս ձեւ դասախոսութիւնը փոքր սաների, մինչև իսկ մեծերի հետ ես՝ նոր չէ ինձ համար։ Դասաւանդման այս եղանակը, ընդհանուր առմամբ, իմ վազուցուայ ոիրած ու փայփայած ձեն է և սրաիս շատ մօտիկ. և չեմ էլ զգացնել այս ձեւ գասախոսութիւններիս մէջ. որովհետեւ, իրապէս, բարոյական արգիւնքներ եմ նկատել սաների մէջ։ Ստակային 1901—902 ուսումնական տարուայ պարապմանը Մ-Յ. գպրոցի նախադարսուական բաժանման սաների հետ ձիչա այս ձեռվ է եղած—ինչպէս հետեւ լը ցոյց կատայ. շատ քիչ բացառութեամբ. և այն՝ ըստ մեծի մասին սաների անունների նկատմամբ, որ մի քանիսը Հայացրել եմ և սաների հատ ու կաոր պատմուածները ամբողջացրել եմ այսուհետ։ Դասերի երկար ու ամփոփ նախադարսութիւններավ պատմելը՝ իմ զեկավարութեամբ է եղած. այն է. որ սաների կաոր կաոր պատմուածըները արգիւն ուզգուած են կայուած են և աղա միայն ամփոփ հանուած են այսուհետ։

Եշ ձեւ պարապմանը, ինչպէս ի փարձոյ տեսել եմ, մեծ իրած է սաների լիգան բանալու, միացը որեւ.

աւշտդրութիւնը գրաւելու՝ իրենց պատմել տալով, իրենց մտածել տալով, իրենց խօսել տալով և տռած հարցը իրենց գտնել տալով, ի հարկէ իմ զեկավարութեամբ։ մինչև իսկ նոր դասը, եթէ գտնում է դասարանում իմացող՝ թողնում եմ որ նա պատմէ, վերապահելով ինձ ամփոփելն ու ամբողջացնելը, որից յետոյ դարձեալ պատմում են։

Ես Զեռնարկը ծայրէ ի ծայր կարդացողներից շատերի համար անհաւատալի կթուի սաներից՝ մի քանիսների դատելու, մտածելու և պատմելու ձեր, եկանակը, լրջութիւնը և այն, որոնք յիշատակում են Զեռնարկիս մէջ։ սակայն դարձեալ կրկնում եմ—ուրիշ կերպ չէր կարելի տալ մի այսպիսի ուղղեցոյց։ անշուշտ մանկան պատասխաններն ու պատմուածքները կիսատ, կարճմ ի, կամ երկու խօսքով են լինում։ ուսուցչի մեծ գործը հինց այդտեղ է երկում—որ նա այդ հատուկտոք պատասխանները ամբողջացնէ և այնպէս պատմել տայ ստաներին։ ինչպէս և այս ուղղեցոյցիս մէջ է հանուած։ հետևաբար ձեռնհաս և ուշիմ սաների սահուն և յաջող պատմուածքները լինում են ուսուցչի, արդէն, ուղղելուց և մշակելուց յետոյ միայն, ինչպէս ասացի։

Զեռնարկիս մէջ սաների պատասխանի մէջ աշքի ընկնող Տաճկահայ բարբառի վերաբերմամբ պիտի ասեմ, որ թէս մեր կեանքի նկատմամբ դա սովորական մի դըրութիւն չէ, բայց իմ դպրոցական պաշտօնավարութեանը շրջանում եղակի չեն այդ դէպքերը, երբ առիթ եմ ունեցել սանիկներիս մէջ և Տաճկահայ մանուկներ ունենալ։ չէնց այդ պատճառով և ձեռնարկիս մէջ մտցրի այդ բարբառով պատասխաններ։ Եւ այդ կրկին նպատակով։ նախ՝ որ ձեռնարկս միայն դպրոցական շրջանի հա-

մաք չէ սահմանեւած, այլ և ընտանեկան, իսկ վերջին՝ ժամանակներս ծանկահայ ընտանիքներ բազմաթիւ են մեղանում. օրոնց համար և մի նոր դիւրութիւն կամեցանք ստեղծել. միւս կողմից երկու բարբառների համախմբումը մի նոր առիթ կլինի մեր սանիկներին փոքր հասակից իսկ վարժեցնելու մի բարբառի, որի քաղցրութիւնն ու դիւրալուր շեշտը մեզ համար ևս ցանկալի է. երկրորդ՝ կամեցայ շեշտել այն հանգամանքը, թէ որշափ Յաճկահայ մանուկները,—մանաւանդ Պօլսեցիները,—աւելի զարգացած ու հասունացած են, քան մեր մանուկները, որոնց պատասխաններն ու լեզուն աւելի մշակուած և աւելի սահուն լեզուի ու մտքի արտայայտութիւն է:

Ա. տարուայ համար վերցրած նիւթը ձեռնարկիս մէջ գուցէ. ոմանց համար, մի քիչ աւելի երկար երեայ: Կասեմ, որ սեպհական դասաւանդութեանս փորձերն այդ շեն հաստատել: Ամենայն դիւրութեամբ սանիկներս կարողացել են իւրացնել այդ ամբողջ նիւթը՝ եթէ կպատահեն ոմանք, որոնք կդժուարանան այդ շափով մատակարարել, ապա ուսուցչի և զեկավարողի հրմտութիւնից կախուած կլինի արդէն մշակուած: Նիւթը, հանգամանքներն ի նկատի ունենալով, փոքր ինչ նուազ չափով տալ, նայելով սանիկների մտաւոր կարողութեան և ծանօթութիւնների պաշարին ու լեզուի տիրապետութեան աստիճանին: Սյս տեսակէակից աւելորդ չի լինի, եթէ ուսուցիչը մի քանի, բուն նիւթին չվերաբերող, դասեր կարողանայ հմտութեամբ կրծատել և նախորդ դասերի վերայ յենուած, զեղեցիկ զուգորդութեամբ աւանդել կարողանայ տօների մասերը, յարմարաւոր առիթ ունենալով դպրոցական կեանքի մէջ պատահած տօները:

Արսէն աւ. քահ. Թազրաւունիւ

## ԾՐԱԳԻՐ

### ԴԱՍԸՆԹԱՑԻՐ

Ա. տարի կամ կրտսեր նախապատրուստականի Ա. բաժանումն»

### Ա. ԲԱԺԻՆ

Բարոլակրթական խօսակցութիւններ աղօթքների հետ  
զուգորդուած:

#### I. ՀԱՅՈՒՄԾ

ա. ծնողական տունը.

1. Ծնողներ—հայր և մայր:

Հայր և մայր—նոցա նշանակութիւնը տան մէջ-  
հազարութիւնը, խնամքը, աշխատանքը և սէրը:

Մեր տան հայրը կամ փոքր հայր. մեր երկնքիր  
հայրը կամ Մեծ Հայր: Երկուսի սիրոյ և խնամատարու-  
թեան նմանութիւնն ու դանազանութիւնը: Երկուսի կտ-  
րողութիւնը և խնամքի ու սիրոյ շատութիւնն ու սակա-  
ւութիւնը համեմատութեան առնել սաներին հասկանալի  
ու լմբոնելի բացատրութիւններով, և դուրս բերել Տէ-  
րունական աղօթքի առաջին մասը—Կոչումն կամ Յա-  
ռաջաբանը—«Հայր մեր. որ յերկնս ես». և Տասնաբա-  
նեայ Պատգամաց Ե-որդ յօդուածը—«Պատուիր քո հօրը  
և մօրը. որ քեզ բարի լինի, և երկար կեանք ունենաւ  
երկրի վրայ»:

2. ՈՐԴԻՔ—ԵՂԲԱԼՐՆԵՐ ու ՔՈՂԵՐ.

Եղբայրներ ու քոյրեր—նոցա նշանակութիւնը տան մէջ. պարտականութիւնը դէպի ծնողները. փոխադարձ պարտիք եղբայրների ու քոյրերի կամ որդւոց մէջ. նոցա աշխատանքն ու ջանասիրութիւնը: Վերոյիշեալ զրուցարական բացատրութիւններից գուրս բերել. «ի՞նչ լաւ է. ինչ զեղեցիկ է. երբ եղբայրները ապրում են միասին»: Սազմ. ՃԼԲ. 1: «Եղբօրից օգնութիւն ստացող եղբայրը նման է ամուռ կամ անառիկ քաղաքի. և հաստատուն թագաւորութիւնից՝ էլ հզօր է»: Առակ ԺԲ. 19: «Կրկնել Տասն Պատգամաց Ե-որդ. յօդուածը»:

II. ՀԵՏՈՒԱԾ.

Ա. ՄԵԾ ՀՕՐ ՏՈՄԸ ԿԱՄ ԵԿԵՂԵՑԻ:

1. Նշանակութիւնը և համեմատութիւնը ճնողական առն հետ:

ՄԵԾ ՀՕՐ ՏԱՆ ԿԱՄ ԵԿԵՂԵՑԻ Նշանակութիւնը. Նըմանութիւնը՝ ծնողական տանը. զանազանութիւնը՝ ծնոգական առնից—թէ արտաքին ձեռկերպութեան՝ և թէ գործողութիւնների նկատմամբ:

2. ԱՐԺԱՆԱԳԱՐԾ և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՐԻՆ ՊԱՀԱԾՆԷՆԸՆԹԻՆ.

Քահանայ. Սարկաւագ—Սարկաւագուհի. Գողիր—Գողուհի. Ժամկաշ. նոցա պարականութիւնը և ոպասաւորութիւնը Տաճարին:

3. Ժողովուրդ.

Նորա պարտականութիւնը:

Վերոյիշեալ բացատրական զրուցախօսութիւններից հետեացնել այս սաղմոսները—«Կմտնեմ Քո տունը. երկրպագութիւն կտամ Քս սուրբ Տաճարին. Քո երկիւզը արտիս»: Սաղմ. Ե. 8: «Ուրախանում էի ես, երբ ինձ ասում էին. զնանք Աստուծոյ ծունը»: Սաղմ. Ճի՛. 1: «Տէրունական աղօթքի երրորդ մասը կամ վերջաբանը. «Զի քո է աղքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեան. ամէն»:

Աղօթակատարութեան արտաքին ձեերը, ժամանակը, տեղը դիւրըմբոնելի ձեզ բացատրել և նոցա նշանակութեան մասին շատ համառօտ ծանօթութիւն աալ:

Փոքրիկ աղօթքներ—«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»: «Փա՛ռ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»: «Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից»: «Մուրք Աստուծ, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեղ»:

III. ՀԱՏՈՒԱԾ.

գ. Ուսման տունը—Ուսումնարան կամ դպրոց.

1. Ուսման նշանակութիւնը, կարեռութիւնը և օգուտը:

2. Դպրոցական հալրեր ու մալրեր կամ Ուսման Ծնողներ:

Հոգաբարձուներ. Տեսուչ. Դաստիարակներ. Դաստուներ կամ Ոսուցիչներ. Նոցա նշանակութիւնը, պարտականութիւնը և իննամատարութիւնը կրթական ու գլորոցի գործի նկատմամբ:

Ուսման ծնողների հոգատարութեան մասին բացատրութիւն տալուց յետոյ՝ հետևացնել այս իմաստը. «Եկէք, օրդիք. լսեցէք ինձ. և Աստուծոյ երկիւզը կսորվեցնեմ ձեզ»: սաղմ. ԼԳ. 12:

**3. Դպրոցական սաներ կամ Ուսման որդիք.**

Եշակերտներ կամ աշակերտուհիներ. նոցա պարտականութիւնը—աշխատասիրութեան, դառերին ուշադիրունկնդրութեան, դպրոցական սաներին վալել համեստութեան, իրենց մեծերին հնագանդութեան, ուսման ծնողներին պատշաճաւոր յարդանք ու մեծարանք տալու և իրար հետ ունենալիք ընկերական փոխադարձ յարարերութեան նկատմամբ,

**4. Ազօթք դասից առաջ.**

**5. Ազօթք դասից լեռու:**

Վերոյիշեալ բացատրութիւններից հետևացնել Դասից տուած և Դասից յետոյ տսուելիք աղօթքները:

**6. Դպրոցական կարդապահութիւն.**

Համառօտ հառկացողութիւն տալ սաներին դպրոցական կարգապահութեան մասին:

#### IV. ՀԱՑՈՒԱԾ:

Դ. Արհեստ. Աշխատանք և Պաշտօններ.

1. Արհեստ—նշանակութիւնը, տեսակները և նպատակը.

Հիւմնութիւն կամ Ատաղձագործութիւն. Երկաթագործութիւն. Դարբնութիւն. Ներկարարութիւն. Կաշեգործութիւն. Դերձակութիւն. Լուսանկարչութիւն. Գրաշարութիւն և Ժպագրութիւն. Հացագործութիւն. Կօշկակարութիւն. Վաճառականութիւն և այլն:

2. Աշխատանք կամ Մշակութիւն—վերոյիշեալ պարագաներով.

Երկրագործութիւն կամ Հողագործութիւն. Անասնապահութիւն կամ Խաշնարածութիւն, Այգեսպանութիւն. Անտառապահութիւն. Քարհատութիւն և Քարտաշութիւն. Զրկրութիւն. Բեռնակրութիւն. Դռնապանութիւն... և այլն:

3. Պաշտօններ—վերոյիշեալ պարագաներով.

Ուսուցչութիւն. Փաստաբանութիւն. Թժկութիւն. Գրադրութիւն. Հաշուապահութիւն. Քարտուղարութիւն. Դատաւորութիւն. Գրաքնչութիւն. Հոգևոր և Զինւորական Պաշտօնէութիւն:

Համառօտ տեսութիւն վերոյիշեալ երեք բաժին պարապմունքների մասին և հետևութիւն—որ սոքա միջոցներ են օրական ապրուստ ձեռք բերելու և պարապ շըմնալու՝ այլ գործելու և աշխատելու համար. և բացատրութիւնները այնպէս յարմարեցնել՝ որ դուրս գայ հետեւալ իմաստը. «Մեր ձեռքի գործքը ուղիղ արա, Տէր, մեր ձեռքի գործքը յաջողիր մեզ, ով Աստուած»: Սաղ. 20. 17:

V. ՀԱՏՈՒԱԾ

b. ԿԵՎԱՆՔ.

Պւտելիք և Խմելիք՝ Հագնելիք. Օդ, Լուս, Արև, Անձրև, Հող-

1. Պւտելիք և Խմելիք.

Դաշտեր. Այգիներ. Լեռներ. Անտառներ—Բուսականութիւն:

Կենդանիներ. Թռչուններ. Ջկներ. Ձուր—Ծովեր. Գետեր. Ազդիւրներ. Ջրհորներ. Ովասիսներ:

2. Հագնելիք.

Դաշտեր—Բուսականութիւն և Կենդանիներ:

3. Օդ. Լուս. Արև. Անձրև. Հող.

Օդ—շնչառութեան համար. Լոյս—տեսութեան. Արե—ջերմութեան. Անձրև—Պտղաբերութեան և Առատութեան բուսոց. Հող—մայր կենդանականութեան համար: Եւ բոլորը միասին—կեանքի դոյութեան համար:

Բոլոր վերոյիշեալների բացատրութիւնից հետեացնել—Տէրունական, Ճաշից առաջ ու Ճաշից յետոյ, Թագաւորի ու Հայրապետի համար ասելիք աղօթքները:

ա. Աղօթքներ:

1. Տէրունական. 2. Ճաշից առաջ. 3. Ճաշից յետոյ. 4. Թագաւորի. 5. Հայրապետի.

**Բ. ԲԱԺԻՆ.**

**Vl. ՀԱՑՈՒԾԸ**

**Զ. Տէրունական գլխաւոր Տօներ.**

ա. Մարիամ Սուրբ Կուտի ծնանգը. բ. Տաճարին Ընծայուիլը. գ. Ըւետումն. դ. Ծիռութի ծնանգը. ե. Քառասնօրեայ Քրիստոսի Գալուստն ի Տաճարն. զ. Մըլքրտութիւն Յիսուսի. է. Յիսուսի Երուսաղեմ մտնելը կամ Ծաղկազարգ. ը. Յարութիւն Յիսուսի. թ. Համբարձում Քրիստոսի. ժ. Հոգէզալուստ:

**Գ. ԲԱԺԻՆ**

**VII ՀԱՑՈՒԾԸ.**

**Է. Համախնքումն տուած աղօթքների եւ իմաստների.**

1. Ծնողների եւ որդւոց աղօթք—Պատուեա զհայր քո և զմայր. զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի:

Լաւ է ունկնդրութիւն՝ քան զզոհ ընտիր. և հնապանդութիւն՝ քան զճարպ խոյոց. Ա. թագ. ԺԵ. 22:

2. Եղբայրների եւ քոյրերի աղօթք—Զի՛ բարի կամ զի՛ վայելուչ՝ զի բնակին եղբարք 'ի միասին. Սաղմ. ԱԼԲ. 1. Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրև զքաղաք ամուր. և հոր է իբրև զհաստատեալ թագաւորութիւն: Առակ. ԺԲ. 19:

3 Տաճարի կամ Մեծ—Հօր Տան աղօթք—Մտից 'ի տուն քո. երկիրպազից 'ի տաճար սուրբ քո. երկիւ-

պիւ քով։ Սաղմ Ե. 8։ Ուրախ եղէ՝ ոյք ասէին ցիս. 'ի առուն ծեառն երթիցուք մեք։ Սաղմ, ձիԱ. 1։

4. *Փոքրիկ աղօթքներ—Յանուն չօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն։ Փառք չօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Սուրբ Աստուած, Սուրբ և չզօր, Սուրբ եւ Անմահ։ որ խաչեցար՝ վասն մեր. ողարմեա մեզ։ Ժամագիրք։*

5. *Ուաման տան կամ Դպրոցի աղօթք—Եկալք. որդիք։ և լուարնէք ինձ. և զերկիւղ ծեառն ուսուցից ձեղ։ Սաղմ. 1.9.—Ամենաբարի Աստուած. առաքեա առ մեզ զշնորհն Հոգւոյդ քո սրբոյ. զի պարգևեացէ մեզ զմիտս. և կազզուրենցէ զզօրութիւնս հոգւոց մերոց. որպէս զի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս՝ զարգացուք քեզ, ստեղծողիդ մերում, 'ի փառս, 'ի միխթարութիւն ծնողաց մերոց և յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց։—Գոհանամք զբէն, Սրարիշ. զի արժանի արարեր զմեզ շնորհաց քոց՝ ընդունելութեան ուսմանս։ Օրհնեա զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր. որք առաջնորդեն մեզ 'ի գիտութիւն բարութեան։ Եւ տուր մեզ զկարողութիւն 'ի շարունակութիւն ուսմանս այսորիկ։*

6. *Ապրուատի եւ գործի աղօթք—Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Զգործս ձեռաց մերոց ուղիդ արա 'ի մեզ Տէր. զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։ Սաղմ. 2.թ. 17։ Զվաստակս ձեռաց քոց կերիցես։ Սաղմ. ձիէ. 2։*

7. *Կեանքի զոյութեան եւ ծաշի աղօթքներ—Տէրունական՝ Հայր մեր, սր յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. Եկեսցէ արքայութիւն քո. Եղիցին կամք քո, որպէս յերկինս, և յերկիփ. Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. Եւ թող մեզ դպարտիս մեր՝ որպէս և*

Քնք թողոմք մերաց պարտապահաց. Եւ մի տանիր զմեզ  
՚ի փարձութիւն. Այլ փրկեա զմեզ ի շարէ: Զի քո է  
արքայութիւն և գորութիւն և փառք յաւիտեանս: Ամէն:

Ծաշի աղօթքներ՝ Եշք ամենեցուն ՚ի քեզ յուսան. և  
դու տառ կերակուք նոցա ՚ի ժամու: Բանաս զծեռն քո.  
լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք քովք:  
Սաղմ. ՃԽԹ. 15:—Տէր Յիսուս լցաք ի բալութեանց  
քոց: Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ, Հօր  
և Որդւոյ և Հսկույն Սրբոյ: Զլիսւթիւն սեղանոյս ան-  
հատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ  
զմեզ կերակրեաց և լիացոյց: Նմա փառք յաւիտեանս.  
Ամէն:

8. Թագաւորի աղօթք—Տէր, պահեա զԿայսրն մեր:  
Հզօր ինքնակալ. Թագաւորիա դու մեզ ի պարծանս: Թա-  
գաւորեա Կայսր յերկիւղ լըշնամեաց: Տէր, պահեա զԿայ-  
սրըն մեր:

9. Հայրապետի աղօթք—Ի Քո իշեալ տեղի,  
զԱթոռ Հայրապետի մեր հաստատեա: Զերկարու-  
թիւն կենաց Հօր մեր Աստուածազգեաց, Հնորհեա պե-  
տին մեր հարց, որ զմեզ հովուէ:

## Ա. Բ Ա Ժ Ի Ն

### I. ՀԱՑՈՒԵԾ

ա. Ծնողական տոնը.

Ի Ծնողներ—հալր և մակր.

Ա. Դ ա ս 1).

՚Ծնողական տան մէջ կենում են հայրիկը և մայրի-

<sup>1)</sup> Որովհետև ուսուցիչը նախառէս պիտի ծանօթանալ իւր

կը՝ չայրիկը դուրսն է աշխատում. իսկ մայրիկը՝ տանը՝ չայրիկը առաւօտից մինչև ճաշ կամ մինչև երեկոյ ձեզ կերակրելու, հագցնելու, և մեծացնելուց յետոյ էլ, ուսման տալու հոգսն է քաշում, աշխատում է, չարշարւում է և ճակատի քրտինքով փսդ է վատակում. իսկ մայրիկը՝ ձեզ համար կերակուր է պատրաստում, շորեր է կարում-կարկատնում-լուանում, տունն է սրբում-մաքրում և տնարարութեամբ է զբաղւում։ Հայրիկը մայրիկի համար էլ է աշխատում. մայրիկն էլ՝ հայրիկի համար։

Հայրիկի ու մայրիկի ցերեկուայ և գիշերուայ մտածութեան, սիրոյ, խնամքի, հոգսի առարկան՝ որդիքն են. դուք էք, երեխանք։

Ո՞քան են սիրում ձեզ հայրիկն ու մայրիկը. եթէ մէկը ձեզանից հիւնդանում է՝ ո՞քան են նեղանում, մտատանջուում, բժշկի ետելից ընկուում, ուխտատեղիներ վազում, եկեղեցիներն են շրջում, «Պահպանիշ» ասել տալի, Ըւետարան ու նարեկ են կարդալ տալի, աղօթք, մատաղ, մոմ. ո՞քան չարշարանք. իսկ տանը՝ անքուն գիշերներ են անցկացնում, ձեր անկողնից չեն հեռանում, ձեր գլխովն են պտտում. ոչ հալալ հաց են ուտում, ոչ հալալ ջուր են խմում. ամեն ինչ դառն է, ամեն ինչ հարամ է նրանց համար. ինչմւ. որովհետև դուք հիւանդ էք։

---

սաների հետ, ցուցակ պիտի կազմէ հալախօսների, վիրախօսների և առհասարակ՝ օտարախօսների, որպէս և աչքի ընկնող զարգացածների ու թուլերի՝ որպէս զի ըստ ալնմ ղեկավարէ իւր դասարանը՝ ուստի և ալդ ծանօթութիւնը պիտի կազէ Ա. դասի հետ. գուցէ և Բ. ու Գ. դասերի հետ. և ալդ պատճառով՝ Ա. դասը առհասարակ սաների հետ ծանօթանալու զրուցներից է կազմուած. հէնց ալդ առթիւ իսկ՝ ալք դասը կարճ է վերցրած. հետզհետէ դասի կազմը պիտի փոխել, ծաւալը ընդլայնել, շրջադիմը մեծացնել, չափը աւելացնել։

Ի՞նչ էք կարծում, նրանք սիրում են ձեզ, որ այս-  
քան շարշարանք են քաշում, նեղութիւն են կրում ձեզ  
համար:

Ի հարկէ սիրում են:

Սէրն է՝ որ դիւրացնում է, հեշտացնում է և քազց-  
րացնում է ծնօղներին իրենց կրած նեղութիւնները. և  
նոքա չեն յուսահատում, չեն յոգնում. սիրով և համբե-  
րութեամբ են տանում իրենց բոլոր նեղութիւնները. ին-  
չնւ. նրա համար՝ որ սիրում են ձեզ:

Իսկ դուք ինչ պիտի անէք. դուք էլ պիտի սիրէք  
նրանց. ի հարկէ, ի հարկէ. դուք պիտի սիրէք նրանց. իսկ  
ինչնվ պիտի ցոյց տաք ձեր սէրը. նրանով՝ որ հնազանդ  
պիտի լինիք ձեր հայրիկին ու մայրիկին. պիտի լսէք  
նրանց խօսքը. սիրով պիտի կատարէք նրանց պատուէ-  
րը, հրամանը, ոչ մի տեղ պիտի չգնաք և ոչ մի բան  
պիտի չանէք առանց նրանց հարցնելու. ինչնւ. որովհե-  
ան նրանք ձեր հայրիկն ու մայրիկն են. և ինչ որ անէք,  
խօսէք և պատահի ձեզ թէ դուրսը և թէ տանը՝ պիտի  
յայտնէք հայրիկին ու մայրիկին և հաշիւ տաք նրանց:

Հայրիկն ու մայրիկը միասին ինչպէս են կոչում.  
Նոքա ասւում են-ծնօղներ. որովհետև նրանք են ձեզ ծնել,  
մնուցել, մեծացրել:

Բ. Դաս 1).

Անցեալ դասին տեսանք, որ հայրիկն ու մալրիկը ձեզ  
վերայ շատ աշխատանք ունին. շատ են սիրում ձեզ:

<sup>1)</sup> Հարցնել սանիկներին—թէ ով կարող է կրկնել ան-  
ցեալ դասը. եթէ չկարողանան՝ ուսուցիչը պիտի զեկավարէ.  
Կրկնելուց լետով պիտի անցնել. Բ. դասին. կապելով նախըն-  
թաց դասը ներկալ դասիս հետ.

Այսօր մի բան էլ պիտի աւելացնենք. կուզէք սովորել:

— Ի հարկէ:

Ապա մի հարց պիտի տամ. տեսնեմ ով կարող է պատասխանել: Բացի ձեր տան հայրը՝ էլի ուրիշ հայր ունիք որին չէք տեսնում, բայց նորան ազօթում էք<sup>1)</sup>:

— Այս, ունինք, նա երկնքի հայրն է:

Այս. ճիշտ է. նա մեր ամենիս Հայրն է: Նա էլ սիրում է արդեօք ձեզ, ինչպէս ծնողական տան հայրը:

— Ի հարկէ սիրում է:

Ինչից գիտէք, ինչիցն է երևում:

Նրանից՝ որ նա տուել է մեզ ծնողներ. — հայրիկ ու մայրիկ. նրանք առողջ են. նրանք մեզ պահում են. խընամում են:

Հապա ասացէք ինձ — ո՞ր հայրն է ձեզ աւելի սիրում. և ձեզ վերայ ով շատ խնամք ու աշխատանք ունի. Երկնքի հայրը կամ Մեծ Հայրը՝ թէ տան հայրը կամ փոքր հայրը<sup>2)</sup>:

— Ի հարկէ Մեծ Հայրը:

Ինչիցն ենք իմանում. նրանից՝ որ նրա տուածը շատ է. նա տուել է մեզ երկինք — արեով, լուսնով, աստղերով, ամպերով. նա տուել և տալիս է մեզ լոյս, օդ, անձրև, ձիւն, ցօղ. նա տուել է մեզ երկիր —

<sup>1)</sup> Եթէ չկարողանան պատասխանել՝ ուսուցիչը պիտի զեկավարէ, բայց կիսով չափո որպէս զի սաները մասնակցած լինին:

<sup>2)</sup> Եթէ սաների միջից լաջողներն անգամ չկարողանան պատասխանել ուսուցչի հարցերին՝ այն ժամանակ ուսուցիչն ինքը օժանդակ և մօտիկ հարցերով պիտի առաջնորդէ սաներին որ գտնեն պատասխանը. հակառակ դէպքում ինքը պիտի պատասխանէ իւր հարցերին.

սարերով, ձորերով, անտառով, դաշտերով, այգիներով, արտերով, հովիտներով, ծառերով, ծաղիկներով, բոյսերով, խոտերով. Նա տուել է կենդանիներ, թռչուններ. Նա տուել է մեզ ջուր—ովկեանոսներով, ծովերով, լճերով, գետերով, առուներով. աղբիւրներով, նո տուել է մեզ ձկներ. Նա տուել է մեզ հոգի, միտք, խելք. Նա տուել է մեզ աշքեր, ականջներ, բերան, ձեռք, օտք և զգայարանք:

Այս բոլորը՝ Մեծ Հայրը տուել է մեզ մեր օգտի համար. նրանք բոլորն էլ մեզ օգուտ են տալիս <sup>1)</sup>: Մէկ խօսքով մեր կեանքը, մեր մահը նորա ձեռքին է <sup>2)</sup>:

Գ. Գաս <sup>3)</sup>.

Նախկին դասից մենք տեսանք—որ մեր Մեծ Հայրն է մեզ բոլորիս սլահում, պահպանում, խնամում, կերակրում, կեանք տալիս: 'Ի հարկէ, սրանից յետոյ, պարդ է և հասկանալի—որ Մեծ Հօր սէրր, աշխատանքը: Խընամքը շատ և շատ անգամ աւելի է քան մեր փոքր հօր սէրն ու խնամքը: Նա շատ խնամք ունի մեզ վերայ և շատ աշխատանք. ուրեմն և շատ էլ պէտք է սիրէ մեզ <sup>4)</sup>:

<sup>1)</sup> Որովհետեւ շատ կստուարանար ձեռնարկը՝ եթէ հանուէր ալստեղ Աստուծոյ տուած լիշեալ բարիքների օգտակարութիւնը, ուստի մնում է ուսուցչին՝ որ հարեանցի ծանօթութիւն տալ սաներին իւրաքանչիւրի օգտակարութեան մասին, շատ անգամ ստներից լաջողները կարողանում են ցուց տալ ալդ օգուտները, ինչպէս փորձը ցուց է տուել ինձ.

<sup>2)</sup> Ամփոփել. և կրկնել տալ դասը լառաջաղէմներին..

<sup>3)</sup> Միշտ նոր դաս խօսելուց առաջ պիտի կրկնուի նախընթացը. աշխատելով կապը պահել—նախկինը նորի հետ կապելով՝ գիտակցաքար ըմբռնելու և իւրացնելու նկատմամբ:

<sup>4)</sup> Ուսուցիչը ալստեղ մատչելի օրինակներ պիտի մէջ բե-

Ճատ լաւ. այդ ճիշտ է. բայց Մեծ Հայրը ամեն բան կարող է անել. իսկ փոքր հայրը ամեն բան անել չէ կարող. ինչքան կարողանում է՝ այնքան էլ անում է. ինչ էք կարծում. նա քիչ է սիրում ձեզ։

— Ո՞չ. քիչ չէ սիրում. շատ է սիրում. բայց էլի Մեծ Հայրը աւելի է սիրում. որովհետև շատ աշխատանք ունի մեզ վերայ և նա է տուել մեզ մեր փոքր հօրը, մեր մօրը։

Ո՞րտեղ է. այդ Մեծ Հայրը։

— Երկնքումն է։

Աւրեմն կարմղ ենք ասել. «Հայր մեր, որ յերկինս ես». ով մեր Մեծ Հայր, որ երկնքումն ես։

— Կարսղ ենք ասել։

Ինչու ենք ասում—երկնքումն ես. միթէ մեր Մեծ Հայրը երկնքումն է։

— Այս. երկնքումն է։

Եթէ երկնքումն է՝ հապա ինչպէս է կարողանում լսել ձեր աղօթքը. Ձեր ձայնը այս դասարանից մինչև միւս դասարանը հազիւ է գնում. իսկ մինչև երկինք ինչպէս պիտի հասնի. շատ անգամ էլ ցածր էք աղօթում. շատ անգամ էլ մտքումն էք աղօթում. ինչպէս է որ ձեր աղօթքը լսում է Մեծ Հայրը։

Դժուար է. չէք կարողանում պատասխանել. դէ՞ս ես կասեմ—ձեր փոքր հայրը տանն է այժմ. — ոչ. Աշխատանքի է գնացել. Այստեղ է. — ոչ. Դուք այժմ որ մի բան ասէք այստեղ՝ նա ձեզ կլսի. — ի հարկէ ոչ. Եթէ նա մի տեղ լինի՝ մի ուրիշ տեղ էլ կարմղ է լի-

---

ըէ սաների կեանքից, որ լաւ ըմբռնեն. օրինակ—սաների տետրերը ամբողջովին գրուած ե երկու երես գրուած. եթէ կորչին կամ ալրուին՝ որի համար աւելի կցաւին... և ինչն...»

Նել միննայն ժամին, միկնոյն րոպէին.—ոչ. ոչ Խսկ  
Մեծ Հայրը: - Նա կարող է: Խնչից գիտէք,

— Նրանից՝ որ երբ մեզանից մէկը հիւանդանում է,  
մայրիկը կամ հայրիկը աղօթում են տանը կամ Եկեղե-  
ցումը և նա լսում է նոցա աղօթքը ու առողջութիւն է  
տալիս հիւանդին:

Հատ լաւ. ուրեմն նա այստեղ մեր դասարանումը  
կայ. — կայ. միւս դասարանումն էլ կայ. — կայ. հէնց  
այժմս, էս բնապէին: — Այս: Լաւ: Խսկ ճանապարհին՝  
Կայ: Ճանապարհորդների աղօթքը լսում է: — Լսում է:  
Ծովի վերայ էլ կայ: — Կայ: Ծովով գնացող ճանապար-  
հորդները աղօթնում են նորան: — Այս: Լսում է նրանց: —  
Այս: Ուրեմն այնտեղ էլ կայ: — Այն կայ: Հէնց ալս ժա-  
մին: — Այն հէնց այս ժամին: Հիւանդը անկողիում տնքում  
է, հառաշում է, ախ ու վախ է քաշում իւր դառն ցաւե-  
քից. արգեօք նու ափօթնում է Մեծ Հօրը: — Աղօթում է.  
Մեծ Հայրը հիւանդին լսում է: — Այս: Ուրեմն այնտեղ էլ  
կայ: — Կայ: Խսկ բանտերմումը: — Այնտեղ էլ: Եկեղե-  
ցնումը: — Կայ: Բանտարկեաները բանտումը, ժողովուրդը  
Եկեղեցումը աղօթնում են Մեծ Հօրը: — Այս: Լսում է  
Նրանց: — Այն: Ուրեմն Մեծ Հայրը այժմ հէնց այս բոպէիս  
ալս դասարանումն էլ կայ, այն դասարանումն էլ,  
ճանապարհին էլ կայ, ծովի վերայ էլ կայ, հիւանդի  
անկողնի մօտ էլ կայ, բանտարկեալի մութ սենեակումն  
էլ կայ, Եկեղեցումը ժողովուրդի մէջն էլ կայ: Ո՞վ ինձ  
կասէ — մրտեղ չկայ:

— Ամեն տեղ էլ կայ:

Միննայն ժամին և լոպէին: — Այս:

Փոքր հայրն էլ կարող է միննոյն ժամին, միննոյն  
դապէին ամեն տեղ լինել:

— Ո՞շ. միայն Մեծ Հայրն է՝ որ կարող է ամեն տեղ լինել միևնույն ժամին, միևնույն բնապէին։  
Իսկ երկնքումն էլ կարեղ է լինել այն ժամանակ՝  
երբ նա այստեղ է։

— Այն. կարող է։

Ուրեմն կարող ենք ասել. «Հայր մեր որ յերկինս ես»։

— Կարող ենք։

Այն. ճիշտ էք ասում. որովհետեւ եթէ ամեն տեղ է՝ ուրեմն և երկնքումն է. Ճատ լաւ. եթէ ամեն տեղ կայ՝ ուրեմն ամեն բան էլ կիմանայ։

— Այն։

Իսկ եթէ մեր մտքումը մի բան մտածենք՝ այն Էլ կիմանայ։

— Այն. այն էլ կիմանայ։

Ես շատ ուրախ եմ, որ դուք այդ սովորեցիք ու գիտէք. աւելի ուրախ կը լինեմ—որ դուք ձեր սիրտեւ ու միաբը մարուր պահէք, իստակ պահէք. վախենաք Մեծ Հօրից. վատ բան չմտածէք. ապա թէ ոչ նա ձեզ չի սիրի, կուզէք որ ձեզ չսիրի։

— Ո՞շ. ոչ. կուզենք որ սիրի և մեզ օրնի։

Ճատ ուրախ եմ. զէ աշխատեցէք որ Մեծ Հայրը ձեզ սիրի և օրնի։

Այս ամենը, ինչ որ լսեցիք, ինչ որ ասացիք ճիշտէ. բայց ճիշտ չէ արդեօք և այն՝ որ մեր փոքր հայրն էլ շատ աշխատանք ունի մեզ վերայ։

— Այն. ճիշտ է, ՚ի հարկէ մեր փոքր հայրիկն ու մայրիկը այնքան բան չեն կարող անել, որքան կարուրէ անել մեր Մեծ Հայրը։

Այժմ մի հարց տամ ձեզ, տեսնեմ կարող էք պատասխանել թէ ոչ։ Եթէ ձեր հայրիկն ու մայրիկը Մեծ

Հօր նման ամեն բան կարողանային անել, ամեն տեղ լինել, ամեն բան իմանալ՝ արդեօք նրանք էլ շատ սկը ու աշխատանք չէին ունենալ ձեզ վերայ, քան որպան այժմ ունին:

—Այս. այն ժամանակ աւելի լաւ կպահէին մեզ և աւելի շատ կսիրէին:

Ուրեմն լիքը սրտով չնորհակալ էր ձեր հայրիկից ու մայրիկից:

—'Ի հարկէ և պարտական ենք:

Դէ եկէք մի խրատ սովորենք, որ գրուած է, ձեզ նման խելօք որդւոց համար. «Պատուիր քո հօրը և մօրը. որ քեզ բարի լինի. և երկար կեանք ունենաս երկրի վերայ»: <sup>1)</sup>

## 2. Որդիք — եղայրներ ու քոյրեր.

### Դ. Դաս.

Որդիքը առն մէջ, առնից դուրս և միշտ՝ իրենց ծնողների սիրոյ, գլուխնքի, փայփայանքի, խնամքի, հագուղութեան առարկաներն են:

1) Այս՝ և առասարակ սոյնանման իմաստներն ու ազթքները խմբական պիտի առուին գառարանումը:

Ցիշալ վերլուծական ձևով զրուցարութիւններ պիտի անուին նաև այն ամեն իրի կամ առարկալի նկատմամբ, որոնք լիշտութեան այս զասի մէջ և կամ պիտի լիշտուն միւս հետեւալ զամերի մէջ. օր. այս զասի մէջ առուցիչը կանդ պիտի առնէ. և երկնքի ու երկրի ու նրանց վերաց եղած առարկաների կամ առեղծուածների, ինչպէս արեի, լուսնի, առաղերի, անձրեի, հողի, ջրի, օդի, կենդանիների, թռչունների, ձկների և այլն և այլն, մասին խօսելով պատմութեան դուրս բերէ հարեանցօքն. և հարց ու փարն անելով, սիրաները աղջիկավ, պատասխաների մէջ զարժեցնելով և առա-

Որդիքը իրենց ծնողների և՝ ուրախութիւնն են և  
տրտմութիւնը:

Ուրախութիւնն են՝ երբ կկատարեն իրենց հետեւալ  
պարտականութիւնները:

ա. Մէր դէպի ծնողները—պէտք է սիրեն իրենց ծնող-  
ներին ամենից շատ, Մեծ Հօրից յետոյ, և  
ոչինչ չխնայեն նրանց համար, որովհետև ծնող-  
ներն էլ ոչինչ չեն խնայել իրենց համար:

բ. Հաւատք դէպի ծնողները—պէտք է հաւատան իրենց  
ծնողների բոլոր գործովութիւններին—սիրոյն,  
զգուանքին, խնամքին, փայփայանքին՝ որպէս  
և բարկութեանը և պատժին, որովհետև թէ  
սէրը, թէ պատիժը որդուոց օգտի համար են:

գ. Հնազանդութիւն—որդիքը պէտք է հնազանդ լինին  
ծնողներին.—Մեծ Հօրից յետոյ ծնողների կամքը,  
հրամանը, պատուէրը սուրբ են որդուոց հա-  
մար. Հնազանդութիւնը լաւ և ընտիր արժա-  
նիք ու յատկութիւն է. ի՞նչ գեղեցիկ իմաստ  
ասեմ ձեզ հնազանդութեան մասին—«աւելի  
լաւ է լսել բարի խօսքը և կատարել՝ քան

---

սարակ դեկավարելով՝ միջոց տալ սաներին և նպաստած լինի  
նրանց զիտակցօրէն պատասխանելու և իւրացնելով դասը  
զարգանալու. որովհետեւ երեխաները զարգացման կողմից կա-  
զում են. փոքր ինչ երկար նախադասութիւններ կամ պարբե-  
րութիւններ առել, խօսել՝ չեն կարողանում ինքնուրովնաբար,  
ալլ թութակի նման անգիր անելուն են ընդունակ. պակասում  
է նրանց խօսքի պաշարը. և ալդ նրանից է, որ մեր ընտա-  
նիքներում սովորութիւն չունին ծնողները հէքիաթներ, առակ-  
ներ, պատմութիւններ պատմելու որդուոց և պահանջել նրան-  
ցից վերապատմել. և ալսպէս ալդ բեռը ծանրացել է դըպ-  
քոցի վերալ:

ընտիր զոհ կամ մատաղ տալ Աստուծուն. աւելի՝  
լաւ է հնագանդութիւնը՝ քան մատաղացուի  
ճարապ կամ իւղը. Ա. Ժագ. ԺԵ. 22. Ուրեմն  
ծնողների բարի խօսքը, պատուէրը, հրամանը  
լսելը, կատարելը և նրանց հնագանդուելը աւելի՝  
հաճելի և սիրելի է Մեծ Հօրը, քան թէ  
մատաղներ ու զոհեր անելը:

Դ. Հաշուէտութիւն – որդիքը իրենց օրական կեանքի մասին հաշիւ պիտի տան իրենց ծնողներին. ոչինչ շծածկեն, չթագցնեն ծնողներից. աւելի լաւ է ծնողները իրենց որդւոց պակասութիւնը որդկերանցից լսեն, քան թէ դրաից կամ օտարներից. Եթէ դուք ուղիղ և ճիշտ հաշիւ տաք հայրիկին ու մայրիկին՝ այն ժամանակ դուք կսովորէք ճշմարիտ խօսել. սուա չէք ասի, չէք խարի և երդում էլ չէք ուտի. Երդում ուտելլ լաւ է. ոչ. դուք ասում էք մօրս արեք, իմ արեք, ձեր արեք, Աստուած վկտու, երկինք վկայ, էն ժամը խռով կենալ... և այն և այն. բայց դա լաւ չէ. պէտք է ասէք—ազնիւ խօսք. հաւատա. ճշմարիտ. սրանից աւելին շար է. գիտէք ինչու. որովհետև երբ դուք ասում էք մօրս արեք՝ այդ նշանակում է—թէ մօրս արեք խաւարի, մայրս մեռնի եթէ սուտ եմ ասում. բայց երբեմն պատահում է որ սուտ էք ասում. յետոյ որ Մեծ Հայրը լսէ ու կատարէ և մայրիկը մեռնի. լաւ կլինի. չէ, չէ. վատ բան է. Ուրեմն սովորեցէք ուղիղ հաշիւ տալ հայրիկին և մայրիկին. ոչինչ չթագցնէք նրանցից. նրանք ձերն են. նրանք ձեզ շատ են ոիւմ, շատ, շատ:

**Ա.** Աղօթք ծնողների համար — Որդիքը պէտք է աղօթեն ծնողների համար. ահա թէ ինչ պիտի խընդրէք Աստուծուց ձեր հայրիկի ու մայրիկի համար — որ նրանք արդար և սուրբ լինին, առողջ լինին, փորձանքից ու շարից աղատուին, վատութիւն չանեն ուրիշներին և վատութիւն էլ շտեանեն ուրիշներից. աղքատներին ողորմեն, աղօթասէք լինեն. Աստուած էլ նրանց գործը՝ կյաջողէ և կեանք կտայ նրանց:

**զ.** Օգնել ծնողներին կամ գործակից լինել նրանց — Որդիքը ծնողներին պէտք է օգնեն և գործակից լինին թէ տանը և թէ դսւրսը, որովհեան ծնողների յոյսը՝ որդիքն են, դուք էք, երեխայր, մանաւանդ ծերութեան ժամանակ. հայրիկին ու մայրիկին օգնող օրդուն կօգնէ և կօբնիէ Մեծ Հայրը. այդպիսի որդին բարի երկար կեանք կունենայ երկրի վերայ:

Սյս վեց պարտականութիւնները եթէ դուք կատարելու լինիք՝ ձեր ծնողներին կուրախացնէք, իսկ եթէ շկատարէք՝ հայրիկին ու մայրիկին կիշտացնէք, կտըխրեցնէք:

Խոստանում էք կատարել այս վեց պարտականութիւնները:

Խոստանում ենք:

Տեսնեմ ով կարող է կրկնել իմ պատմած վեց պարտականութիւնները \*):

1) Յառաջադէմներին դիմել. եթէ հարող են՝ կրկնել տալ և ղեկավարել. իսկ եթէ ոչ՝ ուսուցիչը ինքը պիտի կրկնէ և կրկնել տալ. դեռ առանձին առանձին և բատի խմբովին միայն վերնագրերը:

b. Դաս.

Նախընթաց դասը կրկնել:

Անցեալ դասին սովորեցինք թէ ինչ պարագանութիւններ ունին որդիքը. այսօր պիտի տեսնենք—թէ ծնողներն էլ ունին պարտականութիւն դէպի իրանց որդիքը՝ թէ ոչ:

Ի՞նչ էք կարծում, երեխայր, ձեր հայրիկն ու մայրիկն էլ ունին պարտականութիւն դէպի ձեղ. այն, ունին. հայրիկն ու մայրիկը պիտի ձեզ սիրեն, խնամնն, ուտացնեն, հազցնեն, ուսումի տան, երբ մեծանաք՝ պաշտօն պիտի ճարեն ձեզ համար, եթէ կարող են. և այդայն ժամանակ՝ երբ դուք չէք կարող. հայրիկն ու մայրիկը պիտի հսկն ձեր զրսի քայլերի վերայ, հաշիւ պահանջեն ձեզանից—թէ դուք ինչպէս էք անցկացնում դուրսը—ի՞նչ էք անում, ուր էք վիռում, ում մօտ էք մանգալիս, ինչպիսի ընկերներ ունիք. վատ ընկերներից պիտի հեռացնեն ձեզ և լաւ ընկերներին մօտեցնեն. լաւ զրքեր ճարեն ձեզ համար, որ կարդաք, զարգանաք. Նրանք պիտի ազօթեն ձեզ համար Մեծ Հօրը, որ՝ ձեզ խելք տայ, չնորհք տայ—որ լաւ սովորէք և լաւ մարդիկ դուրս գաք: Զայրիկն ու մայրիկը պէտք է պահեն իրանց սուրբ, արդար, ազնիւ, աշխատասէր, ազօթասէր, աղքատասէր, որ դուք նրանց նայելով՝ սովորէք նմանուել նրանց: Ծնողները հայելի են որդոց համար, նրանց մէջ որդիքը իրենց պատկերն են տեսնում այնպէս՝ ինչպէս դուք հայլու մէջ ձեր պատկերն էք տեսնում:

Բայց մի բան կայ. բոլոր ծնողները հաւասար կերպով կարնդ են լաւ լինել. այնպէս լինել՝ ինչպէս ասացի. և հարկէ ոչ կլինին և շարերը, վատերը, կոշտ ու

կոպիտ և բարկացկոտ քնաւորութիւն ունեցողները, ուսում չունեցողները։ Ճատ երեխաների հայրիկն ու մայրիկը լաւ կրթուած չեն, խելօք և ուսում առած մարդկանց հետ չեն ապրել, չեն սովորել, կոշտ ու կոպիտ են մնացել և կամ որդւոց հետ կոշտ ու կոպիտ են վարփում, այդ դէպքում որդիքը, եթէ հասկանում են, չպիտի նմանուին նրանց, այլ լաւերից օրինակ վերցնեն։ Ինչ անենք, Էնքան էլ մեղաւոր չեն նրանք. ովկ գիտէ ինչ է պատճառը—կարելի է խեղճութիւնն է, կարելի է ազքաառութիւնն է, կարելի է դուրսը դործերը անյաջող են, կարելի է վատ, չար, կոռւարար մարդկանց հետ դործ են ունեցել, վշտացել են նրանցից. ովկ գիտէ, երեխանք, հազար պատճառներ կան. ամեն բան հայրիկը չէ ասում ձեզ, և ինչու ասէ. դուք կարող էք օգնել նորան. չէք կարող, քանի՛ քանի՛ անզամ դուք հանգիստ քնած էք եղել. իսկ հայրիկն ու մայրիկը տխուր, տըրտում նստած, ախ ու վախ քաշելով իրենց սև օրը լալիս են եղել. դուք ամեն բան պատրաստ ստանում էք—կերակուր, շոր, բնակարան, ուսման վարձ և այլն. բայց իսկի մտածնւմ էք՝ թէ որտեղից են ճարում հայրիկն ու մայրիկը այդ ամենը։ Մրանից յետոյ իրաւունք ունիք անբաւական լինելու ձեր հայրիկից ու մայրիկից —թէ կոշտ են, կոպիտ են, այսպէս ու այնպէս են. ոչ. ոչ. երեխանք, նոքա սուրբ են, նոքա պաշտելի են. Մեծ չօրից յետոյ՝ նրանց պիտի սիրէք, նրանց պիտի պաշտէք, մեծարէք. հայրիկը մէկ է. մայրիկը մէկ է. ինչքան էլ պակասութիւն ունենան, ինչքան էլ կրթուած չլինին, ինչքան էլ կոշտ ու կոպիտ բնաւորութիւն ունենան՝ էլի, հաւատացէք որ, նրանք ձեղ սիրում են, շատ են սիրում. այլապէս չէ կարելի հասկանալ. նրանք են

ձեղ ծնել, մնուցել, մեծացրել, գիշեր ու ցերեկ, պահապան հրեշտակի նման, ձեղ վերայ հսկել են, ձեղ համար տզօթել են, ձեղ համար աշխատել են. պէտք է համբերել ծնողների բարկութեանը և հնազանդութեամբ քաղցրացնել նրանց սիրտը<sup>1)</sup>:

Դաւք գիտէք երեխալք, թէ եղբայրներն ու քոյրերը ինչպէս պիտի վարուեն իրար հետ տանը մէջ:

—Այն. գիտենք:

Բայց չէք ուզի որ մի բան էլ ես աւելացնեմ:

—Կուզենք. կուզենք:

Թէ լսեցէք. ասեմ—եղբայրներն ու քոյրերը կամ ծնողական որդիքը հայրիկի ու մայրիկի սիրոյ, խնամքի, հոգսի ու մտատանջութեան առարկան են կազմում. նոցամատնելը իրար, խաբարբանութիւնը, գանգատները իրարից՝ անհանգստութիւն է ծնողի համար. նոցա ծուլութիւնը, անգործութիւնը, անբանութիւնը, մէջքկոտրածութիւնը՝ ցաւ ու չոռ է ծնողի համար. նոցա իրար չօգնելը, իրարու գիրք, տետրակ, ասեղ, քորոց կամ մի բան փոխ շտալը, խնայելը. մահ է ծնողի համար: Ուրեմն հայրիկին ու մայրիկին սիրող որդիքը—եղբայրներն ու քոյրերը պիտի սիրեն և օգնեն իրար, իրարու չնախանձեն. այլ ընդհակառակը բարի նախանձով իրարու առաջը կտրելու ջանք անեն, առանց իրար վնասե-

1) Սոյն և սոյնանման փափուկ ու կարենոր զրուցատրութիւններ շատ լաճախ պիտի կրկնուին սաների առաջ, բալց զգուշութեան բոլոր պալմանները պահելով. պիտի կրկնուին լաճախ, շեշտում եմ. որովհետեւ ում չէ լաւտնի մեր նոր սերընդի քալլերը. մանաւանդ ծնողական լարկի տակ:

լու. պէտք է սիրով և հաշտութեամբ վարուեն իրար հետ. միմեանց սիսալները ուղղեն, առանց իրարից նեղանալու. և եթէ պատահի որ կռուեն՝ գոնէ բանը դանդատին չհասցնեն. և հայրիկին ու մայրիկին յայտնելուց առաջ՝ իրանք իրար մէջ իրանց հաշիւը խաղաղութեամբ, սիրով ու հաշտութեամբ վերջացնեն:

Եւ երբ մեծանան, գործ ու պաշտօն ունենան՝ այն ժամանակն էլ իրար սիրեն և իրարու հետ անբաժան ապրեն եղբայրները. քոյրերի համար չեմ ասում. որովհետեւ անկարելի է. իսկ եղբայրները միասին ապրելով՝ ծախսը մէկ կլինի, աշխատանքի վաստակը կըրենակի կլինի՝ և իրանք մի մեծ ոյժ ու գօրութիւն կը կազմեն՝<sup>1)</sup>:

Եղբայրների, իրար հետ, սիրով և միասին ապրելու մասին Ս. Գրքի մէջ մի գեղեցիկ և սիրուն իմաստ կայ, ասեմ:

—Այս. այս:

Եյտեղ ասուած է. «Ի՞նչ լաւ է. ի՞նչ գեղեցիկ է. երբ եղբայրները ապրում են միասին»։ Այսպիսի մի գեղեցիկ ու սիրուն խօսք էլ կայ եղբայրների իրար օգնելու մասին. «Եղբօրից օգնութիւն ստացող եղբայրը նման է ամուր, անառիկ քաղաքի. և հաստատուն թագաւորութեան նման հզօր է»։ Առակ. Ժ. 19. <sup>2)</sup>

<sup>1)</sup> Ընդարձակել եղբայրների միասին կամ անբաժան ապրելու արժանիքն ու օգուտները:

<sup>2)</sup> Հասկացնել սաներին եղբայրների օգնութեան օգուտն ու ոլժը:

## II. ՀԱՅՈՒԱԾ

### թ. ՄԵծ Հօր տոնը կամ Եկեղեցի.

1. Նշանակութիւնը և համեմատութիւնը ծնողական տան հետ.

Զ. Գառ.

**Երեխայր.** դուք ծանօթացաք ձեր ծնողական տան հետ. տեսաք այնտեղ հայրիկ ու մայրիկ — ծնողներ և եղբայրներ և քոյրեր — որդիիք: Ծնողական տունը լաւ էք. չի. ի հարկէ լաւ էք. այնտեղ էին ձեր հայրիկն ու մայրիկը, այնտեղ էին ձեր եղբայրներն ու քոյրերը. մէկ խօսքով՝ ինչ որ ձեր սրտին մօտիկ բան կայ, տեսանք այնտեղ<sup>1)</sup>:

Սմենից առաջ ձեր ծնողները ձեզ մւր են տարել տանից.<sup>2)</sup> — ի հարկէ Եկեղեցի. իսկ Եկեղեցին Բնշպէս ենք էլի անուանում. — Մեծ Հօր տուն: Ինչնւ են տարել ձեզ Եկեղեցի — Մկրտելու: Ո՞վ կարող է ասել ինձ — թէ քանի տարի սրանից առաջ տարել են իրան մկրտելու<sup>3)</sup>: Քացի սրանից, երբ հասակ առաք, մեծացաք, գնացել էք Մեծ Հօր տունը:

— Գնացել ենք:

Մենակ՝ թէ ծնողների հետ:

— Երբեմն մենակ, երբեմն ծնողներիս հետ,

Ինչնւ համար էք գնացել:

<sup>1)</sup> Մի ամփոփ կրկնութիւնից լետու, սկսել Զ. դասը. և առհասարակ միշտ ալդպէս վարուել:

<sup>2)</sup> Միշտ հարցեր պիտի տալ սաներին և պիտի դիւրաց: Նել նրանց տալիք պատասխանները. հակառակ դէպքում ու առւցին է մնում պատասխանը:

<sup>3)</sup> Ակտ հարցի նպատակն է — որ սաները գիտենան իրենց տարիքը:

—Գնացել ենք աղօթք անելու:

Լաւ. այժմ մի բան հարցնեմ. տեսնեմ ով կարող է պատասխանել: Դուք ասացիք ինձ—թէ գնացել էք Մեծ Հօր տունը աղօթք անելու. ուրեմն Մեծ Հօր տունը կամ Եկեղեցին ինչպիսի տուն է:

—Աղօթքի տուն է:

Նման է ծնողական տանը:

—Ո՞չ:

Հապա լաւ մտածեցէք. տեսնեմ ով կդտնէ:

—Ես կասեմ:

—Ասա Շուշիկ:

—Մեծ Հօր տունը նման է ծնողական տանը, որը ունի առաստաղ, յատակ, պատեր, դռներ, լուսամուտներ. Մեծ Հօր տունն էլ ունի այս ամենը,

Տեսաք Շուշիկը գտաւ. էլի ով կարող է գտնել—թէ էլի ինչնվ է նման:

—Էլ ոչ մի բանով նման չէ:

2է. սխալ էք. հապա լաւ մտածեցէք և կտեսնէք որ էլի ունի նմանութիւն. է՞ս. չէք կարողանում գտնել զէ լաւ. ես կասեմ—ձեր տանը հայրիկն ու մայրիկն են, եղբայրներն ու քոյրերն են. Մեծ Հօր տանն էլ կան բահանաներ, դպիրներ, տիրացուներ, ժողովուրդ: Ձեր փոքր հօր տանը աղօթք անհւմ էք.

—Արև. անում ենք:

Սյդպէս չէ կարելի ասել, պէտք է հարցը կրկնէք. պէտք է ասէք—այս աղօթք ենք անում. ասացէք իւրմբովին:

—Այո՛ աղօթք ենք անում:

Ճատ լաւ. Մեծ Հօր տանն էլ աղօթք էք անում. ուրեմն նման է: Այժմ տեսնենք թէ ինչնվ նման չէ. ով կարող է ասել:

—Ես կասեմ:

Ասա նազելի:

—Մեծ չօր տանը քնել, խաղալ, վազվակել, ուտել,  
խմել, ծիծաղել, խօսել չէ կարելի. բայց մեր փոքր  
հօր տանը այդ ամենը կարելի է:

Ճատ լաւ. տեսաք նազելին գտաւ. չապա Աշխեն,  
դու էլ կարող ես զանազանութիւն գտնել:

—Կարող եմ.

Ասա:

—Մեր տանը նրեխայ չէ մկրտում, Պատարագ չէ  
լինում, ժամ չէ ասւում, քահանաները չեն կարդում,  
երգում, աղօթում. իսկ Մեծ չօր տանը այդ ամենը կա-  
տարւում է:

Աշխենն էլ լաւ ասաց. էլի ով:

—Ես կասեմ:

Ասա Լուսիկ:

—Մեծ չօր տանը սենեակներ չկան, առաստաղը  
շատ բարձր է, գլուխը սրածայր է, գլխին մեծ խաչ  
կայ ամրացրած, մեծ զանգակներ կան կախ արած և  
ժամկոչը այդ զանդերը խփում է ու ժամ է կանչում  
ժաղովրդին. այնտեղ ժամ են ասում, Պատարագ են ա-  
նում, Մկրտութիւն, Պսակ է լինում, ննջեցեալներին  
այնտեղ են տանում վերջին անգամ և այնտեղից՝ գերեզ-  
մանատուն. Մեծ չօր տանը քահանաները քարոզում են  
ժողովրդին. այս քաններից ոչ մէկը չկայ մեր ծնողական  
տանը:

Կեցցէ՛ Լուսիկը. շատ լաւ ասաց. ես գովում եմ  
Լուսիկին. դնւք էլ կգովէք, չէ:

—Այն, այն. լաւ ասաց:

Լուսիկը գովական է. Ով այսպէս լաւ կասէ՛ նրան  
դասարանը կգովէ. այն:

— Երակ:

Ելի ով կարսղ է մի բան ասել:

— Ես կարող եմ:

Ասա Տիգրանուհի:

— Մեծ Հօր տանը ուրիշ տեսակ շորեր են հազ-  
նում, սիրուն շորեր, դեղեցիկ զառ շորեր:

Անունները չգիտեմ:

— Ո՞չ շգիտեմ:

Ո՞վ գիտէ:

— Ես:

Ասա Ճողեր:

— Բուրվառ:

Ելի:

— Էլ շգիտեմ:

Բայց բուրվառը շնոր է, չերիքնազ:

— Ոչ:

Կարող ես ասել — էլի ինչ շորեր:

— Ճապիկ են հազնում ժամումը:

Ասում ենք ժամումը. սխալ չէ. բայց ասում ենք  
նաև եկեղեցումը <sup>1)</sup>:

Լաւ. այսքանը բաւական է այս դասին. կշարունա-  
կենք գալ անդամ:

### Ե. Դաս.

Հապան նուարդ, կրկնիր անցեալ դասը:

Այժմ խօսք կտաք ինձ մտքերումդ պահել Մեծ Հօր  
տան մասերը, եթէ ես ձեզ սովորեցնեմ:

— Խօսք կտանք:

— Ձեր ծնողական տունը ունի սենեակներ. այդպէս չէ:  
Այս, ունի:

<sup>1)</sup> Կրկնել տալ և ամփոփել.

Ես ասեմ սենեակների անունները:

— Զէ, Գոհարիկ, ես կասեմ. այդ սենեակներից մէկն ասում է նախասենեակ, միւսը՝ դահլիճ. միւսը՝ ճաշարան. միւսը ննջարան: Մեծ չօր տունն էլ ունի այդպէս բաժան-բաժան ջոկ-ջոկ մասեր. օրինակ՝ Գաւիթ. ուր ժողովուրդն է կանգնում և ազօթում. Դասեր աջ ու ձախ կողմում, ուր քահանաները և տիրացուները—հոգեռականները կանգնում են, ազօթում են, շարական ասում. Ատեան. ուր փոխ են ասում, նախատօնակ են կատարում. Բէմ. բարձր է շինուած. նորա վերայ Սեղանն է, ուր Սուրբ Պատարագ է լինում: Այժմ կասեմ սրբազն իրերից մի քանի դիխաւորների անունները. խօսք կտաք սովորել, եթէ ես սորվեցնեմ:

— Խօսք ենք տախս:

Աւազանը զիտէք, ուր որ մկրտում են երեխաներին:

— Ան, այն. զիտենք:

Խորանը:

— Այդ չզիտենք:

Տեսել էլ դուք երբ Պատարագիշը զգեստաւորուած գուրս է գալիս:

— Տեսել ենք:

Որտեղից որ դուրս է դալիս՝ ան տեղը ասում է Խորան, այնտեղ են զգեստաւորուած քահանաները և տիրացուները: Սեղանը զիտէք.

— Գիտենք, ուր որ Պատարագ է լինում:

Խսկ Պասը:

— Գիտենք. ուր քահանաներն ու տիրացուներն են կանգնում:

Հրաշեայ քանի՛ դաս կայ:

— Երկու դաս կայ, աջ ու ձախ կողմերում:

Ո՞վ կարող է ասել—ինչի վերայ են դնում Պատարագի ժամանակ այն մեծ գիրքը, որ ասում է ճաշոց գիրք և կարդում են:

—Անունը չգիտենք, բայց տեսել ենք։  
Նրա անունն է զրակալ և երեք հատ է։ Երկուսը  
դասերի համար. իսկ մէկը՝ մէջ տեղն են դնում ձաշոց  
գիրքը կարդալու համար։

—Իսկ այն ի՞նչ է, որ Պատարագի ժամանակ չըխ-  
չըխկացնում են երկար փայտի վերայ հազրած։

Հապա տեսնեմ Անահիտի հարցմունքին ով կա-  
տասխանէ։

—Ե՞ս։

Ասա Արեգնազան։

—Երան ասում են քըց։ Ես էլի կարող եմ ասել  
թէ Պատարագիշ քահանան ի՞նչ է դնում գլխին և ի՞նչ  
է ծածկում վրան և սեղանի վերայ ի՞նչեր են դրում։

Ասա։

—Պատարագիշ քահանան գլխին դնում է Սաղա-  
ւարտ. վրան ծածկում է զուրջառ. Սեղանի վերայ  
դրում են Սկիհ, Խաչ, Աւետարան. Սկիհից հազորդում  
է ժողովուրդը, Աւետարանը կարդում են, Խաչով օրհ-  
նում են։

Ապա ասա ինձ Արեգնազան. որ տեղից գիտես այդ։

—Քոյրս է ինձ սովորցրել։

Քոյրդ մրտեղ է սովորել։

—Այսեեղ է սովորում Գ. դասարանումը. Գուք էք  
սովորցնում. նա դասերը պատրաստելիս՝ ես լում եմ և  
խնդրում եմ, որ ինձ էլ սովորցնի։

Լաւ, լաւ. հերիք է այսքանը այս դասի համար. կամաց կամաց ամեն բան կսովորենք ինչ որ կայ մեր Մեծ Հօր տանը։ Այժմ կրկնենք՝ ինչ որ սովորեցինք։ Հապա տեսնեմ, ով կարող է կրկնել ինչ որ այս դասին  
սովորեցինք. Հերիքնաղ, կարնղ ես կրկնել։

—Կարող եմ։

Դի՛ ասա:

—Մեծ չօր տանը կան—Աւազան՝ ուր մկրտում են Արեխաներին, Խորաններ՝ Նրանցից մէկում զգեստաւոր-  
ռում է Պատարագիշ քահանան և տիրացուները. Սեղան՝  
ուր կատարում է Ս. Պատարագը. Դասեր՝ աջ ու ձախ  
կողմերում, ուր կանգնում են հոգեորականները. գրա-  
կաներ՝ երեք հատ. երկուսը դասերի համար և մէկը  
մէջտեղին են դնում, երբ հարկաւոր է ճաշոց գիրքը կար-  
դալ. Քշոց՝ որ չխչխկացնում են....

Ասա՞—ճօճում են:

—Քշոց՝ որ ճօճում են Ս. Պատարագին: Սաղա-  
ւարտ՝ որ Պատարագիշ քահանան դնում է գլխին: Ճուր-  
ջառ՝ որ քահանան ծածկում է վրան. Սկիհ՝ որից հա-  
զորդում է ժողովուրդը: Աւետարան՝ որ կարգում են  
Ս. Պատարագին և ուրիշ ժամանակ Մեծ չօր տանը.  
Խաչ՝ նրանով օրհնում է քահանան:

Հերիքնազը շատ լաւ ասաց. չէ:

—Այն. այն:

Ուրախ չէք, որ նա այսպէս լաւ պատմեց:

—Ճատ ուրախ ենք:

Ես էլ ուրախ եմ. բայց ո՛րքան կուրախանամ, որ դուք  
պոլորդ էլ լաւ սովորէք և դալ դասին այսպէս լաւ ա-  
մէք. շատ կաւրախանամ:

—Կաշխատենք լաւ սովորել և ձեզ ուրախացնել:

Հապալ տեսնեմ:

## 2. Սըբազնագործ եւ Եկեղեցական.

Ստորին պաշտօնէութիւն:

Բ. Պատ.

Կրկնենք անցեալ դասը. ով կկրկնէ:

—Ես:

Ասա Զարուհի...»

Հաս լաւ. այժմ առացէք ինձ, բացի քահանաներից, դպիխներից, կոյսերից, ժողովրդից, էլի նվ կայ Մեծ Հօր տանը:

—Ես կասեմ:

Ասա Արեհատ:

—Կայ ժամակոչ կամ մզրսի:

Հատ լաւ. այժմ նվ կարող է ինձ ասել — թէ նոցանից իւրաքանչիւրը — ամեն մէկը ինչ է անում կամ ինչ պարտականութիւն ունի Մեծ Հօր տանը:

—Ես կոյսերի մասին կասեմ:

Ասա Տիգրանուհի:

—Կոյսերը Եկեղեցին սրբում են, աշտանակները, գրակաները, գրքերը, բէմը, սեղանը, խորանները, կանաց դասի մուհաջարները...

Մուհաջարի փոխանակ, ասա Ծաղեր, Ծաղ, աւելի ճիշտ է:

Ճաղերը, պատկերները, բուրվառը, քշոցները, մէկ խօսքով, ինչ որ կայ Եկեղեցում՝ մաքրում են, սրբում են. Ժամ ասելու ժամանակ մոմերը վառում են, գրականները բաց են անում, շարականները դնում են նրանց վերայ, Ժամ են ասում օրէնը չորս անգամ — առաւետը, ճաշին, երեկոյին և Եկեղեցին, փոխ ու քարոզներ են ասում, աղօթք են կարդում, շարական են ասում. Պատարագին երգում, գիրք ու Ըւետարան են կարդում:

Հատ լաւ ասաց Տիգրանուհին:

—Դա ուսումնարան գալուց առաջ Կոյսերի մօտ սովորում էր, աշակերտ էր:

Այն:

Այն:

Է՛ ինչ է. լաւ չէ միթէ. երանի՛ թէ, ձեզ էլ սոր-

վացնող լինէր. և դուք էլ կգիտենայիք: Բայց Տիգրանուհին ասաց—Եկեսցէ են ասում. այդ ինչ բան է. ձեզանից շատերը տեսած չեն լինի. ես ասեմ հա:

—Ես գիտեմ:

Արեգնազան դու գիտես:

Այս:

Երևի էլի քրօջիցդ ես սովորել. հա:

Այս:

Դէ լաւ. ասա, լսենք:

Կոյսերը գիշերուայ 9 ժամին երեք անգամ զանգ են խփում. այդ նշանակում է—թէ Եկեսցէն սկսուեց, հաւաքում են Եկեղեցի, ծունը են դնում, աղօթքներ ու Սւետարան են կարդում և գնում են հանգստանալսւ:

Ճատ լաւ, չճատ լաւ. Տիգրանուհին ու Արեգնազանը կոյսերի մասին ասացին. իսկ միւսների մասին նվ կարող է ասել:

—Ես:

Ում մասին կասես Համասփիւռ:

—Բոլորի մասին:

—Ես էլ կասեմ:

Դու ում մասին կասես, Արեգնազան:

—Բոլորի մասին:

Դու ասացիր. թող այժմ էլ Համասփիւռն ասի. ասաՀամասփիւռ:

Փամկոչը կամ մղտին Եկեղեցին մաքրում, դռները բաց է անում ժամից առաջ, փակում է ժամից յետոյ. զանգերն է տալիս և ծառայում Եկեղեցուն. Տիրացուները շապիկ են հագնում, փոխ են ասում, մոմ են բռնում Սւետարան կարդալու ժամանակ, բուրգառը տանում-տալիս են մղդսուն, որ կրակ ածի խունկ ծխելու համար և ժամ են ասում: Քահանաները ժամ են ասում, աղօթք-

Ներ ու Աւետարան են կարդում, Պատարագ են անում,  
Մկրտսւթիւն ու Պսակ են անում, Մեծ Պասին քարոզ  
են տալիս ժողովրդին:

Ճատ և շատ գեղեցիկ ասաց Համասփիւռը. գ՞նչ էք,  
երեխայք:

— Այս. շատ լաւ ասաց:

— Այժմ մենք էլ ենք յիշում այդ բոլորը:

Հապա ինչն չասացիք: Լաւ. կտովորէք և յետոյ կա-  
սէք. բայց ասա ինձ, Համասփիւռ, գիտենալուդ չեմ  
զարմանում, այլ կանոնաւոր և սիրուն կերպով ես ասում,  
ասա ինձ, մվ է քեզ սորվեցրել:

— Հայրիկս քահանայ է. և ես շատ եմ սիրում ա-  
ռաւօտներն ու երեկոները նրա հետ ժամ գնալ. ազատ  
ժամերին շոքում եմ հօրս ծնկների առաջ և ինդրում եմ  
ինձ սովորեցնել. ես շատ եմ սիրում եկեղեցի գնալ և  
ուզում եմ սովորել այն ամենը, ինչ որ անում են Մեծ  
Հօր տանը:

Ճատ ուրախ եմ, ազնիւ խօսք: Տեսնում էք երեխայք,  
ի՞նչ գեղեցիկ ասաց Համասփիւռը և ի՞նչաքս սիրում է  
եկեղեցին. գուք էլ սիրում էք եկեղեցին Մեծ Հօր տունը:

— Այս, սիրում ենք:

— Ի հարկէ պէտք է սիրէք. մեր Մեծ Հօր տունն է այն:  
Երբ ծնւում ենք՝ այնտեղ են տանում մեզ մկրտելու. Երբ  
բաղդաւորում ենք՝ այնտեղ են տանում մեզ պսակելու.  
Երբ դարձ ենք գալիս մեր մեղքերը, զղում ենք, ապա-  
խարում ենք՝ այնտեղ ենք գնում խոստովանուելու և Հա-  
ղորդուելու. Երբ մեռնում ենք՝ թաղելոց առաջ այնտեղ  
են տանում մեզ վերջին պատարագը ցոյց տալու, որ Մեծ  
Հօր օրնութիւնը առնենք և նա օրնի մեր ճանապարհը  
իրա մօտ գնալու: Եւ այս բոլորը նվ է կատարում—Քա-  
հանան. որ Մեծ Հօր կողմից կարգուած է, նշանակուած

Է մեզ համար իբրև հոգնոր հայր. նա միշտ աղօթում է մեզ համար, հիւանդների համար, ճանապարհորդների համար, բանդարկեալների համար, աշխարհի համար—որ խաղաղութիւն լինի, սէր, հաշտութիւն լինի, պատերազմ չլինի, երաշտ կամ չսրութիւն չլինի, մորեխ, թրթուր, դաշտի մկներ, չլինին, որ ցանքսերն ու ծառերը չվնասուեն, առատութիւն լինի հացի, պտուղների <sup>1)</sup>): Նա աղօթում է որ խօսերայ, ժանտախտ և զանազան համաճարակ կամ ամենքին բռնօղ հիւանդութիւններ չլինին <sup>2)</sup>): Նա աղօթում է. նա միշտ է աղօթում. երբ գիշերը դուք հանդիստ ու անուշ քնած էք լինում և հայրիկն ու մայրիկն էլ պահապան հրեշտակի պէս ձեզ հսկում են. դուք ապահով էք. բայց գիտէք ով է զարթուն, ով է սաղմոս, Աւետարան, նարեկ կարդում տանը, ով է 4 ժամին զնում եկեղեցի—Մեծ հօր տունը, երրորդ քաշում, ժամկոչին զարթեցնում, ժամ ասում և աղօթում ձեզ համար ու աշխարհի համար. քահանան է, քահանան. ձեր հոգեւոր հայրը. ա՛խ, որքան սուրբ և ծանր է քահանայի պաշտօնը. չէ երեխայք:

Այս, այս: Ես մի պատմութիւն գիտեմ քահանայի մասին, լսել եմ ատափոց. շեմ կարողանում մոռանալ. քանի որ քահանայ եմ տեսնում, կարծում եմ Մեծ Հօրն եմ տեսնում. կամննաք պատմեմ:

Եկող դասին, Վարդիթեր. ժամանակ չկայ, էս րոպէիս զանդը կտան: Հապտ տեսնեմ լինչպէս կպատրաստէք այս դասը:

Հատ լաւ կպատրաստենք. շատ լաւ: Ա՛խ, ինչ լաւ է կրօնի դասը. երանի՛ միշտ կրօնի դաս լինի:

—Լաւ այժմ ես ձեզ կսորվեցնեմ «Սուրբ Աստուած,

<sup>1)</sup> Բացատրել լիշածների վկաները.

<sup>2)</sup> Թէև խիստ հարեացօրէն՝ բալց անպատճառ բացառիկ.

Սուրբ և չզօր, Սուրբ և Անմահ. որ խաչեցար վասն մեր-  
ողորմեա մեզ:

—Ես գիտեմ.—Ես էլ գիտեմ.—Ես էլ...

—Լաւ. հապա դուրս գան գիտացողները և երգենք-

Թ. Դաս.

ՀԷք մոռացել անցեալ դասը:

—Ո՞չ:

Ո՞վ կրկնէ:

—Ես:

Կրկնի Վարսենիկ...

Հապա Վարդիթեր, պատմիր տատիցդ լսած պատ-  
մութիւնը, թող քոյրիկներդ լսեն ու սովորեն:

—Մի գիւղի քահանայ, գիւղի եկեղեցու հնացած,  
մաշուած սկիհը տանում է քաղաք նորոգել տալու, անց-  
նում է քաղաքի մի մեծ մէյդանով...

Հապա երեխայք, ով գիտէ ձեզանից-ինչպէս պէտք-  
է ասել հայերէն. մէյդան խօսքը հայերէն չէ. շգիտէք,  
ՀԷք լսել:

—2Ենք լսել:

Մէյդան՝ հայերէն ասում են հրապարակ. հապա-  
կրկնեցէք խմբովին,

Մէյդան՝ հայերէն ասում են հրապարակ <sup>1)</sup>:

Ըարունակիր Վարդիթեր:

—Ծնցնում է քաղաքի մի մեծ հրապարակով. տես-  
նում է խալխը հաւաքուած...

2Եղաւ, չեղաւ. ինչպէս կարելի է ասել հայերէն. ով  
գիտէ:

<sup>1)</sup> Ուղղել սխալները. ամբողջ դասը կրկնել, ամփոփել-  
բառերը հալացնելու՝ մեծ ջանք պիտի անէ ուսուցիչը, որպէտ-  
ե, առհասարակ ուղղախօսութեան մասին:

—Ես.

Ասա: Ճամփրամ:

— Ժողովուրդը հաւաքուած:

Ճատ լաւ. կարելի է ասել նաև ամբոխը հաւաքուած:

**Ասցէք խմբովին,—**

Ցեսնում է որ շատ ժողովուրդ կամ մեծ ամբոխ է հաւաքուել:

— Ցեսնում է որ շատ ժողովուրդ կամ մեծ ամբոխ է հաւաքուել և կռուի ձայներ են լսում: Հարց ու փորձ է անում և իմանում է—որ պարտատէրը իւր պարտա-պանի ունեցած չաւնեցածը ծախու է հանել տուել իւր պարտքի փոխանակ. ներս է մտնում ամբոխի մէջ, տես-նում որ պարտապանը լալիս է, ազաշում. պալատում է փողատիրոջը որ մի քիչ էլ սպասէ. բայց մւսն ես ասում. սիրտը քարացրել է. քահանան շատ է տիխում, մանա-ւանդ որ ժողովրդի սիջից ոչ ոք չէ գուրս գալիս խեղ-ճին օգնելու. գնում է պարտատիրօջ մօտ և սկիհը նո-րոգելու ծախսի փողը տալիս է պարտատիրոջը. բայց պակսում է. մնացածն էլ իրանից աւելացնում է և աղա-տում խեղճ պարտապանին: Դարձաւ գիւղը ժողովրդին պատմեց այս անցքը և ասաց. «Աստուած չի նեղանայ, եթէ հին սկիհով Պատարագ անենք. քանի որ ինքը մսու-րի մէջ ծնաւ. աւելի ուրախ կլինի, որ մարդ ազատե-ցինք». գիւղացիք ոչ թէ չնեղացան, այլ ուրախացան. էլի փող հաւաքեցին, որ սկիհը նորոգել տան»:

Վարդիթերի պատմութիւնը լաւն էր:

—Ճատ լաւն էր:

Դէ՛ շմոռանաք. տանն էլ պատմեցէք: Հապա ով ինձ կասէ—թէ երբ պատահէք քահանային մի որ և իցէ տեղ կամ տանը կամ փողոցում կամ եկեղեցում, բնշպէս պիտի բարովէք, սղջունէք:

—Ես կասեմ:

Ասա Լուսնթագ:

—Երբոր պատահենք քահանային՝ պէտք է ձեռքը  
համբուրենք և ասենք. «Օրնսեա տէր»:

Իսկ եթէ հեռու է; ինչ կանես:

—Հեռուից զլուխ կտանք:

Մի բան էլ հարցնեմ և դասը կվերջանայ. քահա-  
նան ձեզ համար աղօթում է, ինչպէս որ սովորեցիք-  
դուք էլ նորա համար պիտի աղօթէք, թէ ոչ չապա-  
դու ասա ինձ չրաշեայ:

—Մենք էլ մեր հոգեոր հօր համար պիտի աղօ-  
թենք—որ նա առողջ լինի, ժողովրդին սիրէ, ժողո-  
վուրդն էլ նրան սիրէ ու պատուէ. ինչպէս նա մեզ հա-  
մար է աղօթում, չարշարւում՝ այնպէս էլ Մեծ չայրը  
նրան օդնէ, ամեն փորձանքից ու չարից փրկէ ու ազատէ:

Լաւ է, լաւ է. Երեք րոպէ ժամանակ կայ. Երգենք  
Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Ծնմահ. մեզ  
և հաւասար ձայնով:

### 3. Ժողովուրդ.

#### Ժ. Դ ա ս.

Կրկնութիւն նախնթաց դասի:

Մնցեալ դասերին քահանաների, կոյսերի, դպիրների  
կամ տիրացուների, ժամակոչների կամ մղդսիների պար-  
տականութիւններն ու կատարած պաշտօնները լսեցինք  
ու սովորեցինք. այդպէս է Երանեակ:

—Այն:

Չապա նվ կարող է ինձ ասել—թէ էլի նվ է լինում  
Մեծ չօր տանը ժամասացութեան ժամանակ:

—Ես կասեմ:

Ասա Մարգարիտ:

—Մեծ Հօր տանը ժամասացութեան ժամանակ լի նում է ժողովուրդը:

Լաւ ասացիր: Դու, չերիքնազ. կարող ես ասել— ինչ է անում ժողովուրդը Մեծ Հօր տանը, նա էլ պարտականութինսն ունի թէ ոչ:

—Մեծ Հօր տանը ժողովուրդը ծունը է դնում, աղօթում է, մոմ է վառում, քահանային ժամոց է տալի, գանձանակ է ձգում:

Հատ գոհ եմ. այժմ տեսնեմ ով կարող է ասել— ինչպէս պէտք մտնենք մեր Մեծ Հօր տունը:

—Ես կասեմ:

Ասա Անահիտ:

—Մեծ Հօր տունը մտնելու համար մենք պէտք է մաքուր ու լաւ շորեր ունենանք հագներիս:

2է. շեղաւ. մեր Մեծ Հայրը շորին ու երեսին չէ նայում. մի աւելի լաւ բան կայ, այն է ուզում մեզանից. թէ շգիտէք՝ ես ասեմ:

—2գիտենք, Դուք ասացէք:

Լաւ. ես կասեմ—Անահիտն ասաց—թէ Մեծ Հօր տունը մտնելու համար լաւ և մաքուր շորեր պիտի ունենանք հագներիս. դուք էլ նոյնպէս էիք մտածում. չէ:

—Եյն:

Բայց եթէ այդպէս լինէր՝ ուրեմն աղքատները, խեղճերը, որ պատառատուն ու աղտոտ շորերով են մտնում Մեծ Հօր տունը աղօթելու, ծունը դնելու, մոմ վառելու, ժամասացութիւնը լսելու՝ Մեծ Հայրը շպիտի լսէ նրանց աղօթքը և դուրս պիտի անէ իւր տանից. չէ. չէ. սիսալ ասացիր Անահիտ. միթէ դուք շգիտէք, որ Մեծ Հայրը բարի է. դուք սովորեցիք-որ նա շատ աշխատանք ունի մեզ վերայ. նա շատ է սիրում մեզ. նա

Հի ջոկի աղքատին՝ հարստից, գիւղացուն՝ քաղաքացուց.  
Նա ամենքին՝ հաւասար աշքով է նայում, հաւասար  
սրտով է սիրում. միայն շարերին չէ սիրում, սատիսու-  
ներին, ծոլլերին, ծնողներին չսող որդւոցը չէ սիրում.  
թէպէտ սիրում է՝ բայց բարկացած, թթու երես է  
ցոյց տալի, որ ուղղուեն, լաւանան շարերը. որ ինքը  
նրանց սիրէ և օրհնէ: Ուրեմն Մեծ Հօր ուզածը ոչ  
գեղեցիկ շորեր են, ոչ ոսկիներ են, ոչ հարստութիւն է,  
ոչ փառաւորսւթիւն է. այլ մի սիրուն բան է, մի շատ  
գեղեցիկ և փոքրիկ բան է, որ դուք ամենքդ էլ ունիք  
և ամեն մարդ էլ ունի. հապա գտէք:

— Ազօթքն է:

— 2է, պաս պահելն է:

— 2է, աղքատին ողորմելն է:

Ի հարկէ Ազօթքը, Պահքը, Ողորմութիւնը Մեծ Հայ-  
ըը սիրում է և ուզում է որ մենք կատարենք, բայց նրա  
ուզածը դրանցից էլ բարձր է, դրանցից էլ սիրուն ու  
գեղեցիկ է: Հապա լսեցէք. տեսնենք այդ փոքրիկը, այդ  
գոլտըրիկը, այդ սիլունիկը, այդ գեղեցիկը ի՞նչ է,

— Այս շուտով ասացէք սովորենք:

Եկէք, երեխայք թողնենք միւս դասին. դուք էլ ան-  
համբեր կսպասէք, շէ:

— Այսօր լաւ է. այսօր լաւ է:

2է, շատ կլինի, չէք կարող սովորել: Ինձ շէք հա-  
ւատում:

— Հաւատում ենք, հաւատում:

Ճատ կլինի. այս դասին կրկնութիւններ անենք և  
երգենք:

ԺԱ. Դաս:

Կրկնութիւն:

Ուրեմն սպասում էք լսել ինձանից այն փոքրիկի,

պաղտրիկի, սիրունիկի և զեղեցիկ մասին, որ խոստացայ անցեալ դասին՝ ասել ձեզ այսօր:

— Մպասում ենք, շուտով ասացէք:

Դա է սիրտը. սիրտը շատ լաւ բան է. ինչ որ անէք և անսիրտ լինի՝ պէտք չէ. սիրտը մեր հարստութիւնն է, մեր գանձն է, մեր քախտաւորութիւնն է. ինչի՞ նման են անսիրտ մարդիկը. նրանք անգութ են, անողորմ են, նրանց սիրտը քարացած է, ապառաժ է դարձել. գութ ու կարեկցութիւն չունեն. խեղճին, աղքատին, խշուառին չեն խղճում. նրանց համար ինչ էլ որ լինի՝ միննոյն է. միայն իրանք լաւ լինեն, իրանք լաւ ապրեն. թէկուզ աշխարհը քանդոի, քար քարի վրայ շկանգնի. ոչինչ. միայն իրանք լինին և լաւ լինին. ահա անսիրտ կամ քարասիրտ մարդկանց երեսը: Ուրեմն սիրտը մեր կեանքն է, մեր արմն է, մեր գանձն ու հանգստութիւնն է, մեր կեանքն է, մեր արմն է, մեր գանձն ու հանգստութիւնն է: Բայց ինչպիսի սիրտ, այ, էս է զլխաւորը. սիրտ էլ կայ, սիրտ էլ. Մեծ չօր ուզած սիրտը ուրիշ է. նա լաւն է, նա պայծառ ու փայլուն է ինչպէս երկնքի վերայ շողացող ու ցողացող պայծառ աստղը և ինչպէս աղքիւրի պարզ, վճիտ, ականակիտ ջուրը, որի տակի քարերն ու աւագները կարելի է համարել. ահա այդպիսի սիրտ պիտի ունենալ և այդպիսի սրտով պիտի մտնել Մեծ չօր տունը. այն ժամանակ Մեծ չայրը կլսէ այդպիսի սրտով մտնողի աղօթքը և կկատարէ նրա խնդիրքը: Եթէ դուք այդ սրտով մըտնէք նորա տաւնը՝ վախ էլ կունենաք ձեր սրտումը. դուք կվախենաք և կմտածէք—թէ մաքսւի պահենք սրտերս, չլինի՞ թէ աղտոտուի և Մեծ չայրը մեզնից նեղանայ և մեր աղօթքը չլսէ. ուրեմն մաքուր սիրտ ունեցողը՝ միմնոյն ժամանակ և վախ կունենայ և զգոյշ կլինի՝ չլինի թէ Մեծ չօրը նեղացնի, բայց հարկաւոր է զիտենալ—

թէ ինչպէս մաքուր պահենք մեր սիրտը. այժմ ես ու-  
զում եմ, որ գուք ասէք այդ. հապա տեսնեմ, ով կսրոց  
է ասել:

—Ես կասեմ:

Ասա Գոհարիկ:

—Մեր սիրտը մաքուր պահելու համար՝ պէտք է  
շխռովենք, սուտ շխռունք, երդում շուտենք, հայրիկին-  
ու մայրիկին լսենք, շրարկացնենք, քոյրերի ու նղբայր-  
ների հետ սիրով լինենք, շկոռուենք:

—Ես շարունակեմ,

Ասա Աստղիկ:

—Մեր սիրտը մաքուր պահելու համար՝ պէտք է  
մեծերի խօսքը լսենք, ծերերին պատուենք, քահանանե-  
րին փողոցում պատահելիս՝ ողջունենք, ձեռքը համբու-  
րենք և ասենք «Օրհնեա տէր». պէտք է կաղին, կոյրին  
խղճանք, ողորմենք և ոչ թէ ծիծաղենք նրանց վերայ,  
ինչպէս շատ տղայք են անում:

Կարող ես շարունակել, Շողակ:

—Կարող եմ:

Շարունակիր:

—Մեր սիրտը մաքուր պահելու համար պէտք է  
մտածենք ու աղօթենք մեր հայրիկի ու մայրիկի համար,  
մեր քահանաների, ուսուցիչների, վարժուհիների, ճանա-  
նապարհորդների, բանտարկեալների, հիւանդների համար:

—Ես էլ ասեմ:

Ասա Հայկանոյշ:

—Մեր սիրտը մաքուր պահելու համար՝ պէտք է  
գնանք տեսութեան աղքատ հարկաններին, հիւանդնե-  
ներին, բանտարկեալներին և հետներս տանենք կամ փող  
կամ ուտելիք, եթէ ունինք:

—Ես էլ ասեմ:

Առաջ Սիրուշ:

—Մեր սիրուը մաքուր պահելու համար՝ պէտք է ամեն մի մարդու ուզենք այն՝ ինչ որ մեզ համար ենք ուզում:

Հապակ տեսնեմ երեխայք, որին ասածը աւելի հաւանեցիք. Գոհարիկին ասածը, Ըստղիկինը, Ջողակինը, Հայկանուշինը՝ թէ Սիրուշինը:

—Բոլորի ասածն էլ լաւ է:

Ճիշտ է. ճիշտ է. այժմ գովում եմ ձեզ. շատ ուղիղ ասացիք, բոլորն էլ լաւ ասացին. ես էլ կազօթեմ—որ մեր Մեծ Հայրը ձեզ բոլորիդ էլ չնորհք տայ, որ աստղի պէս շողչողուն և աղքիւրի պէս վճիտ, յստակ սիրտ ունենաք միշտ և այդպիսի սրտով Մեծ Հօր ան ու երկիւղը սրտերիդ մէջ՝ մտնէք նորա տունը. և երբ Մեծ Հօր ան ու երկիւղը սրտերումդ կունենաք՝ այն ժամանակ ուրախութեամբ կերթաք նորա տունը. այդ դուք գիտէք, սովորել էք. յիշնւմ էք:

—Յիշում ենք:

Վախով և ուրախութեամբ Մեծ Հօր տունը գնալու և մտնելու համար Սուրբ զրգումը այսպիսի սիրուն իմաստներ ենք կարդում. «Կմտնեմ Քո տունը. երկրպագութիւն կտամ Քո սուրբ Տաճարին, Քո սուրբ երկիւղով»: Մի ուրիշ տեղ էլ այսպէս է գրուած. «Ուրախանում էի ես, երբ ինձ ասում էին՝ գնանք Սստուծոյ տունը»:

Եւ որովհետեւ Մեծ Հայրը, ինչպէս սովորեցինք, ամեն բան կարող է անել. և ամեն բան իրանն է՝ ուստի և ասում ենք. «Որովհետեւ Քոնն է Թագաւորութիւնը, զօրութիւնը կամ կարողութիւնը և փառքը. այժմ և ամեն ժամանակ». Այսքանը բաւական է այսօր. այժմ երգենք: Ի՞նչ երգ դիտէք Հայերէն դասից սովորած:

—Երկու փոքրիկ աշակերտ:

Լաւ, թող երկուսը դուրս գան. այս նստարանի վերայ նստեն ու պարապեն, իբրև աշակերտ, ես էլ կգամ իբրև ռւսուցիչ. իսկ դուք բոլորդ էլ երգողներ։ Հապա սկսենք<sup>1)</sup>։

ԺԲ. Գ ա ս.

Կրկնութիւն<sup>2)</sup>։

Սնցեալ դասերին դուք ինձ ասացիք ։ Ժէ Մնծ Հօր տունը գնում ենք ազօթք անելու. այժմ ես հարցնում եմ—ա. Ինչ ձեսակ ենք ազօթում. բ. Երբ պէտք է ազօթենք. և գ. մրտեղ պէտք է ազօթենք.

Տեսնեմ առաջին հարցմունքիս ով կպատասխանէ։  
—Ես կասեմ։  
Ասա Եղսիկ։  
—Մենք ազօթում ենք՝ երեսներո խաչակնքելով։  
Լաւ. բայց ինչ ենք ասում խաչակնքելիս։  
—Եսում ենք—Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ըմէն.

Ճատ լաւ. էլի ինչ ձեմ կան. Եղսիկ։

—Զոքում ենք, ծունը ենք դնում։

Էլլի։

—Էլ չգիտեմ։

Ո՞վ գիտէ։ Ոչ ոք. լաւ. մնացածն էլ ես կասեմ։

<sup>1)</sup> Ակսպիսի վարժութիւններ շուտ շուտ պիտի լինեն, որ երեխանները զուարթանան։

<sup>2)</sup> Մնծ Հօր տան ազօթքները կրկնել տալ. նախ լառաջադէմներին. լետոլ խմբական ձեռվ—դեռ առաջին կարգ նստարաններին. լետոլ՝ երկրորդ. լետոլ՝ երրորդ, եթէ կար. իսկ ամենիդ վերջը՝ ամբողջ դասարանին կրկնել տալ. վերջը հատ հատ. ուղղել սխալները. դարձեալ կրկնել տալ հատ հատ և խմբական—մինչև դասարանը իւրացնէ ազօթքի դասը։

Պատարագի ժամանակ դուք տեսել էք որ Պատարագիշ  
քահանան ձեռքերը վերև տարածած աղօթում է<sup>1)</sup>:

— Եսեմ ենք:

— Ես կասեմ երբ է այդպէս անում:

Ասա Վարդուշ:

— Ձեռքերը վերև տարածած աղօթում է Սուրբ,

Սուրբ, Սուրբ. ասելու ժամանակ:

Ելի ինչ են անում Սուրբ, Սուրբ ասելու ժամանակ:

— Ես կասեմ:

Ասա Արեգնազան:

— Ամեն մի Սուրբ, Սուրբ ասելիս՝ զանդ են տա-  
լիս, առաջ Դասումը կախած փոքր զանգակը և յետոյ  
զանգակատան մեծ զանգակը և քշոցները ճոճում են:

Ճատ լաւ. Արփենիկ կարող ես ասել—ինչպէս է  
ասւում Պատարագիշ քահանայի ձեռքերը վերև տարա-  
ծած աղօթելը:

— 2դիտեմ:

Ո՞վ կասէ:

— 2դիտենք:

Լաւ. ես կասեմ այդ ձև աղօթելը կամ աղօթա-  
կատարութիւնը ասւում է—Բաղկատարած աղօթակա-  
տարութիւն։ Կրկնել խմբովին։

— Բազկատարած աղօթակատարութիւն,

Լաւ. իսկ ով է տեսել ձեզանից ձեռքերի ծափերը<sup>2)</sup>  
իրար կպցրած աղօթելը։

— Ես եմ տեսել։

Ասա Հերիքնազ, երբ են այդպէս աղօթում։

— «Փառք ի բարձունս» և «Հաւատամք» ասելիս։

<sup>2)</sup> Պէտք է ցոլց տալ ձևը.

<sup>2)</sup> Հասկացնել սաներին ծափ, ծափեր բառերը և ցոլց տալ.

Ով կարող է ասել ինձ—թէ այդ ձեւ աղօթելը կամ աղօթակատարութիւնը ինչպէս է ասւում:

— Զգիտենք. Դուք ասէք:

Ճատ լաւ. Ես կասեմ—ձեռքերի ծափերը իրար կպցրած աղօթելու ձեզ ասւում է Ձեռնամած աղօթակատարութիւն։ Կրկնել խմբովին։

— Ձեռնամած աղօթակատարութիւն։

Ճատ լաւ։ Ուրեմն աղօթակատարութեան ձևերը առվորեցինք. իսկ նվ կարող է կրկնել։

— Ե՞ս։

Ասա Հոփիսիմէ։

— Աղօթակատարութեան ձևերն են—խաչակնքել. ասելով—Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամեն. Զոքել. ծունը դնել։ Բազկատարած աղօթել. Ձեռնամած աղօթել։

Կրկնել խմբովին։ Ճատ գեղեցիկ. այժմ տեսնենք աղօթակատարութեան ժամանակը և տեղը։ Համասփիւռ, կարհղ ես ասել։

— Կարող եմ։

Ասա։

— Մենք աղօթում ենք օրը երեք անգամ. առաւօտը, ճաշին եւ երեկոյին. իսկ կոյսերը՝ շորս անգամ. շորրորդ անգամուայ աղօթքը՝ Եկեղեցէն է. մենք աղօթում ենք Եկեղեցում։

Բացի այդ շորս անգամ Եկեղեցում աղօթելուց. Էլ ուրիշ անգամ շնչնք աղօթում և ուրիշ տեղ շնչնք աղօթում, Համասփիւռ։

— Եղօթում ենք դասից առաջ և դասից յետոյ ուսումնարանում։

Լաւ. հապա տեսնեմ, նվ ինձ կատէ. ուրիշ անգամ

Ա ուրիշ տեղ էլ կարնղ ենք ազօթել: Զայն չէք հանում.  
շգիտէք, ինչ է:

— Չգիտենք. Դուք ասացէք:

Լաւ. ես կասեմ—մենք ամեն ժամանակ պէտք է  
ազօթենք. մենք ամեն տեղ պէտք է աղօթենք. Մեծ  
չայրը միշտ մեզ լսում է և ամեն տեղ նա կայ: Ո՞վ  
կարող է ինձ ասել—երբ պէտք է լաւութիւն անենք,  
ողորմութիւն տանք, բարեգործութիւն անենք. արդեօք  
ժամանակ որոշել կարելի է:

— Ես կասեմ:

Ասա Մաքրուհի:

— Լաւութիւն անելը, ողորմութիւն տալը, բարե-  
գործութիւն անելը միշտ պէտք է լինի. ժամանակ որոշել  
չէ կարելի:

Չատ գեղեցիկ. այդպէս էլ ազօթք անելը ժամ ու  
ժամանակ չունի, ամեն ժամանակ կարող ենք և պէտք է  
ազօթենք. որոշիետև ազօթքով մենք խօսում ենք մեր  
Մեծ Հօր հետ. ով չի ուրախանայ՝ որ իւր Մեծ Հօր  
հետ քանի կարելի է շուտ շուտ խօսի. եթէ իրար հետ  
խօսել ենք ուզում և ուրախանում ենք, աւելի ևս Մեծ  
Հօր հետ խօսելը մեզ մեծ ուրախութիւն պիտի պատ-  
ճառէ: Իրարու հետ խօսելու համար տեղ ու ժամանակ  
հարկաւոր է:

— Ես կասեմ:

Ասա Աննա:

— Իրարու հետ խօսելու համար տեղ ու ժամանակ  
հարկաւոր չէ. որտեղ և երբ հարկաւոր է լինում այն-  
տեղ և այն ժամանակ մենք խօսում ենք իրար հետ:

Ուրեմն ճիշտ ես առում, Ծննա. բայց ոչ միշտ. երբեմն  
չէլ հարկաւոր է տեղ և ժամանակ նշանակել իրար հետ  
խօսելու համար: Լաւ: Ուրեմն եթէ իրարու հետ խօսե-

լու համար տեղ ու ժամանակ տրոշելչէ կարելի՝ այդպէս  
էլ Մեծ Հօր հետ խօսելու կամ ազօթելու համար ոչ  
տեղ է հարկաւոր ոչ ժամանակ. մանաւանդ որ Մեծ Հայրը,  
ինչպէս սովորեցինք, ամեն տեղ է և միշտ լսում է իրեն  
ազօթողներին. բայց ժողովրդի համար, որ միասին հա-  
ւաքուեն, եղբայրաբար ազօթեն, նշանակուած է Մեծ  
Հօր տունը - Եկեղեցին:

Հատ լաւ. յոյս ունիմ շէք մոռանալ ինչ որ սովորեցիք:  
Այժմ մի քանի փոքրիկ ազօթքներ սովորենք, սր մենք  
էլ ազօթենք, դուք գիտէք այդ ազօթքները, բայց էլք  
կրկնենք խմբովին—Յանուն Հօր և Որդւոյ և Հօղւոյն  
Սրբոյ. Ամէն:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ,  
որ խաշեցար վասն մեր. ողորմեա մեզ <sup>1)</sup>:

### III. ՀԱՏՈՒԱԾ.

գ. Ուսման տունը—ուսումնարան կամ Դպրոց:

1. Ուսման նշտանակութիւնը օգուտը և կարեռութիւնը.

#### ԺԳ. Դաս.

Ընկհանուվը կրկնովութիւն ծնողական տան և Մեծ  
Հօր տան <sup>2)</sup> ծնողական տանը ծնուեցաք. Մեծ Հօր տանը

1) Մի քանի անգամ կրկնել. իտու ջոկ ջոկ հարցնել.  
խաշանիչի տեղերը ցոլց տալ Ռւսուցիչը երբեմն երբեմն ինքը  
պիտի կրկնէ, որ սաները ուղիղ արտասանեն. պիտի հարցնէ  
հատ, հատ. սեղան սեղան և կամ ամբողջ դասարանով խմբո-  
վին. նորնպէս և միւս ազօթքները. իսկ երգող ազօթքները  
երգել խմբովին.

2) Ամփոփի կրկնողութիւն պիտի անել անցեալ երկու-

մկրտուեցաք: Ծնողական տանը մնուեցաք, մեծացաք-դարձաք 2, 3, 4, 5 տարեկան և ինչ սկսաք տնել, ուր զնալւ-  
Ես կասեմ:

Ասա Լուսնթագ:

— Երբ մենք դարձանք 2, 3, 4, 5 տարեկան, երբեմն  
հայրիկի, երբեմն մայրիկի, երբեմն էլ երկուսի հետ գնում-  
էինք Մեծ Հօր տունը:

Ճիշտ է, ճիշտ է. իսկ յետոյ, երբ հասակ առաք,  
աւելի մեծացաք ու դարձաք 6, 7, 8 տարեկան, ինչ  
կմտածէին ձեր մասին ձեր ծնողները:

— Ես՝ կասեմ:

Ասա Արշալոյս:

— Երբ մենք հասակ առանք, աւելի մեծացանք եւ  
դարձանք 6, 7, 8 տարեկան, մեր ծնողները մտածում  
էին մեղ ուսման տալ:

Ճատ լաւ ասացիր. բայց ձեր ծնողները ինչն էին:  
ուզում ձեզ ուսման տալ. միթէ առանց ուսման չէ կարելի  
ապրել:

— Ես կասեմ:

— Ասա Շողակաթ:

— Առանց ուսման էլ կարելի է ապրել. բայց ուսու-  
մը լաւ բան է:

Ինչն է լաւ:

— Ես՝ կասեմ:

Ասա Համասվիւու:

— Ուսումը լուր բան է նրանով, որ մենք շատ բան-  
ենք սովորում. ամիս ու կէս է որ ուսումը սկսուել է և մենք

Հատուածների. աշխատելով՝ որ անցեալների կապերը պահուած-  
վինին ալս՝ և առհասարակ հետեւեալ նորագոյն դասերի հետ-  
Կրկնողութեանը պիտի զոհել ամենաշատը մի քառորդ, որպէս-  
զի նոր դասը չիտաձգուի.

այսքան բան սովորեցինք կրօնից. Էնքան էլ հայերէնից, ռաւստերէնից թուաբանութիւնից. եթէ ուսումնարան չէինք եկել, ով մեզ կարգվեցնէր:

Բացի դրանից, էլի ինչ օգուտ ունի ուսումը. հապա տեսնեմ, ով կարող է ասել:

—Ես կարող եմ ասել:

Ասա Լուսաբեր:

—Բացի դրանից ուսումը էլի էն օգուտն ունի, որ մեր միաքը բաց է անում, մենք շատ բան ենք հառկանում, գրքեր ենք կարդում, առակներ, ոտանաւորներ, երգեր, հանելուկներ ենք սովորում, իմանում ենք՝ թէ ինչ պիտի անենք, ճանաշում ենք մեր պարտականութիւնք դէպի հայրիկն ու մայրիկը, դէպի մեր Մեծ Հայրը. ինչպէս որ սովորեցինք ձեզանից:

Ճատ լաւ ասաց Լուսաբերը. ով կարող է էլի մի քան աւելացնել:

—Ես կաւելացնեմ:

Ասա Խւղաբեր:

—Ուսում առնելով մենք սիրուն պատմութիւններ ենք սովորում. պայծառ աստղի և աղրիւրի մաքուր ջրի պէս սիրտ ենք ունենում, և մեր Մեծ Հալը մեզ սիրում է և մեզ օրնում է:

Ճատ լաւ Լուսնթագը, Արշալոյսը. Շողակաթը, Համասփիւր, Լուսաբերը, Խւղաբերը լաւ ասացին. մի քիչ քան մնաց ասելու. էն էլ ես կասեմ: Ուսման օգտի կամ կարեռութեան մասին շատ քան կարելի է ասել—Մեծ Հօր տանը գրակալ կայ. յիշնւմ էր:

—Այն:

Թիշնւմ էք նոյնպէս որ նրա վերայ դնում են ձաշոց գիրքը և կարդում:

—Թիշում ենք:

**ՄԵծ Է՝ թէ փոքր:**

**— զատ մեծ է:**

Ուսման օգուաների մասին այնքան բան կարելի է ասել ու գրել՝ որ հինգ այնքան դիրք դուրս գայ. զարմանում էք հա: Աւելի էլ դուրս կդայ, մի զարմանաք և մի վախճանաք. դուք դեռ փոքրիկներ էք, ձեզ շատ բան ասել չէ կարելի. քանի մեծանաք՝ այնքան աւելի շատ բան կսովորէք, դասարանից դասարան կփոխուէք, գըքեր կը կարդաք և այնքան աւելի ու աւելի կսիրէք ուսումը. քայց ինչքան էլ սովորէք՝ էլի քիչ կերևայ. կուզէք էլի սովորել, միշտ սովորել. ամեն բան հասկանալ ու գիտենալ: Դուք որ հաց էք ստում, կշտանհւմ էք՝ թէ ոչ:

**— Կշտանում ենք:**

**Միւս օրը էլի ուզնւմ էք ուտել:**

**— Ուզում ենք ալո:**

Քանի տարի էլ որ ապրէք, ասենք հարիւր տարի, էլի կուզէք ուտել, թէ կշտացած կլինիք:

**— էլի կուզենք ուտել:**

Ուսումն էլ այդպէս է. քանի սովորէք, էլի կուզէք սովորել. գալ տարի, միւս տարի դասարանից դասարան կփոխէք, շատ գըքեր կկարդաք. դուք չէք կշտանալ. էլի կուզէք կարդալ. ուրիշ էլի շատ գըքեր կկարդաք. էլի չէք կշտանալ. էլի կուզէք կարդալ, և այսպէս ուսումին մերջ չկայ. քանի շատ սովորէք՝ էլի կուզէք սովորել: Տւրեմն տեսնհւմ էք որ ուսումը շատ և շատ օգուտներ ունի և շատ լաւ բան է. երեխան դեռ օրօրոցումն է և ծնողները սկսում են մտածել նրա ուսման մասին: Դուք մութ խաւարին սենեակից սենեակ կարնդ էք գնալ, կարնդ էք կարդալ, կարնդ էք գրել, կարել, ասեղ թելել կամ մի բան որոնել:

**— Ոչ:**

Ի՞նչ է հարկաւոր ձեղ:

— Ճրագ կվառենք:

Խսկ ճրագը ինչ ունի:

Լոյս ունի:

Ուրեմն լոյս է հարկաւոր: Առանց ուսումի էլ են ապրում շատերը. քայց ուսում ունեցողները հասկանում են ինչ որ անում են. մուժ խաւարի մէջ չեն. որովհետեւ լոյս ունեն: Ուրեմն Ուսումը լոյս է. ուսումը կեանք է, ուսումը գանձ է, ուրեմն ուսումը լաւ րան է՝ թէ ոչ:

— Ճատ լաւ բան է:

Կարող ես ասել Գոհարիկ:

— Կարող եմ:

Ասա:

— Իմ մեծ քոյրս ուսումը վերջացրեց երկրորդ գիմնազիայում. այժմ էնպէս սիրուն գլքեր է կարդում, հայրիկին ու մայրիկին և մեզ քոյլերիս ու եղբայրներիս պատմում է, ի՞նչքան ուրախանում ենք, որ լաւ լաւ, խելօք բաներ ենք սովորում. երբ մեզ մօտ հիւրեր են գալիս, լաւ խօսում է, ասում է, պատմում է դէսից, դէնից. բոլորն էլ զարմանում են նրա խելքի, ուսումի վրայ ու ասում են հայրիկին ու մայրիկին— բախտավուր իք, վուր էս հանգի գիտում վուրթի ունիր, էլ ինչ դարդ, ինչ փիքր օւնիք. զօգրայ է, խելքի կօլօփ է..-

Ինչու էք ծիծաղում Գոհարիկի վերայ:

— Գոհարիկի վերայ չենք ծիծաղում. քաղքի հանգի է խօսում. նրա համար ենք ծիծաղում:

Զեր խօսելին է լաւ, թէ քաղքի հանգինը:

— Մեր խօսելը լաւ է:

Ինչիցն է:

— Նրանից որ մենք ուսումնարան ենք գալիս և սովորում ենք և դուք մեր խօսքերը ուղղում ենք:

Ճիշտ է. բայց Գոհարիկը ուղիղ ասաց. ով որ լաւ ուսում ունի՝ մատով են ցոյց տալիս նրան։ Այժմ դուք գիտէք թէ ուսումը ի՞նչ մեծ նշանակութիւն ունի, ի՞նչ մեծ օպուտներ ունի. ևքանի շատ սովորէք՝ անփան շտա կսիրէք ուսումը, միայն հարկաւոր է աշխատել և չծուլանալ. ծոյլերի համար հացն էլ անօպուտ է, լոյսն էլ անօպուտ է, ուսումն էլ անօպուտ է։ Հապա տեսնեմ, մրմնք ձեզանից պիտի ծուլանան ու ոչինչ չըննեն։ թող կանգնեն։

Ուրախ եմ, որ ոչ ոք չէ վերկենում։ Այժմ տեսնեմ – ով պիտի աշխատասէք լինի և լաւ սովորի, թող նա կանգնի։

Եյժմ աւելի ուրախ եմ, որ բոլորդ էլ վերկացաք. հիմա տեսնեմ, խոստումներդ կվատարէք՝ թէ ոչ։

— Կլատարենք. աղնիւ խօսք։

---

## 2. Դպրոցական հայրեր ու մայքեր կամ Ռաման ծնողներ։

### ԺԴ. Դ ա ս :

• Ծնողական տանը ոլոնք էին ձեր խնամակալները, ձեր պահողները, ձեզ վերայ հսկողները, ձեզ ուտացնողները, խմացնողները, հագցնողները. ով կարող է ասել. — Ես կարող եմ ասել։

Ասա չեղինէ։

— Ծնողական տանը մեր խնամակալներն էին մեր ծնողները — հայրիկն ու մայքիկը։

Ճատ լաւ. Մեծ չօր տանը որոնք էին ձեր հոգեսոր հայրերը, որ ձեզ մկրտել են, խոստովանացրել են, հաղորդել են, քարոզել են, ձեզ համար ժամ են ասել. և

Երբ կմեծանաք՝ ձեր միւս հոգեոր պէտքերը նրանք պիտի կատարեն:

— Ե՞ս կասեմ:

Ասա Հահանդուխտ:

—Մեծ չօր տանը մեր հոգեոր հայրերն են քահանաները:

Հատ լաւ: Այժմ տեսնեմ, ավ ինձ կասէ — թէ Ուսման տանը որմնք են ձեր ուսման հայրերն ու մայրերը:

— Ե՞ս կասեմ: Ե՞ս կասեմ: 2է, ես ասեմ: Ես լաւ կասեմ:

Հայ, գիտեմ ամբողջ դասարանն էլ պատրաստ՝ Է ասելու, լաւ է, լաւ է: Այժմ ես շեմ նշանակի — թէ ով ասի, ոչ էլ կհարցնեմ — թէ ով կարող է ասել. այժմ ես դիմում եմ դասարանին — ձեզ. հապա երեխայք, դուք ումն էք ուզում որ ասի:

— Համասփիւռն ասի, Համասփիւռը:

— 2է, Շողերն ասի,

— 2է, չէ, Սշխէնն ասի:

— Գոհարիկն ասի, Գոհարիկը...:

Բաւական է լաւ, չորս անուն տուիք, չէ:

— Այն:

Դէ, թող իրանք ջոկն իրանց միջից ասողին: Հապա Համասփիւռ, Շողեր, Սշխէն, Գոհարիկ, դուք ասէք, ձեզանից հըն ասի:

— Համասփիւռը թող ասի:

Լայ: Ասա՝ Համասփիւռ:

— Ուսման տանը կամ սուսումնաբանումը մեր ուսման հայրերն ու մայրերն են մեր կրօնի տէր-հայրերը, ուսուցիչները, վարժուհիները, տեսուչը, հոգաբարձուները:

Հայտ լաւ. բայց ինչու ես ասում կրօնի տէր-հայ-

ըերը. կրօնը միայն սէր-հայրերինը հօ չէ, ձերն էլ է-դուք էլ կրօն ունիք. աւելի ճիշտ կլինի, որ ասէք—կրօնուսոյցներ. իսկ եթէ դա դժուար է՝ կարող էք ասել կրօնի գասատոնները կամ կրօն սովորեցնող քահանաները. այս երեքից մըր կարսղ էք հեշտ ասել:

—Կրօնուսոյցները հեշտ է ասել:

Ճատ լաւ, այդպէս ասացէք: Այժմ տեսնեմ, ով կարող է ինձ ասել—թէ դրանցից ամեն մէկը ինչ պարտականութիւն ունի դէպի ուսման տունը, դէպի սաները—որ դուք էք:

—Ե՞ս կասեմ:

Ասա Փառանձեմ:

—Մեր կրօնուսոյցները մեզ կրօն են սովորեցնում. աղօթել, խաչակնքել են սովորեցնում. էլի թէ ժամումը ոնց պիտի կանգնենք:

Ինչու ես ասում ժամումը, ոնց. աւելի լաւ է, որ ասես Մեծ Հօր Տանը կամ Եկեղեցումը ինչպէս պիտի կանգնենք: Այժմ տեսնեմ ով ինձ կասէ վարժուհիների մասին:

—Վարժուհիների մասին ես կասեմ:

Ասա Նազլու...

—Մեր վարժուհիները մեզ սիրում են մեր մայրիկի նման. շորերս ու մազերս, ձեռքերս ու եղունգներս, գըրքերս ու տետրերս ամեն օր նայում են աղլուխներս տեսնում...

2եղաւ, չեղաւ. ասա, թաշկինակներս:

—Թաշկինակներս տեսնում են, որ մաքուր լինի. հիւանդին դեղ են տալիս ուսումնաբանի դեղատնից և սովորցնում են թէ ոնց պիտի...

—Չէ, չէ, ներողութիւն. ոնց չպիտի ասէի, սխալուեցի. և սովորցնում են ի՞նչպէս պէտք է դեղը խմել կամ

Քսել, քանի անգամ, որ ժամին և այն. Նրանք մեզ սովորեցնում են հայերէն և ոռւսերէն դրել ու կարդալ, թուաբանութիւն—գրել ու հաշուել. գծեր քաշել. պատկերների վերայ սովորեցնում են պատմել:

Լաւ է. Նազլուն էլ լաւ ասաց. Ուրիշ ոչինչ չե՞ն անում վարժուհիները:

—Ես կասեմ,

Առա չրաշեայ:

—Նորա գալիո են տեսնում մեր տները, թէ ինչ-պէս ենք ապրում, քանի օթախ ունենք...

Ինչու օթախ, ինչպէս պէտք է ասել:

—Սենեակի:

—Քանի սենեակ ունենք, ալքատ ենք թէ ոչ. թէ աղքատ ենք՝ մեզ օգնում են ուսումնաբանից—չոր են տալիս, նախաճաշ, չուստեր...

Լաւ, ճիշտ է: Ո՞վ կասէ տեսչի մասին: Ոչ ոք. իսկ չոգաբարձուների մասին. Էլի ոչ ոք. դէ լաւ. այդ էլ ես կասեմ. բայց քիշ կտսեմ և կարճ, որ կարողանաք մաքներդ պահել:

Տեսսւչը ուսման տան մէջ մեծ գործ ունի կատարելու. Նորա պարտականութիւնը շատ, շատ է. Նա հսկում է<sup>1)</sup> թէ ձեզ վերայ և թէ մեզ վերայ. Նա պէտք է հսկէ—որ մենք ուսուցիչներս ու վարժուհիները լաւ պարապենք ձեզ հետ, յաւ սովորեցնենք ձեզ. Նա ժողովներ է անում—մեզ բոլորիս ժողովում է և խորհուրդ է անում մեզ հետ ձեր մասին, որ իմանայ, թէ ծոյլեր շատ կան թէ ոչ, չարեր ու անկարդ աղջիկներ կան արդեօք և ինչ է նրանց անկարգութիւնները, դասերին շեկող, դաս թովով աղջիկներ կան արդեօք և որո՞նք են. և

<sup>1)</sup> Անհասկանալի բառերը բացատրել.

ցետոյ միասին խորհուրդ անելով մտածում է միջոցներ գոռնել — որ ծոյլերը աշխատասէր լինին. շարերն ու անկարգները ուղղութին, խելօքանան. դասերը բաց թողնող աշակերտուհիները դասերը չժողովնեն առանց մեծ պատճառի. որ նրանց ծնողներն էլ չնորհակալ մնան. դպրոցից ու ուսման ծնողներից նա ժողովներ է անում և մեզ հետ միասին մտածում է — թէ ինչ դասավորեր են ձեզ հարկաւոր, ինչ պատկերներ, ինչ դասական պիտոյքներ. որպէս զի գնեն ու ձեզ բաժանեն և զուք նրանց վերայ սովորէք<sup>1)</sup>: Նա ժողովներ է անում ձեր մասին և մեզ հետ միասին մտածում է — թէ որոնք են ձեր մէջ խեղճերը, որոնք միջոց չունին ուսման փող վճարելու. խեղճերի ցուցակ է կազմում և տալիս է Հոդաբարձուներին. Նրանք էլ իրանց ժողովում որոշում են ազատել այդ խեղճերին ուսման վճարից. Տեսուշը ժողով է անում և մեզ հետ միասին որոշում է — թէ ձեզանից ով է կարօտ շորի ու նախաճաշի. ցուցակ է կազմում և տալիս է Հոդաբարձուներին. Նրանք էլ իրանց ժողովում որոշում են տալ այդ խեղճերին նախաճաշ և շոր կամ հագուստ, ստնաման: Տեսուշը ժողով է անում մեզ հետ միասին թէ քննութիւնից առաջ և թէ քննութիւնից յետոյ, և որոշում է — թէ որոնք են դասարան փոխողները, որոնք վերաբննուղները և որոնք մնացողները. որքան հոգի կարելի է ընդունել նոր մտնողներից և որքան աեղ կայ: Այս բոլոր բեռը, ծանրութիւնը տեսչի վերայ է. շատ է թէ քիչ:

— Ճատ շատ է:

<sup>1)</sup> Ցուց տալ դասարանի պատերից կախ արած կենդանաբանական, բուսաբանական և «Փենուի» կամ ալլ ընտանելական պատկերները:

Էլի շատ կայ, ես դեռ քիչ ասացի: Ուսուցիչների ու վարժուհիների աշխատանքն էլ շատ է. հեշտ բան է 35, 40, 50, 60 հոգի մի գասարանում՝ նստած՝ ամեն մէկին ջոկ ջոկ հարցնել, պատմել, հասկացնել դասը և աշխատել որ բոլորն էլ լաւ սովորեն, շատ դժուար է. գուր ինքներդ տեսնում է—քոր ձեր մէջ կան այնպիսիները, որոնց միմնոյն բանը տասն անգամ կրկնում ենք թէ ես և թէ գուր. Բայց էլի ոչինչ չի դուրս գալի. կան թէ չկան:

—Կան այն. կան:

Ուրեմն տեսնում էք—ուրբան դժուարութիւններ կան ուսուցիչների ու վարժուհիների առաջնոր: Մեզ էլ ով է օգնում. գիտէք:

—Ո՛չ:

Գուր էք օգնում. ձեզանից նրանք՝ որոնք աշխատանք են ու յառաջադէմ. մենք ձեզանով ուրախանում ենք, քաջալերում ենք—սիրտ ենք առնում:

Այժմ տեսնենք թէ Հոգաբարձուներն ինչ պարականութիւններ ունին: Ուսումնարանում կամ դպրոցում դասական գործից յետոյ միւս բոլոր մնացած հոգն ու խնամքը Հոգաբարձուների պարագն է. ուսուցիչներին ու վարժուհիներին ընտրում է տեսուչը՝ հաստատում են չոծաբարձուները. աշակերտների ցուցակը կազմում է տեսուչը ուսուցիչների ու վարժուհիների հետ՝ հաստատում են հոգաբարձուները. դպրոցի համար պէտքական իրեղների ցուցակը հաստատում են հոգաբարձուները և որոշում են գնել դպրոցի համար. տեսանք—որ ձրի սովորովների, չորի կամ հազուսափ և ոտնամանի ու նախաճաշի կարօտ խեղճերի ցուցակը հաստատողն ու որոշողը գարձեալ Հոգաբարձուներն են. ձեզ համար տօնական ուրախութիւններ, տօնածառ կամ զրօսանիք-

Ներ կազմելու համար պէտք է որոշեն Հոգաբարձուները. դասարաններ աւելացնել կամ պակսացնել, աշակերտունիների թիւը աւելացնել կամ պակսացնել, ուսումնարանի կամ դպրոցի տարեկան ծախոն աւելացնել կամ պակսացնել—այս բոլորը որոշում են Հոգաբարձուները իրենց Հոգաբարձական խորհրդի կամ ժողովի մէջ։

Տեսնում էք ուրեմն—որ Դպրոցական հայրերից ու մայրերից ոչ ոք հանգիստ չէ. ամենքն էլ մրջինի նման աշխատում են։ Բայց գիտէք ում համար։ Զեղ համար. ձեզ համար երեխանք. որանից յետոյ, ինչ էք կարծում, պէտք է երախտագէտ լինիք ձեր ուսման ծնողներին՝ թէ ոչ։

—Իհարկէ. Դուք էք տալիս մեղ ուսման լոյսը. Ձեզ ենք պարտական մենք. Զեղ՝ մեր Ուսման ծնողներ։

Այն, այն. Երախտագէտ լինելը, լաւութիւնը ճանաչեցէք ձեր ուսման հայրերի ու մայրերի չարչարանքը. Նրանք գիշեր, ցերեկ ձեզ համար են մտածում—թէ ինչ սովորեցնեն և ինչպէս, որ ձեզ համար օգուտ լինի, որ դուք լաւ որդիք լինիք ձեր ծնողների համար, բարեպաշտ որդիք լինիք ձեր Մեծ Հօրը։ Նրանք ձեզ ուսում են տալիս. այդ ուսումը լոյս է. դուք առանց լոյսի գիշերը կարող էք մանգալ, կարող էք բան որոնել, բան անել. շէք կարող. լոյս է հարկաւոր ձեզ. ճրագ է հարկաւոր ձեզ. ահա ուսումն էլ այդպիսի ճրագ է. այդպիսի լոյս է, որ լուսաւորում է ձեր ճանապարհը կեանքի մէջ և ցոյց է տալիս ձեզ—թէ նւր պիտի գնաք և ինչպէս պիտի գնաք՝ որ հասնէք ձեր ուղած տեղը. օգուտ ստանաք կեանքից և օգուտ տաք մարդկանց։ Դուք այժմ չէք հասկանում, գեռ փոքրիկներ էք, գեռ երեխաններ էք. յետոյ կհասկանաք՝ երբ մեծանաք. դուք կիմանաք—որ ուսումը կեանք է տալիս, հայ է տալիս, ջուր է տալիս, շոր է տալիս. բայց որ աւելի

Գլխաւորն է—խելք է տալիս, միտք է տալիս և սիրտ է տալիս. որով Մեծ Հօրը սիրում էք. ուսումը սորվեցնում է ձեզ Մեծ Հօրը սիրել իրբն Հայր և վախենալ Նորանից. սրբեմն սիրոյ հետ միասին և երկիւղ պիտի ունենաք ձեր սրտումը դէպի Մեծ Հայրը. ինչպէս ս. Գիրքն է խրատում. «Եկէք որդիք. լսցէք ինձ. և Աստուծոյ երկիւղը կսովորեցնեմ ձեզ»<sup>1)</sup>:

---

3. Դպրոցական սաներ կամ ուսման որդիք:

ԺԵ. Փ ա ս.

Կըկնութիւն անցեալ դասից:

Ձեր այսօրուայ դասը շատ հետաքրքրական է, հապա հվ կիմանայ—թէ ուսուցիչների, վարժուհիների, տեսչի և հոգաբարձուների մասին սովորելուց յետոյ, էլ ո՞վ մնաց ուսման տանը կամ ուսումնարանումը, որի մասին չենք խօսել, չենք սովորել:

—Ե՞ս կասեմ: Ե՞ս էլ կասեմ: Ես լաւ կասեմ:

Արուսեակն ասում է թէ ինքը լաւ կասէ. հապա տռա Արուսեակ:

—Ուսման տանը կամ ուսումնարանումը ուսման ծնողներից յետոյ, ի հարկէ, պիտի սովորենք ուսման որդիների մասին:

Լաւ ասացիր. բայց ինչպէս գտար Արուսեակ:

—Ծնողական տանը առաջ սովորեցինք ծնողների մասին, իսկ յետոյ ծնողական տան որդիքների մասին. Մեծ Հօր տանը առաջ սովորեցինք հոգմար հայրերի—քահանաների մասին, յետոյ սովորեցինք ժողովրդի մասին.

---

<sup>1)</sup> Սովորեցնել աղօթքը մող լաւանի ձևով. Զեր ձարձ արդէն ասուեաւ նախնթացներում:

այժմ էլ նոյն կարգով պիտի սովորենք. առաջ սովորեցինք ուսման հայրերի ու մայրերի մասին. այժմ էլ պիտի սովորենք ուսման տաճ որդիների մասին; այդ մենք ենք—աշակերտուհիներս:

Կեցցէ Արուսեակը. շատ լաւ ասաց. չէ երեխայք:

— Հաստ լաւ ասաց. բայց կարելի է եղբայրը կամ քոյրը սովորցրել են տանը:

— Ե՛ ինչ անենք. թող ձեզ էլ սորվեցնեն. ես շատ ուրախ կլինիմ:

— Ո՛չ. Տէր-հայր, ոչ. ոչոք չէ սորվեցրել ինձ աանք-որովհետև նոքա այս ձեռլ չեն սովորել. բայց ես յիշում եմ անցեալ դասերը և կարգը միտքս պահելով՝ այնպէտ եմ պատասխանում:

Հատ լաւ է Արուսեակ. բոլորն էլ գոհ են—որ գու այդպէս կեղեցիկ պատասխանեցիր:

Հատ լաւ. ուրեմն այսօր ձեր մասին պիտի խօսենք: Հապա հարցեր տամ ձեզ—այս ուսման տունք նւմ համար շինուած:

— Մեզ համար:

Ինչու:

— Որ մենք այստեղ ուսում առնենք:

Լաւ. այս ուսման տան հայրերն ու մայրերը—ուսուցիչները, վարժուհիները, տեսուչը, հոգաբարձուները նաև համար են նշանակուած:

— Մեզ համար:

Ինչու:

— Որ մեզ ուսում տան, սորվեցնեն:

Լաւ. նոքա նւմ համար են մտածում, աշխատում, շարշարուում:

— Մեզ համար:

Ինչու:

—Որ մենք լաւ մարդիկ գուրս գանք:

Չատ գեղեցիկ. եթէ ուրեմն ձեր ուսման հայրերն ու մայրերը ձեզ սիրում են, ձեզ համար մտածում են, չարշարւում են՝ դուք ձեր կողմից ինչնվ կարող էք նրանց ուրախացնել—փողմա՞լ ոչ, շորով՝ ոչ. հայով ու ջրմվ՝ ոչ. նրանց տնին տալով, տեղ տալով՝ ոչ. պաշտօն տալով. ոչ. տեսնում էք—որ ոչ մի բանով չէք կարող նրանց լաւութեան տակից դուրս գալ. նրանց, ձեզ արած, բարիքը հատուցացնել. դուք այժմ ինչ ունիք, որ նրանց տաք. և նրանք չեն էլ սպասում ձեղանից այդ բաները. բայց նրանք ուրիշ բան են սպասում ձեղանից. քիչ բան, շատ թեթև բան. բայց լաւ բան. որ ձեզ համար է հարկաւոր և ոչ իրանց համար: Ուրեմն ինչ պիտի անէք, որ ձեր ուսման հայրերի ու մայրերի լաւութիւնը, աշխատանքը, սէրը, խնամքը զին դրած լինիք, ճանաշած լինիք. որ նրանք հաւատան—թէ դուք հասկանում էք և գնահատում էք: Ես արդէն ասացի ձեզ թէ քիչ բան, շատ թեթև բան է հարկաւոր. բայց չեմ ուզում որ ես ասեմ. ուզում եմ այդ դուք գտնէք և յոյս ունեմ որ կարող էք, եթէ լաւ մտածէք. հապա տեսնեմ ով կասէ. որ մենք լսենք:

—Ե՛ս կասեմ:

Տեսէք. Արաքսիան է ուզում ասել. որ ձեղանից գրեթէ երկու ամիս ուշ է մտել այս դպրոցը. հապա տեսնենք՝ կարծի է:

Ասա Արաքսիա:

—Մենք աշակերտուհիներս ոչինչ չունենք տալու անոնց. անոնք մեղնէ հարուստ են, մեղի կարօտ չեն. մենք աշխատինք պիտի չծուլանալ, համեստ նիստ ու կաց ունենալ, դաստիարակին խօսած դասը ուշադութեամբ լսել, իր ժամանակին դպրոց գալ, մեծերուն հետ քաղաքավարի ու պատրով վարուել, ընկերուհիներուս

Հետ սիրով ըլլալ, իրար օգնել, ճանապարհին զլուխնիս քաշ զպրաց գալ ու տուն գնալ, մերին անունը պահել։ և շատ ասոնց նման պարտքելնիս կատարելու՝ ցոյց տուած կըլլանք երախտագլուռութիւննիս դէպի մեր ուսման ծնողները<sup>1)</sup>։

Տեսնաւմ էք. ի՞նչ գեղեցիկ տաց Արաքսիան. բայց հասկանաւմ էք նորա ասածները. նա ուրիշ տեսակ է խօսում. չէ։

— Այս. այդ նրտեղի լեզու է։

Դա, Մանուշակ, Ճաճկաստանում ապրող մեր Հայեղբայրների լեզուն է. նորա ալդպէս են խօսում. չէ որ մեր Թիֆլիզումն էլ քաղքի հանգի են խօսում. ինչպէս պատմեց Գոհարիկը մի քանի դաս առաջ։ Թուք այժմ լաւ չէք հասկանալ Արաքսիայի և Հրահատի խօսքերը. բայց յետոյ կվարժուէք. և հարկաւոր է, որ սովորէք։

— Այնքան էլ դժուար խօսքեր չկան. հասկանում ենք։ էլի ով կարող է ասել. կարելի է պակաս բան մնաց ասելու։

— Ես կասեմ։

Ասմ Մանուշակ։

— Արաքսիան ամեն բան տաց. մի բան միայն մոռացաւ—մենք աշակերտուհիներս մեր ուսման հայրերի ու մայրերի համար ազօթք պիտի անենք թէ մեր ծնողական աանը, թէ Մեծ Հօր տանը և թէ այստեղ-ուսման տանը, որ մեր Մեծ Հայրը նրանց ոյժ տայ, առողջութիւն տայ, որ նրանք մեզ խնամեն, սովորցնեն, ուսում տան։

Լաւ է. լաւ է. Մանուշակն էլ լաւ տաց։

1) Անձանօթ բառերը պէտք է բացատրել և ընտելացնել մերոնց՝ Տաճկահալ բարբառին. և նրանց՝ մեր գրականական խօսքին.

—Կարհղ եմ բան մը ըսել Մանուշակին պատասխան։  
Սահ Արտօսիա։

—Այդ դասին ես գեռ չէի մտած դպրոց. երբ Մեծ  
Հօր տան գասը կարվէին քայրերս, ես այդ կսովորիմ  
Համասփիւռէն հետզհետէ։

Ի հարդի՛ Ծագօսիան նոր է եկել. դեռ չէ սովորել։  
—Ես կարող եմ մի բան աւելացնել։

Սահ Հայկանոյշ։

—Երբ մենք պատահենք մեր ուսման ձնողներին։  
Անձ Հօր տանը, կամ փողացներում, կամ մի ուրիշ տեղ՝  
պէտք է ողջունենք համեստ կերպով։

Լաւ. Էլ էլի՞ ով կասէ։

—Ես։

Առա Ճողակաթ։

—Մենք աշակերտահիներս պէտք է մեզ համեստ  
պահենք ամեն տեղ. որ տեսնողները դովին մեր ուսումնա-  
բանը և մեր ուսման հայրերին ու մայրերին։

Լաւ է. բոլորդ էլ լաւ ասացիք. բայց Մանուշակը-  
մի բան ասաց—նա ասաց թէ պէտք է աղօթք անենք-  
մեր ուսման հայրերի ու մայրերի համար. բայց չէ որ  
մենք սովորեցինք—թէ պէտք է աղօթենք բոլոր մարդ-  
կանց համար. որովհետեւ բոլոր մարդիկն էլ մեր եղբայր-  
ներն ու քայրերն են. թէպէտ, ի հարկէ, աւելի շուտ  
մննք պիտի աղօթենք մեր բարերարների, մեր խնամա-  
կաների համար. Մենք սովորեցինք նոյնպէս—որ աղօթքը-  
մեր Մեծ Հօր հետ խօսեկցութիւն է. սովորեցինք—որ  
ամեն տեղ և ամեն ժամանակ պէտք է աղօթենք—ձնողա-  
կան տանը՝ քնից վեր կենալիս, քնելուց առաջ, հացից  
առաջ, հացից յետոյ. Մեծ Հօր տանը՝ ներս մտնելիս-  
և ժամանացութեան ժամանակ. Խսկ ուսման տանը՝ շպէտք-  
է աղօթենք. ով կասէ։

—Ես կասեմ:

Ասա՞ Գոհարիկ:

—Ի հարկէ պէտք է աղօթենք. եթէ ծնողական-  
տանը, Մեծ Հօր տանը և ամեն տեղ ու ամեն ժամա-  
նակ պէտք է աղօթենք. ուրեմն Ուսման տանն էլ պէտք  
է աղօթենք, որ Մեծ Հայրը մեզ շնորհք տայ լաւ սո-  
վորելու:

Բայց Երբ պէտք է աղօթենք. Գոհարիկ:

—Պէտք է աղօթենք դասից առաջ և դասից յետոյ-  
շատ լաւ է. ապրիս Գոհարիկ:

Կուգէք սովորենք այդ աղօթքները:

—Կուգենք. կուգենք:

Բայց շուտով զանգ կտան. աւելի լաւ է՝ գալ դասին-  
թողնել. այժմ երգենք: Ի՞նչ երգ կուգէք, որ երգենք:

—Ահա՛ հասաւ նոր տարին:

Սովորել էք:

—Այս. սովորել ենք օրիորդից:  
Երգեցք. բայց մեզմ և միասին:

#### 4. Աղօթք դասից առաջ<sup>1)</sup>,

ԹԶ. Դ ա ս.

Մի որ և իցէ բան անելուց, կամ մի որ և իցէ գործ

<sup>1)</sup> Առ հասարակ թէ աղօթքներ, թէ շարականներ.  
թէ տաղեր դասաւանգելուց առաջ, օգտակար է աւանդել-  
դասի իմաստի համեմատ նախապատրաստական վարժութիւն-  
ներ անել սաների հետ. ալդ վարժութիւնները կնպաստեն-  
սաներին հեշտութեամբ իւրացնելու աղօթքի ոգին ու բովան-  
դակութիւնը գիտակցօրէն և ոչ անգիր սերտողութեամբ:

սկսելուց առաջ՝ նւմ պիտի դիմենք, նւմ օրհնութիւնը և օգնութիւնը պիտի խնդրենք:

—Ես կասեմ:

Ասա Նազելի:

—Ամեն մի բան անելուց, ամեն մի գործ սկսելուց առաջ մենք պիտի դիմենք մեր Մեծ Հօրը և նորա օրհնութիւնն ու օգնութիւնը պիտի խնդրենք:

Հատ լաւ ասացիր: Եյժմ մենք դաս ունինք. մեր գործը, այս ուսման տանը, դասն է. մեր դասական գործը սկսելուց առաջ նւմ պիտի դիմենք և ինչ պիտի խնդրենք:

—Ես կըսեմ:

Ասա Արաքսիա:

—Դասական գործը սկսելէն առաջ մենք պիտի դիմենք մեր Երկնաւոր Հօրը. պիտի խնդրենք որ մեզի իր շնորհքը պարզեն. որպէս զի կարողանանք մենք ամուր կերպով մը դաստիարակին խօսած դասը լսել ու ըմբռնել. ասկէ զատ խօսած դասէն օգուտ քաղենք, որպէս զի իր ժամանակին կարողանանք օգուտ տուած ըլլալ եղբայրներու ու քոյրերու. ինչպէս այսօր մեր դաստիարակներն ու դաստիարակչուհիները կընեն:

Գեղեցիկ է, բայց էլի բան կայ առելու՝ թէ Արաքսիան բոլորն ասաց:

—Էլ ոչինչ չկայ, բոլորը ասաց:

2է, բոլորը շասաց. մնացածն էլ ես կասեմ— մենք այսօր պիտի սովորենք, որ դասից առաջ, կամ ուսում առնելուց առաջ՝ ինչ բանի վերայ պիտի դարձընենք մեր ուշագրութիւնը. այսինքն՝ դասից առաջ ասելու աղօթքով ինչ բաների մասին պիտի խօսենք մեր Մեծ Հօր հետ: Մեզ ինչ է հարկաւոր ամենից առաջ. մեզ ամենից առաջ հարկաւոր է, ինչպէս ասացին նա-

գելին ու Արաքսիան, մեր Մեծ Հօր օրհնութիւնը. երբ  
Նա կօրհնէ մեզ՝ ուրեմն կտայ մեզ իւր շնորհը, այն  
ժամանակ և նրա օրհնութիւնը կհասնի մեզ—մեր միտ-  
քը կբացուի, մենք կհասկանակ դասը, կըմբանենք, ա-  
մուր ու պինդ կսովորենք: Իսկ սովորելուց յետոյ հմ  
պիտի ծառայենք: Արաքսիան ասաց — մենք պէտք է ծա-  
ռայենք մեր եղբայրներին ու քոյրերին. իսկ նրանցից  
առաջ: Ամենից առաջ մենք հմտն ենք պարտական մեր  
կեանքով:

—Ե՞ս կըսեմ, տէր-հայր,

Սսա Արաքսիա:

—Ամենէն առաջ մենք մեր կեանքով պարտական  
Անք մեր երկնաւոր Հօրը. վասն զի նա է մեզ ստեղծէր  
և տմին բարիք նա է մեզ պարզէր:

Ճատ լաւ ասացիր, Արաքսիա: Ուրեմն երբ մենք  
դաս կառնենք, կսովորենք և հետզհեաէ ուսում կառնենք,  
շատ բան կդիտենանք՝ ամենից առաջ պէտք է մեր Մեծ  
Հօրը ծառայենք. նորա փառքը ճանաշենք ու հասկա-  
նանք: Այսպէս շէ Արաքսիա:

— Այո, այդպէս է, տէր-հայր. մենք բոլոր մեր բա-  
րի գործքեր նորա փառքին համար պիտի ընենք, նորա  
փառքին պիտի ծառայեցնենք վասն զի նա է մեր Ստեղ-  
ծողն ու Տէրը:

Ճատ լաւ, ուրեմն մեր ուսումով մենք, ամենից ա-  
ռաջ, պիտի ճանաշենք Աստուծոյ — մեր Մեծ Հօր փառքը:  
Մ' է Աստուծուն աւելի ճանաշում. ու սիրում—ուսում  
ունեցնողը՝ թէ ուսում չունեցողը:

—Ե՞ս կըսեմ:

Դու շատ ասացիր, Արաքսիա, այժմ մի ուրիշը թող  
ասէ:

—Կրնամ ես լսել տէր-հայր:

Կարող ես. ասա Հրահատ. դու էլ Սրաքսիայի հայւ-  
րենակից եռ և միասին էք մտել այստեղ. դու էլ ուստած  
կընիս. հասակնիդ մեծ է. ուռեմբէն չգիտենալու համար  
միայն նստած էք այս փոքրիկների հետ, ուրեմն դուք  
ձեր ընկերունիներին պիտի օղնէք հայէրեսից, կրօնից  
և թուարանութիւնից. իոկ նրանցից յառաջադէմները ձեզ  
կօգնեն ուսւէրենից։ Ճատ լաւ, դէ, ասա Հրահատ։

— Թուք հարցուցիք — ուսում ունեցնեն աւելի կճանշ-  
նայ Սստուծոյ փառքը՝ թէ տգէտը. ես օրինակ կվերցու-  
նեմ շինականի մը զաւակ և քաղաքացւոյ մը որդի. շի-  
նականին զաւակը, պարզ կեանքին սովոր՝ բան մը շը-  
գիտէց փասն զի չէ ուսէք. քաղաքացւոյն տան որդին-  
դպրոց կերթայ ու կուգայ, դաստիարակներէն կրթիչ-  
խօսքեր կը լսէ, գրքեր կը կարդայ. հարկաւ նա տւելին  
կհասկնայ Սստուծոյ փառքէն, քան որ և է գիւղական մը-  
տակէ հեռացնելու է — որ ուսումը Սստուծոյ փառքին կծա-  
ռայէ և ով ուսում ունի՝ ան Սստուծոյ փառքն աւելի կը-  
ճանշնայ։

Սպրիս՝ Հրահատ, շատ գեղեցիկ ասացիր։ Այժմ ու-  
րիշ հարց. Սստուծոյ փառքը ճանաչելուց յետոյ և նորան-  
ձառայելուց յետոյ՝ մեր ուսումովը էլի ում պիտի ծար-  
ռայինք։

— Ե՞ս կասեմ.

Եթա՛ Լուսարեր։

— Մենք պիտի ծառայենք մեր ընկերներին։

— Ծխալ տսաց. ես՝ կասեմ։

Ասա Համասփիւռ։

— Մենք պիտի ծառայենք մեր աղգին։

— Ան ալ սխալ ըստաւ. կրնամ ըսել։

Ասա Հրահատ։

— Սստուծոյ փառքը ճանշնալէն ու Անոր ծառայե-

Քն եաքը, միր սւասմով մենք պիտի ծառայենք ծննդ-ներուս. որովհետեւ ծնողնիս ծնէր ու մնուցէր են մեզի. ծնողներէն ետքը պիտի ծառայենք մեր ազգին:

Հրահատը շատ լաւ է ասում:

— Հատ լաւ է ասում. բայց մի քանի խօսքեր շենք հասկանում:

Հապա ասացէք, ինչ խօսքեր:

— Օրինակ Շինականի մոր զաւակ. այդ նշանակում է—մի գիւղացու որդի. չէ ուսէր—չէ սովորել. դաստի-արակներէն կրթիչ խօսքեր կըսէ—ուսուցիչներից լաւ, խելօք խօսքեր է լսում. հարկաւ—իհարկէ. փառքէն—փառքից. ասկէ հնտեւցնելու է—սրանից պէտք է հաս-կանալ. կճանշնայ—կճանաշէ, ծանչնալէն ետքը—ճա-նաշելուց յետոյ<sup>1)</sup>:

Հետզինետէ Արաքսիան ու Հրահատը ձեր խօսքերը կհասկանան, դուք էլ նրանցը. միայն մի բան կայ—որ նրանց խօսքերը մաքուր հայերէն են. իսկ ձերը՝ գործիքի, սմավարժ վի, լամպան վառի, էն իժում կուգերիս. Չեր էս քի, պլիտէն վառի քա՛. ի՞նչիս գժի հանգի դե-մեր զիվիր անում... ծիծաղում էք հա. տեսննւմ էք. այս խօսքերը ձեզ հասկանալի են և դուք ծիծաղում էք. բայց այդ իօսքերից կէսը հայերէն չեն. նրա համար էլ

1) Այս բառերը հարցնողը մէկ հոգի չէ. այլ սամներից շատերը կամ հատ հատ, կամ երկերկու, կամ երեք երեք. ինչ-պէս և ուրիշ անդամ երբ հարցեր են տալիս ուսուցչին կամ բան են ասում: Ուրեմն ինչպէս լիշեցի, Արաքսիալի և Հրահա-տի խօսքերը կամ Տաճկահալ բարբառի անհասկանալի խօսքերն ու դարձուածները բացատրելու պահանջը պիտի լրացնէ ուսու-ցիչը: Ալսպէս պիտի վարուեն ուսուցիչները և ալն ժամանակ, առհասարակ, երբ խօսքը, դարձուածքը հասկանալի չեն սա-ների համար.

Արաքսիան ու Հրահատը շեն ծիծաղում, որովհետև շեն  
հասկանում:

Լաւ. այժմ ես ձեր բոլորի տօածը ամփոփ կերպով՝  
կրկնեմ, որ դուք լաւ ըմբռնէք—Դատից տուաջ տսելու  
աղօթքով մենք մի բան ենք խնդրում մեր Մեծ Հօրից.  
բայց երեք բանի համար կամ երեք պատճառով. ահա-  
ինչպէս. խնդրում ենք—որ Աստուած տայ մեզ իւր սուրբ  
Հոգւոյ շնորհը, որ մենք լաւ սովորենք: Այժմ հարցնում  
եմ—ինչնւ տայ մեզ Սուրբ Հոգւոյ շնորհը և ինչնւ լաւ  
սովորենք. տեսէք պատճառները սոքա են—առաջին՝ որ  
Աստուածոյ փառքը ճանաչենք. երկրորդ՝ որ մեր ծնողնե-  
րին ուրախացնենք. երրորդ՝ որ մեր ազգին ու Եկեղե-  
ցուն օգուտ տանք: Այժմ հասկացաք աղօթքի միտքը,

—Այն. հասկացանք:

Ճատ լաւ. այժմ սովորենք աղօթքը—Ո՞վ Ամենաբա-  
րի Աստուած. տնւր մեզ Սուրբ Հոգւոյդ շնորհը. որ մեզ  
տուած դասը լաւ սովորենք. Քօ փառքը ճանաչելու հա-  
մար. մեր ծնողներին ուրախացնելու համար. մեր ազգին  
ու Եկեղեցուն օգուտ տալու համար <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Ուսուցիչը սոյն և սոյնանման աղօթքները կարճ կարճ  
հաստուածների պիտի բաժանէ. ալստեղ միջակէտից միջակէտ պի-  
տի վերցնել իւրաքանչիւր մի հաստուած նախ ինքը պիտի ասէ. լետոյ կարդ կարդ նստարաններով կրկնել տալ. լետոյ կրկին  
ինքը. լետոյ լառաջաղէմներին կրկնել տալ. լետոյ դարձեալ  
կարդ կարդ նստարաններով. ամենից վերջը ամբողջ գասարա-  
նը կասէ խմբովին ուսած հաստուածը. երբ բոլոր հաստուածնե-  
ները այս կերպ կրկնուին դասարանումը ուսուցչի ղեկավարու-  
թեամբ՝ ալնուհետեւ ամբողջ աղօթքը լրիւ կասուի դասարա-  
նով, մինչև իւրացնելը: Այս և սոյնանման աղօթքները զերծ  
պիտի պահել բառական ճնշուած թարգմանութիւններից. աղօթ-  
քի էական միտքը միալն պէտք է թարգմանել և ալն՝ շատ  
կարճ ու ամփոփ կերպով և ալն տալ սաներին ուսանելու-  
ընդարձակ թարգմանութիւնն ու բացատրութիւնը թողնելով  
բարձրագոյն դասարաններին. երբ գրաբառը կսովորեն.

Աստուծուց աւելի բարի չկայ. Նա ամենից բարի է. որովհետև ամենքի համար բարի է, և միշտ բարի է. դրա համար էլ ասում ենք—Ամենաբարի: Մարդն է; բարի է. բայց մարդը ոչ միշտ է բարի և ոչ ամենի համար է բարի. այսօր մէկի համար բարի է, վաղը նրա համար չար կուզէ. այս մարդու համար բարի է, այն միւս մարդու համար չար է. բայց Աստուած ամենքի համար բարի է և միշտ բարի է. հաւատում էք գուք այս բանին, երեխայք:

—Հաւատում ենք<sup>1)</sup>:

Հատ լաւ. մի բան էլ հարցնեմ—եթէ մենք չաշխատենք՝ կարնդ ենք լաւ սովորել. ի հարկէ ոչ. ուրեմն դեռ մենք պիտի օգնենք մեզ, որ յետոյ Աստուած օգնէ. առաջ պէտք է աշխատենք և յետոյ միայն ինդրենք կամ աղօթենք. որովհետև եթէ չաշխատենք, և բաւականանք միայն ձեռքերս ծալած նստել ու աղօթել՝ ոչինչ չի լինի. Աստուած ծուլութիւն չէ սիրում. նա ծոյլերին չի լսի ամենսին ինչքան էլ որ աղօթեն: Դուք սովորել էք աշխատասէր և ծոյլ երեխաների պատմութիւնը, որ երկուսն էլ աղօթք են անում:

—2է, չենք սովորել:

Դէ ուրեմն ես կպատմեմ ձեզ. սիրում էք այսպիսի փոքրիկ պատմութիւններ լսել ու սովորել:

—Հատ ենք սիրում:

Լսեցէք ուրեմն—ծոյլ աշակերտը հարցնում է աշխատասէր աշակերտին—«ինչիցն է որ դու դասերգ միշտ լաւ ես սովորում և լաւ պատասխանում», «Աղօթք եմ անում». պատասխանում է աշխատասէրը: Այս որ լսում

<sup>2)</sup> Պէտք է ընդարձակել սուն և սունանման բացատրութիւնները՝ մանկական մտքին մատչելի ձեռվ, մանաւանդ օրինակները բերելով իրենց կետնքեց:

Ք ծոյլը՝ ինքն էլ է սկսում աղօթք անել, բայց գրքի երեսը չէ նայում. դրա համար էլ չէ կարողանում դասերը սովորել: Գնում է աշխատասէրի մօտ և ասում. «Ես այնքան աղօթք արի, որ յոզնեցի. բայց դասերս էլի չգիտեմ, ինչպէս է որ դու գիտենում ես». «Փոկ դու աշխատեցիր, դասերդ սովորեցիր». հարցնում է աշխատասէրը: Ծոյլը պատասխանում է. «Աղօթքը բաւական չէ»: «Աշխատսէրն ասում է ծոյլին. «Աղօթքը միայն՝ առանց աշխատելու ոչինչ չի օգնի: Աղօթքի հետ հարկաւոր է և Աշխատանք: Աղօթք և Աշխատանք. ես այգակս եմ անում—և աշխատում եմ և աղօթքում. գնա դու էլ այդպէս արա և դասերդ միշտ կգիտենաս:

—Միշտ այդպիսի պատմութիւններ պատմեցէք մեզ: Ճատ լաւ, Արեգնազան, եթէ ժամանակ կլինի՝ ինչու չէ: Բայց ասացէք ինձ—դուք որին կուղէիք նմանուել:

—Աշխատողին և Աղօթողին:  
Ճատ լաւ: Այժմ ես կսորվեցնեմ—Մարմին Տէրունական...<sup>1)</sup>:

### 5. Աղօթք դասից յետոյ:

Ժէ. Թաս.

Կրկնութիւն ԺԶ. դասի:

Ամեն մի բան, ամեն մի գործ աւարտելուց յետոյ մւմ պիտի դիմենք և ինչ պիտի անենք:

—Ես կասեմ:

<sup>1)</sup> Գիտցողները լալտնուում են. խմբւում են ուսուցչի մօտ; երգում են նորա զեկավարութեամբ. լետոյ դասարանով, նստարաններով և մեզ լալտնի կարգով...

**Ասա Խսթեր:**

— Ամեն մի բան անելուց, ամեն մի գործ աւարտեցոյ յետոյ պէտք է դիմենք մեր Մեր Հօրը և փառք տանք նորան, որ յաջողութեամբ վերջացրինք մեր գործը։

Իսկ եթէ անյաջողութեամբ աւարտինք՝ պէտք չէ որ փառք տանք։

— Ես կըսեմ տէր հայր։

**Ասա Հրահատ:**

— Մենք ամեն պարզաներու մէջ Աստուծոյ փառքը մեր բերնէն պակսեցնելու չինք, յաջող ըլլան թէ անյաջող. Աստուած զանոնք միշտ օրնած ունի։ Խելքոնկ կշարժինք՝ կօդտինք, անխինք կշարժինք՝ կվսասինք. մեր վսասին ատենն ալ փառք պիտի տանք Երարշին։

Հրահատը լաւ ասաց—թէ մեր բոլոր գործերը յաջող՝ թէ անյաջող, աւարտելուց յետոյ՝ փառք պիտի տանք Աստուծուն և չնորհակալ լինենք, որովհետև նա մեր գործը օրնել է. և եթէ անյաջողութեամբ է վերջանում՝ այդ մեր խելքիցն է և ոչ թէ Աստուծուց. Աստուած բարի է և Ամենաքարի. Նա ոչ մէկին մեզանից, մեղաւորին անզամ չար չի ուղի. այդ մենք սովորել ենք. յիշմամ էք։

— Այս. յիշում ենք։

Ուրեմն մեր գործի յաջող թէ անյաջող լինելը մեզանից է, մեր խելքից է. գործը աւարտելուց յետոյ մենք պարտական ենք Աստուծուն փառք տալ։ Դասն էլ մի գործ է չէ։

— Այս. դասն էլ գործ է։

Երբ մենք դասական գործը սկսելու էինք՝ խնդրեցինք Աստուծոյ օրնութիւնն ու չնորհը, ոչ թէ գործի վերայ—դասի վերալ՝ որովհետև դասական գործը արդէն վազուց օրնուած է, այլ նորա չնորհն ու օրնու-

թիւնը խնդրեցինք մեզ վերայ, որ մենք խելօք նստենք և դասը ուշադրութեամբ լսենք. իսկ երբ գասական գործը աւարտենք, ինչ պէտք է անենք և ինչպէս. ով կասէ-

— Թոյլ կուտաձք ինձ ըսել:

Սսա Ըրաջսիա:

— Մենք մեր դասական գործը աւարտելէն ետքը, պիտի գոհանամք Արարշէն, որ շնորհք տուաւ մեզի դասերնիս առնելաւ:

Ճատ լաւ. Էլի՞ ինչ պիտի ասենք:

— Ես կասեմ:

Սոա Զարուհի:

— Որ բարով անցկացրինք դասերի ժամերը:

Ի՞նչպէս թէ բարով. Զարուհի:

— Այսինքն որ խելօք պահեցինք մեզ, չկռուեցինք, դասերը ուշադրութեամբ լսեցինք, մեր ուսուցիչներին ու վարժուհիներին չնեղացրինք, չբարկացրինք:

Լաւ է, Զարուհի:

Կրնամես, տէր-հայր, Արաքսիայի ըսածն շարունակելու կարող ես չրահատ. առա:

— Գոհանամքն զատ, պիտի խնդրենք Սստուծմէ — որ օրնէ մեր դաստիարակներուն, որոնք մեզ համար չարշարանք կրեցին, մեղի օդտակար դասեր տուին. Նաև մեր ծնողներուն օրնէ, որ մեզի ուսումի տուին և մենք տպէտ մնալու չենք. Նաև մեր խնամակալներուն, բարերարներուն, որոնք մեզի աս դպրոցն ընդունեցին և միջոց տուին կրթուելու:

Ճատ ապրիս, չրահատ. շատ ուրախ եմ և գոհ բայց բաւական չէ որ Արաքսիան և դու, ձեր սիրուն պատասխաններով ինձ ուրախացնէք. պէտք է օգնէք և ձեր ընկերուհիներին, որ նրանք էլ կարողանան ձեզ պէտ դաս պատմելով ինձ ուրախացնել:

—Մեծ ուրախութեամբ Զերին սուրբ պատուէրը կկատարենք երկուքնիս ալ. միայն կինդրենք մեզի ալ յանձնէք Համասփիւռին, որ մեզ ուսւերենին մէջ վարժեցնէ. վասնղի Տաճկաստանէն նոր գաղթած ըլլալով՝ ուսւերէնին մէջ շատ կկալինք:

Ճատ բարի: Համասփիւռ, կարծեմ չես մերժի օդ-նութիւնդ:

—Ինչպէս կարող եմ մերժել: Զեր այսքան խրատ-ներից յետոյ. ուրախութեամբ կկատարեմ Զեր պատուէրը:

Ճատ ապլիս. Մեծ Հօր օրհնութիւնը լինի քեզ վերայ:

Այժմ ձեր բոլորիդ կտոր կտոր ասածները եռ միացնեմ և ամփոփ կերպով կրկնեմ, որ լաւ հասկա-նաք—Դասից յետոյ աղօթքով մենք փառք ենք տալիս Սստուծուն և չորհակալութիւն ենք անում նորան, որ չորհք տուեց մեզ դաս առնելու. և խնդրում ենք—օրհնել նրանց՝ սրոնք մեզ ճանապարհ ցոյց տուին օդ-տակար ուսում ստանալու. և դարձեալ խնդրում ենք նորա չորհքը—որ նորից կարողանք շարունակել մեր ուսումը, նոր նոր դասեր առնելով:

Այժմ սովորենք աղօթքը—

Ճորհակալ ենք Քեզանից, և Արարիշ. որ չորհք տուիր մեզ և մենք դաս առանք. օրհնիր մեր մեծա-ւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք մեզ օդ-տակար ուսում են տալիս. կարողութիւն տուր մեզ դարձեալ շարունակելու մեր դասերը մեր ուսումը:

Այս աղօթքը՝ երախտագիտական աղօթք է. այս աղօթքը ցոյց է տալիս—թէ ինչպէս պէտք է մենք չորհ-հակալ լինենք այն բոլոր մարդկանցից, որ մի որ և իցէ կերպով օգնում են մեզ, լաւութիւն են անում մեզ. օրինակ՝ այս աղօթքով դուք ամենից առաջ չորհակալ էք լինում Արարչից, որ ձեզ օգնեց իւր չորհքով և դուք

չզրկուեցաք դասից. կարող էիք դուք հիւանդանալ և դասին չգալ. կարող էին ձեր ուսուցիչները հիւանդանալ. և դուք դասից կզրկուէիք. կարող էիք շընդունուել դպրոցում և դուք տգէտ մնալ, առանց ուսումի մնալ են. ինչանակէ այդ ամենը աշքի առաջ բերելով՝ դուք գոհանում էք Արարշից և ձեր երախտագիտութիւնն էք յայտնում նորա, ձեզ արած բարիփների համար. Այդ բաւական չէ. դուք խնդրում էք էլի—որ բարի Արարիշը օրհնէ նաև բոլոր աշխատաւորներին, որոնք աշխատել են ձեր ուսման գործի համար. ինչպէս մեծաւորները, ծնողները և ուսուցիչները:

Ձեզ արդէն յայտնի է—թէ նոքա ինչքան աշխատանք ունին ձեզ վերայ. ձեզ յայտնի է, որովհետև դուք սովորեցիք այդ ժ՞Դ-որդ դասում, «Դպրոցական հայրեր ու մայրեր. Հատուածում. յիշնմ էք»:

—Այն. յիշում ենք:

Այսքան լաւութեան փոխարէն՝ դուք էլ ձեր կողմից Արարշի օրհնութիւնն էք խնդրում նրանց վերայ:

Հերիք է այսքան այսօրուայ համար:

—Երգենք «Մարմին Տէրունական»:

—Երգենք, Երգենք:

---

### Յ. Դպրոցական կարգապահութիւն.

#### ԺԲ. Դաս.

Կրկնութիւն:

Ինչպէս անցեալ դասին՝ Դասից առաջ աղօթքը լաւ էիք սովորել, այսօր էլ Դասից յետոյ աղօթքն էք լաւ սովորել, ես շատ ուրախ եմ. բայց այդ լաւ սովորելը բաւական չէ, պէտք է գործքով ցոյց տաք բոլոր ձեր սովորածները. գործքով ցոյց տուած կլինիք այն ժամա-

նակ՝ երբ ինչ որ սովորում էք գրքերից, աղօթքներից և լսում էք ձեր գաստիարակներից խելօք և օդտակար խօսքեր, պատմութիւններ, առակներ, հեքիաթներ և այլն, կկատարէք:

— Խօսք ենք տալիս կատարելու:

Ես էլ շատ ուրախ կլինիմ և կօրհնեմ ձեզ Աստուծոյ սուրբ Անունով:

Մի փոքր էլ խօսնիք դպրոցի կարգ ու կանոնի՝ այսինքն կարգապահութեան մասին։ Ծնողական տան մէջ կարգ ու կանոն կայ և ինչ է. ով կարող է ասել։

— Ես կասեմ։

Ասա՞ Նարգէս։

— Ծնողական տան մէջ այն կարգ ու կանոնը կայ — որ որդիքը իրա ժամանակին քնից վեր են կենում, շորերը հագնում, երեսներն ու ձեռքերը մաքուր լուանում, առաւտեան աղօթքն ասում, ծնողների ձեռքը համբուրում են ու բարի լուս ասում. յետոյ թէյ խմում և գրքերն առած՝ ուսումնարան գնում։

— Ես շարունակեմ։

Ճարունակիր Վարդուհի։

— Դասերը վերջացնելուց յետոյ տուն են գալիս, ողջունում են մայրիկին, եթէ հայրիկը տանն է՝ նորան էլ. գրքերը գնում են տեղը, ուսումնարանի շորերը հանում են, թափ են տալիս և պահում, տանու շորերը հագնում են։

— Ես շարունակեմ։

Ճարունակիր Մանուշակ.

— Թէ ճաշը պատրաստ չէ՝ օգնում են մայրիկին ճաշ պատրաստելու աշխատանքի մէջ՝ յետոյ սուվիրայ են քցում և նստում ճաշելու։

— Կարելի է ասել պիոռց։

— Սփռոց են գցում, բայց մոռացայ ասել — ճաշից առաջ ազօթք են անում. երբ ճաշը աւարտում են՝ դարձեալ ազօթք են անում և համբուրելով հայրիկի ու մայրիկի ձեռքը՝ յայտնում են իրենց չնորհակալութիւնը։

— Ես շարունակեմ։

Ճարունակիր Յասմիկ

— Սփռոցը հաւաքելուց յետոյ ամեն բան իրա տեղն են դնում, լուանալու ամանները լուանում են և տեղաւորում, սենեակը սրբում են և սկսում են դասերը պատրաստել։

— Ես շարունակեմ։

Ճարունակիր Շուշան։

— Յետոյ թէյի պատրաստութիւն են տեսնում և թէյ խմում. թէյից յետոյ՝ ամեն ինչ լուանում են, հաւաքում, տեղաւորում և դարձեալ նստում, դասերն են սովորում. թէ իրիկնահայ կայ՝ նստում են, թէ շկայ՝ թէյի հետ թեթևնախաճաշ են անում. ազօթքը ասելուց յետոյ, ծնողների ձեռքը համբուրելով՝ բարի գիշեր են ասում նրանց և գնում են քնելու։

— Ես ասեմ։

Ասա Զարմանդուխտ.

— Ծնողների մասին ոչ ոք բան չասաց։

Դու ասա։

— Ծնողներն էլ, ինչպէս մենք սովորեցինք, իրենց ծնողական պարտքն են կատարում։

Ճատ լաւ։

Այժմ նոյն ինձ կասէ Մեծ Հօր տան մասին։

— Ես կասեմ։

Ասա Ճողեր։

— Մեծ Հօր տան կարգ ու կանոնն այսպէս է — առաւօտեան, ճաշուայ և երեկոյի ժամից առաջ՝ ժամա-

Վկոշը երրորդ է տալիս, այսինքն երեք անգամ զանգ է քաշում. յետոյ հասարակն է տալիս, այսինքն ժամն օրննելու կամ սկսելու զանգերն է քաշում. Եկեղեցին բաց է անում, մաքրում է:

—Ես շարունակեմ:

Հարռւնակիր նարդէս:

Յետոյ գալիս են դպիրները և ամեն ինչ պատրաստում—գրակալները բաց են անում, մսմերը վտոռում են, կրակ են անում խունկ ծխելու համար. գալիս է քահանան, ժամն օրննում է և սկսում է ժամասացութիւնը. գալիս է ժողովուրդը, մոմ է վառում, ծունդ է դնում, աղօթք անում:

Հարռւնակիր Եսթեր:

—Մեծ Հօք տանը կամ Եկեղեցում խօսել, ծիծաղել, տեղերը փոխել չէ կարելի. մէկ տեղ կանգնած, լուռ, համեստ, և հարկաւոր ժամանակ խաչ հանելով, ծունդ գնելով պէտք է աղօթել. ժամասացութիւնը վերջանալուց յետոյ՝ քահանան օրննում է ժողովրդին և արձակում:

Ո՞վ է յիշաւմ քահանայի վերջին արձակման խօսքը. Երբ օրննում է ժաղովրդին ու արձակում՝ ինչ է ասում:

Գիտենք բայց չենք յիշում:

—Ես կասեմ. լսեցէք, որ ոռվորէք. քահանան ասում է «Օրննեալ Եղեքուք...» յետոյ ժողովուրդը մօտենում է և համբուրում Սուրբ Աւետարանը և քահանայի աջը և դուրս գնում Եկեղեցուց:

Ծյժմ տեսնեմ նվ կասէ Ռւսման տան կամ Դպրոցի կարգ ու կանոնի մասին:

—Ես ասեմ: Զէ. Ես կասեմ: Ես ամենեին չեմ ասել: Ես էլ իսկի շեմ ասել:

Լաւ. լաւ. բոլորդ էլ կասէք. 1) բայց. Հողերը իսկի

1) Ռւսուցիչը սաներին պիտի հասկացնէ կարգապահու-

շեմ ասել. ասաց. այդպէս պէտք է ասէր:

— Ո՞չ. պիտի ասէր—ամեննեին չեմ ասել:

— Լաւ. այժմ թող Ծրեգնազանն ասի:

Աշակերտները կամ աշակերտուհիները հաւաքւում են ուսումնարան և մինչեւ դասի սկսուելն ու զանգի տալը՝ ոմանք գաս են պատրաստում, ոմանք խաղում են, միւսները զոյգ զոյգ կամ շատ հոգի միասին ման են գալիս, խօսում են, երգում են. զանգի ձայնին՝ խակոյն կարգ են մտնում և զնում են աղօթելու կամ դահլիճում կամ դասարաններում:

— Ես շարունակեմ:

Ճարունակիր Հերիքնազ:

— Ամեն մի աշակերտուհի իւր տեղն է նստում, նոյն դասի գրքերն ու տետրերը հանում ու առաջն է զնում և ուղիղ ու լուռ նստում: Եյսպիսի կարգով սպասում են ուսուցին կամ վարժուհուն:

— Ես շարունակեմ:

Ճարունակիր Վարսենիկ:

— Երբ ներս է մտնում ուսուցիչը կամ վարժուհին՝ ստրի են կանգնում, ողջունում ենորից նստում: Սկսւում է դասը. դասի ժամանակ պէտք է կարգին նստել, շխառել և իրար շխանգարել. շարերն ու անկարգները պատժում են. երբ զանգը տալիս են և դասը վերջանում է, աշակերտուհիները կարգին, առանց դալմաղալի... Զեղաւ. ասա առանց աղմուկ հանելու:

Առանց աղմուկ հանելու գնում են բակը խաղալու. իսկ եթէ անձրև է կամ ցեխ, կամ վատ եղանակ և կամ ձմեռ՝ ուսումնարանի կարիդորում,..

---

Թիւնը, որ նրանք բաւականանան միայն ձեռք բարձրացնելով լայտնել իրենց պատասխանելու ցանկութիւնը և ոչ թէ այնպէս աղաղակեն:

— Զեղաւ. ասա՞ սրահում:

— Ուստիմնարանի սրահումն են մանգալի. դասերը վերջանալուց յետոյ աղօթք են ասում և գրքերը, տետրակները, գրիչներն ու մատիտները պայուսակների մէջն են պահում, և մնաս բարե ասելով վարժուհուն գնում են տուն:

Արեգնազանը, չերիքնազն ու Վարսենիկը ոչինչ շմոռայցն Զարոհի.

— Մոռացան:

Հապա, ինչ մոռացան:

— Նոքա շասացին — որ ամեն մի գասարան երկու օրապահ ունի, որոնք օգնում են իրննց վարժուհուն. Նոքադասից առաջ մտնում են դասարան, պատրաստում ենք գրատախոտակի համար կաւիճը, սրբիչը կամ սպոնդը, թանաքամանների մէջ թանաք են ածում և հսկում են որ աշակերտուհիների դասական իրերից ոչինչ չկորչի. ամեն մի դաս վերջանալուց յետոյ, նոքա մնում են դասարանումը, և մաքրում են, եթէ թղթի կտորներ են թափուած կամ եթէ դասարանը մաքրուր չէ:

— Զարուհին էլ բոլորը շասեց մի բան թողեց, եւ ասեմ:

Ասա՞ Սրչալոյս:

— Ուսումնարանի կարգ ու կանոններից մէկն էլ այնէ — որ աշակերտուհիները խաղալու ժամանակ անկարգ ձեռվ շպիտի խաղան — փեշերը քաշքշելով, անհամ ձայներ հանելով, իրար հրելով ու բրթելով կամ վայր ձգելով, ոչ էլ իրար անկարգ խօսքեր ասեն կամ ծաղրածուանուններ դնեն. չպէտքէ անիծեն իրար, չպէտքէ հայհոյն իրար. այդպիսիները խիստ պատժում են:

Բոլորդ էլ լաւ ասացիք. դէ ուրեմն աշխատեցէք, որ ձեզ համեստ պահէք. դուք աղջիկներ էք. աղջկայ

ամենաթանկագին գանձը համեստութիւնն է. համեստ մանուշակի նման եղէ—ամօթխած. պարկեշտ, որպէս զի բոլոր ձեզ նայողները ձեզ դովեն ձեր համեստութեան համար:

Եկող երկու դասը ընդհանուր կրկնողութիւն կլինի բոլոր անցածների. հապա տեսնեմ—ով լաւ կպատրաստէ:

—Բոլորս էլ լաւ կպատրաստենք:

Ճատ լաւ:

Ո՞վ կարող է ամփոփել այսօրուայ Դպրոցական կարգապահութեան դասը:

—Ես կամփոփեմ:

—Ամփոփիր Հրահատ<sup>1)</sup>:

#### ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ:

##### ԺԹ. Դ ա ս:

Անցեալ դասին խոստացանք կրկնութիւն անել բոլոր անցածների: Այժմ ամեն մէկիդ մի մի բան պիտի հարցնեմ:

Ծնողական տան—հայրիկի ու մայրիկի մասին գնաւ պատմիր Շուշիկ: Շարունակիր նազելի. շարունակիր Աշխէն: Լաւ: Հապա ուրիշ բան հարցնեմ. հայրիկի ու մայրիկի աշխատանքի փոխարէն դուք ի՞նչ պիտի անէք: Պատմիր Լուսիկ: Հայրիկն ու մայրիկը ի՞նչպէս են կոչւում. Տիգրանուհի: Լաւ է: Բացի տան հայրը՝ Էլի հայր ունիք որին աղօթում էք. ով է ի՞նչ է անում, ի՞նչ է տալիս նա ձեզ: Պատմիր Հերիքնազ. շարունակիր Անահիտ:

Մեծ Հօր խնամքն է շատ ձեզ վերայ՝ թէ փոքր հօր:

<sup>1)</sup> Պասը ամփոփուում է ուսուցչի ղեկավարութեամբ. նա կարող է ամփոփումը մասնատրել մի քանի հոգու մէջ. որ խրախուսուին:

Պատմիր Արեգնազան։ Ինչու ենք ասում «Հայր մեր, որ յերկինս ես»։ միթէ երկնքումն է մեր Մեծ Հայրը։ Պատմիր Զարուհի։ շարունակիր Համասփիւռ։ Ինչից գիտենք թէ մեր Մեծ Հայրը ամեն տեղ է։ Պատմիր Վարժիթեր։ Հարունակի Շամիրամ։ Ինչից գիտենք թէ մեր Մեծ Հայրը ամեն բան գիտէ։ Ասա Լուսնթագ։ շարունակիր Հրաշեալ։ Փոքր հայրը կարող է ամեն բան ասել. իսկ Մեծ Հայրը։ Ասա Երանեակ։

Մարգարիտ. դու ինձ պատմիր ծնողական տան որդւոց մասին։ իսկ դու, Գոհարիկ, որդւոց վեց պարտականութիւնների մասին։ Շողակ, դու էլ ինձ ասա—թէ ինչու ամեն ծնող միակերպ չէ խնամում իւր որդւոց։ Հայկանոնւշ. դու ինձ պատմիր ծնողական տան որդւոց—եղբայրների ու քոյրերի փոխակարձ յարաբերութիւնների մասին։ Եղբայրների՝ իրար հետ սիրով վարուելու մասին ինչ իմաստ ենք սովորել. ասա ինձ Սիրոնւշ։ Դէպի ծնողները որդւոց ունեցած յարգանքի մասին ինչ իմաստ ենք սովորել. ասա ինձ Ե՛պսիկ։

Գու պատմիր ինձ Աստղիկ Մեծ Հօր տան մասին—թէ ինչ նմանութիւն և ինչ զանազանութիւն ունի ծնողական տան հետ համեմատած։ շարունակիր Վարդուշ։ շարունակիր Արփենիկ։ շարունակիր Հոփիսիմէ։

ի. Դաս:

Պատմիր Աննա Մեծ Հօր տան մասին—թէ ինչ սրբազն իրեր կան. իրաքանչիւր իր ինչու համար է և նրտեղ է դրւում. Մեծ Հօր տունը ինչ մասեր ունի և իւրաքանչիւրը ինչու համար է. շարունակիր Արշալոյս. շարունակիր Շողակաթ։

Բացի քահանաներն ու կոյսերը, էլի նվ կայ Մեծ Հօր տանը և ինչ են անում. ասա Լուսաբեր. շարունակիր

Խւղաբեր. շարունակիր Հեղինէ։ Մեծ Հօր տան և քահանայի մասին պատմիր Շահանգուխտ։

Ճողմեր. դու ինձ պատմիր Վարդիթերի պատմած գիւղական քահանայի զովելի և գեղեցիկ արարմունքի պատմութիւնը։ Իսկ դռւ, Փառանձեմ, պամիր ինձ—թէ ինչ պարտականութիւն ունիք դէպի քահանաները։

Նազլու. պատմիր ինձ ժողովրդի մասին. իսկ դռւ, Արուսեակ. ինձ ասա—թէ ինչպէս պէտք է մտնենք մեր Մեծ Հօր տունը և ինչ իմաստ էք սովորել դրա մասին։ Ինչպէս է նայում մեզ Մեծ Հայրը և ինչ է ուզում մեզանից։

Արաքսիա. դու ինձ պատմիր Սրտի մասին, իսկ դռւ, Հրահատ, պատմիր ինձ—թէ ինչ ձեռվ, նրտեղ և երթ պիտի աղօթենք։

### ԻԱ. Դաս։

Ճարունակենք կրկնութիւնը։

Եսթեր, դու ինձ պատմիր թէ ինչպէս և երբ եկաք ուսումնարան. իսկ դռւ, նարգիս, պամիր ուսման օգուտների մասին։ Ճարունակիր Վարդուհի։ Ճարունակիր Յասմիկ։

Ծեղողական և Մեծ Հօր տան մասին պատմիր Ճուշան։ Ուսման տան մասին պատմիր Զարմանդուխտ։

Ուսուցիչների և վարժուհիների մասին պատմիր Վարսենիկ։ Տեսչի մասին պատմիր Արաքսիա։ Հոգաբարձուների մասին պատմիր Հրահատ։

Իսկ դռւ. Արուսեակ, պատմիր դպրոցական սաների մասին։ Ուսման տունը ինչն համար և ում համար է շինուած, պատմիր, Արաքսիա։ Ուսման որդիքը ինչ պիտի անեն իրենց ուսման հայրերի ու մայրերի համար։

պատմիր Մանուշակ։ Ելի ում համար պիտի աղօթենք,  
պատմիր Գոհարիկ։

Դասից առաջ աղօթքի մասին պատմիր Արաքսիա։  
Դասից առաջ աղօթքը ասացէք խմբովին։

Դասից յետոյ աղօթքի մասին պատմիր Հրահատ։  
Դասից յետոյ աղօթքը ասացէք խմբովին։

Դպրոցական կարգապահութեան մասին պատմիր  
Արաքսիա։ Ճարունակիր Հրահատ։

Գոհ եմ ձեր կրկնութիւններից։ Իետևեալ դասին լաւ  
բաների վերայ պիտի խօսենք իբրև դաս։ տեսնեմ լաւ  
կսովորէք՝ թէ ոչ։

— Ճատ լաւ կսովորենք։  
Հաւատացած եմ։

#### IV. ՀԱՏՈՒԱԾ

դ. Արհեստ, Աշխատանք, Պաշտօններ։

Արհեստ—նշանակութիւնը, տեսակները, նպատակը։

իԲ. Դաս։

Այսօրուայ դասը հետաքրքրական դասէ. այս դասը  
տուք խոստացաք լաւ լսել և լաւ սովորել։

Դուք գիտէք—որ մարդիկ ապրում են այս աշխար-  
հում գործ գործելով, պարապ ու անգործ մարդը ինչ-  
պէս պիտի ապրի։ Ձեզ յայտնի է—որ առանց աշխա-  
տանքի հաց ուտել չի լինի. հաց ճարելու համար հար-  
կաւոր է աշխատանք, աշխատանքի համտր էլ հարկաւոր  
գործ։ Դործի տեսակներ շատ կան. այդ տեսակներից  
մէկն էլ ասւում է Արհեստ։ Արհեստով մարդիկ ապրում  
են—փող են աշխատում, փողով շոր են հագնում, հաց

նն ուտում, զուր են խմում, կերակրում են, բնակարա-  
նի վարձ են տալիս, ամուսնանում են. որդւոց ուսում-  
կրթութիւն են տալիս. և էլի շատ ու շատ բաներ են  
անում. Ուրեմն արհեստը շատ և շատ հարկաւոր է. մինչեւ  
անգամ անհրաժեշտ է. այսինքն առանց արհեստի ապ-  
րել չէ կարելի:

Սսացի գործի տեսակներից մէկն էլ Արհեստն է։  
Բայց Արհեստն էլ ունի իւր տեսակները. միայն ես ու-  
զում եմ—որ Արհեստի այդ տեսակները դուք գտնէք։ Հա-  
տկա տեսնեմ նվ կարող է ինձ ասել թէ ի՞նչ տեսակ ար-  
հեստներ կան։

Ես կասեմ. 2է ես ասեմ. Ես գիտեմ թէ ի՞նչ տե-  
սակ արհեստներ կան։ Ես էլ գիտեմ <sup>1)</sup>։

Ճատ լաւ. ես բոլորիդ էլ կհարցնեմ—առաջինը Ճա-  
միրամն էր որ մտտ բարձրացրեց. դէ ասա, ի՞նչ ար-  
հեստներ գիտես։

—Ես գիտեմ Սլեսար, Ստալար։

Իսկ դու, չեղինէ։

Ես գիտեմ Նալբանթ, Բոյախչի։

Դու Յասմիկ։

—Ես բոլորն էլ գիտեմ։

Ասա։

—Դաբաղ, Պարտնօ, Փոնշի, Սապոմնիկ։

Իսկ դու Մանուչակ։

—Էլ չկայ բոլորն էլ ասեցին ինչ որ կար։

Ճամիրամի, Յասմիկի, չեղինէի ասածները արհեստ-  
ներ չեին. արհեստաւորներն էին. և հայերէն չասացին-  
նվ ինձ հայերէն կասէ։

<sup>1)</sup> Ուսուցիչը դարձեալ պիտի լիշեցնէ սաներին Դպրոցա-  
կան կարդապահութիւնը. դարձեալ պիտի շեշտէ—թէ բաւական  
է միայն մատ բարձրացնելը.

— Ես կառեմ:

Ասա Արեգնազան:

— Սլեսարին՝ պէտք է ասել Երկաթից բաներ շինող։  
Ես կասեմ և դուք լսեցէք—Սլեսարին ասում ենք  
Երկաթագործ։ Կարող ենք ասել և Պղնձագործ կամ Դար-  
բին։ Ստալարին՝ Հիւմն կամ Ստաղձագործ։ Նալբան-  
դին՝ Պալտար. Բոյեախչուն՝ Ներկարար. Դագաղին՝ կամ  
Ճոնին՝ Կաշեգործ կամ Խաղախորդ. Պարտնոյին՝ Դեր-  
ձակ. Փոնչուն՝ Հացագործ. Սապոժնիկին՝ Կօշկակար։  
Կան և ուրիշ տեսակ արհեստներով պարապողներ — Լուսան-  
կարիչ, Տպագիր, Գրաշար։

Հրահատ, դու ինձ ասա Արհեստի անունները — Ճամփ-  
րամբ, Յասմիկին ու Հեղինէն՝ արհեստաւորների անուն-  
ներն ասացին և ոչ արհեստի։

— Կըսեմ. Հիւս՝ արհեստաւորի անունն է. Հիւսնու-  
թիւն՝ արհեստի. ասպէս ալ — Ատաղձագսրծ — Ատաղձա-  
գործութիւն. Երկաթագործ — Երկաթագործութիւն, կամ  
Դարբին — Դարբնութիւն. Ներկարար — Ներկարութիւն.  
Կաշեգործ կամ Խաղախորդ — Կաշեգործութիւն. Դեր-  
ձակ — Դերձակութիւն. Լուսանկարիչ — Լուսանկարչու-  
թիւն. Գրաշար — Գրաշարութիւն. Տպագիր — Տպագրու-  
թիւն. Հացագործ — Հացագործութիւն. Կօշկակար — Կօշ-  
կակարութիւն։

Զեր այսօրուայ սովորած արհեստի տեսակներից որ  
մէկով աշխատում են ձեր կամ հայրը, կամ եղբայրը,  
կամ քեռին, կամ փեսան և կամ աղգականներից ու ծա-  
նօթներինց մէկը <sup>1)</sup>։

<sup>1)</sup> Այս տեղ սաները, ինչպէս կերպի, անշուշտ կանուա-  
նեն նրանց՝ որոնք լիշեալ մի որ և իցէ արհեստով պարապում  
են ու ապրում. Երբ կանուանեն՝ իսկոն հարց պիտի տալ — թէ  
իւրաքանչիւրը ալդ պարապողներից որքան ժամանակ է պա-

— իմ հայրիկը գերձակ է։ Իմս էլ։ Իմ եղբայրը կօշ-  
պակար է։ Իմս էլ։ Իմս էլ։ Իմ եղբօր որգին գրաշար է։  
Իմ փեսան լուսանկարիչ է։ Իմ եղբայրը ներկարար է։

Լաւ. բաւական է. այժմ տեսնեմ ով կարող է հա-  
մառօտ, կարճ կերպով պատմել ամեն արհեստի նշակու-  
թիւնը, շատ կարճ կերպով միայն. որովհետև ընդարձա-  
կը հետզհետէ կսովորէք և՝ դպրոցում և կեանքի մէջ։

— Ես կպատմեմ, որքան գիտեմ ու լսած եմ, յիշեալ  
արհեստներուն վրայօք։

### Ասա Հրահատ։

Հիւնութիւնն անպիսի արհեստ մընէ, որ փայտին  
հետ գործ ունենալու է. փայտէն տախտակներ կշինեն,  
տախտակներէն տեսակ իրեր կամ առարկաներ և  
գործիքներ. օրինակ—նստարաններ, գրասեղաններ, գրա-  
տախտակներ, դարաններ, պահարաններ, աթոռներ, քա-  
նոններ և շատ ասոնց նման իրեր <sup>1)</sup>)։

---

բապում օրական, որքան փող է աշխատում, ամեն օր գնում է  
աշխատանքի՝ թէ ոչ։ Սոյնանման հարցերը օգտակար են նրա-  
նով՝ որ դասը մատչելի կանեն սաներին. Միշտ պէտք է աշ-  
խատել սաներին իրանց խօսեցնել. թողլով զեկավարութիւնը՝  
իրեն ուսուցչին։ Եւ ալսպիսի հարցերով՝ սաների ուշադրու-  
թիւնը դաձնել ան պարապմունքների վերալ, որոնցմով ապ-  
րուստ են ճարում իրենց ծնողները կամ ազգականները։ Կան  
և սաներ, որոնք ամաչում են ասել—թէ իրենց հալրը կամ  
եղբայրը պարապում են ան արհեստներով, որոնք անպատիւ  
են իրը թէ իհարկէ, իրենց աշխարհակցողութեամբ. ուսուց-  
չի մանկավարժական քաջութիւնը—հմտութիւնը հէնց ալդ տեղ  
է երեալու—եթէ նա կարողանալ ալնքան բարձրացնել և պա-  
տուաւոր տեղ տալ արհեստներին՝ որ սաները առանց ամաչե-  
լու ու քաշուելու առաջ ընկնեն ու ճշմարիտն ասեն։

2) Արհեստի, Աշխատանքի, Պաշտօնների իւրաքանչիւր  
տեսակի մասին հնարաւորութիւն չկալ գրելու. ձեռնարկը շատ

Նրկաթաղործութեան մասին մի ուրիշը թող ասէ.  
միայն շատ կարճ:

— Ե՞ս կըսեմ:

Ասա Արաքսիա:

— Երկաթէն կլինեն երկաթէ իրեր կամ առարկաներ  
ու գործիքներ. պղինձէն՝ պղնձէ առարկաներ. անագէն՝  
անազի առարկաներ. օրինակ՝ խոփ, կացին, կաթսա-  
ներ, շամփուրներ, սրեր, հրացաններ, թնդանօթներ, գըն-  
դակներ, ուռմբեր և շատ ասոնց նման իրեր:

Ներկարարութեան մասին նվ կասէ:

— Ե՞ս կասեմ:

Ասա Նարգէս:

— Ներկարարութիւնը արհեստ է. ներկարարը ներ-  
կում է տեսակ տեսակ առարկաներ—թէ շորեղէններ և  
թէ կոչտ առարկաներ:

Ճատ լաւ այսքանը այս դասին բաւական է. կէմն  
էլ մնայ միւս դասին. շատ կլինի, եթէ բոլոր դասը  
այսօր սովորէք, չէք կարող յիշել,

— Կյիշենք, կյիշենք և լաւ կսովորենք. էլի շա-  
րունակինք:

2է չէ. բաւական է. ժամանակ էլ չկայ: Ահա  
զանգն էլ տուին:

---

Կստուարանար: Ուստի ալդ պակասը լրացնել է հարկաւոր զա-  
սարանումը ուսուցչի զեկավարութեամբ. իսկ ալս տեղ բաւա-  
կանանալ լոկ վերնագրերի անունները լիշելով և տեսակները  
թուելով. մասսամբ էլ շատ կարճ տեղեկութիւններ լսել սանե-  
րից, նրանց զարգացման չափը ճանաչելու համար.

Ի՞՞ Փաս.

Ճարունակենք անցեալ դասը—տեսնեմ նվ կպատմէ  
ինձ Կաշեգործսւթեան և Կօշկակարութեան մասին։

—Ես կպատմեմ։

Պատմիր Ոսկեհատ։

—Կաշեգործսւթիւնը արհեստ է. Կաշեգործը կա-  
շիներից շինում է տիկեր, պայուսակներ, սակվօյաժներ,  
շամադաններ։ Էլի շատ բաներ։

Ոսկեհատն ասաց սակվօյաժներ, շամադաններ. նվ  
կարող է հայերէն ասել։

—Զգիտենք. Դուք ասէք։

Լաւ. Ես կասեմ—Սակվօյաժ—կարելի է ասել Ճա-  
գոյր կամ Մախաղ. այսինքն ճանապարհի պարկ, ճանա-  
պարհի տոպրակ. կաշուց շինած. իսկ Զամադանին՝—  
Ճամբրուկ կամ ճանապարհի արկղ<sup>(1)</sup>)։

Ո՞վ կասէ դերձակութեան մասին։

—Ես կասեմ։

Ասա չրանոյշ։

—Գերձակութիւնը արհեստ է. դերձակը կարում է  
շորեր թէ տղամարդկանց և թէ կանանց, թէ հոգեորա-  
կանների և թէ զինուորականների համար։

Լուսանկարչութեան մասին նվ կասէ։

—Ես կըսեմ։

Ասա չրահատ։

—Լուսանկարչութիւնը արհեստմ'ըն է. Լուսանկա-  
րիչներն լոյսին օգնութեամբ կլուսանկարեն իրենց լու-  
սանկարչական գործիքներով. անոնցմէ ոմանք դէմքեր և  
ոմանք ալ տեսարաններ հանելու ձիրք ունին. Հայրս

<sup>(1)</sup>Կրկնել տալ խմբովին. ջոկ ջոկ. դարձեալ խմբովին-  
մինչեւ իւրացնեն սաները ալդ նոր բառերը.

ադ արհեստով կպարապէր և երկուքն ալ կհանէր։ Ատկէ զատ նկարչութիւն ալ գիտէր, Երաժշտութիւն ալ.

Գրաշարութեան և Տպագրութեան մասին ով կասէ։  
—Ես կասեմ։

Ասա Արեհատ։

—Գրաշարութիւնն ու Տպագրութիւնը, երկուսն էլ արհեստներ են. գրաշարը գործ ունի տառերի հետ և ծառայում է տպարանումը. նա արոյրի <sup>1)</sup> կառների վերայ փորուած տառերը ջոկում է, կապում իրար հետ և բառ կազմում. այդպիսով ամրող երես է կազմում. յետոյ դնում են մամուլի տակ, թանձր թանաք են քսում վրան. տպագրութեան թերթը ամրացնում են վրան և ծածկում. յետոյ մեքենան շարժում են, մամուլը ճնշում է և տպուած թերթերը մէկը միւսի ետեից դուրս են դալիս։

Արեհատ, դու տեսել ես, թէ լսել ես գրաշարութեան կամ տպագրութեան մասին։

—Հայրս տպարան ունի. ինձ երբեմն երբեմն տանում է այնտեղ, ցոյց է տալիս և հասկացնում է. ես այնտեղից գիտեմ։

Լաւ, լաւ։ Այժմ ով կասէ ինձ Հացագործութեան մասին։

—Ես կասեմ։

Ասա Լուսնթագ։

—Երկու տեսակ հացագործներ կան—թոնրի մէջ թխողներ և փոնի մէջ թխողներ։ Հացագործները պարկերով ալիւր են զնում և ամբարներում դարսում. յետոյ տեսակ տեսակ հացեր են թխում—երկար ու կոլոլ ձեռվ, կամ տափակ ձեռվ, կամ կոլոլ ու տափակ ձեռվ

<sup>1)</sup> Բացատրել սաներին անծանօթ բառերը.

և կամ բոլորովին կոլոլ ձեռվ՝<sup>1)</sup> Այդ հացերը ծախում են և փող են աշխատում:

Ո՞վ կասէ ինձ Վաճառականութեան մասին:

—Ես կըսեմ:

Ասա Արաքսիա:

—Վաճառականութիւնն ալ արհեստի նման բան մ'ըն է. առևտուր կընեն տեսակ տեսակ իրեղէններու, առարկաներու. քաղաքներ ու գիւղեր կշրջին. աժան կզնեն ու կրերեն իրենց երկիրն ու գնով կվաճառեն, որ իրենց օգուտ ըլլայ: Անոնք զանազան իրեր և՝ կզնեն և կվաճառեն: Անոնք ալ միւս արհեստաւորներուն պէս ունին իրենց առևտուրին համար խանութներ, գործարաններ: Ամենքն ալ կաշխատին փարայի վաստակին համար:

Ճատ լաւ. թէե կարճ կարճ ասացիք, բայց արհեստի ամեն տեսակի մասին մի մի բան ասացիք. այժմ ես ձեր ասածները միացնեմ դարձեալ կարճ կերպով. որ մի ամփոփ դաս դուրս գայ և դուք գալ անգամուայ համար սովորէք: Դուք մի քանի արհեստների անուններ տուիք. այլքանն էլ հերիք է, որ սովորէք. ասացիք — չիւսնութիւնը՝ փայտի հետ գործ ունենալն է. երկաթագործութիւնը՝ կամ Դարրնութիւնը՝ երկաթի ու երկաթեղնների. պղինձ, անագ. ներկարարութիւնը՝ ներկերի ու գունաւոր գեղերի. Կաշեգործութիւնը՝ Կօշկակարութիւնը՝ կաշու. և կաշուեղէն առարկանների. Դերձակութիւնը՝ շորեղէնների. Լուսանկարչութիւնը՝ դէմքեր ու տեսարաններ լուսահանելու գործ է. Գրաշարութիւնը, Տպագրութիւնը՝ տպարանական գործ է. Հացագործու-

<sup>1)</sup> Կոլոլ կամ արագիսի բառեր ասելիս՝ ուսուցիչը պիտի ուղղէ և աւելի դեղեցիկ բառեր սորվեցնէ. օր. Կոլոլ. կասէ—բոլորակ կամ բոլորաձև.

թիւնը՝ հաց պատրաստելու գործ է. Վաճառականութիւնը կամ Առևտուրը՝ գնելու և վաճառելու գործ է. ամեն տեսակ իրերի ու առարկաների առևտուր է ճոթեղինների, մետաքսելիչնների. բրդեղինների, բամբակեղինների, երկաթեղինների, թղթեղինների, կաշուեղինների, քարեղինների, արծաթեղինների ու ոսկեղինների, սերմերի ու բուսեղինների, հանքային ջրերի ու արհեստական խմիչքների և այլն և ալին. Դուք ասացիք այդ ամենը և լաւ ասացիք։ Այժմ հարցնում եմ—ի՞նչ է այդ Առևտուրի կամ Վաճառականութեան, ալդ Արհեստների նպատակը. Ինչու համար առուտուր են անում վաճառականները. ինչու համար են աշխատում այդ, ձեր ասած, արհեստաւորները. թէպէտ դասի սկզբին՝ ասացի ես՝ բայց, իբրև մի թեթև կրկնութիւն, ուզում եմ որ դուք էլ ասէք։

Հապա տեսնեմ, ով կասէ։

—Ես կրսեմ։

Ասա Հրահատ։

—Արհեստը աշխատանք է. աշխատանքը Աստուած է նշանակեր մարդուս—նա ըսեր է «ճակտիդ քրտին-քով հացդ ուտես»։ Քանի մարդ կապրի՝ պիտի աշխատի. բայց տեսակ տեսակ աշխատանքներ կան, ինչպէս որ Դուք մեղի սորվեցուցիք. իւրաքանչիւրն ինչ տեսակ աշխատանքի ալ ընդունակ է՝ ան կընէ. անով ալ կատարած կըլլայ Արարչի օրէնքը։ Ասկէ հետևցնելու է—թէ Արարչի օրէնքը կատարելը՝ արհեստին նպատակն է. Արարչին օրէնք կատարելն—կեանք է մարդուս. ադով և մարդս կապրի։

Հրահատը լաւ ասաց—թէ մարդ ինչ արհեստի ընդունակ է՝ նրանով է աշխատում, որ կատարած լինի Աստուծոյ պատուիրանը, օրէնքը։ Աստուծոյ օրէնքը կա-

տարելով միայն կապրի մարդս. իսկ ապրելը կեանք է: Ուրեմն ամեն մի մարդ որ աշխատում է՝ այդ նշանակում է — թէ նա կատարում է Աստուծոյ պատուիրանը կամ օրէնքը. իսկ Աստուծոյ օրէնքը կատարելով՝ կեանք կունենանք ու կապրենք. ով Աստուծոյ օրէնքը չի կատարի՝ նա չի ապրի. նա թէի կապրի՝ բայց այդ տեսակ ապրելը՝ ապրել չէ. դա մահ է, որովհետեւ այդպէս են ապրում գողերը, աւազակները, ծոյլերը, ձրիակերները — մոռֆտա հաց.ուտողները, մարդասպանները, վաշխառուները<sup>1)</sup>). նոքա էլ ապրում են, չէ. նոքա էլ կեանք ունին, չէ. բայց դա կեանք է, դա ապրել է. դա աշխատանք է. այդ ինչ տեսակ կեանք է, ինչ տեսակ ապրել է, ինչ տեսակ աշխատանք է՝ երբ պէտք է մարդը մարդու կեանքը ուտի — նրան դրկի, նրան խաբի, նրանից գողանալ, նրան անբախտացնի, նրա արիւնը խմի. դա կեանք է, դա ապրել է. դա աշխատանք է. ոչ, ոչ և էլի ոչ. դա մահ է, դժոխք է. Աստուած այդպիսի աշխատանք չի նշանակել մարդուս համար. այլ հալալ բրտինքի աշխատանք. ինչպէս Հրահատն էլ ասաց. ծոյլերն ու ձրիակերները ուրիշի դատածն են ուտում ու ապրում. դա ապրել է. ոչ, ոչ:

Ուրեմն շմսուանաք երեխայք — որ արհեստներով ապրող մարդիկ, եթէ միայն Արարչի օրէնքը կատարելու համար են աշխատում՝ ահա նոքա են ապրում, նոքա ունին կեանք:

Լաւ հասկացաք:

— Ծատ լաւ. շատ լաւ. ինչ սիրուն դաս էր. շատ լաւ կսովորենք. տանն էլ կպատմենք հայրիկին ու մայրիկին:

Ծատ ուրախ կլինիմ:

<sup>1)</sup> Բացատրել վաշխառուս բառը:

2. Աշխատանք կամ Մշակութիւն. նշանակութիւնը,  
տեռակները եւ նպատակը:

Ի՞՞. Դաս:

Կրկնութիւն:

Այսօր պիտի սովորենք Աշխատանքի կամ Մշակութեան մասին։ Աշխատանքի կամ Մշակութեան նշանակութեան և նպատակի մասին չենք խօսի, որովհետեւ ինչ նշանակութիւն և նպատակ ունէր Արհեստը՝ նոյնն էլ ունի Աշխատանքն ու Մշակութիւնը։ Իսկ Արհեստի նշանակութիւնն ու նպատակը սովորեցինք և գիտենք. այդպէս չէ։

— Եյն, սովորեցինք, անցեալ երկու դասերով։

Ուրեմն այսօր մենք կսովորենք Աշխատանքի կամ Մշակութեան տեսակների մասին։ Սյժմ տեսնեմ, ով ինձ կասէ—թէ ի՞նչ տեսակ Աշխատանքներ կամ Մշակութիւններ կան, որոնցմով մարդիկ ապրում են և կատարում Աստուծու Օրէնքը կամ Պատուիրանները։

Ե'ս կըսեմ։

Ասա՞ Հրահատ։

— Աշխատանքներու և մշակութեան շատ մը տեսակներ կան. ես մեզի ծանօթներն միայն կթուեմ. կարելի՞ է. Կարելի՞ է, ասա՞։

— Օրինակ՝ Երկրագործութիւն կամ Հողագործութիւն, Այգեպանութիւն, Անտառապահութիւն, Անամնապահութիւն կամ Խաշնարածութիւն, Զրկիրութիւն, Բեռնակրութիւն, Գոնապանութիւն, Քարհատութիւն և շատ մը ասոնց նման աշխատանքներ,

Ճատ լաւ։ Ո՞վ ինձ կասէ Երկրագործութեան կամ Հողագործութեան մասին։

— Ե'ս կասեմ։

Ասաւ Աշխէն:

—Երկրագործի կամ Հողագործի աշխատանքը հողի մէջն է: Երկրագործը հողը վարում է, ցելում է, սերմ է ցանում, ծածկում է և հնձի ժամանակը՝ հնձում է: Եթէ հնձածը խոտ է՝ դիզ է շինում, չորացնում և յետոյ սայլերով տանում է քաղաք և ծախում. իսկ եթէ հնձածը ցորէն է՝ փոքրիկ խուրձեր է կապում, խուրձերից դեզ է շինում, ժամանակը երբ գալիս է՝ սայլերով տանում է կալր, այնտեղ էլ այդ խուրձերից դեզ է բարձրացնում. յետոյ փռում է կալի վերայ ցորենի հասկերը և սկսում է կամով կալսել. դարմանը հաւաքում է ու մարաքն ածում. իսկ ցորենը ջուաներումն է լցնում, ջրաղաց տանում, աղում, ալիւր շինում ու յետ տուն բերում. թէ քիչ է՝ իրա համար է պահում, որ հաց շինեն, ուտեն ինքը, իրա ընտանիքն ու որդիքը. թէ շատ է՝ իրանց տարեկան հացը վերցնում են պահում. մնացածը ծախում ու փող աշխատում:

Աշխէն լաւ ասացիր. այդ նրտեղից դիահս:

—Ես գիւղացի եմ. հայրս հողագործ. վեց տարեկան հասակիցս ինձ իրա հետ էր մանածում թէ դաշտում, թէ կալում, ջաղացն էլ է տարել ինձ սելսվ. ետ էլի շատ բան գիտեմ գիւղական կեանքից:

Բայց դու քանի՞ տարեկան ես:

—Ես տասնումէկումն եմ:

Քանի տարի հօրդ հետ ես աշխատել

—Հինգ տարի:

Սպրիս, ապրիս: Տեսնում էք հինգ տարի հօրը օգնել է. հիմի էլ եկել է ուսում ստանալու. որ յետոյ աւելի էլ օգնէ, չէ Աշխէն:

—Ի հարկէ ես սիրում եմ հօրս օգնել:

Ճատ լաւ. շատ լաւ. շատ ուրախ եմ:

Աշխէնը լաւ ասաց. այժմ տեսնեմ նվ ինձ կասէ  
Այգեպանութեան և Անտառապահութեան մասին:

— Անահիտը լաւ կասի. նրա հայրը այգեպան էր  
առաջ, հիմի անտառապահ է:

Դու այդ մրտեղից գիտես, Շողեր:

— Անահիտը հօրեղբօրս աղջիկն է. մենք միասին  
ենք ապրում մէկ տան մէջ:

Հա. ուրեմն լաւ. թող ասի Անահիտը: Ասա Անահիտ:

— Այգեպանի ու Անտառապահի գործը գրէթէ մէկ  
է: Այգեպանը այգին է պահում, այգու ծառերին է նա-  
յում, յօշատում, պատուաստ անում. թէ անձրեներ չեն  
գալիս՝ արխից կամ հաւուզից. որ այգումը լինում է...

Պէտք է ասել աւազանից կամ առուից:

— Եւազանից կամ առուից ջուր է բերում ու այգին  
ջրում: Երբ պտուղները հասնում են՝ ծառերը թափ է  
տալիս, պտուղները հաւաքում և տանում, ծախում. խա-  
ղողի այգուցն էլ խաղող են հաւաքում, հնձանն են տա-  
նում, շիրայ հանում<sup>1)</sup>. գինի շինում ու ծախում:

Շիրայ չէ. պէտք է ասել Քաղցու են պատրաս-  
տում: Շարունակիր:

— Անտառապահն էլ անտառն է պահում, անտառին  
նայում, որ ծառերը չկտրատեն, ածուխ չկինեն առանց  
տիրոջ հրամանի. անտառը ջրելու պէտք չունի. ծառերն  
այնքան խիտ են, որ չուաքն անպակաս է. և միշտ խո-  
նաւութիւն կայ այնտեղ:

Անահիտ, երեսի գու էլ գիւղի որդի ես, որ լաւ գի-  
տես գիւղական կեանքը. այդպէս չէ:

1) Ուսուցիչը պիտի ուղղէ—շիրալ բառի փոխանակ,  
գործածել տակ քաղցու բառը. Ալսպիսի ուղղախօսութեան  
վերալ միշտ պիտի հսկէ ուսուցիչը.

—Այս. երկու տարի է միայն, որ զողերի հօրանք  
և մենք քաղաքումն ենք ապրում, հայրս էլ ձմեռուայ  
մի քանի ամիսը մեզ մօտ է անցկացնում. յետոյ էլի  
գնում է իրա գործին:

Ճատ լաւ:

Այժմ տեսնեմ ով ինձ կասէ Անասնապահութեան  
կամ Խաչնարածութեան մասին:

—Ես կասեմ:

Ասա Հրաշեայ:

—Անասնապահութեան կամ Խաչնարածութեան  
գործը անասունների հետ է. նրանց պահում են, արա-  
ծացնում են, ժամանակին նրանց ծինն է լինում, կիթն  
է լինում, խուզն է լինում. յետոյ կթում են, խուզում են,  
նրանց համար գոմեր են չինում, գոմերը մաքրում են,  
անասուններին նայում, խնամում, խոտ, դարման, վար-  
սակ, գարի տալի, կուշտ ուտացնում և իրենց պէտքե-  
րին ծառայեցնում. իսկ եթէ շատ անասուններ ունին՝  
ինչքան պէտք են իրանց աշխատանքի կամ մշակութեան  
համար՝ պահում են. մնացած աւելորդները ծախում ու  
փող են աշխատում և կամ խաչնարածներին կամ նախ-  
րապաններին են յանձնում—որ արածացնեն ու պահեն:

Հրաշեայ. դու էլ զիւղի որդի ես, հա՞:

—Այս. իմ քաւորս<sup>1)</sup> խաչնարած է. ամառը ես միշտ  
նրանց տանն եմ լինում. լաւ սար տեղ է, հով է, լաւ  
էլ ջրեր կան:

Այդ նրտեղ է, որ այդպէս գովում ես:

—Դարաշիշակումն է լինում կնքահայրս. ամառը ես  
այնաեղ եմ լինում մայրիկիս ու քոյրելիս հետ:

Հա. Դարաշիշակը լաւ տեղ է:

<sup>1)</sup> Քաւորս բառը ուղղել. և սորվեցնել կնքահայր  
բառը.

—Այժմ տեսնեմ Քարհատութեան կամ Քարտաշութեան մասին ով կարող է ասել:

—Ես կասեմ, բայց քիչ գիտեմ:

Ինչքան գիտես, այնքան բաւական է, չերիքնազատասա տեսնեմ:

—Քարհատները կամ Քարտաշները քարի հետ ունին գործ. նոքա քարեր են կտրում սարերից, քարեր են տաշում շինութիւնների համար. քարեր են մանրացնում և փշրում ճանապարհների և կամ քաղաքի փողոցների համար. մոռացայ ասել —որ էլի քարեր են տաշում փողոցի տրօտուարների համար:

Տրօտուար ինչպէս պէտք է ասել հայերէն:

—Զգիտնեք:

Պէտք է ասել Մայթ կամ Սալարկ: Ասացէք խմբովին —Մայթ կամ Սալարկ՝ առաջին կարգ —Մայթ կամ Սալարկ, միջին կարգ —Մայթ կամ Սալարկ. երրորդ կարգ Մայթ կամ Սալարկ. ամբողջ դասարանը —Մայթ կամ Սալարկ: Լաւ:

Եյժմ թող ինձ ասէ ով որ կարող է Զրկութեան մասին:

—Ե՞ս կասեմ:

Ասա Տիգրանուհի:

—Զրկիրները զուր են բաժանում քաղաքի բնակիշներին տակառներով կամ տիկերով, որ Թուլուխ են ասում:

Այդ տիկերը կարելի է ասել —Զրտիկ: Կրկնեցէք: Զրտիկ. Զրտիկ: Լաւ. բաւական է:

Իսկ Բեռնակիրների և Դոնապանների մասին ով կասէ:

—Ե՞ս կասեմ:

Ասա նազլու:

— Քեռնակիրները մշակներ են, որոնք դանագան  
բեռներ են տանում. . .

Աւելի լաւ է ասել քեռներ են կրու:

— Որոնք զանազան քեռներ են կրում մէջքով, կամ  
ուսերին դրած և կամ ձեռքով: Ինկ Դռնապանները գի-  
շերապահութիւն են անում. տների բակերը աւելում են  
ու մաքրում. տան առաջի փողոցը և մայթը կամ սալար-  
կը սրբում են առաւտները:

Ջատ լաւ ասացիք ամենքդ էլ. և այս բոլոր ասած-  
ներից դուք պիտի հասկանաք—որ Աշխատանքն ու Մշա-  
կութիւնն էլ ունին նայն նշանակութիւնն ու նպատակը՝  
ինչ որ Արհեստը: Մարդս մի բանով պիտի աշխատի ու  
ապրի. ով ինչ արհեստի կամ աշխատանքի յարմարու-  
թիւն ու ընդունակութիւն ունի. և նրանով էլ պիտի գոր-  
ծի այս աշխարհս մէջ, որ օգուտ տայ թէ իրեն և թէ  
ուրիշներին. որպէս զի հարկաւոր ժամանակն էլ նրան-  
ցից օգտուի, չէ որ ինչ կցանես՝ այն էլ կհնձես. աշ-  
խարհս առուտուրի խանութ է կամ հրապարակ. մար-  
դիկն էլ առետրականներ են. պէտք է տան՝ որ առնեն.  
պէտք է օգնեն՝ որ ուրիշներն էլ իրենց օգնեն. բացի այս՝  
ամեն մի արհեստաւոր կամ աշխատաւոր, բանւոր ու մշակ-  
իւր կեանքի մէջ մի բան չպիտի մոռանայ: Ի՞նչ է այդ-  
տեսնեմ ով կարսղ է ասել:

— Ես կասեմ, տէր-հայր:

Ասա Հրահատ:

— Զպիտի մոռնայ—որ աշխատանքն ու քրտինք թա-  
փելն իր պարտքն է Արարշէն իրեն իրեն օրէնք տրուած.  
և անոր աշխատանքն ու վաստակ արդարաբար կըլլան՝  
թէ որ պահէ իր մէջ ան Սիրտը, որ Դուք մեզի սորվե-  
ցուցիք—Սիրտ՝ պայծառ աստղին պէս փայլուն և աղ-  
բիւրի ջրին պէս վճիտ, յստակ ու մաքուր. ան ատեն:

միայն մեր Երկնաւոր Հայրն Սստուած կօրհնէ աղ տեսակ արհեստաւորին, աշխատաւորին ու մշակին գործքն ու աշխատանք:

Հրահատը՝ լաւ ասաց. հասկացաք բոլորդ էր:

— Հասկացանք, հասկացանք. լաւ հառկացանք. շատ լաւ դաս էր. միշտ այսպէս կսովորենք:

Այս. այս. միշտ այսպէս: Ուրեմն յոյս ունիմ — որ դուք եկող դասին շատ լաւ կպատասխանէք ինձ այս. այն: — Այս. անպատճառ:

### 3. Պաշտօններ — նշանակութիւնը, տեսակները և նպատակը.

#### ԻԵ. Պաս.

Կրկնութիւն:

Ի՞նչ պիտի սովորենք այսօր. տեսնեմ ով կլիշէ անցեալ դասից. ես ինչպէս ասացի:

— Ես կյիշեմ, թէ ինչպէս անցեալ դասէն առաջ Դուք մեզի ըսիք:

Հապա տեսնեմ, Արաքսիա:

— Անցեալ դասէն մենք գիտենք — թէ ինչ նշանակութիւն և նպատակ ունէք Արհեստը՝ նոյնն ալ ունի Աշխատանքը կամ Մշակութիւնը, ըսիք: Անանկ ալ աս դասէն կսովորինք Պաշտօններու մասին. ասոնց նշանակութիւնն ու նպատակն ալ նոյն են՝ ինչ որ Արհեստներունն ու Ծխատանքներունն էր. միայն տեսակներն տարբեր են:

Ճատ լաւ: Այժմ տեսնեմ ով գիտէ մի քանի պաշտօններ, որոնցմով մարդիկ աշխատում են դարձեալ նոյն նպատակի համար, որի համար աշխատում էին արհեստով ու մշակութեամբ, ինչպէս տեսանք:

—Ես կըսեմ:

Ասա Արաքսիա:

—Հայրո ուսուցիչ է: Խօսիմ ուսուցչական պաշտօնին վրայ:

Ո՞չ. յետոյ կհարցնեմ:

Ելի նվ կասէ, ի՞նչ պաշտօններ գիտէք:

—Ես կասեմ:

Ասա Տիգրանուհի:

—Եղբայրս գրագիր է Միրավոյ Սուդի մօտ: Դա պաշտօն չէ:

Պաշտօն է. բայց դու հայերէն չասացիր. պէտք է ասել Հաշտարար Դատաւորի մօտ գրագրի պաշտօն ունի. ուրեմն գրագրութիւնն էլ պաշտօն է:

Ելի նվ կասէ:

—Ե՞ս կասեմ:

Ասա Արուսեակ:

—Իմ եղբայրը սեկրետար է Հաշտարար Դատաւորի մօտ. դա պաշտօն է:

Պաշտօն է, բայց դու էլ Տիգրանուհու նման հայերէն չասացիր. պէտք է ասել—քարտուղար է, ուրեմն քարտուղարութիւնն էլ պաշտօն է:

Ելի նվ կասէ:

—Ե՞ս:

Ասա Նուարդ:

—Իմ փեսան աղվօկատ է:

Լաւ, դա էլ պաշտօն է. բայց հայերէն պէտք է ասել—փաստաբան. ուրեմն փաստաբանութիւնն էլ պաշտօն է:

Ելի նվ կասէ:

—Ե՞ս կասեմ:

Ասա Անահիտ:

— Իմ բիձէն Սուղիա է Գանջումը:

Դու էլ հայերէն չես ասում. պէտք է ասես—իմ քեռին կամ մօղեղքայրս Դատաւոր է Գանձակում. ուրեմն դատաւորսթիւնն էլ պաշտօն է:

Էլի ով կասէ:

— Ե'ս կասեմ:

Ասա Համասփիւռ:

— Իմ հայրը քահանայ է. ես քահանայական պաշտօնի մասին արդէն ասել եմ դասարանում, բայց չգիտեմ—քահանայութիւնը պաշտօն է:

Այո, այո, պաշտօն է:

Էլի ով կասէ:

— Ես կասեմ:

Ասա Փառանձեմ:

— Կիքահայրս ափիցար է, բայց չգիտեմ, պաշտօնէ դա:

Պաշտօն է զինւորական. բայց ափիցար չգիտի ասել, այլ Սպայ, իսկ սպայն զինւորական է. զինւորականութիւնը նոյնպէս պաշտօն է:

Էլի ով կասէ:

— Ե'ս կասեմ:

Ասա Արեգնազան:

— Մենք հարեան ոմինք, բժիշկ է:

Բժշկութիւնն էլ պաշտօն է:

Էլի ով կասէ:

— Ես կասեմ:

Ասա Սիրուշ:

— Եղբայրս բուխալտեր է Բայանգուլովի կանտօրումը. դա պաշտօն չէ:

Պաշտօն է. բայց պէտք է ասես—Եղբայրս Բայանգուրեանի գրասենեակում հաշուապահի պաշտօն ունի. ուրեմն հաշուապահութիւնն էլ պաշտօն է:

Ելի ով կասէ:

—Ե՛ս կասեմ:

Ըսա նազելի.

—Եղբայրս Գարադսկօյ ինժիներ է. Ուպրավումն է ծառայում:

Մխալ ես ասում—ինժիներ չպիտի ասես, այլ ինժեներ. այդ առաջին սխալը. երկրորդ սխալդ էլ այս է —դու ասացի՞՝ Գարադսկօյ ինժեներ է. Ուպրավումն է ծառայում. պէտք է ասել—քաղաքային ճարտարապետ է. քաղաքային վարչութեան մէջ է ծառայում: Կրկնել խմբովին—քաղաքային ճարտարապետ է, քաղաքային վարչութեան մէջ է ծառայում. առաջին կարգ, միջին կարգ, երրորդ կարգ, ամենող դասարանը:

Ելի ով կասէ: Զայն չէք հանում, ինչ է, չպիտէք,  
էլ պաշտօն չկայ:

—Էլ չպիտենք:

Լաւ. ես կասեմ: Հասպա մի գիրք տուէք ինձ: Այս գրքի առաջին երեսի վերայ ոռւսերէն բան կայ գրուած. դուք կարդալ դեռ չպիտէք. ես կարդամ հա:

—Աշխէնը ոռւսերէն կարդալ—գրել գիտէր, երբ մտաւ այստեղ այս տարի. նա քննութիւն էր բռնել մեծ բաժանման համար, բայց կրօնից ու հայերենից շատ թոյլ էր և մնաց. նա կարող է կարդալ:

Աշխէն, արի, կարդա:

—Дօզվոլենօ պեհզորօ:

Լաւ կարդաց. ինչ է նշանակում, չպիտէք:

—Ո՛չ. շենք հասկանում:

Իսկ դու Աշխէն:

—Ես էլ չեմ հասկանում:

Այդ նշանակում է—Թոյլատրուած է գրաքննիշից:

Բայց գիտէք ով է գրաքննիշը:

— Զգիտենք:

Առեմ ձեզ—օրինակ ես մի գիրք եմ շինում, կամ Մայրենի Լեզու, վամ Ռոճու Սլու, կամ մի ուիշ դասագիրք. այդ գիրքը շինելուց յետոյ, պէտք է տանեմ Գրաքնչին: Նա պէտք է կարդայ. եթէ լաւ է դրուած՝ իրաւունք կտայ տպելու. գիրքը կտապուի և գրավաճառների մօտ կծախուի. ում հարկաւոր է, կերթայ և գրավաճառնոցից կզնէ. ուրեմն Գրաքնչիը պաշտօնեալ է. իսկ գրաքնչութիւնը՝ պաշտօն է: Բայց ոչ զք ձեզանից գրավաճառնոցի և գրավաճառի մասին բան չասեց, նոյնպէս և թղթավաճառների մասին. նրանց էլ ճանաշնւմ էք:

—Ես ըսմ:

Ասա Հրահատ:

—Գրավաճառնոցն մէկ կամ երկու և կամ երեք ու աւելի սենեակներէն բաղկացած խանութ մ'ընէ. ուր մեծ մեծ դարաններ կդրուին և դարաններուն մէջն ալ գրքեր կշարուին. ադ գրքերն բերել տւոզն, պահպն, ծախոզն գրավաճառն է:

—Կրնամ թղթավաճառներուն մասին ալ ես ըսեմ:  
Ասա. Արաքսիա:

—Թղթավաճառն ալ կվաճառէ թղթեղէններ, գրիշներ, մատիտներ, քանոններ, և շատ մը գալուցին պատկանեալ իրեր. ատոնց բերոզն, պահողն, ծախոզն թղթավաճառն է:

Լաւ ասացին Հրահատն ու Արաքսիան. դուք էլ գիտէիք, չէ:

—Այն. միշտ գիրք, թուղթ, տետրակ, գրիշ, մատիտ, թանաք այնտեղից ենք առնում:

Աւելի ճիշտ կլինի ասել—զնում ենք. և ոչ առնում: Համար լաւ. այժմ տեսնեմ հվ կարոզ է թուել—թէ քանի տեսակ պաշտօնների անուններ տեսանք այսօր:

գործը տարայ. մեղադրուածի իրաւունքը լաւ պաշտպանեցի. և ուրախանում են:

Նուարդը ճիշտ ասաց—փաստաբանին երբեմն յաջողում է յանցաւորի, մեղադրուածի իրաւունքը պաշտպանել և երբեմն՝ ոչ. ի հարկէ յաջողութեան դէպքում՝ ուրախանում է—որ անմեղ մեղադրեալին ազատեց շատ ցաւերից բանտից, գուցէ և աքսոր գնալուց և էլի շատ զրկանքներից. իսկ տիրում է՝ երբ չի յաջողում իրան ազատել մեղադրուածին:

Ինչպէս յիշում եմ, դու ասացիր Արեգնազան, թէ ձեր հարևանը բժիշկ է, հապա տեսնեմ—իսկի հետաքրքրութել ես, ուզեցել ես իմանալ թէ հիւանդներ շատ են գալիս, երբ, բժիշկը երբ է գնում հիւանդներին այցելութիւն անում, երբ է վերադառնում, որ օրերն են իւր ընդունելութեան օրերը. ևայն հալին:

—Հետաքրքրութել եմ, ինչպէս չէ. շատ անգամ հիւանդները մեզ մօտ են գալիս հարցնելու—թէ բժիշկը տանն է, երբ է ընդունում, երբ գնաց, երբ կդայ: Մեր հարևան բժշկի մօտ հիւանդներ են գալիս շարաթը երեք օր—երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ օրերը. առաւատները 8 ժամից մինչև 10-ը. իսկ երեկոները՝ 6-ից մինչև 8-ը: Նա նրանց նայում է, գեղ է գրաւմ և գնում են. մնացած ժամերին ինքն է գնում իւր հիւանդներին վիզիտ անում:

Վիզիտ չպիտի ասեմ. չէ որ այս րոպէին ասացի—բժիշկը երբ է գնում հիւանդներին այցելութիւն անում. էլի ասում ես վիզիտ. պէտք է մտքերդ պահէք իմ ասած խօսքերը:

Տիգրանուհի, դու ասացիր—թէ եղբայրդ գրագիր է չաշտաբար Դատաւորի մօտ. կարնդ ես մի բան ասել գրագրութեան պաշտօնի մասին. եղբայրդ, երեկի, պատ-

մած կլինի տանը և դու լսած ե հետաքրքրուած կլինիս. շէ-

—Եյ՞ս. պատմել է նա և շատ անգամ էլ գանգա-  
տուել է. որ ոռճիկը քիչ է, բայց չարշարանքը շատ-  
երբեմն այնքան թղթեր է բերում տանը գրելու, որ  
նստում է մինչև գիշերուայ 2 ժամը. առաւօտն էլ 7  
ժամին վեր է կենում, թղթերն առնում և դատարան  
գնում. այնտեղ էլ գրում է մինչև 2 և 3 ժամը. երբեմն  
էլ երեկոները գնում է դատարան Էլի թղթեր գրելու:

Միրնէց, դու էլ ասա հաշուապահութեան մասին,  
որովհետև եղայրդ, ինչպէս ասացիր, հաշուապահ է  
Բայանդուրեանի գրասենեակում:

—Եղայրս, այս, այնտեղ հաշուապահ է. նա ա-  
ռանձին սեղան ունի. խանութի բոլոր մուտքի ու ծախքի  
հաշիւր նա է անում:

Արուսնակ, քո եղայրը չաշտարար Դատաւորի մօտ  
քարտուղար է, ինչպէս ասացիր, կարմղ ես ասել թէ  
նա ինչ է անում:

—Եյն կարող եմ—նա գրում է այն ամեն բաները,  
ինչոր որոշւում է կամ վճռում գատարանումը <sup>1)</sup>: Հաշ-  
տարար դատաւորը տալիս է նորան գանգատի, կամ  
խնդիրների թղթերը և իւր որոշումը հետը և շատ ան-  
գամ ցոյց է տալիս ձեզ՝ թէ ինչպէս պէտք է գրել.  
Եղայրս էլ գրում է և տալիս է դատաւորին, որ նա  
կարդայ և դրստի:

Մյոպէս չէ, ասա ուղղի և ստուգի:

—Որ նա ուղղի և ստուգի. եթէ կանոնաւոր է  
գրել՝ ստորագրում է: Եղայրս ասում է—թէ շատ ծանր  
է իւր պաշտօնը. որովհետև ինչ որ ասւում է ու խօսւում,

1) ... այն ամեն բաները. պիտի ուղղել—այն ամեն  
խօսքերն ու վճիռները.

Նա պէտք է լաւ կերպով դուրս բերէ այն բոլորը:

Աւելի դեղեցիկ և ճիշտ կլինի՝ եթէ ասես ամփոփ կերպով:

—Ամփոփ կերպով դուրս բերէ. սխալ չանի: Քանի՛. քանի՛ անգամ նորից ու նորից ստիպուած է լինում արագրելու և ասում է—օ՛խ. ինչ դժուար է ապրել աշխարհում:

Հապալ տեսնաւմ ես Արուսեակ, դուք կարծում էք հեշտ է ապրել աշխարհում: Ձեզ համար, ի հարկէ հեշտ է, ամեն բան պատրաստ—հացը, ջուրը, կերակուրը, չորերը, բնակարանը, ուսումը. ապրին ծնողները—հայրիկն ու մայրիկը. այդ ամենի մասին հոգում են, այդ ամենը տալիս են ձեզ. դուք չէք շարչարւում և ամեն բան պատրաստ ստանում էք. բայն ինչքան քրտինք են թափում ձեր ծնողները: Օ՛հ. որքան պիտի ազօթէք նրանց համար, ի՞նչպէս պիտի սիրէք նրանց ու հնագանդ լինիք. որ նրանք ուրախ սրտով և առողջ մարմնով շարչարուեն ձեզ համար: Աշխատեցէք. աշխատեցէք, երեխայք, շրարկացնել ձեր հայրիկին ու մայրիկին. ձեր հնագանդութիւնը ծնողներին՝ նրանց կեանքը կքաղցրացնէ:

—Կաշխատենք տէր-հայր, ազնիւ խօսք, կատարել ձեր խօսքերը, ձեր պատուէլները:

Ըստահիտ, դու ասացիր—թէ քո քեռին Գանձակումը գատաւոր է. կարող ես մի բան ասել նորա պաշտօնի մասին:

—Զեմ կարող, ես միայն լսել եմ—թէ նա դատաւոր է, բայց ոչինչ չգիտեմ նորա պաշտօնի մասին:

Ո՞վ կարող է ասել: Ոչ ոք: Լաւ. ես կասեմ: Դատաւորն ունի դատաւորական աթոռ. նա է լսում բողոքաւորների բողոքները. քարտուղարն արձանագրում է դատարանում.

ԺԱՅԱԿԱՆ ԵՐԱ: Քատառարը վկաներին է հարցնում, թէ  
որ կան. նրանց ցուցմունքներն էլ գրի է անցնում քաղը  
տուղարը. այս ամենից յետոյ դատարանի անդամները  
առանձնանում են իբենց խարհրդարանը, այնտեղ վերջ-  
նական որոշումն են կայացնում և դարձեալ գալիս են  
դատարանական դահլիճը, ուր կարդացում է վերջնա-  
կան դատավճիռը <sup>1)</sup>:

Ծյժմ դու ասա, Փառանձեմ, զինօտրականի պաշ-  
տօնի մասին. կնքահայրդ զինօտրական է, ասացիր, չէ:

— Այս:

Կարող ես մի բան ասել:

— Հատ քիչ բան կարող եմ ասել:

Ասա, ոչինչ:

— Կնքահայրս սպայ է. ծառայում է թագաւորին.  
զինօտրների գլխաւորն է. թէ պատերազմ վնի՝ զինօտ-  
րների հետ պատերազմ կերթայ:

Դու մնացիր, նազելի, դու էլ քո ճարտարապետ  
եղբօր մատին մի բան ասա և վերջացնենք այս դասը:

— Եզրայրս, ինչպէս ասացի, քաղաքային վարչու-  
թեան մէջ քաղաքային ճարտարապետի պաշտօն ոնի:  
Նա հսկում է շինութիւնների վերայ. թէ տներ են շի-  
նում, թէ տները նորոգել է հարկաւոր, կամ խախուա  
են, կամ քանդուելու վրայ են՝ նորան ուղարկում են տես-  
նել, քննել և վարչութեանը յայտնիլ. յետոյ ինչ կկար-  
գադրեն՝ նա այն կանէ:

Լաւ. բաւական է: Ուրեմն տեսանք որ պաշտօններն  
էլ միևնոյն նշանակութիւնն ու նպատակն ունին՝ ինչ

<sup>1)</sup> Սաներին քացատրել անհասկանալի քառերը և գոր-  
ծողութիւնները:

Թը ունէին Արհեստաները, Աշխատանքները և Մշտկութիւնները: Այդպէս չէ:

— Այդպէս է:

Լաւ սովորեցէք գալ անդամուայ համար:

ԻԵ. Պառ:

Կրկնութիւն:

Ո՞վ է կարող ինձ ասել—պաշտօն և աշխատանք ունեցողներից մէկին կամ միւսին չե՞նք մոռացել մենք: Զեր տանը կարդացողներ կմնեն:

— Կան: — Մեր տանը հայրս է կարդում: — Խսկ մեր տանը և հայրս և մայրս: — Մեր տանը բոլորն էլ կարդում են բացի ինձանից:

Հապա դու ասա, նազելի, ինչ են կարդում ձեր տանը:

— Գազեթներ, գրքեր:

Բայց ինչու հայերէն չեւ ասում — գազեթների փոխանակ ասա լրագիրներ<sup>1)</sup>:

Լաւ, այժմ հարցնում եմ — այդ գրքերը գրող կայր այդ լրագիրներն էլ գրող կայ. թէ իրանք իրանց բուսեց են հոդից կամ իջել են երկնքից:

— Ես կըսեմ տէր-հայր:

Ասա Հրահատ:

— Նախորդ դասին Դուք մեզի ըսկի գրաքնչին համար — թէ գիրք շինուղներն, հարկաւ և թերթ հրատարակողներն, անոր կդիմեն և անոր թոյլտւթենէն ետք կտպուին թէ դրքերն և թէ թերթերն. սակայն մենք.

<sup>1)</sup> Կրկնել տալ դասարանին և սորվացնել — որո՞նք են ասւում օրաթերթ, շաբաթաթերթ և ամսաթերթ լրագիրներ»

մոռցանք յիշել—թէ ուրեմն կամ գիրք հեղինակողներ, լրագիր և օրաթերթ հրատարակողներ, որոնց մասին եւ չսորվեցանք. թէ կը հրամայէք՝ ես կըսեմ:

Գիրք հեղինակողների մասին թող Արաքսիան պատմէ. իսկ լրագիր հրատարակողների կամ խմբագիրների մասին դու կպատմես Հրահատ: Լաւ կլինի:

—Ինչ որ Զեր կամքն է՝ ան ալ մեզի համար սուրբ է: Բայց առաջ ես կպատմեմ. յետոյ դուք կասէք, որովհետեւ դա փոքր ինչ դժուար կլինի ձեզ համար<sup>1)</sup>:

Այժմ դու կրկնիր Արաքսիա գիրք շինողների կամ հեղինակների մասին:

—Հեղինակներուն աշխատանքը շատ է. ինչպէս ըսիր—անոնք կհեղինակեն կամ կթարդմանեն դասագրքեր և կարդալու գրքեր—վէպիկներ, վէպեր, ժողովրդական հեքաթներ, խաղեր, երգեր, բանաստեղծութիւններ, հանելուկներ, առակներ: Հեղինակներուն նպատակն է—որժողովորդն ու մանուկներն կարդան, կրթուին, դաստիարակուին ու զարգանան:

Ճատ լաւ ասացիր, Արաքսիա: Այժմ դու ասա Հրահատ:

—Խմբագիրներուն պաշտօնն այ ծանր է. անոնք ալ ժողովրդի լուսաւորութեան մասին կխորհեն ու կգրեն. թէ վատ կողմեր կան ժողովրդին մէջ՝ կհարուածեն. թէ լաւ և գովելի կողմեր՝ կգովեն և կդրուատեն. անոնք գիշեր, ցորեկ ժողովրդին բարկքին համար կմտածեն ու կգրեն:

Հապա ինձ ասացէք Արաքսիա և Հրահատ—էլի ինչմի պաշտօն կամ աշխատանք կայ, որ նման է հեղինակ-

<sup>1)</sup> Ուսուցիչը, թէն սաներին պիտի թողնէ ասել, պատմել և լետոյ ինքը ամփոփէ. բայց երբ նիւթը փոքր ինչ ծանր է՝ նախ ինքը պիտի պատմէ.

Ների կամ թարգմանիչների, այսինքն—վիպագիրների, առակագիրների, բանաստեղծների և խմբագիրների պաշտօնին կամ աշխատանքին. Յիշում էք իմ ասածներս:

—Ես կըսեմ:

Ասա Հրահատ:

—Թատրոնին բէ մին ծառայողներն—դերասաններն:

—Ես ալ կըսեմ:

Ասա Ծրամքսիա:

—Թատերագիրներն ալ անոնց հետ:

Ճատ լաւ. շատ գեղեցիկ: Այս. այս. ինչպէս վիպագիրները, առակախօսները, բանաստեղծները, հրապարակախօսները, խմբագիրները՝ նոյնպէս և դերասաններն ու թատերագիրները լաւ և հմուտ բժշկի նման աշխատում են հասարակութեան կամ ժողովրդի հիւանդութիւնը, ցաւը, պակասաւոր կողմերը հասկանալ և նրան բժշկելու յարմար միջոցներ որոնել, գտնել: Դուք հայելի ունիք տանը:

—Ունինք:

Դուք նայում էք նրա մէջ:

—Նայում ենք:

Ինչու էք նայում:

—Որ ուղղենք մեզ:

Այդպիսի մի հայելի են և վէպերը, առակները, բանաստեղծութիւնները, լրագիրները և թատրոնական բէմը. դրանց մէջ ահա ժողովուրդը նայում է և ուղղում է իւր սխալները. ինչպէս դուք հայելու մէջ նայում էք և ուղղում էք ձեր երեսը, գլուխը, մազերը, հանդերձները և այլն և այլն:

Ելի երեք բան յիշեցի, որ թեթէ կերպով անցեալ դասերին յիշեցինք ու անցանք. ասեմ ձեզ—դուք նուագածուներին լսել էք:

— Նուռգածու շենք հասկանում:

— Մոռացնլ էք այդպէս շնոր. Զեր լեզով ասեմ, —

Մուզիկանտներին:

— Լսել ենք:

Ինչի՞ վերայ են ածում:

— Մուզիկաների վերայ:

Մուզիկա՝ ինչպէս ասենք հայերէն ով կասէ:

— Ես կըսեմ:

Ասա Հրահատ:

— Նուռգարան կըսեն:

Ճիշտ է: Իսկ նուռգարանների տեսակները շատ կան, սենք մի քանիսը միայն սովորենք և բաւական է. գրանք են—դաշնամուր, ջութակ, քնար, թմբուկ, սրինգ և այլն և այլն:

Աւրեմն մէկը տեսանք: Մնաց երկուսը. դուք լսել էք երգեր. Եկեղեցում, թատրոնում, հարսանիքներում:

— Լսել ենք:

Նրանց, որոնք երգում են, ինչպէս են ասում:

— Ես կասեմ:

Ասա Հրանոյշ:

— Երգիշ: — Ես էլ կասեմ: Ասա Ջողեր: — Աշուգ: — Ես ալ կըսեմ: Ասա Հրահատ: — Երգիշներուն կարելի է ըսել նաև Երաժիշտներ: Իսկ անօնց արաւեստն է Երաժշառութիւն:

Բացի Լուսանկարչութիւնը, էլի ինչ արուեստ կայ որ նրան կնմանի:

— Ես կըսեմ:

Ասա Արաքսիա:

— Լուսանկարչութենէն դատ, կայ անոր նման արուեստ մընալ, որ կըսուի նկարչութիւն. ադ արուեստ առօվ պարապողներն կըսուին նկարիշներ:

Ճատ լաւ. Այժմ ով ինձ կտոհի—բնչ՝ է նուազա-  
ծութիւնը, երաժշտութիւնը և նկարչութիւնը:

—Ես կըսեմ:

Ասա Հրահատ:

—Երեքն ալ գեղարուեստ են. երեքն ալ գեղեցիկ-  
արուեստներ են. նուազածուն կնուազէ զանազան նուա-  
զարաններու վրայ. Երաժիշտն ալ կերպէ գեղեցիկ երգեր.   
Նկարիչն իր վրձինով ու իւղաներկով բնութեան տեսա-  
րաններ ու մարդոց պատկերներ կնկարէ. անոնց ներքին  
սքանչելիքն իր վրձինով կսաեղծէ, կարայայտէ. և աս-  
երեքն միասին հոգեկան մեծ հաճոք կպատճառեն մար-  
դուս. ատոր համար ալ կըսուին Գեղարուեստ...

Ինչու ես լաց լինում Հրահատ:

—Հայրս ադ երեք ձիրքերն ալ ունէր. անցեալ  
առրուն վերջերն մեռաւ. անոր սենեակն գիւղարուեստի  
մը սենեակ կներկայացուներ. քանի կյիշեմ՝ կխեղդուիմ՝  
լացէն ու արցունքն... բնշ ընեմ. որբ մը ընկայ ատ-  
աշխարհիս մէջ:

Մի լար, Հրահատ. դու շգիտես որ ուրեմի հայրը  
Սստուած է. չէ որ մենք սովորեցինք—թէ երկու հայր  
ունինք. փսքը հայրը չկայ, Մեծ Հայրը միշտ կայ. չէ որ  
Նա աւելի է սիրում, աւելի աշխատանք ունի մեզ վե-  
րայ. Նա միթէ կթունէ քեզ. աեսնաւմ ես ինչպէս շնոր-  
հալի ես, խելօք ես. դեռ 14 տարեկան է հասակդ բայց:  
16, 17, 18 տարեկանների խելք ու գատողութիւն ու-  
նիս. միթէ դա Մեծ Հօր շնորհքը չէ. իսկ եթէ աւդպէտ  
խելօք գնաս և հասնես Զորբորդ, Հինգերորդ, Վեցերորդ  
և էլի բարձր դասարանները, գիտես ինչքան խելօք ու-  
զարգացած կլինես. չէ որ մի մի բանով Մեծ Հայրը օգ-  
նում է մեզ. մէկին՝ լաւ ծնողներով. միւսին՝ հարստու-  
թիւնով. երրորդին՝ առողջութիւնով. չորրորդին՝ խելքով.

Հնորհքով. Քեզ խելքով ու շնորհքով է օգնել—ուշիմ, սրամիտ, ընդունակ և սորա հետ միասին աշխատասէր ու ջանասէր ես. և սրանց հետ միասին ուշադիր դասեցին, խելօք ու համեստ շարժմունքներով. դու կարծում ես սրանք հայր ու մայր չեն. գոն չես, որ այսքան շնորհք մի անգամից պարզիել է քեզ Մեծ Հայրը. բոլորը քեզնից գոն են—թէ ընկերուհիներդ, թէ դաստիարակներդ:

—Գոհ եմ, տէր-հայր, արժանի ալ չեմ Արարշին պարզմներուն. բայց երբ կյիշեմ չեմ կրնար անտարբեր մնալ ան քաղցր յիշատակներուն, որ թողել է հայրս սըրտիս, հոգուս ու մտքիս մէջ:

Լաւ. լաւ. բաւական է. վերջը լաւ կլինի: Հապատեսնեմ նվ ինձ՝ կասէ՝ ինչ նոր պաշտօններ կամ աշխատանք կամ գեղարուեստ աւելացրինք մեր սովորածների վերայ:

—Ե՞ս կըսեմ:

Սսահ Արաքսիա:

—Մեր սորվածներուն վրայ աւելցուցինք աս հետեւալներն—Հեղինակներու, Թարգմանիչներու, Խմբագիրներու, Դերասաններու, Թատերագիրներու, Նուագածուներու, Երաժիշտներու և Նկարիչներու աշխատնքներն ու գործքերն:

Ով կարող է կրկնել ինձ մեր սովորած պաշտօնների անունները, աւելացնելով այս վերջին սովորածները:

—Ե՞ս կըսեմ տէր-հայր:

Սսահ Հրահատ:

—Մեր տեսած տասն և մէկ պաշտօններուն վրայ, որ ասոնք են— Ուսուցչութիւն, Փաստաբանութիւն, Քժշկութիւն, Գրագրութիւն, Հաշուապահութիւն, Քարտուղարութիւն, Դատաւորութիւն, Գրաքննչութիւն, Հո-

գեղը պաշտօնէութիւն, Զինւորական պաշտօնէութիւն, ճարտարապետութիւն, աւելցուցինք տասն ալ ուրիշ աշխատանքներ. որոնցմէ ոմանք տրհեստին, ոմանք առետուրին, ոմանք պաշտօնին ու աշխատանքին կզատկանին. ատոնք են հետեւալիերն — Գրավաճառութիւն, Թղթավաճառութիւն, Հեղինակութիւն, Թարգմանչութիւն, Խմբագրութիւն կամ Հրապարակախօսութիւն, Դերասանութիւն և Թատերագրութիւն, Նուազածութիւն, Երաժշտութիւն, Նկարչութիւն. Աս վերջիներուս հետ մենք սորված ենք քսան մէկ պաշտօններ:

Ճամալաւ:

Մվ կարող է ինձ ասել — թէ Արհեստները, Աշխատանքները, Մշակութիւնները, Վաճառականութիւնը, Պաշտօնները եայլն եայլն. այս բոլորը ինչու համար ենմարդիկ, առհաստրահի; ինչու են պարտապում այս քաներով:

— Ե՞ս կըսեմ:

Ասած Հրահատ:

— Բոլոր մեր յիշած ու սորված աշխատանքներն՝ միշոցներ են մեր ապրուստին համար. մենք ապրինք առնի, ապրելու համար՝ աշխատինք պիտի. աշխատանքին համար ալ գործ է հարկաւոր. ահա ատոնք բալորն ալ գործեր են. աղ գործերն գործելով՝ մենք կտտարած կըլլանք մեր Արարշին Օրէնքն. որմէ է մեր ապրուստն ու կեանքը:

Ճատ ճիշտ ասաց Հրահատը. և որովհետեւ բոլոր մեր գործերի Տէրն է մեր Մեծ Հայրն Աստուած՝ ուստի և մենք մեր գործն սկսելուց առաջ պէտք է խնդրենք Աստուծոյ Փրհնութիւնը այն գործի վերայ, որը պիտի սկսենք. Ալորանի համար մի շատ սիրուն և փորբիկ ու կարճ աղօթք-

կայ. թէս փոքրիկ ու կարճ է՝ բայց միտքը շատ սիրուն  
է ու գեղեցիկ։ Կուզէք սովորենք։

— զատ ենք ուզում. սովորցրէք մեզ։

Դէ լաւ. ես կասեմ և դուք կարգ կարգ կը կըրկ-  
նէք — «Մեր ձեռքի գործքը ուղիղ արա»։

Կրկնիր առաջին կարգ. միջին. երրորդ. դասարա-  
նը խմբովին։

«Մեր ձեռքի գործքը յաջողիր մեզ. ով Սստուած»։

Առաջին կարգ. միջին. երրորդ. դասարանը խըմ-  
բովին։

Այժմ ամբողջ աղօթքը կասեմ. դուք լոեցէք — «Մեր  
ձեռքի գործքը ուղիղ արա. մեր ձեռքի գործքը յաջողիր  
մեզ. ով Սստուած»։

Առաջին կարգ. միջին. երրորդ. դասարանը խըմ-  
բովին։

Լաւ. ով կարող է միայն ասել <sup>1)</sup>։

— Ե՛ս։

Սսա Հրահատ։

— Ե՛ս։

Սսա Շրաքսիա։

— Ե՛ս։

Ասա Արեգնտագան։ Բաւական է։ Ուրեմն առանց այս  
աղօթքի ոչ մի գործ չպիտի սկսենք։ Եւ մեր գործը պի-  
տի լինի ուղիղ, արդար, հալալ քրտինքով, սրտանց, որ-  
պէսզի Տէրը օրհնէ մեր գործը և մեզ օգնէ, յաջողու-  
թին տալով մեր սկսած գործին։

Խօսք ատլիս էք — լաւ սովորել այս դասը։

— Խօսք ենք տալիս. այսպիսի գեղեցիկ դասը ի՞նչ-  
պէս կարելի է լաւ չսովորել։

Տեսնեմ։

<sup>1)</sup> Սաները հերթով մէկ մէկ ասում են ամբողջ աղօթքը.  
Ենտու դասարանը՝ խմբովին կամ նստարանների կարգով։

V. ՀԱՏՈՒԱԾ.

Ե. ԿԵԱՆՔ

Ուտելիք, Խմելիք, Հագնելիք, Օդ, Լուս, Արև, Անձրև, Հող:

1. Ուտելիք Եւ Խմելիք.

Ի՞ն. Դաս.

Կրկնութիւն:

Այս օրուայ ձեր դասը շատ հետաքրքրական դաս է. գիտեք ինչպէս. պատմեմ, լսեցէք—դուք ծնողական տանից գնացիք Մեծ Հօր տունը. յետոյ էլ գնացիք Ուսման տունը. Ուսման տանը սովորեցիք, դուրս եկաք և տեսաք որ մարդիկ իրենց ապրուստի համար պարապում են տեսակ տեսակ արհեստներով, աշխատանքներով, կամ մշակութեամբ և պաշտօններով. այս օրուայ դասով դուք կեանք պիտի մտնէք և տեսնէք—թէ մարդիկ, որ ապրում են՝ ինչնվ են ապրում, ինպէս են ապրում, որտեղից են ստանում իրենց ապրուստը-Ուտելիքը, Խմելիքը ևայլն:

Հետաքրքրական չէ այս դասը:

— Ձատ հետաքրքրական է. լաւ կլսենք. լաւ կսովորենք:

Ուրեմն սկսենք—Բնչ էք կարծում մարդս կարող է ապրել առանց ուտելու և խմելու:

— Ո՛չ մր մարդ չէ կարող ապրել առանց ուտելու և խմելու:

Գանձ լաւ. բայց դուք չէք ուզում սովորել և գիտենալ—թէ այդ ուտելիքն ու խմելիքը որտեղից է ստանում մարդս:

— Գիտենք. չէ որ Դուք մեզ սովորցրիք:

Այն, Աշխէն, սովորեցրի. դու էլ պատմեցիք Երկրագործութեան մասին. բայց այժմ մի քիչ երկար սովո-

քենք, որ լաւ հպսկանանք, բացի դրանից՝ ուրիշ տեսակ էլ պիտի սովորենք։ Տեսնում ուրեմն, ով կարող է ինձ ասել—թէ մեր ուտելիքն ու խմելիքը նրանեղից ենք ստանաւմ։

—Ե՞ս կասեմ։

Ասա Սշխէն։

Մեր ուտելիքը ստանում ենք դաշտերից, բոյսերից, Էլի ստանում ենք կենդանիներից։ Իսկ խմելիքը ստանում ենք զրից։

Էլի ով կարող է ասել—թէ էլի նրանեղից։

—Ե՞ս կասեմ։

Ասա Արեգնազան։

—Զրից ստանում ենք ձկներ։ Ճուկը ուտելիք է։

Ե՞ս էլ կասեմ։

Ասա Համասփիւռ։

—Թոշուններ՝ Ե՞նք ուտում։

Լաւ. այժմ ես կժաման թէ մարդիկ Բնչ են ուտում։ Մատում են ոշխարի, կովի, խողի, նապաստակի միսը։ Թոշուններից կամ հաւերից—մարդիկ ուտում են հաւի, աքաղաղի. սագի, բաղի, լորու, երբեմն էլ աղաւնու, տատրակի մլուր, կաքաւի միսն էլ են ուտում։ Դաշտելից, մարդերից, սարերից, ձորերից, հովիտներից—մարդիկ ստանում են և ուտում հաց, բրինձ, կտաւատ՝ որից ձէթ են հանում. սոխ, սխտոր, ոեհան, կռտիմն կամ կռտեմ պրաս կամ պրասխ, բամեայ, պօրինջան կամ պատինճան, տարխուն, պիտնայ, քոնդար, սիբեխ, ղանզիլ, ծնեք, սինձ, սունկ, փիփերթ, թրթնջուկ, ելակ, մորի<sup>1)</sup>։

—Ես կասեմ թէ այգիներից իրրե ուտելիք լինչտեսակ պտուղներ են ստանում մարդիկ։

1) Սաներին անժանաօթ բառերը բացատրւում են։

2է. Ոսկեհատ. Ես կասիմ։ Այգիներից մարդիկ ստանում են—խաղող, կեռաս, թութ, տպանձ, խնձոր, ծիրան, սալորներ զանազան տեսակ, դեղձ, սերկելի, կիտրոն կամ լիմոն, նարինջ, թուզ։

Բանջարանոցներից ստանում են մարդիկ իբրև ուտելիք—սեխ, ձմերուկ, վարունգ, կազամբ, բողիկ, ճակնդեղ կամ բազուկ, գետնախնձոր, ստեղնին կամ դազար և հաղար տեսակ կանաչեղիններ։

Հապալ այս բոլոր առածները ամփոփիր Հրահատ։

—Մեր ուտելիքներն մենք կառնունք Դաշտերէն, Այգիներէն, Լեռներէն, Ընտառներէն, Չորերէն, Մարգերէն, Հովիտներէն, Բանջարանոցներէն. —մէկ խօսքով՝ Բոյսերէն կամ Բուսականութենէ։ Դարձեալ մեր ուտելիքներն մենք կառնունք կենդանիներէն—կենդանիներէն կառնունք միս, իւղ, կաթ. կաթէն կշինեն—ոէր, կարագ, մածուն, պանիր. թռչուններէն կամ հաւերէն կառնունք—միս, ձու։ Դարձեալ մեր ուտելիքներն մենք կառնունք ջրերէն։ Ջրերէն մենք կառնունք տեսակ տեսակ ձկներ և ուտելիքներու համար ընդունուած ջրալին կենդանիներ։ Խոկ մեր խմելիքն մենք կառնունք ջրէն։ այսինքն՝ ծովերէն, Գետերէն, Աղրիւրներէն, Ջրհորներէն։

Հրահատ, մի տեղ մոռացար անուանել. որտեղից էլի ջուր ենք խմում։

—Լճերէն ալ կառնունք հարկ եղած ժամանակ. նոյնպէս ալ անձրկին ջրերէն. բայց շատ հազիւ կպատահի կարօտիլ լճերու կամ անձրկներու ջրերուն։

2է, այդ չէ իմ ուղածո. կնշանակէ շգիտէք. Ես կասեմ—ձեզանից ոչ ոք կարծեմ անապատ տեսած չի լինի և թէ ինչ բան է անապատը՝ այն էլ շգիտէք. անապատը

մի մեծ, հարթ ու հաւասար տարածութիւն է<sup>1)</sup> , մի ընդարձակ մեծ դաշտի նման . բայց դաշտը ծածկուած է խոտերով, ծաղիկներով. իսկ անապատը ծածկուած է տաք աւազով. տաք է աւազը, որովհետի միշտ արև է և տաք արե. ամպեր ու անձրեներ շատ հազիւ են պատահում. այնտեղ ոչ խոտեր են բռնում, ոչ ծաղիկներ են ծաղկում, ոչ էլ ծառեր կան. աւազէ. և միայն աւազ. տաք ու չոր աւազ. ջուր էլ չկայ: Բայց տեղ տեղ, այն էլ իրարից շատ հեռու հազիւ երբեմն բերրի, արգաւանդ տեղեր են պատահում, ուր ջուր է լինում. ծառեր են լինում. այդպիսի տեղը ասում է ովասիս. ահա այդ ովասիսի ջրից խմում են ճանապարհորդները և խմացնում են ուղտերին: Անտպատում առհասարակ ուղտերով են ճանապարհորդում. նախ՝ որ շտտ աւազ կայ և այդ աւազը խոր է և շատ տաք, միայն ուղտերնվ է յարմար այդ խոր ու տաք աւազի վերայսվ ճանապարհորդել. երկրորդ՝ որ ջուր չկայ, և ջուր չլինելու պատճառով՝ ուրիշ կենդանիներով չէ կարելի ճանապարհորդել. որովհետև նորա երկար ժամանակ անջուր մնալ չեն կարող. այն ինչ ուղտը ութ օր կարող է մնալ առանց ջրի. իսկ ութ օրուայ ընթացքում կարելի է ովասիսի հանգիպել.

Ուրեմն ովասիս խօսքը չէք մոռանալ:

— 2ենք մոռանալ. հեշտ է. կյիշենք:

Հրահատ, կշարունակնս՝ թէ ուրիշն ասի:

1) Տարածութիւն բասը և առհասարակ ալնպիսի բառեր, որ կարող են չգիտենալ սաները՝ ուսուցիչը պիտի բացարձէ ու հասկացնէ. շատ երկար կլինէր—եթէ ամեն մի խօսք բացատրուէր ալս ձեռնարկի մէջ. դասի ժամանակ անշուշտ հարկաւոր է և կալ հնարաւորութիւն:

—Կշարունակեմ. ես ըսի՝ թէ մեր սւտելիքներն մենք կառնունք Դաշտանքէն —որ կհերկեն, կմշակեն հոդագործներն կամ երկրադրծներն, ինչպէս սորվեցանք. դաշտերն մեզի կուտան մեր ուտելիքներէն ամենէն գլխաւորն՝ որ է հացը.

—Ըստունակիր Արաքսիա:

Այգիներէն —որ կպահեն, կպտհպանեն այգեպաններն. այգիներն մեզի կուտան պտուղներ և խաղող. Հեռներէն շատ հազիւ և սակաւ կպատահի պտուղներ առնուլ. ան ալ եթէ անտառոտ է կամ ծառոտ. իսկ Անտառներէն —որ կպահեն ու կհսկեն անտառապահներն՝ կառնունք տեսակ տեսակ անտառային պտուղներ։ Սո բալոր իմ՝ ըսածներն բոյսեր են. աս բոյսերով կը կերակրուին մարդիկ. վասն զի բոյսերն ալ ուտելիք են կարգուած Արարչէն մարդուս համար։

Հրահատն ու Արաքսիան լաւ ասացին. այժմ նվինձ կպատմէ մսեղէն ուտելիքների մասին։

—Ե՞ս կպատմեմ մսեղէն ուտելիքների մասին։

Պատմիր Արեգնազան։

—Մեր ուտելիքները մենք ստանում ենք Ընտանի և երբեմն էլ Վայրի Կենդանիներից — ընտանի կենդանիները խնամում են ու պահպանում անամնապահները կամ խաչնարածները. Նրանք դաշտերից են կերակրում։ Ճարունակիր Աշխէն։

—Վայրի կենդանիները որսում են որսորդները իրենց հրացաններով. երբեմն էլ ողջ ողջ են բռնում իրենց որսկան չների օգնութեամբ. այդ տեսակ չներն ասւում են թազի։

Աւելի ճիշտ կլինի ասել բարակ կամ բարակ որսկան։

Ճարունակիր Հրահատ։

—Աղ բարակներու օգնութեամբ ու հրացաններով որսորդներն կորսան աղուէսներ, նապաստակներ և շատ մը տեսակ տեսակ վայրի կենդանիներ կամ ուտելու կամ անոնցմէ օգտուելու նպատակաւ։ Թռչուններն—ասանց ոչ ոք չի խնամեր, ինչպէս և վայրի կենդանիներն ասոնց խնամողն է ամենուն խնամարկող Արարիչն. իտկ հաւերուն խնամքն մարդոցմէ է։ Թռչուններն ալ, հաւերե ալ կմննդուին ունդերով, ընդեղէններով, տեսակ տեսակ ճճիներով կամ որդերով։ Թռչուններն օդին մէջ կթռչին և զանազան տեղուանք իրենց բուներն կհիւսեն։ Թրաչուններուն համար ալ կան որսորդներ. մարդիկ անռնց կորսան հրացաններով։ Երբեմն ալ սորվեցուցած քազէներով։

Հապա տեսնեմ ով կասէ ինձ թէ որսկան թռչունին ինչպէս են ասում մեր կողմերը ժողովրդական խօսքով։  
—Ես կասեմ։

Ասա նուարդ։

—Այդ որսկան թռչունին ասում են—Թառլանդուշ. բայց դա թռուրքերէն է։

Այդպէս է։ Ըարունակիր Արաքսիա։

—Սորվեցուցած բազէն ուսին կամ գլխարկին վրայ կդնէ որսորդն. և երբ նա կդիտէ որեիցէ թռչուն մը՝ կայծակին պէս կարանայ, կրոնէ ու կրերէ տիրոջը կուտայ։ Հրացաններէն ու բազէններէն զատ՝ թռչնորսներն գործ կդնեն նաև թռչնորսական դործիքներ. աղ գործիքներէն կան վարմեր, ցանցեր։ Զկնեցն ալ—խնամող շունին մարդոցմէ, անոնց խնամարկողն ալ Արարիչն է։ Անոնք ջրի մէջ կապրին, անոնց կորսան ուռկաններով կամ կարթերով։ 1) Ճկնորսներն, անոնց միսն ալ կուտինք։ Կան մարդիկ, որոնք արհեստական կերպով մը ձկներ կաճեցնեն առանձին աւագաններու մէջ վաճառելու համար։

1) Անհասկանալի բառերը բացատրել։

Սրաքսիան էլ լաւ ասաց. ուրեմն ուտելիքների մասին ինչքան մեզ հարկաւոր է՝ սովորեցինք. այժմ էլ սովորենք խմելիքի մասին. հապա տեսնեմ և կ կպատմէ ինձ խմելիքի մասին:

—Ես կպատմեմ խմելիքի մասին:

Պատմիր Սրեգնազան:

—Մեր ամենագլխաւոր խմելիքը՝ ջուրն է: Առանց ջրի շնորհագիր ապրել ոչ մարդիկ և ոչ կենդանիները, ոչ թռչունները և ոչ բոյսերը:

Հատ լաւ. այժմ տեսնենք ջրի տեսակները: Ջուրը մի քանի տեսակ է—օրինակ՝ ծովի ջուրը աղի է ու քիչ դառնահամ. աղբիւրի ջուրը սառն է և համեղ. դետի ջուրն էլ է համեղ, բայց տաք, որովհետև արեից ու քամուց ծեծւում է. Ջրերը բզիսում են սարերից, վտակ վտակ՝ հոսելով. առուակներ են կազմում և այդ առուակները իրար հետ միանալով՝ հաստանում են, յորդանում են և ծովն են թափում: Մարդիկ, առհասարակ, իրենց քաղաքները, գիւղերը, ամարանոցները շինում են այնպիսի տեղերում՝ ուր ջուր կայ. անջուր տեղերում քնակութիւն չէ լինում: Պէտք եղած ժամանակ մարդիկ խմում են նաև ջրհորների, լճերի և անձրեների ջուրը:

Ուրեմն ուտելիքի և խմելիքի մասին մեր այսօրուայ գասը աւարտեցինք: Աշխատեցէք լաւ պատրաստել:

—Կաշխատենք:

Սովորենք աշխարհքի շորս կողմերը<sup>1)</sup>:

---

<sup>1)</sup> Դբրե մարմնամարզութիւն, ուսուցիչը պատուիրում է սաներին կանգնել տեղներում. դառնալ դէպի արենելք. լետով՝ հարաւ. լետով՝ արեմուտք. լետով՝ հիւսիս. լետով՝ դարձեալ նախկին դիրքն առնուլ. միւնոյնը վարժել է տալիս երբեմն ևս

2. Հագնելիք:

Ի՞՞ Դաս:

Կրկնութիւն:

Այսօրուաց մեր դասը պիտի լինի հագնելիքի մասին։ Անցեալ դասին մենք աեսանք—թէ ինչպէս և որոշողից է ճարում մարդս իւր ուտելիքը և խմելիքը. Խոհայս դպսին մենք կտեանենք թէ մրանդից է ճարում մարդն իւր հագնելիքը—այսինքն իւր հագուստը, իւր շորերը։ Հապա նվ կասէ։

—Ե՞ս կրսեմ։

—Ե՞ս ալ կըսեմ։

Արաքսիա և Հրահատ, ես գիտեմ որ դուք կարող էք ասել, բայց թող ուրիշներն ասեն. եթէ սխալ կասին՝ կուզդէք, խակ եթէ սւլիդ կասեն՝ վերջը դուք կամփոփէք, այն։

—Ինչպէս Զերին կամքն է։

Հապա դու ասա Արեգնազան։

—Մարդիկ իրենց հագնելիքը ստանում են դաշտեքից ու կենդանիներից։

Այս. ճիշտ առաց. օրինակ դաշտերում ցանում են բամբակ, վուշ և այլն. որոնցից շինում են հագուստեղիններ։ Կենդանիներից ստանում են բուրդ, կաշի. որոնցից նոյնպէս շինում են հագուստեղիններ։ շերամի որդից

Ճեռքերի տարածմամբ. Ալսպիսով՝ ուսուցմունքը միանուագ է կառարւում—և աշխարհի կողմերի ծանօթութիւն և մարմնամարզական շարժումներ։ Ուրիշ մարմնամարզական շարժումներ ևս անհրաժեշտ են. երբեմն դասի կիսին, երբ լոգնածութիւն է նկատում ուսուցիչը սաների մէջ. երբեմն դասի վերջին։

ստանում են մետաքսեղէն զգեստներ. <sup>1)</sup> Ծռչունների վիետուրներից ու ազուամազից՝ զլխարկի զարդեր և առ հասարակ շորեղէններ:

Հրահատ, ասա ինձ—նրտեղ են պատրաստում հագուստեղէնները:

—Աղ հագուստեղէններն կպատրաստեն գործարաններուն մէջ. բամբակէն կպատրաստեն բամբակեղէններ. բուրդէն—ասուէզիէններ. մետաքսէն — մետաքսեղէններ=Գործարաններէն վաճառի կհանուին. վաճառականներն կգնեն ու կտանեն և իրենց խանութներուն մէջ կտեղաւորեն ու կվաճառեն. մենք անոնցմէ կգնենք:

### 3. Օղ, Լոյս, Արեւ, Անձրեւ, Հող.

#### 1. Օղ.

Հագնելիքի մասին շատ բոն շասացինք, բայց այսքանն էլ հերիք է: Այժմ ուրիշ բանի վերայ խօսենք. օրիրինակ—Օղի մասին: Ո՞վ ձեզանից առանց օղի կարող է ապրել:

—Առանց օղի ոչ ոք չէ կարող ապրել:

Լաւ ասացիք. իսկ առանց հացի ու ջրի:

—Առանց հացի ու ջրի էլ ոչ ոք չէ կարող ապրել:

Այդ էլ լաւ ասացիք. այժմ տեսնեմ նվ կարող է ինձ ասել—թէ դրանցից մըն է աւելի հարկաւորը:

—Ե՞ս կասեմ:

Հապալ ասա Ուկեհատ:

—Հացն ու ջուրը հարկաւոր են, առանց հացի ու ջրի չենք կարող ապրել. օդն էլ հարկաւոր է. առանց օդի էլ չենք կարող ապրել:

<sup>1)</sup> Անձանօթ բառերը բացատրել. շերամի որդ—առը եշումի ճիճու:

Ո՞վ կարող է աւելի լաւ ասել:

—Ե՛ռ կասեմ:

Ասա Համասփիւռ:

—Հայն ու ջուրը աւելի են հարկաւոր: քանթէ օդը: 2է. Համասփիւռն էլ լաւ շասաց: Ո՞վ կարող է ճիշտ-

ասել:

—Ե՛ս:

Ասա Արեգնազան:

—Հայը հարկաւոր է՝ ուտելու համար. ջուրը հար-  
կաւոր է՝ խմելու համար, իսկ օդը հարկաւոր է չնչելու  
համար. Առանց օդի շունչ քաշել, չնչել շնչք կարող:  
Կնշանակէ՝ ամէն մէկն իւր տեղն ունի. և երեքն էլ հար-  
կաւոր են մեզ:

Հրահատ, դու կարող ես լրացնել ու ամփոփել:

—Կրնամ:

Ասա:

—Ոսկեհատն ու Արեգնազանը մասսամբ ճիշտ ըսին.  
իսկ Համասփիւռն՝ ճիշտ շըսաւ—թէ հացն ու ջուրն աւե-  
լի են հարկաւոր քան թէ օդը, սակայն երեքն ալ ամե-  
նագլխաւորն թողին ու շըսին, աղ անէ—որ առանց հա-  
ցի ու ջրի մարդս օր մը գոնէ կրնայ ապրիլ. իսկ առանց  
օդի վայրկեան մ'անգամ շի կրնար ապրիլ. վասն զի  
ամենն վայրկեան շնչել կուզենք, շնչելու կկարօտինք. իսկ  
շնչելու համար օդ կուզենք. և եթէ օդ շըլլայ՝ կմեռնինք  
անմիջապէս:

Գատ լաւ, ասաց Հրահատը. եթէ էլի բան մնաց  
ասելու՝ շարունակիր Արաքսիա:

—Թէս առանց հացի ու ջրի շնչք կրնար ապրիլ,  
ինչպէս ըսուեցաւ, անոնիր ալ կեանքերուս համար շատ-  
կարևոր են, սակայն, ինչպէս Հրահատն ալ ըսաւ, ժա-  
մանակ մը կրնանք առանց հացի ու ջրի դիմնալ. իսկ

ստանում են մետաքսեղէն զգեստներ. <sup>1)</sup> Ծռչունների փետուրներից ու աղուամազից՝ գլխարկի զարդեր և առ հասարակ շորեղէններ:

Հրահատ, ասա ինձ—որտեղ են պատրաստում հագուստեղէնները:

—Աղ հագուստեղէններն կպատրաստեն գործարաններուն մէջ. բամբակէն կպատրաստեն բամբակեղէններ. բուրդէն—տսուէլուէններ. մետաքսին — մետաքսեղէններ։ Գործարաններէն վաճառի կհանուին. վաճառականներն կզնեն ու կտանեն և իրենց խանութներուն մէջ կտեղաւորեն ու կվաճառեն. մենք անոնցմէ կզնենք։

### 3. Օդ, Լոյս, Արեւ, Անձրեւ, Հող.

#### 1. Օդ.

Հազնելիքի մասին շատ բո՞ն շասացինք, բայց այսքանն էլ հերիք է։ Այժմ ուրիշ բանի վերայ խօսենք. օրիրինակ—Օդի մասին։ Ո՞վ ձեզանից առանց օդի կարող է ապրել։

—Առանց օդի ոչ ոք չէ կարող ապրել։

Լաւ ասացիք. իսկ առանց հացի ու ջրի։

—Առանց հացի ու ջրի էլ ոչ ոք չէ կարող ապրել։

Այդ էլ լաւ առացիք. այժմ տեսնեմ ով կարող է ինձ ասել—թէ դրանցից ո՞րն է աւելի հարկաւոր։

—Ե՞ս կասեմ։

Հապա ասա Ոսկեհատ։

—Հացն ու ջուրը հարկաւոր են, առանց հացի ու ջրի չենք կարող ապրել. օդն էլ հարկաւոր է. առանց օդի էլ չենք կարող ապրել։

<sup>1)</sup> Անձանօթ բառերը բացատրել. շերամի որդ—առը եշումի ճիճու։

Ո՞վ կարող է աւելի լաւ տսել:

—Ե՛ռ կասիմ:

Ասա Համասփիւռ:

—Հացն ու ջուրը աւելի են հարկաւոր: քանթէ օդը:  
2է. Համասփիւռն էլ լաւ շասաց: Ո՞վ կարող է ճիշտ-

ասել:

—Ե՛ռ:

Ասա Արեգնազան:

—Հայը հարկաւոր է՝ ուտելու համար. ջուրը հար-  
կաւոր է՝ խմելու համար, իսկ օդը հարկաւոր է չնչելու  
համար. Առանց օդի շունչ քաշել, չնչել չենք կարող:  
Կիշանակէ՝ ամէն մէկն իւր տեղն ունի. և երեքն էլ հար-  
կաւոր են մեզ:

Հրահատ, դու կարող ես լրացնել ու ամփոփել:

—Կրնամ:

Ասա:

—Ոսկեհատն ու Արեգնազանը մասամբ ճիշտ ըսին.  
իսկ Համասփիւռն՝ ճիշտ շըսաւ—թէ հացն ու ջուրն աւե-  
լի են հարկաւոր քան թէ օդը, սակայն երեքն ալ ամե-  
նագլխաւորն թողին ու շըսին, աղ անէ—որ առանց հա-  
ցի ու ջրի մարդս օր մը գոնէ կրնայ ապրիլ. իսկ առանց  
օդի վայրկեան մ'անզամ չի կրնար ապրիլ. վասն զի-  
ամեն վայրկեան շնչել կուզենք, շնչելու կկարօտինք. իսկ  
շնչելու համար օդ կուզենք. և եթէ օդ շըլլայ՝ կմեռնինք  
անմիջապէս:

Ճատ լաւ, ասաց Հրահատը. եթէ էլի բան մնաց  
ասելու՝ շարունակիր Արաքսիա:

—Թէս առանց հացի ու ջրի շենք կրնար ապրիլ,  
ինչպէս ըսուեցաւ, անոնք ալ կեանքերուս համար շատ-  
կարեսր են, սակայն, ինչպէս Հրահատն ալ ըսաւ, ժա-  
մանակ մը կրնանք առանց հացի ու ջրի դիմնալ. իսկ

առանց օգի՝ և ոչ վայրկեան մը։ Ասկէ հետեցունելու է  
—որ օդն աւելի կարեոր է, քան թէ հացն ու ջուրը.  
վասն զի տեղ չկայ՝ ուր օդ չըլլայ, օդն տարածուած է  
ամեն տեղ

---

2. Հոյս։

Բաւական է ինչքան որ Օդի մասին ասուեցաւ. այժմ  
տեսնեմ ով կասէ Լոյսի մասին։

—Ես կասեմ։

Ասա Արեգնազան։

—Լոյսը շատ հարկաւոր է. առանց լոյսի մարդ չէ  
կարող բան շինել. գիշերը—մթանը ոչինչ չենք կարո-  
ղանում շինել, որովհետև լոյս չկայ, դրա համար էլ մոմ  
ենք վառում լոյս ենք անում, որ կարողանանք բան  
տեսնել, բան շինել։

—Ես շարունակեմ։

Ջարունակիր Համասփիւո։

—Բացի նրանից, որ լոյսը հարկաւոր է բան տես-  
նելու, բան շինելու համար՝ հարկաւոր է էլի առողջու-  
թեան համար, տեսութեան համար. ես փորձել եմ—  
երբ լոյսից մութ սենեակ եմ մտնում, կարծում եմ թէ  
աշքս խաւարեց։

—Ես էլ կասեմ։

Ասա Նազելի։

—Ջատ լոյսն էլ վնասում է աշքերին. ես էլ փոր-  
ձել եմ—որ երբ մութ սենեակից, արև օրը գէպի լոյսն  
եմ դուրս գալիս՝ աշքերս չեն դիմանում։

—Կրնամմ ես ալ բան մը ըսել։

Ասա Հրահատ։

—Երեգնազանին ըսածն իսկ է. բայց Համասփիւ-

ռինն ու նազելիին ըստածներէն աս միայն կտրելի է Շետեցունել — թէ անոնք լոյսն կխառնեն արեգակին ճառագայթաւոր լոյսին հետ. մեր աս սորված լոյսն չեն գատեր արեգակին ճառագայթաւոր լուսէն. ան լոյսն, իրօք, աշք կծակէ. ան ալ թոյլ աշքերպն վրայ կազդէ. առողջ աշքերուն վրայ՝ բնաւ, եթէ միայն ուղիղ չեն նայեր արեւուն վրայ. սենեակէն դուրս, դուրսէն սենեակ մտնելուն, ելնելուն ժամանակ լոյսն, բայց ոչ արեւուն, առողջ աշքերուն չազդէր այնպէս, ինչպէս կնկարագրեն Համտսփիւռն ու նազելիին;

2է Հրահատ, Համասփիւռի և նազելու ասած լոյսը արեգակի լոյսն է, բայց ոչ ճառագայթները. ցերեկը լոյս է, չէ. բայց այդ լոյսը արեգակի լուս է. ամա ժամանակ, արել չէ երեսում, սակայն նրա լոյսը կայ. թէն առանց ճառագայթի. եթէ դու լուսամուտները փեղկերով փակած սենեակից լանկարծ գուրս գան՝ էլի աշքերիդ վերայ, գրեթէ, նոյն ներգործութիւնը կանէ լոյսը ինչ որ ասաց նազելիին, չնայելով՝ որ ոչ արև կայ, ոչ ճառագայթ. և այն դուռը՝ որից դուրս ես գալիս՝ չէ նայում դէպի արեւելք. իսկ արև օրը այդ միննոյն լոյսը աւելի զգալի է աշքերի համար. ինչպէս ասացին Համտսփիւռն ու նազելիին. Այս այսպէս ասելով՝ դուք չպէտք է կարծէք — թէ լոյսը վնասակար է. ոչ. լոյսը օգտակար է. բայց ինչպէս պէտք է նայել, երբ և ինչ ձեռվ՝ որ աշքերի նայուածքը յարմարուին լոյսի հետ, այդ դուք յետոյ կառուրէք, այս էլ շատ էր ձեղ համար և անժամանակ. բայց Հրահատը խօսք բաց տրեց և ես էլ ասացի. միայն մի բան ասեմ ձեզ, քանի որ խօսք բացուեց. երբ դուք ուզում էք մութ սենեակից դէպի լոյսը դուրս գալ. կամ լոյսից՝ մութ սենեակը մտնել՝ այդ դուրսգալն ու մանելը յանկարծ մի կատարէք. այլ գուռը կամաց կա-

մաց բաց արէք, որ աչքերդ սովորեն լոյսին ու մժանը—  
—Ես այդպէս: Կմ անռւմ միշտ. ինձ եղբայրս այդ-  
պէս է սովորցրել:

Նա հրտեղ է սովորում, Շամիրամ:

—Նա սովորում է երկրորդ Գիմնազիում. Եօթնե-  
րրդ դասարանաւմն է, նա ամեննին ինձ չէ թողնում—որ:  
յանկարծ դաւոր բաց անեմ և դաւրս գնամ. նա ասում  
է—թէ քնածների վերայ էլ լաւ չի աղդիլ, երբ լայսի  
շողքը ընկնի աչքերին:

Ճիշտ է: Լոյսի մասին էլ բաւական խօսեցինք. այժմ  
անցնենք մի ուրիշ բանի:

### Յ. Արեգակ.

Ո՞վ կասէ ինձ Արեգակի կամ Արեի մասին:

—Ես կասեմ:

Ասա Սոկեհնատա:

—Արեգակը մեզ տաքացնում է, լոյս է տալի. տանց-  
արեգակի լոյս էլ չի լինի, տաքութիւն էլ չի լինի:

Էլի ով կարող է շարունակել:

—Ես կասեմ:

Ասա Աշխէն:

—Երբեմն էլ մի քանի օր շարունակ արեգակը վայ-  
լում է և անձրեներ չեն գալիս՝ երաշտ է լինում. այն-  
ժամանակ պիտի հարցնել գիւղացու հալը...

Ինչու հալը. աւելի լաւ չէ ասել վիճակը:

—Վիճակը. մանաւանդ ամառը. դաշտի խոտը չտրա-  
նում է, ցանքսերը չորութիւնից դեղնում են փշանում, գե-  
տերի ջրերը քշանում են, աղբիւրների ջրերը պակասում  
են: Արեգակը երբեմն էլ այս վնասն է տալի գիւղացուն-  
իսկ եթէ շատ երկար քաշի՝ հացի թանգութիւն էլ կլինի:

Լաւ ասաց Աշխէնը—երաշտը վեաս է տալիս դաշ-  
տերին, արտերին ու, առհասարակ, ցանքերին։ Ո՞վ կտ-  
քով է շարունակել

—Ես կըսեմ։

Սսա Արաքսիա։

—Ոսկեհատն ըսաւ—երբ արեգակ չկայ՝ լոյս ալ  
չկայ, տաքութիւն ալ չկայ։ Ճիշտ չէ Ոսկէհատին ըստածն։  
վասն զի ցորեկն միշտ արեգակ կայ։ սակայն ամպած  
ժամանակին՝ նա չերենար. ամպերն ան կծածկեն մեր  
աշքերէն. բայց լոյսն ալ կայ, տաքութիւնն ալ. միայն  
ոչ նոյն չափով՝ որ չափով կզրանք պարզ երկնքին  
ատեն։ Ոսկեհատն պէտք է ըսեր—երբ արեգակն շի  
երենար մեզի՝ ճառագայթներն ալ չեն փայլեր. ան ատեն  
տաքութիւնն ալ, լոյսն ալ նուազ է։

—Ես ձարունակեմ։

Ձարունակիր Հրահատ։

—Արաքսիան ճիշտ ըսաւ—թէ ցորեկներն արեգակ  
կայ. բայց ամպերէն միշտ ծածկուած է և մեզի չերենար.  
ինչպէս Դուք մեզի սորվեցաւցիք. ադ անկէ գիտենք, որ  
երբ ամպերն կցրաւին, երկինքն կպարզի՝ ան ատեն մենք  
նորէն արեին երեսն կտեսնենք։ Սսիկայ պարզ կցուցընէ  
մեզի—թէ ցորեկներն միշտ արեղակ կայ. բայց ամպած  
ժամանակին շերենար մեզի։ Կրնամ բան մը ըսել արե-  
գակին քանի մը օգուտներուն վրայ։

Սսա։

—Ոսկեհատն ըսաւ—թէ արեգակն մեզի կտաքցնէ  
ու լոյս կուտայ։ Ատիկայ ճիշտ է. սակայն շատ քիչ է,  
վասն զի նա իր լուսսին, ճառագայթներովն և ջերմու-  
թեամբ կեանք կուտայ ոչ մեզի միայն՝ այլ և կենդա-  
նիներուն ու բոյսերուն ալ. օրինակ վերցունենք բոյս մը՝  
առանց արեգակի և բոյս մը արեգակին երեսը տեսած։

անոնցմէ ան բոյսն աւելի ճոխ զարգացած կըլլայ՝  
որն անձրեին տակն է մեծցեր և անձրե ու ջուր է կե-  
րեր. իսկ անարև բոյսն նուազ կըլլայ, անգոյն  
կըլլայ, հիւանդ կըլլայ, ասկէ զատ՝ մարդիկ արև  
ժամանակ իրենց կերածնին աւելի դիւրաւ կմարսին՝  
կան թէ լուսնին լուսին տակ գիշերին կերածն,  
երբ արև չկայ. ասկէ զատ՝ արևն է, որ երկրիս երե-  
սին ջրերն կգոլորշիացունէ, վեր կըքաշէ, անկէ ամպեր  
կկաղմէ, ամպերն ալ մեզի անձրե կուտան:

Ճատ լաւ. բաւական է Արեգակի մասին այսքանը:

#### I. Թաս.

#### 4. Անծրեւ.

Կրկնութիւն:

Այժմ տեսնեմ ով կպատմէ ինձ Անձրեի մասին:  
— Ես կպատմեմ:

Սամա Աշխին. դու գիւղի որդի ես. լաւ կիմանատ-  
անձրեի մասին. յիշեւմ ես որ—Երկրագործութեան մա-  
տին սիրուն պատմեցիր, երբ Աշխատանքի կամ Մշակու-  
թեան վերայ էինք խօսում. Ի հարկէ կգիտենաո—թէ  
Անձրեը ի՞նչքան յոյս և ուրախութիւն է հողագործ-  
գիւղացու համար. դէ ասա տեսնեմ:

— Այն. անձրեը մեր յոյսն է. երբ հայրս ցանքան-  
անում, պրծնում է՝ չոքում է արտի կողքին, ձեռքերը  
երկինք է բարձրացնում, աղօթում է ու ասում. «Ա՛ս-  
տուած. իմ արտը քեզ ամանտի<sup>1)</sup>. արեդ ու անձրեղ  
անպակաս արա իմ արտից. որ գարունքին Քու սուրբ

<sup>1)</sup> Առգեցնել սաներին—աման աթ ասելու փոխանակ-  
գործ ածել պահ տալ կամ աւանդ տալ. խօսքերը:

փառքը բերնիս, գամ-տեսնեմ արտու կանաշած և ցորենի հասկերը հէրանց գնալիս». Էլի շատ այսպիսի խօսքեր. գալիս է տաւն ու մօրս ասում. «ախչի. մոմ բեր, գառնիք, չոքենք ու աղօթենք—որ Աստուած լաւ պահէ մեզ ու մեր քորփեթին<sup>1)</sup> պահող, կերակրող, ամանաթը. շխնայի իրա արեն ու անձրեց». և չորում են ու աղօթում. մենք—երեխաներս նոյնպէս չորում ենք ու աղօթում:

Հատ լաւ ասացիր. այս. անձրեն. ի՞նչ լաւ բան է գիւղացու համար. բայց իրա ժամանակին. Մնձրեց իրա ժամանակին կեանք է ցանքսերին, ծառերին և բոլոր բուսականութեանը. առանց անձրեի՝ արել այրում—խաշում է գիւղացու աշխատանքը. իսկ քամին՝ չորացնում, դեղնացնում. անձրեց գալիս է ու կեանք տալիս ցանքսերին, զուարթացնում, շունչ է տալիս մանաւանդ գարունքին, երբ յորդ անձրեներ են գալիս՝ ջրերը շատանում են ու բարձրանում: Մնձրեց ամառ ժամանակ գովացնում է օդը, մարդիկ կարողանում են հեշտ, ազատ կերպով չնշել: Մի խօսքով անձրեց բուսականութեան կեանքն է, արտերի շունչն է, գիւղացու երկրորդ Աստուածն է և բոլոր մարդկանցն էլ զովացնում է».

Թէպէտ Էլի շատ ու շատ բան կարելի է ասնլ, երեխանք, անձրեի մասին՝ բայց այսքանն էլ հերիք է ձեզ համար. հետզհետէ շատ կտովորէք, գրբեր կկտրդաք և ձեր գիտեցածի վերայ Էլի շատ բան կաւելացնէք:

Երգենք «Մարմին Տէրունական»:

1) Աաել մանրիկներին կտմ մանր երեխաներին, փոքրիկներին.

Տ. Հող:

Այժմ տեսնեմ ով ինձ կպատմէ Հողի մասին:

—Ելի ես ասեմ:

2Է. Աշխին. թող ուրիշն ասի:

—Հողին մասին ես կըսեմ:

Ասա Հրահատ:

—Հողն որ շըլլայ՝ ոչինչ ալ շըլլար. Հողն որ շըլլայ՝ երկնքին անձրևին ալ պէտք շըլլար. ան ատեն պէտք չեն ոչ ամպերն, ոչ արևն, ոչ լուսինն, ոչ աստղերն, քամիներն ալ պէտք չեն, ձիւնն ալ պէտք չէ. Հողն շըլլալէն ետք՝ մարդն ալ շըլլար, կենդանիներն ալ չեն ըլլար, թռչուններն ալ չեն ըլլար, բոյսերն ալ չեն ըլլար. վասն զի անոնք հողին համար են և հողն անոնց համար:

—Եերիք է. շարունակիր Արաքսիա:

—Բոյսերն ու կենդանիներն հողով կմննդուին. իսկ ասոնցմէ մարդիկ կկերակրուին և իրենց բոլոր պիտոքնին կհոգան—թէ ուտելիք, թէ խմելիք, թէ հագնելիք. վասն զի ջուրն ալ հողին համար է։ Ասկէ հետեցնելու է—որ հողն է մայր մը. որմէ կմննդուին թէ մարդիկ, թէ կենդանիք և թէ բոյսերն:

Ճատ լաւ ասացիք Հրահատ և Արաքսիա. ապրիք:

Այս բոլորը գեղեցիկ է. բայց այժմ մի բան պիտի հարցնեմ—մենք սովորեցինք Կեանքը. և տեսանք—Ուտելիք, Խմելիք, Հագնելիք, Օդ, Լոյս, Արև, Անձրև և Հող։ Ինչո՞ւ համար են այս բոլորը—Ո՞վ կասէ։

—Ես կըսեմ:

Ասա Երաքսիա:

—Մեր աս դասն առնելէն առաջ՝ Դուք մեզի ըսկք

—թէ աս դասը շատ հետաքրքիր դասմ'է. և պատուի-

քելով մեզի լաւ լըսել՝ սկսաք պատմել մեզի ըսելով։ «Ճնողական տնէն դուք գնացիք Մեծ Հօր տունն. անկէ ետք Ուսման տունն. անկէ ետք՝ մարդիկ տեսաք, որ կպարապէին զանազան արհեստներով, պաշտօններով։ իսկ այժմ կեանք պիտի մտնիք և տեսնաք պիտի—թէ մարդիկ, որ կապրին՝ ինչնվ կապրին, ինչպէս կապրին և ուրկէ կառնուն իրենց ապրուստն—ուտելիքն, խմելիքն, ու ամեն ինչ։ Մենք ալ աս հետաքրքիր դասէն շատ բան սորվեցանք. սորվեցանք—թէ մարդիկ իրենց արհեստներով, աշխատանքներուն տեսակներով, պաշտօններով կաշխատին ապրուստ մը ձեռքբերել. սակայն ապրուստն բաւական չսեպելով՝ կաշխատին հագնելիք ալ ճարել. անով ալ շբաւականանալով՝ երկնքին հետ ուզեցան գործ տեսնալ—սկսան խնդրել Արարչէն՝ պարզեցել իրենց, իրենց կենդանիներուն, իրենց դաշտերուն ու այգիներուն—արև, անձրև, օդ, լոյս. և աս բոլորն անոր համար՝ որ ապրի մայր հողը. որուն ստինք կծծեն թէ կենդանիներն, թէ բոյսերն և թէ նոյն իսկ մարդն։

— Զատ լաւ. մնացածը թող վերջացնէ Հրահատը. շարունակիր Հրահատ։

— Սսկէ հետեցուցենք՝ թէ բոլոր մեր սորվածնին—Արհեստներն, Աշխատանքներն կամ Մշակութիւններն և Պաշտօններն իրենց տեսակներովն. անկէ ետք՝ Ուտելիք, Խմելիք, Հագնելիք նոյնպէս իրենց տեսակներովն. անկէ ետք՝ Օդ, Լոյս, Արև, Անձրև և Հող իրենց հազար մը տեսակ օգուտներովն՝ կծառային անոր համար՝ որ մարդս ապրի, կեանք վայելէ և իր կեանքին վայելման համար փառք տայ իր Արարչին. Որմէ միայն կառնու մարդս իր աս բոլոր բարիքներն։

Ապրիս Արաքսիա. ապրիս Հրահատ. շատ ամփոփ կերպով պատմեցիք։ Այժմ էլ աղօթքներ կսովորենք և

այնպիսի աղօթքներ՝ որոնց մէջ լինին մեր բոլոր սովորածները. այդ բոլոր աղօթքների մէջ կայ մի աղօթք՝ որը ամենից գլխաւորն է և որի մէջ պարտնակւում են մեր բոլոր սորվածները:

ա. ԱՂՕԹՔՆԵՐ.

1. Տէրունական աղօթք.

Մեր այս սովորելու աղօթքը շատ սիրուն աղօթք է և դուք գիտէք. բայց այս աղօթքը լաւ սորվելուց առաջ պիտի խօսեմ ձեզ հետ, որ կամաց կամաց մօտենակար այս աղօթքին:

Հապակ, ասացէք ինձ—Դուք աշակերտուհիներ էք թէ ոչ:

—Այն, մենք աշակերտուհիներ ենք:

Ուսուցիչներ ունիք:

—Ունինք:

Սիրում—յարգնւմ էք նրանց:

—Ճատ ենք սիրում և յարգում:

Պատճառները սովորել էք. աւելորդ է կրկնել: Ի՞նչ էք կարծում՝ Ուսուցիչներն էլ ձեզ սիրում են:

—Այն, շատ. դրա պատճառն էլ սովորել ենք:

Եթէ դուք մի բան խնդրէք ձեր ուսուցիչներից՝ կկատարեն թէ ոչ:

—Եթէ լաւ բան խնդրենք՝ կկատարեն:

Ուրիշ ուսուցիչներ էլ կան՝ թէ միայն ձեր ուսուցիչներն են:

—Ուրիշ ուսուցիչներ էլ կան:

Նրանք էլ են սիրում իրենց սաներին:

—Այն. ի հարկէ:

Իսկ սաները սիրում՝ յարգում են իրենց ուսուցիչ-ներին:

—Այն. սիրում են, յարգում են:

Մեզանից առաջ էլ ուսուցիչներ եղել են՝ թէ մենք ենք առաջինն ու վերջինը:

—Եղել են. Թուք էլ սովորել էք Զեր ուսուցիչներից: Ճատ լաւ, շատ լաւ. դէ որ զիտէք—թէ մեզանից առաջ էլ ուսուցիչներ եղել են՝ ուրեմն ես ձեզ կպատճեմ մի շատ լաւ, շատ գիտուն և իւր աշակերտներին շատ և շատ սիրող մի Մեծ Ռւսուցչի մասին:

Այդ Մեծ Ռւսուցիչը մեզանից շատ ու շատ տարիներ առաջ էր ապրում: Գիտէք ով էր և քանի տարի առաջ էր ապրում:

—Զգիտենք ով է այդ ուսուցիչը. Բնշպէս կարող ենք զգիտենալ՝ թէ քանի տարի առաջ էր ապրում:

Մի քանիսները կարող են զգիտենալ, ճիշտ է. բայց մի քանիսներն էլ կարող են զգիտենալ. լսած կլինին քոյրերից, եղբայրներից, ծնողներից. ճիշտ չեմ ասում:

—Ճիշտ կըսէք. վասն զի ես զիտեմ:

Տեսնում էք չըահատը զիտէ:

—Ես ալ զիտեմ:

Երաքսիան էլ զիտէ:

—Եօ էլ զիտեմ:

Երեղնաղանն էլ զիտէ: Երկի քոյրդ քեզ պատմած կլինի:

—Այն, նա է պատմել ինձ:

Դէ, ասա, թող ընկերուհիներդ սովորեն:

—Այդ Մեծ Ռւսուցիչը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսն

Էր, որ ապրում էր մեզանից 1902 տարի առաջ՝  
—էղ մենք էլ գիտէինք:—Ես էլ գիտէի:—Ես էլ:—  
Ես էղ սովորել եմ:

Հապա ասում էիք թէ չգիտէք. ինչպէս է որ այժմ  
շատերդ գիտէք:

Դէ, լաւ. պատմեմ—այդ Մեծ Ռւսուցիչն էր, ինչ-  
պէս ասաց Արեգնազանը, մեր Տէր Յիսուս Քրիստոսը,  
որ մեզանից 1902 տարի առաջ էր ապրում. Նա շա-  
շակերտներ ունէր. բայց ունէր էլի տասներկու աշա-  
կերտներ, որոնց միշտ իւր հետն էր ման ածում, միշտ  
միասին էին լինում, միասին էին ուտում, գիշեր ու  
ցերեկ միշտ միասին էին ու իրարից անբաժան: Յիսուս  
Քրիստոսը նրանց շատ էր սիրում. շատ—շատ. Նրանք  
էլ իրանց Մեծ Ռւսուցչին էին սիրում. Նրա համար  
պատրաստ էին մեռներու. բացի մէկը նրանցից...

—Ես գիտեմ ով էր:

Ով էր Արեգնազան:

—Յուդան էր:

Ով կուգէ ձեզանից Յուդայ լինել:

—Ուֆ. շննք ուզում, շննք ուզում. Նա նորան  
մատնեց. խաչել տուեց. ինքն էլ խեղդուեցաւ. փին  
էր. անպիտան էր...

Լաւ, լաւ, ուրախ եմ—որ Յուդային չէք սիրում և  
չէք ուզում նմանուել նորան. Նա անպիտան էր և նրա  
անունը զգուանքով պիտի յիշել: Եւ լաւ իմանաք—հվ որ  
ձեզանից իւր պարտականութիւնը չի կատարի՝ նա էլ  
Յուդայ կլինի և Յուդայից էլ վատ: Դուք սովորեցիք ձեր  
պարտականութիւնները դէպի փոքր ու Մեծ Հայրերը,  
դէպի ծնողները, եղբայրները, քոյրերը, դէպի հոգևոր  
հայրերը, դէպի ուսման հայրերն ու մայրերը, դէպի ձեր

ընկերուհիները և դէպի ամենայն մարդիկ. սովորեցիք՝  
թէ չէ:

—Այն, սովորեցինք և կկատարենք:

Այսքան բաւական է, լաւ պատրաստեցէք, գալ դա-  
սին կշարունակենք:

ՀԱ. Դաս:

Այսօր չենք կրկնի անցեալ դասը, այլ շարունակենք  
—Մեծ Ուսուցիչը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսն էր, որը  
երեք տարի շարունակ իւր աշակերտների հետ էր շըր-  
ջում, ման գալիս զանազան քաղաքներ, գիւղեր. նրանց  
էլ էր սովորցնում ուրիշներին էլ. ժողովրդին քարոզում  
էր, խրատում էր—որ արդար լինին, սրտերը սուրբ պա-  
հեն, մաքուր պահեն շատ՝ լաւութիւններ, բարեգործու-  
թիւններ էր անում—հիւանդներին բժշկում էր աւանց  
դեղերի, առանց փողի, միայն խօսքով. կոյրերի աշքը  
բաց էր անում՝ նոքա տեսնում էին. խուլերի ականջը  
բաց էր անում՝ նոքա լսում էին. համրերի-մունջերի լե-  
զուի կապը արձակում էր՝ նոքա խօսում էին. կաղերին  
հրամայում էր մանգալ՝ նոքա ման էին գալիս. անդամա-  
լոյններին—դամբլաններին հրամայում էր շարժուել, նստել,  
վերկենալ, մանգալ և նրանք առողջանում էին. քամինե-  
ներին ու ծովի ալիքներին հրամայում էր հանդարտուել՝  
և նրանք հնազանդում էին նորա հրամանին և իսկոյն  
հանդարտում էին. անպտուղ ծառին հրամայում էր—էլ  
պտուղ չտալ ամեննեին՝ և նա չորանում էր բոլորովին.  
դիւահարների միջից հալածում-քշում էր դեերին, շար ոգի-  
ներին՝ և դիւահարները խելօքանում էին, առողջանում էին.  
մեռելներին հրամայում էր վերկենալ մեռած տեղից կամ  
գերեզմանից. և նրանք իսկոյն լսում էին նորան և յարու-

Ճիւն առնում: Այս բոլորը անամ էր Խւր աշակերտների առաջ, որ իրան սիրեն ու հաւատան: Նորա նման ու սուցիչներ շատ են եղել աշխարհում: և կամ շնոր կան այժմ:

—Ե՞ս կըսեմ:

Ասա Արաքսիա:

—Մոր հազարերորդ մասն ալ չի գտնուիր երկրիս վլայ: Ան որ կար՝ անզոյդ էր, աննման էր. մէկ հատիկ մ'էր. ով կրնայ Անոր հաւասարիլ. փա՛ռք Անոր. Ան մեր Աստուածն է. մենք Անոր կսիրենք ու պաշտենք. Անոր Աւետարանին կհաւատանք ու կաշակերտինք:

Համար ճիշտ և շատ լաւ ասաց Արաքսիան: Ահա այդ Մեծ Ուսուցչին խնդրեցին մի անգամ իւր աշակերտները —որ սորվեցնէ իրենց աղօթք անել. նրանք ասացին. «Տէր. սորվեցրու մեզ աղօթք անել, մենք չգիտենք ինչ աղօթք պիտի անենք և բնչպէս»: Մեծ ուսուցիչը սորվեցրեց նրանց: Կուզէք ես էլ ձեզ սորվեցնեմ այն աղօթքը՝ ինչ որ Մեծ Ուսուցիչը սորվեցրեց իւր աշակերտներին:

—Կուզենք, կուզենք. մենք էլ Ձեզ ենք խնդրում — որ մեզ սորվեցնէք թէ ինչ աղօթք պիտի անենք և բնչպէս: Մենք շատ լաւ կըսենք և լաւ կսովորենք,

Դէ, լսեցէք — Մեծ Ուսուցիչը, սարվեցրեց նրանց իւր աղօթքը. այդ աղօթքն է «Հայր մեր»-ը: Այդ աղօթքը ասւում է «Տէրունական աղօթք» այսինքն Տիրոջ աղօթք:

Խմբովին ասացէք — «Հայր մեր-ը Տէրունական աղօթք է:

Համար լաւ. ուրեմն «Հայր մեր»-ը Տէրունական աղօթք է. սրովհետև սորվեցրել է մեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսը: Խմբովին կրկնել:

Տերունական աղօթքը պիտում է այսպէս —

Նո՞յր մեր. որ յերկինս նու Հայրը մեր Եղինակում է — Գու մեր Հայրն ենս. հօր պէս մեզ սիրում ենս. մենք էլ Քո որդիքն ենք Եթէ Գու մեր Հայրն ես և մենք Քո որդիքը՝ ուրեմն իրար համար քայր ու եղբայրներ ենք. և քրօջ ու եզրոր նման իրար պիտի տիրենք և իրար օգնենք. <sup>1)</sup> Որ նքանչռամն են. դուք արդէն առվարձլ էք — որ մեր Մեծ Հայրը ամեն աեղ է և երկնքումը և ամեն աեզ. բայց որ երկնքումն ես, ասւում է նրա համար՝ որ մենք հասկանանք — թէ ինչաէս երկինքը բարձր է մեզանից և երկնքին համեսլ շենք կարող՝ այնպէս էլ մեր Մեծ Հայրը բարձր է մեզանից և մենք նորան հասկանալ շենք կարող:

Սուրբ Եղիցի անոն քո — Սուրբ լինի Քո Անոնք:

Խմբովին կրկնել:

Տեղ վերայ, իրեն որդի, ում անունն է:

— Ե՞ս կըսեմ:

Ասա Հրահատ:

— Ամեն որդու վրայ իր հօր անունն է:

Ճամա լաւ. և որովհետեւ մենք բոլորս էլ Մեծ Հօր որդիքն մեք՝ ուրեմն ում անունը պիտի լինի մեզ վերայ. ասա Հրահատ:

— Մեր ամենու վրայ մեր Մեծ Հօր անունն կըլլայ. Վասն զի մենք ամենքս ալ Անոր որդիքն ենք:

Լաւ. դուք չպիտի աշխատէք՝ որ ձեր հօր անունը լաւ պահեք — լաւ սովորելով, համեստ վարք ու բարքով; աշխատասէր լինելով...և այլն.

<sup>1)</sup> Բացատրել — թէ միշտ կարող ենք ասել «Հայր մեր»։ Կթէ խոռով ենք, սրտերումս ոխ, նախանձ ունենք. կարող ենք ասել:

— Ի հարկէ պիտի աշխատենք՝ որ մեր հօր անունը, որ մեզ վերայ է, լաւ պահենք, եթէ մենք մեզ լաւ պահենք՝ մարդիկ երանի կտան մեր հօրը և կասեն։ «Երանի՛ նորան՝ ի՛նչ լաւ որդի ունի»։ իսկ եթէ մեզ վատ պահենք՝ մարդիկ վայ կտան մեր հօրը և կասեն։ «Վայ նորան։ ինչ վատ որդի ունի»։ ինչանակէ մեր հօր անունը մեզ վերայ է և մեզ հետ կապուած է։

Երեղնազանը շատ լաւ ասաց։ Ուրեմն, եթէ մեր փոքրիկ հօր անունը պիտի աշխատենք լաւ պահել՝ չպիտի աշխատենք արդեօք Մեծ Հօր Սնունը աւելի ևս լաւ պահելու, աւելի ևս սուրբ պահելու. քանի որ մենք սովորել ենք—թէ Մեծ Հօր սէրն ու աշխատանքը անհամեմատ աւելի է, քան թէ փաքք հօր մեզ վերայ ունեցած սէրն ու աշխատանքը։ Բայց ի՛նչ բաներում պիտի աշխատենք սուրբ պահելու Մեծ Հօր Սնունը։

—Ես կըսեմ։

Ասա Արաքսիա։

—Մեծ Հօր անունն սուրբ պահած կըլլանք անտեն՝ երբ լեզունիս կպահենք և վատ, սուտ ու չարբաներ չենք խօսեք. սրտերնիս մաքուր կպահենք պայծառ աստղին պէս և աղբիւրին պարզ ջրին նման։ ինչպէս որ Գուք մեզի սորվեցուցեր էք. և գործքերունիս աչշարութիւն չենք ըներ մեր ընկերներուն. ան ատեն Մեծ Հօր անունն, որ միշտ Սուրբ է, սուրբ ալ կմնայ մեր խօսքերուն մէջ, մեր սրտերուն մէջ, մեր գործերուն մէջ։

Ճատ գեղեցիկ ասաց Արաքսիան. շատ տպրիս. գոհիմ։ Ճարունակենք։

Եկեսցէ աղքայութիւն քո—Շող գայ Քո Թագաւորութիւնը։ Խմբովին կրկնել։ Որդին հօրից աւելի կվախենայ՝ թէ Թագաւորից և ինչնւ։

—Ես կըսեմ։

Ասահ Հրահատ:

—Որդին հօրմէն չի վախնար, վասն զի գիտէ ուր հայրն զինք կսիրէ, խխատ չի պատժեր, կմեղնայ բայց թագաւորէն ամեն մարդ կվախնայ, թէ աղքատ թէ հարուստ՝ թէ իշխան՝ թէ ռամիկ՝ թէ քաղաքացի՝ թէ շինական. վասն զի ամենքն ալ գիտեն—թէ Թագաւորն օրէնք ունի և օրէնքով կկառավարէ իր ժողովուրդն. օրէնքին անհապանդներն կպատժուին. օրէնքն արդարութիւն, ճշտութիւն կսիրէ. խաթը շգիտէ. ամենուն հաւասար կպատէ:

Ասլին Հրահատ, ատ լաւ ասացիր: Ուրեմն մենք Մեծ Հօրը պիտի սիրենք իրեն հայր և նրան ից պիտի վախնանք իրբե Թագաւորից: Նա հայր է՝ սիրելու և խնամելու համար. Նա Թագաւոր է՝ մեղ պատժելու համար. Իթէ մենք նորա Օրէնքը—Պատուիրանը չենք կատարի:

Հասկացաք լաւ:

—Ես շատ լաւ հասկացանք:

Ճարունակենք—Եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի—Թող մենք չեւ այնպէս կատարենք երկրիս վերայ Քո կամքը՝ ինչպէս երկնքումը հընշտակներն են կատարում: Խմբովին: Եթէ ձեր հայրը մի բան կամենայ և ձեզ հրամայէ կատարել իւր կամքը՝ գուք կարնդ էք ասել—թէ դա լաւ հրաման չէ, ձեր կամքը սխալ է, մենք չենք կատարի:

—Ոչ ոք չէ կարող այգալէս ասել:

Բարի: Իսկ եթէ Թագաւորը մի բան հրամայէ, մի օրէնք հրամարակէ՝ ժողովուրդը կարնդ է շկատարել:

—Չէ կարող շկատարել. պէտք է կատարէ. պարտական է հասպանդուել օրէնքին:

Դարձեալ բարի: Իսկ եթէ Մեծ Հայրը և Մեծ Թագաւորը

պաւորը մեզ յայտնէ իւր կամքը և պատուիրէ կատարել՝  
չպէտք է կատարենք:

— Տի հարեւէ պիտի կատարենք. և աւելի սիրով. առեւ-  
թի շուտ. աւելի նիշտ կերպով:

Ինչու:

— Որովհետեւ Մեծ Հայրը մեծ է, բարձր է մեր հօ-  
րից. Մեծ Թագաւորը մեծ է և բարձր է մեր Թագաւորից:  
Բայց ինչ է Մեծ Հօր կամքը. Այդ ես կառեմ. դոք  
որ առէք՝ երկար երկար բաներ կամք ես կարճ կամեմ,  
որ կարողանաք մտքերդ պահել: Մեծ Հօր կամքը երկու  
փոքրիկ բան է. առաջինն այն է - որ մենք նորան սի-  
րենք իրեն հայր և վախենանք իրեն Թագաւոր. երկ-  
րորդն էլ այն է - որ իրար սիրենք, իրեն եղբայրներ ու  
քոյրեր և օգնենք միմիանց: Պարզ է չէ:

— Այս շատ պարզ է:

Դէ ուրեմն շարունակենք —

Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր — Մեր  
ամենօրուայ հացը այսօր էլ տուր մեզ: Խմբովին:

Գուք սովորեցիք — թէ ինչ է տալիս մեզ մեր Մեծ  
Հայրը: Նա միայն հաց է տալիս մեզ, թէ ուրիշ բաներ էլ:  
— Ես կըսեմ:

Սսա Արաքսիա:

— Նա մեզի կուտայ բոլոր իր պարզեներն — Արե,  
Լուսին, Աստղեր, Ամպեր, Անձրե, Զիւն, Ցող, Օդ, Լոյս,  
Լեռներ, Անտառներ, Թաշտեր, Ծովեր, Լճեր, Գետեր,  
Աղբիւրներ, Ջրհորներ, Ովասիսներ, Գազաններ, Կենդա-  
նիներ, Զեռուններ, Սողուններ, Մեծ ու փոքր միջատ-  
ներ, Թռչուններ, տեսակ տեսակ Հաւեր, Ծառեր, Ծա-  
ղիկներ, Համեմունքներ, Բանջարեղիններ և ամեն տեսակ  
Քոյսեր և Հող. աս բոլորն կուտայ իրենց օգուտներովն:  
Զարունակիր Հրահատ:

— Առնցմէ զատ՝ կոռաւայ մեղի խելք, Միտք, Կամք, Սիրտ, Հոգի, Թիշողութիւն, Ընդունակութիւն։ մեր հինգ զբայարանքներն ու անոնց գործամնէութեան։ կարողութիւնն։ Ասոնցմէ ալ զատ՝ կուտայ մեղի Առողջութիւն, Յաջողութիւն և որ ամենէն զիվաւորն է՝ իր սուրբ Օրենութիւնն և Օգնութիւնն։ Ռահ աս հացն է՝ որ մենք կը խնդրենք մեր Մեծ Հօրէն, մեր Արարշէն տալ մեզի այսօր։

Ճատ լաւ ասացիր, Արաքսիա. ուրեմն Հաց ասելով՝ պէտք է հասկանալ կեանք. բայց ինչու ենք ասում «տուր մեղ այսօր»։ Ինչու չենք ասում—տուր մեզ ամեն օր. և քանի կեանք ունինք։ 2էր կարողանում պատասխանել։ Էաւ. ես կասեմ—մենք միայն այսօրուայ համար ենք խնրում երկու պատճառով—առաջինը՝ որ մենք չգիտենք—կլաւացնենք գիշերը՝ թէ ոչ. մենք չգիտենք—կհասնենք միւս օրուան՝ թէ ոչ. հկ ձեզանից առաջուց հաստատ կերպով կարող է ասել—թէ ի՞նչ կլինի մի ժամից յետոյ։

— 2էնք կարող առաջուց ասել և հաստատ կերպով. որովհետեւ թէեւ մենք գիտենք, թէ մի ժամից յետոյ զանգ կտան՝ երկրորդ դասը կսկսուի, յետոյ էլի զանգ կտան՝ երրորդ դասը. և յետոյ՝ չորրորդ դասը. և յետոյ՝ տուն կերթանք- բայց յանկարծ կարող է երկրաշարժ լինել. և մենք այն չենք անի, ինչ որ կարծում էինք՝ թէ կանենք. կամ կարող է մի բան պատահել՝ և մեղ հէնց այս քողէին արձակեն. ուրեմն մենք չգիտենք—թէ մի ժամից յետոյ մեզ ի՞նչ կարող է պատահել։

Ճատ լաւ ասաց Արեգնազանը. որովհետեւ ժամանակի և պատահմունքների տէրը մենք չենք. այլ մեր Մեծ Հայրն է։ Ուրեմն մենք հազիւ այսօրուայ համար միայն կարող ենք խնդրել. վաղը մերը չէ. վաղը Մեծ Հօրն է պատականում. թէ վաղը մեզ ի՞նչ կըերի՝ այդ մենք չգի-

տենք. մենք այսօրուանով միայն պիտի բաւականանանք և այսօրուայ համար միայն պիտի աղօթենք. Սյս առաջին պատճառն է. երկրորդն էլ այս է—որ եթէ մենք մի անգամ միայն խնդրենք, աղօթենք՝ և էլ չխնդրենք այդ մեզ ծուլութիւն և յուսահատութիւն կսորվեցնէ. օրինակ. ես ասեմ—չայր մեր. ամենօրուայ հացը տուր մեզ այսօր էլ, վաղն էլ, եկող տարի էլ, ամեն տարի էլ և քանի կեանք ունինք. որ քեզ էլ չնեղացնենք մեր ամեն օրուայ աղօթքներով: Սա հեշտ բան է, չէ. լաւ. իսկ եթէ Մեծ Հայրն էլ մեզ ասի—շատ լաւ. քո ամենօրուայ հացը ես միշտ կտամ քեզ քո միանգամ խնդրելովդրայց դրա հետ միասին քո ամենօրուայ չարշարանքդ էլցաւերդ, վիշտերդ, հիւանդութիւններդ և այն ամեն նեղութիւն՝ ինչ որ դու միքանի տարիների լնթացքում քիչ քիչ պիտի առնէիր, որ դիմանալ կարողանայիր՝ այժմ բալորն էլ միասին այսօր եմ տալիս քեզ. ինչ էք կարծում լաւ կլինէր:

— Հարկաւ լաւ չէր ըլլար. վասնզի որ մարդն կարող է մէկ անգամէն տանել ան ամեն նեղութիւններուն, որոնք քանի մը տարու մէջ գալու էին իրեն. նա կընկնուէր և կմահանար. ան ատեն նա կպոռար դէպի Արարիչն ու կըսէր. «Մեր ամենօրուան հացն այս օր միայն տուր մեզ և ոչ վաղն կամ ամեն տարի»:

Ճիշտ է. նա կփոշմանէր: Լաւ ասացիր Արաքսիառ Որովհետեւ, բացի գրանից, եթէ այգաէս լինէր՝ մենք էլ կարիք չէինք ունենալ մեր Մեծ Հօր հետ խօսել, աղօթել, խնդրել կամ վիառք տալ նորան. բայց մեզ հարկաւոր է, օգուտ է—որ մենք շուտ շուտ խօսենք մեր Մեծ Հօր հետ. և ոչ միայն լեզով խօսենք՝ այլ սրտով. և ինչպիսի սրտով. այն սրտով՝ որ մենք սովորեցինք Քանի շուտ շուտ խօսենք մեր Մեծ Հօր հետ, շուտ շուտ.

աղօթենք ու մեր կարիքների համար խնդրենք՝ այնքան  
Նա մեզ մօտիկ կլինի, մեզ կսիրէ, մեզ կօգնէ, մեր  
կեանքն ու գործքը կօրհնէ։ Քանի դուք խելօք, ուսում  
առած, չնորհալի և իմաստուն մարդկանց մօտ պահէք ձեզ,  
Նրանց հետ խօսէք, նրանց խելացի խօսքերը լսէք՝ այն-  
քան օգուտ է ձեզ. այնքան ձեր միտքը կբացուի և կը  
պարզանար:

—Կրնամ ես օրինակ մը բերել ձեր ըսածներուն։  
Կարհղ ես, Հրահատ. բայց հետեւալ դասին. այժմ  
շուտով կզանգեն. ժամանակ է։

### ԼԲ. Դաս։

Հապա Հրահատ. ասա, ինչ որ ուզում էիր ասել  
անցեալ դասին։

—Պօլիս եղած ատենս, կյիշեմ որ, մեր տուն  
կյաճախէին խել մը գրասէրներ, գրական երեկոյթ-  
ներ կունինային, կկարդային, կզուրցէին, կվիճէին.  
Ծնողներս ինձ չէին արգելեր լսել անոնց. ես թէն  
փոքր էի, բայց ըսածներէն խել մը բան կհասկնայի.  
Հիմակ ալ կյիշեմ անոնց խելացի խօսքերն և կզգամ՝ որ  
օգտուել եմ։

Լաւ օրինակ բերեց Հրահատը. բայց ես ուզում եմ  
մի բան հարցնել. տեսնեմ ով կարող է ինձ պատաս-  
խանել—մնիք ասացինք՝ թէ պէտք է շուտ շուտ աղօ-  
թել կամ խօսել Մեծ Հօր հետ. որովհետև օգուտ է մեզ.  
Հրահատն էլ օրինակ բերեց և ասաց—թէ ինքը զգում  
է՝ որ օգտուել է. ես հաւատում եմ Հրահատին, որ  
ինքը օգտուել է. եթէ նա օգտուած չլինէր՝ զեղեցիկ  
կերպով պատասխանել իմ հարցերին չէր կարող. Այս-  
պէս չէ երեխայք։

— Այդպէս է:

Հաւա լաւ. ուրեմն դուք հաւառամ էք՝ թէ խելօք-  
մարդկանց մօտ լինելով. նրանց հետ խօսելով՝ մեր միտքը  
կրացուի, մենք էլ խելօք կլինենք, կզարդանանք, շատ-  
բան կհասկանանք:

— Այն. հաւառում ենք. հիմա մենք ինչքան բան  
սովորեցինք Զեր դասերից. առաջ դժուար էինք գանձաւէ  
պատասխանները. այժմ շուտ ենք հասկանում, գլխի-  
ընկում. և կարողանում ենք պատասխանել. այդ ինչիցն  
է. նրանից է՝ որ մեր միտքը բացռակց:

Սրեգնազնը ճիշտ ասաց. բայց այժմ ինձ պա-  
տասխաննեցէք — Մեծ Հօր հետ շուտ շուտ խօսելը, շուտ-  
շուտ նորան աղօթելը՝ ինչ օգուտ պիտի տայ մեզ-  
աեմնեմ ով կասէ:

—Պարտքերս ենք կատարում. մենք պարտական-  
ենք Մեծ Հօրը աղօթել:

Զէ. Լուսընթագ. այդ չէ. իմ ռազած պատասխանը՝  
Հասպի: տեսնեմ ով կգտնէ պատասխանը:

—Ես էլ փարձեմ. տեսնեմ՝ կարհզ եմ գտնել:

Փարձիր Արևնատ:

—Թէ որ խելօք մարդկանց հետ խօսելով. կամ  
նրանց մօտ լինելով կարող ենք օգտուել. ի հարկէ. ա-  
մելի կօգտուենք՝ թէ ոք Մեծ Հօր մօտենանք մեր  
աղօթքներով, մեր սուրբ սրտավ:

Լաւ է. բայց պատասխանը այդ չէ:

—Դուք ասէք, տէր-հայր, սակարենք. մենք չենք  
կարող գտնել:

Թէ լաւ. ես կատիմ. բայց լաւ լսեցէք:

—Լաւ կլսենք:

Ես էլ օրինակ ասեմ — երբ մի պատուաւոր հիւռ-  
սպասում էք ձեր տանը՝ ինչ էք անում:

— Ես կապեմ:

Սաա Գոհազիկ:

— Տունը մաքրում ենք, ամեն բան կարդի ենք:  
դնում, մենք էլ մաքուր հագնուում ենք:

Լաւ. իսկ եթէ մէկ մեծ մարդու մօտ էք գնում մի-  
բան խնդրելու՝ ինչպէս էք գնում—կեղառտ երեսով ու  
շորերնվ, գզգզուած մազերնվ:

— Ես կասեմ:

Սաա Հրանոյշ:

— Մաքուր շոր ենք հագնում և կարդին ու համեստ  
կերպով մօտենում ենք նորան:

Ճատ լաւ. իսկ Մեծ հօր հետ խօսելու կամ նորան  
ազոթելու համար պատրաստութիւն չպիտի տեսնէք:

— Ես կասեմ:

Սաա Ջողեր:

— Ելի մաքաւր շորեր պիտի հագնենք, երեսներա-  
լուցած, մազերս սանդրած, մաքուր թաշկինակներ  
պիտի ունենանք. ինչպէս որ Զատկին կամ տօն օքերին.  
գնում. ենք եկեղեցի.

2է՞ Ճողեր. բանն էլ էդ է, ոք Մեծ Հայրը ոչ մեր  
ոկրուն, պետքած երեսին է կարօա, ոչ մեր զիզի շորեր  
ըին, ոչ մեր իրանում մազերին... ծիծաղում էք, հա-  
ձեր լեզուավի խօսեցի. դուր եկաւ չէ... էլի էք ծիծա-  
զնում. հեքիք է լաւ:

— Ե՞ս ըսեմ թէ ինչ կուգէ մեզմէ մեր Մեծ Հայրն»

Սաա Հրահատու.

— Նա մեզնէ ոչ երես կուզէ և ոչ գարդարուն ան-  
կրտածներ <sup>1)</sup>). Նա մեզնէ Միքա կուզէ. Միքու մը, որ փայլէ  
պայծառ ասազին պէս, և յստակ ըլլայ՝ պարզ ու վճիռ  
աղրիւրին ջրին պէս. ինչպէս Դուք մեզի սորվեցուցիք:

Հրահատը լաւ ասաց. բայց էլի կիսատ է, ես կը

<sup>1)</sup> Բացատրել անհասկանողին խօսքերը.

Ճրացնեմ—խելացի մարդկանց հետ նստելով, վերկենաւ-  
լով, խօսելով, նրանց լսելով, նրանց մօտ լինելով՝ տե-  
սանք որ օգտուում ենք. այժմ պէտք է տեսնենք—թէ  
Մեծ Հօր հետ խօսելիս, նորան աղօթելիս, նորան մեզ  
մօտ պահելիս էլ կարհղ ենք օգտուել՝ թէ ոչ։ Մենք տե-  
սանք որ մարդոց մօտ գնալիս և նրանց մեզ մօտ հրա-  
ւիրելիս պէտք է պատրաստուենք. այդպիսի պատրաս-  
տութիւն պիտի ունենանք և այն ժամանակ՝ երբ ուզում  
ենք խօսել մեր Մեծ Հօր հետ կամ աղօթել. միայն այդ  
պատրաստութիւնը շպիտի լինի երեսի կամ շորերի կամ  
մագերի՝ այլ սրտի. մենք աղօթելուց առաջ պէտք է  
մաքուր լինենք սրտով, մաքով, գործքերով. պէտք է ար-  
դար լինենք. մեղք չգործենք. խոռվ չլինենք. սուտ չխօ-  
սենք. չծուլանանք. ծնողներին և մեծերին հնազանդ լի-  
նինք և մեր բոլոր պարտքերը կատարենք. ինչ որ սովո-  
րել ենք—դէպի ծնողները, եղբայրներն ու քոյրերը, դէ-  
պի հոգնոր հայրերը, դէպի ուսման ծնողները—հայրերն  
ու մայրերը, դէպի ընկերուհիները, դէպի աղքատները,  
դէպի բանտարկեալները և այն և այն. երբ մենք մեր  
այս պարտականութիւնները կկատարենք՝ այն ժամանակ  
կիմանանք—որ մենք մօտ ենք մեր Մեծ Հօրը և նա  
օրհնում է մեզ, սիրում է մեզ և օգնում։ Ուրեմն քանի  
շատ աղօթենք, քանի շուտ շուտ աղօթենք՝ այնքան էլ  
մեր սիրտը մաքուր կպահենք, այնքան էլ մենք արդար  
կլինենք, այնքան էլ մենք մեղքից հեռու կմնանք, որով-  
հետև շուտ շուտ աղօթելով՝ շուտ շուտ էլ մեր խղճմը-  
տանքի ձայնն ենք լսում, որը մեզ ասում է—արա այս,  
սա լաւ է. մի անիր այն. նա մեղք է, յանցանք է։ Հա-  
կացաք։

— Հասկացանք. լաւ հասկացանք։

Ուրեմն մէկ անգամ աղօթենք ու ասենք «մեր ամե-

Նսրուայ հացը տուր մեղամ թէ ամեն օր և օրը մի քառ  
նի անգամ։

— Ես լսեմ։

Ասա չրանակ։

— Ամեն վայրկեան մեր սրտերուն, մեր խորհութէ-  
ներուն, մեր գործերուն մէջ պիտի որ խոսնք մեր Արար-  
շին հետ դասն զի նա ադ կուզէ մեզնէ։

Ծատ լաւ՝ շարունակենք։

Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեզ թո-  
ղումք մերոց պարտապանաց—թո՛ղ մեր մեղքեզը կամ  
մերի՞ր մեզ այնպէս՝ ինչպէս որ մենք ներում ենք մեզ  
ննդացնողներին <sup>1)</sup>։

Դուք լսել էք այս տռածը—ինչ կցանես՝ այն կը  
հնձես։

— Լսել ենք։

Ուրեմն ինչ էք կարծում—մենք որ չներենք մեր  
ընկերներին՝ Մեծ Հայրը կներէ մեզ։

— Ո՛չ, չի ների։

Ինչնւ տանք ձեզ—որովհնտե մենք այսպէս ենք  
ասում—Մեծ Հայր ջան։ Դու մեզ ներիր այն ժա-  
մանակ միայն երբոր մենք ներում ենք մեր ընկերնե-  
րին։ որոնք մեզ նեղացրել են, մեզ զրկել են, մեզ հետ  
խռովել են, մեզ վերայ սուտ բաներ են տաել, չար են  
խօսել, մեր անունը կոտրել են, մեզ բամբառել են, մե-  
զանից բաներ են գտղացնել։ մէկ խծսքով մեզ շատ վա-  
տութիւններ են արել։ մենք նորանց ներում ենք, նրանց  
արտծ վատութիւնները ուզում ենք մոռանալ, էլ չենք

1) Կրկնել տալ հատուած հատուած և գրաբառ և' աշ-  
խարհաբառ. առանձին առանձին. նստարան նստարան և  
խմբովին։

ուզում յիշել, ինչպէս մեր եղբայրներ ու քոյրեր՝ այն-պէս ենք նայում նրանց վերայ. Դու էլ մեզ ներիր, մեր մեղքերը մոռացիր, էլ մի յիշեր. իսկ եթէ մենք նրանց չներենք՝ Դու էլ մեզ մի ներիր. որովհետև արժանի չենք։ Պարզ է. չէ։

— Այս շատ պարզ է և լաւ հասկացանք։

— Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն—Մի ծգիր մեզ փորձանքի մէջ։ Փորձանքը մի վատ պատահմունք է—որ կամ կարսղ է մեզ վնասի մէջ ձգել և կամ կարսղ ենք աղատուել վնասից. մեր կեանքը միշտ փորձանքի մէջ է. երբեմն ընկնում ենք փորձանքի մէջ. իսկ երբեմն աղատում ենք։ Բայց ինչու ենք ասում «մի ձգիր մեզ փորձանքի մէջ». միթէ Մեծ Հայրն է մեզ փորձանքի մէջ ձգողը։

— Ես կասեմ։

Սա Հողեր։

— Մեծ Հայրը մեզ վատ չի կամենայ. Նա միշտ մեր բարին, մեր օգուտը կուզէ. փորձանքը վատ բան է, փորձանքի մէջ պատահմանքով ենք ընկնում. կամ ան-փորձութիւնով։

Սրեգնազանը լաւ ասաց։ Կարմղ ես շարունակել Հահանդուխտ։

— Կարող եմ։

Հարունակիր։

— Երբ ասում ենք փորձանքի մէջ մի ձգիր. ուզում ենք ասել—եթէ մեր անխելքութիւնից կամ պատահմունքից փորձանքի մէջ ընկնենք Դու մեզ աղատիր վնասից։ Ճանանդուխտն էլ լաւ ասաց. շարունակենք։

Այլ փրկեա զմեզ ի շարէ—բայց շարիցը փրկիր։ Սա շատ պարզ է. փորձանքը վնասակար պատահ-

մունք է. կարելի է այդ պատահմունքի մէջ ընկնել՝ բայց անվնաս ազատուել. այն ժամանակ շարից փրկուեցանք. իսկ եթէ փորձանքի վնասը մեզ հասաւ՝ կնշանակէ—որ մենք շարից չփրկուեցանք։ Բայց երկու տեսակ փորձանք կայ—մարմնաւոր փորձանք՝ որ մարմնին է պատահում ու վնասում և հոգեոր փորձանք՝ որ հոգուն է պատահում ու վնասում. երկուսիցն էլ օրինակ ասեմ—փողոցով անցնում էք. շար տղաները քարեր են ձգում ու խաղում. մի քար անցաւ ձեր ճակատի առաջից. դուք փորձանքի մէջ էիք. բայց չդիպաւ։ ուրեմն ազատուեցաք վնասից կամ փրկուեցաք շարից. իսկ եթէ քարը դիպաւ ձեր ճակատին, դուք վայր ընկաք, արիւն եկաւ, տուն տարան, բժիշկ, դեղ և այլն և այլն. կնշանակէ—վնասեց շազատուեցաք կամ փորձանքից չփրկուեցաք. բայց սա ձեր հոգուն, ձեր սրտին վնաս տուեց. ոչ։

Եյժմ էլ մի ուրիշ օրինակ ասեմ—մի մարդ մէկից ծխախոտ է խնդրում. հասկանում էք ինչ կնշանակէ ծխախոտ։

— Գիտենք—պապիրոզ։

Լաւ։ ծխախոտը որ ստանում է՝ տեսնում է մէջը փող էլ կայ. այժմ մտածում է նա—շլինի՛ թէ փողը սխալմամբ է տուել. պէտք է տանել յետ տալ. մէկ էլ մտածում է—չէ, երեխ փողն էլ հետն է տուել. ուրեմն իւր սեփականութիւնն է։ Ամբողջ գիշեր խեղճ մարդը տանջում է մտածելով—յետ տայ՝ թէ իրան վերցնի՛ ի՞նչ էք կարծում նա ինչի մէջ է։

— Ե՛ս կըսեմ։

Ասա Արաքսիա։

— Նա փորձանքի մէջ է. եթէ վերադառնէ՝ շարէն կփրկուի. իսկ եթէ իրեն առնու՝ շարէն չ'ազատուիր։ Ճիշտ ասաց Արաքսիան. բայց ով կասէ—սա ի՞նչ

տեսակ մի փորձանք է—հոգենը՝ թէ մարմնաւոր:

—Ե՞ս կըսեմ:

Առաջ Հրահատ:

—Ես հոգենը փորձանք մըն է. վասնզի մարմինն հոռ գործ մը չունի. հոգիին գործն է. թէ գողցաւ դրամն՝ հոգիին է վնասն. իսկ թէ վերադառնուց՝ հոգին մեղքէն աղատեց և ինքն ալ շարէն փրկեցաւ:

Ճատ լաւ ասացին Արաքսիան էլ, Հրահատն էլ. շարունակենք—Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յափունանս. Ամէն:—Որովհետեւ քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը, փառքը այժմ եւ ամեն ժամանակ:

Սմենից յետոյ, այսինքն երբ ամեն տեսակ խընդրուածքներս յայտնեցինք մեր Մեծ Հօրը՝ այն ժամանակ ասում ենք—այս բոլորը քեզանից. ենք խնդրում. Դու միայն կարող ես տալ. որովհետեւ թագաւորութիւնն էլ Քոնն է և Դու ես թագաւորների թագաւորը: Զօրութիւնն էլ Քոնն է և ոչ ոք չկայ Քեզանից զօրաւոր: Փառքն էլ Քոնն է. Դու ես փառաւորում երկնքի վերայ, երկրի մէջ բոլոր Քո արտածներից. և Քո թագաւորութիւնը, զօրութիւնը, փառքը միշտ եղել է, կայ այժմ և միշտ էլ կլինի:

Այժմ ճիշտ ասացէք ինձամեր Մեծ Ուսուցչի ոռրավեցրած աղօթքը լաւ աղօթք չէ:

—Ճատ լաւ, շատ գեղեցիկ աղօթք է մեր Մեծ Ուսուցչի—մեր տէր Յիսուս Քրիստոսի սորվեցրած աղօթքը:

Ուրեմն կաշխատէք այնպէս լաւ սովորել՝ որ կարողանաք տանը ձեր քոյրերին ու եղբայրներին էլ սորվեցնել, բացատրել:

—Անպատճառ կաշխատենք:

2. Աղօթք մաշեց առաջ:

ԼԳ. Դաս,

Կրկնութիւն:

Մենք սովորեցանք մեր ուտելիքների ու խմելիքների մասին. բայց չսովորեցանք ուտելու և խմելու համացի աղօթքները:

Մեր ծնողների ու եղբայրների մասին, մեր Մեծ Հօր տան մասին, մեր դասերի մասին, մեր գործերի մասին աղջիքներ սովորեցանք. Տէրունական աղօթքն էլ սովորեցանք: Այժմ չսովորենք արդիօք ճաշի աղօթքները—թէ ճաշ ուտելուց առաջ և յետոյ ինչ պիտի աղօթենք, ինչպէս և ինչ պիտի խօսենք մեր կերակրողի հետք

—Սովորենք, սովորենք. մենք չգիտենք—թէ ինչ աղօթք պիտի անենք ճաշից առաջ և ճաշից յետոյ:

Ճատ լաւ. լսեցք: Մենք տեսանք—որ մեր ամենիու կերակրողը մեր Մեծ Հայրն է. սովորեցինք և գիտենք—թէ ո՞րքան անթիւ բարիքներ է տուել մեզ մեր Մեծ Հայրը, որոնցմով մենք կերակրուում ենք և էլի պիտի կերակրուինք: Ուրեմն այժմ էլ տեսնենք—թէ ինչ է ճաշից առաջ ասելու աղօթքը:

Ամենքի աշքը Քեզ է նայում, Տէր. Դու ես կերակրում ամենքին իր ժամանակին. Բաց ես անում Քո ձեռքը. և քաղցր կամքդ կամ կամքիդ քաղցրութիւնը ամենքին լիացնում է <sup>1)</sup>:

Ինչու ամենքի աշքը Մեծ Հօրն է նայում—որովհետեւ նա է կերակրում ամենքին իր ժամանակին. այսինքն՝ Գարնանը՝ անձրև ու արև է տալիս, որ ձիմերը հալչին, խոտը բուսնի, ծլի, ծաղկի և կանաչ ու դալա-

<sup>1)</sup> Մեզ լաւոնի ձեռվ կրկնել և իւրացնել տալ աղօթքը:

ըով դաշտերը ծածկուեն, ծառերը կանաչեն, կոկոն ու բողբոջ բռնեն, տերեններով զարդարուին։ Սմրանը՝ տաք ու ջերմ արև է տալիս, որ ցանքսերն ու պտուղները հասնեն. և Սմրանն ու աշնան սկզբին բաց է անսւմ իւր ընդարձակ սփռոցը. որ աղօթքի մէջ ասուած է—Բաց ես անում Քո ձեռքը. և իւր բարի ու քաղցր կամքով հրաւիրում է ամենքին—թէ ասուն, թէ անասուն՝ լիանալու ամենքին բաւական առատ պարզեներից. դաշտային այդ ընդարձակ սփռոցի շուրջը հաւաքւում են մարդիկ ու կենդանիք, թոշուններ ու հաւքեր, զեռուններ ու սողուններ և հազար տեսակ մեծ ու փոքր միջատներ. և կերակրում են առատօրէն։ Դալիս է Սշունը իւր սուլող ու շուացնող քամիներով, իւր սրտամաշ անձրեններով, գէս ու դէն ցրիւ է տալիս իւր դեղնացրած ու շորացրած ծառերի տերենները, սերմերը. բայց դա էլ ունի իւր օգուտը —շաղ է տալիս սերմերը այս ու այն կողմ. և ուր ընկնում են սերմերը՝ այն տեղ էլ մնում են. որ գարնանը նորից քսնին։ Գալիս է Զմեռը և իւր սպիտակ թանձր սաւանի<sup>1)</sup> տակ ծածկում է բոլոր ցանքսերն ու բուսականութիւնը. որ տաք մնան և կամաց կամաց մննդուին, երբեմն հալչող, ձեան կաթիլներից. որպէս զի, երբ գայ գարունը, նորից ծլին ու ծաղկին, աճին և պատրաստուին մնունդ ու կերակուր դրուելու ամրան դաշտային սփռոցի վերայ։ Մրա համար էլ ասում ենք—Դու ես կերակրում ամենքին իր ժամանակին և Քո բարի ու քաղցր կամքովդ ամենքին էլ լիանում են առատաբար։

Ահա այսպիսի աղօթքով մենք սկսում ենք ճաշել. այսինքն՝ վայելել Մեծ Հօր, մեզ տուած, բարիքները։

<sup>2)</sup> Հասկացնել սաներին անծանօթ բառերը. երբեմն ես պատահած դժուար հասկանալի նախաղասութիւնները, որոնք կարող են պատահել.

Դրկնենք յամբովին մի քանի անգամ ճաշից առաջ  
ասելու աղօթքը:

Հիշտ է՝ թէ զժուար:

— Ճատ հեշտ է:

Ճաշից յետոյ ասելու աղօթքն էլ որ դաս տամ կա-  
յրն էք սովորել:

— Կարող ենք:

Ի՞նչ գիտէք՝ թէ կարող էք — կարելի է շատ երկար է:

— Եթէ չկարողանայինք սովորել՝ Դուք այժմ չէք  
տալ այդ դասը, կթողնէիք միւս անգամուան. բայց գի-  
տէք որ կարող ենք. մենք էլ գիտենալով որ Դուք աւե-  
լի չէք տալ, այլ այնքան դաս կտաք, որ մենք կարողա-  
նանք սովորել, այդ պատճառով ասացինք — թէ կարող ենք:

Արեգնազանը ճիշտ է ասում:

— Ճիշտ է ասում. շատ ճիշտ:

Ուրեմն սովորենք:

— Այս. սովորենք:

Լաւ:

### 3. Աղօթք ճաշից յետոյ.

Ճաշից յետոյ ասուած աղօթքով մենք յայտնում ենք  
մեր Տէր Յիսուս Քրիստոսին մեր գոհութիւնը, մեր չնոր-  
հակալութիւնը՝ որ լիացանք նորա մեզ տուած բարու-  
թիւնից. յայտնում ենք մեր գոհութիւնը նաև Հօր և  
Որդոյ և սուրբ Հոգոյն. և խնդրում ենք — որ մեր Տէր  
Յիսուս Քրիստոսը անհատնելի անէ մեր սուփրի լիու-  
թիւնը, որով մեզ կերակրեց և լիացրեց. և ամենից յե-  
տոյ փառք ենք տալիս նորան:

Ճաշից յետոյ ասելու աղօթքն այս է.

Տէր Յիսուս, լիացանք Քո մեզ տուած բարութիւ-  
նից. Գոհութիւն կատանք մեր Տէր Աստուծուն. Հօրը, Որ-

դռն և Առգրը Հոգուն. Այս հացի, կերակրի սեղանը լիր և անպակաս անի մեր Քրիստոս Սստուածը. Սորանսէ մեզ կերակրեց և լիացրեց. Փառք տանք նորան այժմ և ամեն ժամանակ:

Ինչո՞ւ ենք յայտնում մեր գոհաւթիւնը Յիսուսին և Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն. չէ որ մեր կերակրութեաւտելիքն ու խմելիքը մեր ծնողներն են տալիս մեզ. մեր ուտելու հացը մեր ծնողներն են պատրաստում մեզ համար: Ո՞վ կասէ ինձ:

—Ե՛ս կըսեմ:

Ասա Հրահատ:

—Մենք սորվեցանք մեր անցեալ դասերէն—թէ իրօք մեր ծնողներն կաշխատին. սակայն ծնողներսւն աշխառ տանքն կօրհնէ Ծրարիչն—նախ՝ որ առողջութիւն կուտայ անոնց. երկրորդ՝ գործերսւն յաջողութիւն. երրորդ՝ ճաշէն առաջ ըսուելիք աղօթքի բացափրաւթենէն սորվեցանք—որ իր ժամանակին կուտայ ամենուն կերակուրը—Գարունքին՝ անձրեներով ու արեսով. Ըմառն՝ ջերմ արեղակով. Աշունքին՝ սաստիկ քամիներսկն ու անընդհատ անձրեներով. Զմեռն՝ իր ձիւներով. ասոնցմով ալ՝ առատութիւն կըլլայ հացի ու բոյսերի. և աս ամեն պարագաներն իրարու հետ միասին կօգնեն մեր ծնողներան կերակրել մեզի: Ասկէ հետևցնելու է—որ մեր ամենուս կերակրովն Արարիչն է. Որուն ձեռքին տակ գործիքնեղ են մեր ծնողներն և ամեն մարդիկ:

Ճատ լաւ: Ուրեմն այսքան դասերից դուք սովորեցիք—թէ այն ամենը՝ ինչ որ մենք տեսնում ենք, օրինակ—

Երկինքը՝ իւր աստղերով, արեղակով, լուսնով, ամպերով, ձիւնով, հողով, օդով, լոյսով՝ նվ է տուել մեզ-մարդը:

— Ո՞շ, մեր Մեծ Հայրն է տուել:  
Լաւ:

Երկիրը՝ իւր լեռներով, անտառներով, գաշտերով,  
ձորերով, հովիտներով, անապատներով, ովասիններով,  
ծովերով, լճերով, գետերով, ազդիւրներով՝ ով է տուել  
մեզ. մաքդը:

— Ո՞շ, մեր Մեծ Հայրն է տուել:  
Լաւ:

Օդը՝ իւր թռչուններով. Ճուրը՝ իւր ձկներով. Հողը՝  
իւր բայսերով, իւր կենդանիներով, զեռուններով, մեծ  
ու փոքր միջատներով՝ ով է տուել մեզ. մարդը:

— Ո՞շ. մեր Մեծ Հայրն է տուել:  
Լաւ:

Աշխարհը՝ իւր բնակիչներով—մարդիկներով. Ծնո-  
ղական տունը՝ մեր ծնողներով և տան զաւակներով. Մեծ  
Հօր տունը՝ մեր հոգեսոր հայրերով ու ժողովրդով. Ուս-  
ման տունը՝ մեր ուսման հայրերով ու մայրերով և ուս-  
ման սաներով. Սրհեստները՝ իրենց արհեստաւորներով.  
Աշխատանքներն ու Մշակութիւնները՝ իրենց աշխատա-  
ւորներով ու մշակներով. Պաշտօնները՝ իրենց պաշտօ-  
նեաներով՝ ով է տուել մեզ. մաքդը:

— Ո՞շ. դարձեալ մեր Մեծ Հայրն է տուել մեզ:  
Լաւ:

Իսկ մարդուն՝ իւր հինգ զգայարանքներով—աշքե-  
րով՝ որ տեսնում է. ականջներով՝ որ լսում է. բերնով կամ  
լեզով՝ որ ճաշակում է. ու խօսում. ուսնգներով կամ քթով՝  
որ հոտոտում է. ձեռքերով, ոտներով կամ ամրող մարմ-  
նով՝ որ շոշափում է. բացի այս հինգ զգայարանքներից.  
Էլի մտքով՝ որ մտածում է. կամքով՝ որ գործում է.  
սրտով՝ որ զգում է. խղճով՝ որ բարին որոշում է շա-

ըլից և հոգւով՝ որով ապրում է՝ ով է տուել մարդուն.  
ինքը մարդը:

—Ո՞չ. դարձեալ մեր Մեծ Հայրը:

Այս. այս. մեր Մեծ Հայրն է տուել. Որին  
ասում ենք—Աստուած. Ահա այդ Աստուածն է մեր Մեծ  
Հայրը. Որից են եղել թէ Երկինքը, թէ Երկիրը և թէ  
մենք բոլորս. Նա է մեզ ստեղծել. Նա է մեզ պահում,  
խնամում. Նրանով ենք մենք ապրում ու չնշում և մեռ-  
նելուց յետոյ էլ նորա մօտ ենք գնում: Ուրեմն ով է  
մեր բոլորիս սկիզբը, պատճառը և վերջը. Աստուած է.  
Նորան պիտի Երկրսպագենք. Նորան պիտի աղօթենք.  
Նորան պիտի պաշտենք ու սիրենք. և Նորան պիտի տանք  
մեր սիրտը. միշտ սրբութեամբ կատարելով նորա Օրէն-  
քը—Սուրբ պատուիրանները և Սուրբ Կամքը ասելով.  
«Եղիցին կամք քո. որպէս յերկինս և յերկրի»:

Լաւ հասկացաք:

—Ճատ լաւ:

Ուրեմն կատարեցէք Աստուծոյ Սուրբ Կամքը միշտ  
սիրով, յօժարութեամբ, սրտանց, առանց ձանձրանալու.  
այլ ուրախութեամբ, որպէսզի նա ձեզ և սիրէ, և  
օրհնէ, և օգնէ:

—Կատարենք սրտանց, կկատարենք ուրախութեամբ  
մեր սիրելի Մեծ Հօր, մեր Մտեղծող Աստուծոյ Սուրբ  
Կամքը. խոստանում ենք ազնիւ խօսքով:

Եթէ դուք կատարէք ձեր ազնիւ խօստումը՝ ես էլ  
գոհ և ուրախ սրտով կյիշեմ ձեզ իմ աղօթքներիս մէջ  
և կխնդրեմ Մեծ Հօրից, սրտանց կխնդրեմ—որ նա ձեզ  
օրհնէ, սիրէ, օգնէ և շնորհը տալ. որ լաւ մարդիկ դուրս  
գաք: Լաւ մարդիկ դուրս կգաք, եթէ ունենաք անմեղ  
մանկական սիրտ—նման պայծառ փայլող աստղին և  
վճիտ ու պարզ ջուր ունեցող աղբիւրին:

— Ծատ չնորհակալ ենք տէր-հայր. մենք էլ 2եղ համար կազօթենք—որ շատ ապրէք և շատ մեղ նման աներ դաստիարակէք, որ շատ լինին 2եղ համար ազօթողները:

Ծնորհակալ եմ: Վերջացնենք այս դասը: Թէս կարճ դաս է, բայց երկու ազօթք կայ սովորելու. չլինի թէ գժուարանաք:

— Ծատ լաւ. Զեր բարի կամքն է:

Մի երկու անգամ խմբովին կրկնենք մեր սովորած ազօթքները:

#### 4. Ազօթք Թագաւորի համար.

ԼԴ. Դաս.

Կրկնութիւն:

Ծնցեալ դասերին մենք տեսանք—որ աշխարհիս Ստեղծողը, Խնամողը, Պահպանողը Աստուած է. Նա է մեր Երկնաւոր Հայրը. և նա է մեր Երկնաւոր Թագաւորը: Բայց նա նշանակել է մարդկանց համար Երկրաւոր հայրեր. կամ Թագաւորներ. որպէս զի Թագաւորութիւն անելով իւր կողմից երկրի վերայ՝ իւր Օրէնքները պահել տան, կատարել տան իւր որդուց, իւր ժողովրդին. որոնց խնամքը, հոգսերը յանձնել է իւր նշանակած Երկրաւոր Թագաւորներին: Ուրեմն Թագաւորների օրէնքներին չնազանդողը՝ Աստուծուն չէ ննազանդում. որովհետև Թագաւորներին Աստուած է նշանակում, ընտրում, օծում, և կարգում է իւր փոխանորդը ժողովրդի վերայ:

Կուզէք իմանալ—թէ ի՞նչքան հոգս, մտածութիւն ամին Թագաւորները իրենց հպատակ ժողովրդի վերայ:

—Կուղենք. թէի գիտենք էլ, բայց աւելի լաւ էր որ հի սովորենք:

Չափ բաւ. ես կպատմեմ ձեզ—Երկրաւոր թագաւորները օրէնքներ են հրատարակում. այդ օրէնքները կպատրիլ տալու համար պաշտօնեաներ են նշանակում. որպէս զի օրէնքների կպատրելուն նայեն, հսկեն և ժողովուրդը հանգիստ ապրի, խաղաղ կենցազավարի:

Թագաւորները զօրքեր են պահում զօրանոցներում. Նրանց կերակրում են, հազցնում են, և վարժեցնելու, սովորցնելու համար սպաներ, զօրապետներ են նշանակում. ամենքին սոճիկներ են տալիս արքունի գանձարանից. և ինչու համար են այսքան ծախս անում, գիտէք, ժողովրդի համար. որ ժողովուրդը հանգիստ ու ապահով ապրի: Ի՞նչպէս. պատմեմ ձեզ—որ երբ դրսից թշնամին գալու լինի և ուզենայ երկրի խաղաղութիւնը խանդարել, ժողովրդին նեղացնել, հարստահարել. քաղաքներն ու բերդերը տիրել, առնել, քանդել, կամ կրակ տալ, կործանել. ժողովրդին գերել, աքսոր քշել, կոտորել, սպանել և այլն և այլն. այն ժամանակ ժողովրդասէր բարի. Թագաւորը իսկոյն հրաման է ուղարկում ամեն աեղ իւր զօրապետներին—որ զօրքերը ոտքի կանգնացնեն, պատերազմի պատրաստութիւն տեսնեն և պատերազմով՝ թշնամուն քշեն երկրի սահմաններից. որպէս զի երկրիր խաղաղուի, ժողովուրդը հանգստանայ, ժողովրդի կեանքը, զայքը ապահովուի, առուտուրն ու փաճառականութիւնը նորից կենդանանայ. ժողովուրդը իւր արհեստներով ու աշխատանքներով պարապի. և շատ արսպիսի խնամքներ ունի Թագաւորը իւր ժողովրդի, իւր երկրի վերայ:

Ահա այս բոլոր խնամքի համար, որ ունի բարի Թագաւորը իւր երկրի ու իւր հպատակ ժողովրդի վե-

յրայ, ժողովսկրին էլ իւր կողմից, իբրև երախտագալքն և երախտագէտ որդի իւր Երկրաւոր Հօրը, իրան պաշտամանող Թագաւորի, իւր երկրաւոր բարի Հօր համար աղօթում է—որ Երկնաւոր Թագաւորն Աստուած պահէ, աղաղաղանէ իւր Թագաւորին. զօրաւոր, հզօր, կարսդ, յաղթող և անպարտելի պահէ իւր ինքնակալ Կայսրին. որ նորա թագաւորութիւնը փառքով ու պարծանքով լինի. որ նորա թագաւորութիւը երկիւղով ու սաստով լինի դէպի թշնամիները. որպէս զի նորա սիրտ չանեն, չհամարձակուեն յարձակուել իրենց Թագաւորի երկրի ու տէրութեան վերայ և ժողովրդի կեննքը լինի հանգիստ, խաղաղ, ապահով և բարեկեցիկ.

Այժմ սովորենք Թագաւորի համար ասելու աղօթքը: Տէր Աստուած, պահիր Դռւ մեր Թագաւորին. Դռւ, Հզօր ինքնակալ, թագաւորիք մեր պարծանքի համար, Թագաւորիք, և Վայու, թշնամիներին երկիւգ տալու համար. Տէր Աստուած պահիր Դռւ մեր Թագաւորին:

Այս աղօթքով մնեք ինդրում ենք մեր Երկնաւոր Թագաւոր Աստութուց ու որ նա պահէ, պահապահէ մեր Երկրաւոր Թագաւոր Կայսրին. որ նա իւր հպատակ ժողովրդի, իւր որդւոց համար լինի սիրոդ, խնամող, պաշտաման չայր և Թագաւոր. իսկ թշնամու համար՝ ահարկու և Հզօր ինքնակալ. որպէս զի թշնամին շհամարձակուեի, սիրտ շանի իւր ժողովրդի, իւր որդւոց խաղաղութիւնը, բարեկեցիկ վիճակը և իւր երկրի անդորրութիւնը վրդովել:

### 5. Աղօթք Հայրապետի համար.

Այժմ էլ սովորենք Հայրապետի համար ասելու աղօթքը—Մեծ Հօր տանը գուք անսաք քահանաներ և սովորեցիք—որ նրանք ձեր հոգենոր հայրերն են. նրանք են հոգում

ձեր հոգեսոր պէտքերը, կարիքները, նրանք են ձեզ՝ քառօղում, նրանք են ձեզ Կրօն սորվեցնում, նրանք են ձեզ համար ժամ ասում, պատարագ անում. նրանք են ձեր հոգեսոր կեանքի վերայ հսկում և այն.

Այսպէս էլ միւս հոգեսոր հայրերը—Վարդապետները, Եպիսկոպոսները։ Վարդապետ տեսել էք։

— Տեսել ենք։

Իսկ Եպիսկոպոս։

— Տեսել ենք։

Ի՞նչ զանազանութիւն կայ Վարդապետների ու Եպիսկոպոսների և Քահանաների շորերի մէջ։

— Ես կասեմ։

Ասա Համասփիւո։

— Քահանաները աշխարհականների գլխարկների նման գլխարկ են ծածկում. իսկ վարդապետների ու Եպիսկոպոսների գլխարկը ուրիշ ձև ունի, սրածայր է և վեղար է կոչում։

Եթէ քահանաները, վարդապետները, Եպիսկոպոսները ձեր հոգեսոր հայրերն են՝ ուրեմն Կաթողիկոսը, որ բոլոր այդ հոգեսոր հայրերի գլուխն է, ամենից մեծն է՝ Ի՞նչպէս պէտք է անուանենք նորան։

— Ե՞ն կասեմ։

Ասա Համասփիւո։

— Եթէ քահանաները, վարդապետները, Եպիսկոպոսները մեր հոգեսոր հայրերն են՝ ուրեմն Կաթողիկոսը, որ նրանց գլուխն է, մեծն է՝ նրան ասում ենք Հայրիկ<sup>1)</sup>։

Այն. այդպէս է. բայց բոլոր հոգեսորականների գլխաւորին մենք ասում ենք—Կաթողիկոս կամ Հայրապետ։

<sup>1)</sup> Պէտք է բացատրել սաներին «Հայրիկ» բառի գործածութեան պատճառը. և սորվեցնել Հայրապետ կամ Կաթողիկոս բառերը.

այսինքն հոգեոր հայրերի պետը — գլուխը կամ գլխաւորը։ Ուրեմն եթէ հոգեոր հայրերի պարտքն է ժողովրդի հոգեոր պէտքերը հոգալ, լրացնել, հոգեոր կեանքի վերայ հսկել՝ ի՞նչ էք կարծում — չայրապետի պարտքը աւելի կլինի՝ թէ քիչ. կարող էք ասել՝ թէ ես ասեմ։  
— Ես կըսեմ։

2է, չրահատ. գիտեմ որ զու և Ծրաբսիան, կարելի է մի քանիսն էլ կարողանան ասել. բայց ես կասեմ յետոյ ձեզ կհարցնեմ. — չայրապետի պարտականութիւնները շատ շատ են. և շատ աւելի՝ քան թէ միւս չոգեոր հայրերի։ Քահանաները հոգում են իրենց ժողովրդի հոգեոր պէտքերը. այդ զուք սովորեցիք. Վարդապետները՝ իրենց վանքերի ու պաշտօնների մասին են հոգս անում. Եպիսկոպոսները՝ իրենց թէմի գործքերն են կառավարում. իսկ Կաթողիկոսը կամ չայրապետը ամբողջ ազգի ու բոլոր հոգեորականների հոգեոր պէտքերի ու հոգսերի վրայ է մտածում, Ազգի որդուց կրօնական-բարոյական կրթութեան վերայ. Ազգի ու ժողովրդի վերայ է մտածում՝ որպէսզի նրանք բարեպաշտ ու Աստուածապաշտ լինեն, Եկեղեցին սիրեն՝ ու յաճախեն։ Նա մտածում է, հոգս է անում, որ իւր հոգեորականները ժողովրդասէր լինին, ժողովրդի բարոյական կեանքի վերայ հսկեն. Հրամաններ, կոնդակներ է ուղարկում Առաջնօրդներին, որպէսզի նրանք ևս հսկեն իրենց ձեռքի տակ գտնուած հոգեորականների վերայ — որ արի ու ժիր լինին իրենց պաշտօնի մէջ, քարոզեն ժողովրդին. որ արժանաւորներին վարձատրեն, խրախուսեն. իսկ պարտազանցներին խրատեն, յորդուեն՝ որ ուղղուին. իսկ հակառակ գէպքում՝ պատժեն պարտազանցներին։

Չայրապետը կամ Ազգիս Ընդհանրական Կաթողիկոսը մեր Եկեղեցական-Կրօնական գործերի գլուխն է։ Նորա

Կոնլակիներով, Ճրջաքերականներով, Կարգտղրութիւններով ու Հրամանագրութիւններով են կատարում մեր Եկեղեցական և հոգեոր գործերը։ Կրօնական բոլոր խնդիրների վճիռները նա է որոշում. Եպիսկոպոսներին նա է ձեռնադրում. Սուրբ Միւլոնի նա է օրնում. բոլոր հոգեոր հայրերը նրա գիտութեամբ են ձեռնադրում. Թէժերի համար Առաջնորդներ նա է նշանակում. առանց Դորա զիտութեան ոչ մի Կրօնական-Եկեղեցական գործ չէ կատարում։

Եյսքան մեծ, ծանր և պատասխանատու պաշտօն է մեր Կաթողիկոսի կամ Հայրապետի պաշտօնը. ուստի և նորա հոգեոր որդիքը—ամբողջ Ազգը ակօթում է նորա համար—որ մեր 8էր Յիսուս Քրիստոսը հաստատ պահէ մեր Հայրապետի Հայրապետական Աթոռը. երկար կեանք տայ մեր Հայրապետին, որպէս զի նա կարողանայ հովաւել, խնամել, պահանել իւր հոգեոր որդիքը և հոգայ ու մտածէ իւր հոգեոր որդւոց—իւր Ազգի հոգեոր, բարոյական և կրթական կեանքի ու գործքի վերայ<sup>1)</sup>։

Այժմ սովորենք Հայրապետի համար ասելու աղօթքը։

Քո իշած տեղը—մեր Հայրապետի աթոռը՝ ով Աստուած, հաստատ պահիր. մեր Աստուածազգեաց Հօրը, որ մերհայրերի պետն է, մեծն է՝ երկար կեանք պարագիր. Որովհետեւ նա է մեզ հովում։

Եյս աղօթքով մենք գիմում ենք Յիսուս Քրիստոսին, որ Հօր Միածին Որդին է. և նորա իշած տեղը ասւում է Եջմիածին. այստեղ է մեր Կաթողիկոսի Հայրապետական Աթոռը. ուստի խնդրում ենք—որ այդ

<sup>1)</sup> Ուսուցիչը պիտի բացատրէ անհասկանալի բառերն ու նախաղասութիւնները. և եթէ լարմար ու կարեռ համարէ՝ կարող է ընդարձակել բացատրութիւնները.

Աթոռը հաստատուն պահէ. և Հայրապետին էլ երկար կեանք պարզեէ:

Ո՞վ է եղել ձեզանից Էջմիածնում:  
—Ե՞ս: Ե՞ս ալ:

Ինչպէս եղաւ՝ որ դուք—Հրահատ և Սրաքսիա Էջմիածին գնացիք:

—Երբ Տաճկաստանէն գաղթեցինք Ռուսիա, գնացինք Հայրիկին մօտ, որպէս զի նա հոգայ՝ մեզի աս դպրոցին մէջ տեղաւորելուն համար և Հայրիկին գրով ընդունուեցանք աս դպրոցն. թէպէտ տարիքնիս մեծ էր, բայց Ռուսերէն շգիտէինք. անոր համար ալ աս դասարանն ընդունուեցանք:

Այժմ էլ դու ասա, Սրաքսիա,—ինչպէս տեսար Էջմիածինը, հաւանեցիր. ոչինչ չլսեցիր այնտեղ Էջմիածնայ մասին:

— Ինչպէս չէ, հաւանեցի. շատ աղոր վանք մըն է. անանի մեծ ու գեղեցիկ Եկեղեցի հոս, աս քայրին մէջ շի կայ: Հոն ինձ պատմեցին, ես ալ գիտէի—թէ Էջմիածինն շիներ է մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ու Տրդատ թագաւորն: Սուրբ Լուսաւորիչն տեսիլքին մէջ տեսեր է—թէ ինչպէս Միածինն Յիսուս, ոսկի ուռն ձեռքին մէջ քունած, հրեշտակներն շորս դին առած՝ իջեր է և զարկելով քաղաքամէջ հրապարակին վրայ՝ իսկոյն ձեակերպուեր է տաճարին օրինակը. ան օրինակովն ալ Սուրբ Լուսաւորիչ Հայրն ու Տրդատ թագաւորն շիներ են Էջմիածնայ վանքն: Ատոր համար ալ կըսուի Էջմիածին: Հոն ինձ ըսին—թէ Լուսաւորիչն, որ աշխարհական մըն էր, գնացիր է Կեսարիա և Ղեղնդէս Պարիարքէն ձեռնադրուեր. է Եպիսկոպոս և գալով Հայաստան՝ ընտրուեր է Պաթողիկոս. Հայրապետական Աթոռն ալ հաստատեր է Էջմիածնին մէջ:

Լաւ ասաց Երաքսիան։ Լսեցիք։

—Այս։

Հինգ այդ է պատճառը, որ ասում ենք մեր Տէլք Յիսուս Քրիստոսին—Քո իշած տեղը—Հայրապետի Աթոռ հաստատուն արա։ Այժմ հասկանալի՞ է։

—Հասկանալի՞ է։

Լաւ պատրաստեցէք։

Եկող երկու դասերին ընդհանուր կրկնութիւններ կանենք Արհեստների, Աշխատանքների, Պաշտօնների և Կեանքի մասին։

Կ Ր Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Բ։

Լե. Դաս։

Սնցեալ անգամ խոստացանք կրկնութիւններ անել Արհեստից սկսեալ. կատարենք մեր խոստումը։ Խոստանալի՞ է դժուար՝ թէ կատարելը։

—Ես կըսեմ։

Սսահ Հրահատ։

—Խօսք մը տալ մէկուն՝ շատ դիւրին է, սակայն տուած խօսքին կատարելն՝ թէե դժուար է, բայց պարտականութիւն մըն է. չկատարին՝ անազնութիւն է։

Ուրեմն մենք ազնիւ լինինք՝ կատարելով մեր խոստումը։ Այս մեր կրկնութիւնները դարձեալ նոյն ձեռվ կլինին՝ ինչպէս որ եղան ծնողական, Մեծ Հօր և Ուսման տան դասերի կրկնութիւնները—ամեն մէկիդ մի մի բան հարցնելով։ Դէ, ուրեմն, Ճուշիկ, դու պատմիր ինձ Արհեստի մասին։ Լաւ։ Ճարունակիր Ճամփամ Տեսակների մասին։ Նոյնը շարունակեցէք գուք Հեղինէ և Յասմիկ։ Ասահ ինձ Արաքսիա—Էլ ինչ Արհեստներ կան։ Հրահատ, դու ասա Արհեստների ու Արհեստաւորների անունները։ Արաքսիա, պատմիր ինձ իւրաքանչիւր արհեստի նշանակութեան մասին։ Ճարունակիր Հրահատ։ Կաշե-

գործութեան մասին պատմիր Ոսկեհատ։ Դու Հրանոյշ, պատմիր Դեղձակութեան մասին։ Լուսանկարչութեան մասին պատմիր Հրահատ։ Հիւսնութեան մասին սլատմիր Հրահատ և ամփոփիր։ Երկաթագործութեան մասին՝ դու ասա, Արաքսիա։ Ներկարարութեան մասին՝ ասա Նարզէս։ Դրաշարութեան և Տպագրութեան մասին պատմիր Արեհատ։ Հացագործութեան մասին ասա ինձ Լուսընթագ։ Արաքսիա դու ինձ պատմիր Վաճառականութեան մասին։ Հրահատ, ամփոփիր բոլոր Արհեստների նշանակութիւնը և կրկնիր, ինչպէս ես պատմել եմ, Նրանց նպատակը և թէ ինչպիսի աշխատանք չէ սիրում Ըստուած։ Աշխատանքի կամ Մշակութեան տեսակների մասին պատմիր ինձ Հրահատ։ Երկրագործութեան կամ Հողագործութեան մասին դու ասա, Աշխէն։ Այդեպանութեան և Անտառապահութեան մասին դու պատմիր, Անահիտ։ Հրաշեայ, պատմիր ինձ Անասնապահութեան կամ Խաշնարածութեան մասին։ Քարհատութեան կամ Քարտաշութեան մասին՝ ասա Հերինազ։ Զրկրութեան կամ Զրաբաժնութեան մասին՝ գու, Ծիգրանուհի։ Բեռնակրութեան և Դոնապանութեան մասին՝ գու, Նազլու։ Ամեն մի արհեստաւոր, աշխատաւոր, բանւոր ու մշակ՝ ինչ շպիտի մոռանայ իւր կեանքի մէջ. ասա Հրահատ։ Ի՞նչ պաշտօններ կան, անուններն ասացէք—Արաքսիա, Ծիգրանուհի, Արուսեակ, Նուարդ, Անահիտ, Համասփիւռ, Փառանձեմ, Արեգնազան, Սիրուշ, Նազելի, Աշխէն, Հրահատ։ Պատմեցէք—Արաքսիա՝ Ուսուցութեան մասին։ Նուարդ՝ Փաստաբութեան մասին։ Արեգնազան՝ Բժշկութեան մասին։ Ծիգրանուհի՝ Դրագրութեան մասին։ Սիրուշ՝ Հաշուապահութեան մասին։ Արուսեակ՝ Քարտուղարութեան մասին։ Անահիտ՝ Պատաւորութեան մասին։ Փառանձեմ՝ Զինւորական պաշտօնի մասին։ Նազելի՝

Ճարտարապետութեան մասին. Համասփիլուռ՝ Հովեորական պաշտօնի մասին. Աշխէն՝ Գրաքննիչի մասին. Արաքսիա՝ Գիրը հրատարակողների կամ Հեղինակների մասին. Հրահատ՝ Խմբագիրների մասին. Հրահատ պատմիր ինձ Դերասանների մասին. գուռ, Արաքսիա՝ Թատերագիրների մասին։ Գիղարուեստի – Նուազածութեան, Երաժշտութեան և Նկարչութեան մասին պատմիր Հրահատ։ Կրկնիր Հրահատ մեր սովորած բոլոր պաշտօնների անունները և Արհեստների, Աշխատանկների կամ Մշակութեան և Պաշտօնների նպատակը։ Կրկնեցէք խմբովին գործքի աղօթքը։

ԼԶ. Դ ա ս,

Կրկնիր ինձ Հրահատ – Ծնողական տանից ինչպէս հասանք մինչև կեանքը. և այնտեղ ինչ գտանք։ Ուտելիքների և խմելիքների մասին պատմիր Արաքսիա։ Որսկան շանը ինչպէս են ասում նուարդ։ իսկ որսկան թրոշունին ինչպէս։ Հագնելիքների մասին առաջ Արեգնազան։ Հագնելիքները որտեղ են պատրաստում։ Հրահատ։ Հացի ու ջրի և օդի համեմատութիւնը արած Հրահատ։ շարունակիր Արաքսիա։ Լոյսի մասին կրկնեցէք – Արեգնազան, Համասփիլուռ, Նազելի, Ջամիրամ։ Արեգակի մասին ասացէք – Ուկեհատ, Աշխէն, Արաքսիա, Հրահատ։ Անձրսի մասին միայն գուռ ասա Աշխէն։ Հողի մասին ասած Հրահատ։ Ասա ինձ Արաքսիա – ինչո՞ւ համար է կեանքը – Ուտելիքը, Խմելիքը, Հագնելիքը, Օդը, Լոյսը, Արերը, Անձրսի, Հողը և սոցանով գոյութիւն ունեցող Արհեստները, Աշխատանքը կամ Մշակութիւնը և Պաշտօնները՝ իրենց տեսակներով։ Ուսուցիչների առհասարակ՝ և Մեծ Ուսուցչի մասին պատմիր Հրահատ։ Արեգնազան դու էլ ասա Մեծ Ուսուցչի մասին։ Ցուղա-

յի մասին էլ ասաւ։ Արաքսիա, դու ասա—թէ ի՞նչ գործեր էր գործում Մեծ Ուսուցիչը և կայ նորա նմանը։ Հրահատ։ դու ինձ ասա—ի՞նչ է Տէրունական ազօթքը, ինչու է այգիս աւուում, ով սորվեցրեց, ումը և ինչու համար։ Ի՞նչ է նշանակում «Հայր մեր որ յերկինտ ես»։ ասա Արաքսիա։ «Սուրբ եղիցի անուն քո»։ առա Հրահատ։ Ծարունակեցք—Արեգնազան և Արաքսիա։ «Եկեսցէ արքայութիւն քո»։ ասա Հրահատ։ «Եղիցին կամք քո, որպէս յերկինս, և յերկրի»։ ասա Արեգնազան։ «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»։ ասա Արաքսիա։ Ծարունակիր Արեգնազան։ Ծարունակիր Արաքսիա։ Կրկնիր բերած օրինակդ, Հրահատ։ Խելօք մարդկանց մեզ մօտիկ պահելով՝ ի՞նչ օգուտ։ ասա Արեգնազան։ Մեծ Հօրը շուտ շուտ ալօթելով՝ ի՞նչ օգուտ է մեզ։ օրինակներով ասէք—Գոհարիկ, Շուկեր, Հրահատ։ «Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։ ասա Հրահատ։ «Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն»։ ասա Հրահատ։ «Այլ փրկեա զմեզ ի շարէն»։ ասա Արաքսիա։ Ծարունակիր Հրահատ։ «Զի քո է արքայութիւն և գօրութիւն և փասք յաւիտեանսո. Ամեն»։ ասա Արաքսիա։ Խմբովին կրկնել Տէրունական ազօթքը։ Այժմ ասա ինձ Հրահատ ինչ որ սովորել ես ճաշիշ առաջ ասելու ազօթքի մասին։ Խմբովին կրկնել ճաշից առաջ ասելու ազօթքը։ Արաքսիա. դու էլ ինձ ասա ճաշից յետոյ ասելու ազօթքի մասին։ Խմբովին կրկնել ճաշից յետոյ ասելու ազօթքը։ Թագաւորի համար ասելու ազօթքի մասին ասա Արաքսիա։ Ծարունակիր Հրահատ։ Խլմ. բովին կրկնել ազօթքը։ Հայրապետի համար ասելու ազօթքի մասին ասա Հրահատ։ Ծարունակիր Արաքսիա։ Խմբովին կրկնել ազօթքը։

Բ. ԲԱԺԻՆ.

VI ՀԱՏՈՒԱԾԵՐ.

զ. Տէքունական Գլխաւոր Տօներ.

Լէ. Դաս.

ա. ՄՆՈՒՆԴ ՍՈՒՐԲ ԱՎՏՈՒԱԾԱԾՆԻ.

Մարիամ Սուրբ Կուահ ծնունդը.

Այսօր ձեզ մի սիրուն պատմութիւն պիտի պատմեմ—Լաւ ծնողների մասին. այնպիսի ծնողների՝ որ շատ բարեպաշտ, շատ ազօթաւէր և շատ Աստուածապաշտ ծնողներ էին։ Դրանք մարդ ու կին էին. իրար էլ շատ էին սիրում <sup>1)</sup>։ Զեր ծնողներն էլ այսպէս են։

—Այս. Նրանք միշտ ժամ են գնում, ալօթք են անում, պատահած ժամանակ՝ աղքատներին կերակուր են տալիս, կամ փող, կամ հաց, երբեմն էլ հին շորեր. ուխտ են գնում, մատաղ են անում և բաժանում են երբեմն Եկեղեցու դրանը կանգնած աղքատներին, երբեմն էլ աղքատ հարևաններին. մեզ համար ազօթում են, մեզ օրնում են։

Արեգնազանը լաւ ասաց։ Բայց ես մի ուրիշ բան պիտի ասեմ—ձեր ծնողները ուրախ են, ձեզ նման որդիք ունեն, ձեզանով ուրախանում են. իսկ կան ծնողներ՝ որ որդի չունեն, տխուր են և Աստուծուց խնդրում

1) Ուսուցիչը պատմում է դասի նիւթը. հարցերով աւելի մատչելի է անում. լետով պատմել է տալիս լառաջադէմներին։ Ալսպէս և միւս դասերը։

Ան—տալ իրանց մի, կամ երկու որդի, որ իրանք էլ ուրախանան:

—Եյ՞ կան. իմ փեսան որդի շունի և քանի տարի է խնդրում է, էլ ոչ ազօթք մնաց, ոչ մատաղ, ոչ ժամ, ոչ պատարագ. բայց շատեց նորան Սստուած և նա որդի շունի. ինքն էլ յոյսը կտրեց, էլ չէ խնդրում:

Մյ տեսար Համասփիւռ. քս փեսան յոյսը կտրեց, բայց այն ծնողներն—այն մարդն ու կնիկը որ նոյնպէս որդի շունէին և շատ տխուր էին՝ այնքան բարեպաշտ էին, այնքան հաւատով էին՝ որ յոյսերը չկտրեցին և միշտ խնդրում էին. Ցիշնւմ էք—որ ես ձեզ ասացի՝ թէ շուտ շուտ պիտի ազօթենք. որովհետեւ քանի որ մենք մօտ պահենք Մեր Մեծ Հօրը՝ այնքան էլ նա մեզ կսիրէ, կօրնէ և մեր խնդիրը կկատարէ. յոյսը կտրելը, յուսահատուելը լաւ բան չէ. յուսահատ մարդիկ ինչպէս պիտի ապրեն այս աշխարհում և կամ ինչպէս պիտի դրսեն: Այն ամուսինները, որոնց մասին ես պատմեցի և մենք սովորում ենք ալսօր, յուսահատուեցան, յոյսերը չկտրեցին և միշտ խնդրում էին: Վերջը վերջը ուխտ արին կամ խոստացան—որ եթէ Սստուած իրենց որդի պարզեցէ—կամ տղայ կամ աղջիկ՝ նրան ոչ թէ պահեն իրենց տանը, որ մեծանայ իրենց ծառայէ, իրենց օգնէ և ուրախացնէ՝ ոչ. այլ ուխտ արին, խոստացան ընծայել Սստուած Տաճարին: Բայց նվ ինձ կասէ—ինչնւ այդ բարեպաշտ ամուսինները ցանկանում էին անպատճառ որդի ունենալ. միթէ չկան այժմ ամուսիններ—մարդ ու կին՝ որ որդի շանեն, բայց գլուխները չեն պատռում որդի ունենալու համար:

—Ես կասեմ:

Սսա Տիգրանուհի:

—Եյժմ չէ. բայց այն ժամանակ ով որդի շունէր՝

կարծում էր Աստուած իրան պատժել է. աղքականները՝ բարեկամները, ծանօթները նախատում էին նոցա և առում—ձեր մեղքիցն է, որ Աստուած ձեզ որդի չէ տալիս. նոքա էլ ամաչում էին և խնդրում Աստուծուց—որ այն ամօթն ու նախատինքը վերցնի իրանցից մի որդի պարգելով:

Ճատ լաւ ասաց Տիգրանուհին. ճիշտ այդպէս է: Որդին՝ Աստուծոյ պարզնն է ծնողների համար. երանի՛ այն ծնողին՝ որ որդի ունի:

Ո՞վ կասէ ինձ—ինչն Աստուած որդի պարդեեցնրանց. չէր կարելի՝ որ չտար:

—Ե՛ս կըսեմ:

Ասա Մրաքսիա:

—Աստուած պարզնեց անոնց զաւակ մր. վասն զիանոնք չէին ուզեր ան զաւակն իրենց քէֆին, իրենց բաւականութեան համար՝ այլ կուզէին Աստուծուն տալուն համար և անոր համար ալ՝ որպէս զի նախատինքն ու ամօթն իրենցմէ վերցուէին. Բարեպաշտներուն Աստուած կլսէ. և վաղ թէ ուշ՝ անոնց խնդրուածքը կկատարէ:

Ճատ լաւ. այժմ ով ինձ կասէ—որմնք՝ էին այդ բարեպաշտ ամուսինները և նոր էին ընակում:

—Ե՛ս կըսեմ:

Ասա Հրահատ:

—Ադ բարեպաշտ ամուսիններն էին Յովակիմ և Աննան. անոնք կրնակուէին նազարէթին մէջ, որ Գալիլեային քաղաքներէն մէկն էր: Անոնք զաւակ չունէին, ազօթքով և հաւատով ստացան զաւակ մը—դուստր մը, որսւն անուանեցին Մարիամ:

Ուրախացան Յովակիմ և Աննան, որ որդի ունեցան—Այն, ուրախացան:

Զեր ծնողներն էլ ուրախանում են՝ որ որդի են ծը-  
նում:

— Այս. ուրախանում են:

Ինչ զանազանութիւն կայ ձեր ծնողների՝ և Յովա-  
կիմ ու Աննայի ուրախութեան մէջ:

— Ե՞ս կասեմ:

Ասա Տիգրանուհի:

— Մեր ծնողներն ուրախանում են—որ որդի ունե-  
ցան, կմեծացնեն նրան, իրենց կօղնի, կուրախացնի. իսկ  
Յովակիմ ու Աննան ուրախացան—որ Աստուած սիրում  
է իրենց, որսվճետե լսեց իրենց աղօթքը:

Ճարունակիր Լուսիկ:

— Նոքա Էլի ուրախացան նրա համար՝—որ իրենց շը-  
բերութեան ամօթը վերցուեցաւ. Էլ չեն նախատի բա-  
րեկամները թէ նրանց մեղքի համար Աստուած նրանց  
որդի չի տալի. Էլի ուրախացան նրա համար՝—որ ուխտ  
արին Աստուածն տալ իրենց որդին. ուրեմն եթէ Աստ-  
ուած պարզեց իրենց որդի՝ այդ կնշանակէ որ իրենց  
սիրում է և ընծան ընդունում է:

Ճատ լաւ ասացին Տիգրանուհին ու Լուսիկը. Բայց  
միթէ կան մարդիկ, որոնց ընծան չի ընդունում Աստուած:

— Ե՞ս կասեմ:

Ասա Արեգնազան:

— Վատ մարդկանց ընծան Աստուած չի ընդունի.

թէ կուզ ոսկիներ լինին:

Բայց ինչ ընծայ է ընդունում Աստուած:

— Ե՞ս կըսեմ:

Ասա Հրահատ:

— Աստուած կընդունէ սրտին ընծան միայն. Ան-  
ընծան՝ որ սրտով կտրուի՝ կընդունէ Աստուած. եթէ ան-

գամ շնչին՝ ալ ըլլայ։ Յովակիմայ ու Աննային ընծան  
սրտէն էր։ Սստուած ընդունեց։

Ճատ գեղեցիկ։ ճվ ինձ կկրկնէ—Մարիամ Սուրբ  
Կուսի ծննդեան յիշատակը երբ է կատարում մեր եկե-  
ղեցին։

—Ես կասեմ։

Ասա Տիգրանուհի։

—Մարիամ Սուրբ Կոյսի ծննդե սն յիշատակը մեր  
Եկեղեցին կատարում է Սեպտեմբերի 8-ին

Կրկնել խմբօվին—Մարիամ Սուրբ Կուսի ծննդեան  
յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Սեպտեմբերի  
8-ին <sup>1)</sup>։

Հրահատ։ պատմիր մի անգամ ամբողջ պատմութիւ-  
նը, թող ընկերուհիներդ լսեն։

---

Լ. Դ ա ս .

Ք. ԵՐԻՑ ԱՄԱՑ ԸՆՆԱՑՈՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի  
ՏԱՃԱՐՆ

Մարիամ Սուրբ Կուսի ընծայուիլը Տաճարին

Մենք սովորեցինք—որ խոստում կատարելը պարտա-  
կանութիւն է։ Յիշում էք։

—Մյն յիշում ենք—Հրահատն առաց։

Սպրիք, ապրիք, լաւ էք յիշում։ Այժմ լսեցէք թէ  
ինչ կանէին և ինչ կմտածէին Յովակիմ և Աննան՝ երբ

---

1) Անփոփոխ կամ անշարժ տօների մասին ամփոփ գա-  
ղափար տալ սաներին։

ատացան Աստուծուց մի աղջիկ զաւակ։ <sup>1)</sup> Կրկնիր  
Սրաքսիա:

— Անոնք առաջին տնգամուն կռւրախանային—վասն  
զի Աստուած լսեց աղօթքնին և զաւակ մը պարգևեց. ան-  
կէ ետքը փառք կուտային Արարչին, որ նախատինքն  
վերցուց իրենցմէ. բոլորէն ետք՝ կմտածէին խոստումնին  
կամ ուխտերնին կատարել:

Ո՞վ ինձ կասէ—չէին զղալ արդեօք՝ երբ երեք առ-  
յեկան աղջիկը կսկսէր մանգալ, թոթովել—այսինքն  
այնպէս խօսել, ինչպէս երեխաները նոր լեզու են լի-  
նում—նոր են սկսում խօսել, զազգեկլ, թռչկոտալ, ծի-  
ծաղել, գըրկել—համբուրել հայրիկին մայրիկին. չէին  
ասի—թէ այս առաջինը պահենք մեղ մօտ, իսկ եթէ  
երկրորդ որդի կտայ՝ այն կընծայենք Աստուծոյ Տաճարին։

—Ե՛ս կասեմ։

Ասա Արեգնազան։

—Ուրիշ ծնողներ, շատ կարելի է որ այդպէս անէ-  
ին—ափսոսային և զղային. բայց Յովակիմ ու Աննան  
քարեպաշտ ամուսիններ էին, Աստուծուն սիրում էին,  
նոքա այդպէս բան շարին՝ նոքա իրենց ուխտը կատա-  
րեցին։

Ճիշտ առացիր Արեգնազան. բայց նվ կասէ ինձ—  
ինչ կնշանակէ Տաճարին սուիրել, Աստուծուն ընծայել։

—Ե՛ս կասեմ։

Ասա Տիգրանուհի։

—Ինչպէս որ այս կուսանաց Անապատի կոյսերն են.

<sup>1)</sup> Դարձեալ պատմում է ուսուցիչը նոյն կարգով և ի-  
տու դիմում է սաներին հարցումներով. Բայց նիւթը պատմե-  
ցուց առաջ պէտք է ծանօթիւններ տալ նիւթի մասին, որ  
քմբունումը հեշտ լինի.

Նրանց էլ իրենց ծնողները ընծայել են Աստուծոյ Տաճարին:

Լաւ. բայց ինչու են ընծայել, ինչ պիտի անեն.

— Ես կասեմ:

Ասա Համասփիւռ:

— Տաճարին կծառայեն — կորբեն, կմարբեն Եկեղեցին և ինչ որ կայ այնտեղ. կաղօթեն, կերպեն, սուրբ գլբեր կվարդան, մեծ կոյսերից դաս կառնեն, կարդալ — գրել կովկորեն, Կրոն կովկորեն, ձեռագործով կպարապեն, սաղմոս կքաղեն:

— Ես ալ կըսեմ:

Ասա Հրահատ:

— Կան կոյսեր, որոնք հիւանդներուն, բանտարկեալ-ներուն, վշտացածներուն կայցելեն, ժողովրդին տներն կշրջին, կքարոզեն, կսորվեցնեն հաւատին գործը, երբեմն ալ տնային բժշկութիւններ կընեն:

— Ես ալ ըսեմ:

Ասա Արաքոիա:

— Ժողովրդին մէջ տարածուած վատ սովորութիւններուն դէմ կկոռւին կցուցնեն ան սովորութիւններուն վատ կողմերը, կքարոզեն, կխրատեն ձեռք վերցունել անոնց-մէ. և շատ ասանկ լաւ բաներ կընեն կոյսերը:

Հրահատն էլ, Արաքսիան էլ լաւ ասացին. բայց նը-րանց ասածները մեծ Կոյսերի համար է, փոքրիկ կոյսե-րը այլքան բան անել չեն կարող. նրանք կարող են այնքան բան անել՝ ինչքան որ Համասփիւռն ասեց:

Եյս բոլորը շատ լաւ. բայց Յովակիմ և Անայի գուատը — աղջիկը... անունը ինչ էր՝

— Մարիամ:

Եյղպէս շպէտք է առել, որովհետև ինչ Մարիամ, ձեր քնյը Մարիամը, կամ մօրաքնյը Մարիամը. այդպէս

ախալ կլինի ասել. աւելի լաւ է ասել—Սուրբ Կոյս Մարիամ կամ Մարիամ Սուրբ Կոյս:

Ուրեմն Յովակիմ և Ծննդյան դուստր Մարիամ Սուրբ Կոյսը երեք տարեկան հասակն որ առաւ՝ ծնողները պատրաստուեցան իրենց ուխտը կատարել. այսինքն՝ ընծայել Աստուծոյ տաճարին:

Եյժմ հարցնում եմ՝ ինչու Մարիամ Սուրբ Կուսին ծնողներն իրենք տարան և շյանձնեցին ուրիշին:

—Ե՞ս կըսեմ:

Ասա Հրահատ:

—Իրենք առին հետերնին. վասն զի երեք տարուան մանուկին չէին հաւատար օտարներու խնամքին. անկէ զատ իրենք ալ կուզէին երկրպագել Երուսաղէմայ Տաճարին և զոհանսալ Աստուծմէ, որ պարզեց իրենց աղջիկ զաւակ մը.

Ճատ լաւ. Հրահատն ասաց—թէ իրենք էլ կուզէին երկրպագել Երուսաղէմայ Տաճարին. բայց ինչու էին Երուսաղէմ գնում, միթէ նազարէթում Տաճար չկար:

—Ե՞ս կասեմ:

Ասա Նուարդ:

—Կար. բայց այնտեղ էին ուզում տանել—ասած ունէին: Եյստեղ Թիֆլիզումն էլ շատ անգամ ծնողները իրանց նոր ծնուած որդուն Թելէթ են տանում մկրտելու, կամ ծիրանաւորի Եկեղեցին, կամ Ճանաբարթ են տանում, կամ Ղաղախի Սուրբ Մարդիսը...

—Ե՞ս էլ ասեմ:

Ասա Շողիր:

—Ճատ անգամ հմնց քաղաքումը այս ու այն Եկեղեցին են չուզում իրանց երեխին մկրտելու, թէպէտ իրանց տան մօտ Եկեղեցի կայ. երբ քահանան ուզում է հասկացնել նրանց թէ ժամը՝ ժամ է. էստեղ լինի, էն-

տեղ լինի մէկ ա. այս ձնին, ցրտին, ցեխին աւելի լաւ չէ մօտիկ Եկեղեցի տանենք: Երեխայի ծնողները, կամ կնքահայրը, կամ ազգականները պատասխանում են — թէ ասած ունենք...

— Ես էլ ասեմ:

Ասա Երանեակ:

— Հարսանիքների ժամանակ էլ այդպէս են անում: Ճատ լաւ. ուրեմն նուարզը, Ջողերը, Երանեակը ասում են — թէ Նազարէթումն էլ տաճտր կար, բայց երևի ասած ունէին, որ Երուսաղէմայ տաճարին ընծայէին: Արդեօք ճիշտ ասացին այս երեքը. նվ կարող է ասել:

— Ես կըսեմ:

Ասա Արաքսիա:

— Ճիշտ չըսին անոնք. վասն զի Տաճար մը միայն ունէին Հրէաներն, ան ալ Երուսաղէմին մէջ. ուրիշ քաղաքներուն մէջ Տաճարներ չկային. կային սինագօգներ, որ կըսուի նաև ժողովրդանոց, ուր շաբաթ օրերուն կժողովուէին աղօթք ընելու, սուրբ գրքեր կարդալու. ատով ալ իրենց Աստուածալաշտութեան կարգն կկատարէին: Ասկէ հետեցնելու է — որ Յօվակիմն ու Աննան իրենց դուստրն Երուսաղէմ պիտի տանէին. ատանկ սովորութիւն մը կար անոնց մէջ:

Որտեղից գիտես Արաքսիա, երևի հօրիցդ ես լսել-որովէնետե դու ասացիր — թէ հայրդ ուսուցիչ է եղել:

— Ոյն, հօրմէս լած եմ. նա կհաւաքէր մեզի իրի-կունները և կսորվեցունէր մեզի:

Ճատ լաւ. ուրեմն Յովակիմ ու Աննան երեք տարեկան Մարիամ Սուրբ Կուսին հետերն առան և դնացին Երուսաղէմ: Բայց Երուսաղէմը հեռնւ էր Նազարէթից՝ թէ մօտիկ:

— Հեռու կլինէր:

— Մօտիկ կլինէր:

Ի՞նչքան հեռու կամ ի՞նչքան մօտիկ կլինէր:

— Ես կասեմ սովորել եմ:

Ասա Ըրեգնազան:

— Երեք օրուայ ճանապարհ էր:

Ոտքնվ կերթալին՝ թէ ձիով կամ կառքով:

— Երեխային դրկած ու ոտքով տանել չէին կարող:

որովհետեւ շատ հեռու էր — Երեք օրուայ ճանապարհ.

Իրենք էլ կյոզնէին, երեխան էլ կյոզնէր, մանաւանդ՝

եթէ անձրև. կամ ցեխ լինէր. Նրանք կերթային կամ

էշով, կամ եզնով, կամ ուղտով. դրանց վրայ թամբ են

սարքում կարպետից, կամ գորգից կամ իսկական թամբ

են դնում վրան և նստում ու ճանապարհորդում:

Ըրեգնազան, լաւ ասացիր, ապրիս. երեի քրոջիցդ  
ես սովորել:

— Այն. այդ բոլոր պատմութիւնները ես դիտեմ.  
Նա պատմում է ինձ և սովորցնում իմ բոլոր դասերը:

Բայց դու Համասփիւռ, ինչու զու էլ չես պատաս-  
խանում իմ հալցերին. չէ որ քո հայրը քահանայ է,  
այս պատմութիւնները դիտէ. ինչու չես սովորում  
նրանից:

— Փամանակ չէ ունենում:

Այսքան բաւական է այսօրուայ դասի համար. գալ  
դասին կշարունակենք:

### ԼԹ. Դաս.

Ինչպէս տեսանք անցեալ դասին. Յովակիմ և Մննան  
երեք օրից յետոյ հասան Երուսաղէմ. համնելուց յետոյ  
ի՞նչ արին:

Կրկնիր Հրահատ:

— Հանգստացան օր մը կամ երկու, ետքը առին հետերնին իրենց աղջիկն ու տարին Տաճարն. հոն հարցուցին — թէ ուր կըլլայ քահանան և կտնալէն ետք՝ պատմեցին իրենց գալուն պատճառն, իրենց ըրած ուխտն. քահանան ալ ընդունեց աղջիկն, իսկ ծնողներուն օրհնեց: Ծնողներն վերադառն իրենց քաղաքն — նազարէթ, իսկ Մարիամ Սուրբ Կոյսն հոն մնաց:

Ճարունակիր Սրաքսիա:

— Հոն տաճարին շուրջն բնակարան կդժնուէր շատ մը խուցերէ բաղկացած. հոն կկենային աղջիկներ, կսովորէին գրել, կարդալ, ետքը սուրբ գրքեր կկարդային, ձեռագործ կընէին, տաճարին մէջ կսպասաւորէին և իրենց մայրպետներուն ու քահանային հսկողութեան տակ կուսանէին ու կեանք կանցունէին մինչև տասն և չորս տարեկան հասակնին: Անկէ ետք՝ կերթային իրենց ծնողներուն մօտ:

Ճարունակիր Հրահատ.

— Ատանկ ալ եղաւ Մարիամ Սուրբ Կուսին հետ. երբ տասն և չորս տարուան հասակն առաւ՝ Քահանայապետին կարգադրութեամբ ուղարկուեցաւ Նազարէթ: Անոր ծնողներն տարիներ առաջ վախճանած էին. ուստի Սուրբ Կուսին խնամատարութիւնն յանձնուեցաւ Յովսէփ անուն մարդու մը. որն ազգական էր Սուրբ Կուսին և հիւսնու. թիւն կընէր.

Արաքսիան ու Հրահատը շատ լաւ պատմեցին. իսկ երբ է կատարում մեր Եկեղեցին Մարիամ Սուրբ Կուսի Տաճարին ընծայուելու յիշատակը:

Ե՞ս կասեմ:

Առաջ Տիկրանուհի:

— Մարիամ Սուրբ Կուսի Տաճարին ընծայուելու յի-

շատակը մեր Եկեղեցին կատարում է Նոյեմբերի 21-ին։  
Կրկնել խմբովին։

Հրահատ, պատմիր մի անդամ ամբողջ պատմութիւնը  
ամփոփ կերպով։

Գ. ԱՒԵՑՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԿՈՒՄԻՆ.

Հրեշտակը ուրախ լուր է քերոսմ Մարիամ Սուրբ  
Կուսին։

Դարձեալ մի նոր սիրուն պատմութիւն պիտի սո-  
պորենք, դուք շատ կսիրէք <sup>1)</sup>։ բայց տեսնեմ, ով կգտնէ՝  
թէ ում և կամ ինչի մասին պիտի լինի այս պատմու-  
թիւնը։

—Ես կասեմ,  
Ասա Արեգնազարան։

—Եյս պատմութիւնն էլ, ինչպէս ձեր պատմած երկու  
պատմութիւնները, Մարիամ Սուրբ Կոյսի մասին է որ  
հրեշտակը աշքալիս է տալիս նորան։

Սրեգնազանը գտաւ. երեկի էլի քոյրն է սովորցրել։  
Բայց աշքալիս խօսքը էլի բնչ տեսակ կարելի է ասել։

—Ես կասեմ։

Ասա Հերիքնազ։

—Աշքալիս խօսքը կարելի է ասել—լաւ խաբար։

1) Այս պատմութիւնը սաներից գիտցողը կպատմէ. եր-  
քեմն պէտք է թողնել, որ իրենք պատմն. ընկերների մէջ  
քարի նախանձ զարթեցնելու համար և հետաքրքրելու նոցա-  
ռւշադրութիւնը. իսկ ուսուցիչը պակասը կլրացնէ, և հարցե-  
րով ծաւալը կլանացնէ. Սաները ուրախանում են, երբ իրենք  
են պատմում և ոչ ուսուցիչը. բայց չպէտքէ թողնել որ մե-  
ծամուին։

—Ե՛ս կասեմ:

Ասա Արշալոյս:

—Խէր խարար:

—Ե՛ս կըսեմ:

Ասա Արաքսիա:

—Խարար և խեր խօսքերն Տաճկերէն պիտի ըլլան-  
չայերէն կըսեն ուրախ կամ բարի համբաւ, լուր. սա-  
կայն առ պատմութեան մէջ, ինչպէս հայրս ինձի պատ-  
մեր է՝ պէտք է ըսել—Մարիամ Յուրբ Կուսին աւետումն,  
որ բերեց Ընոր Ծստուծոյ հրեշտակն՝ երբ նա կաղօթէր:

Լաւ, բաւական է Արաքսիա, մի շարունակիր. դու  
գիտես, ես հաւատացած եմ. միայն ես ուզում եմ հարցեր  
տալ: Դուք ուրախանում էք չե՞ն, երբ ձեզ մի լաւ, մի ու-  
րախ լուր են բերում, մի ուրախ համբաւ են տալիս,  
ինչպէս որ դո՞ւք էք ասում—աշքալիս են տալիս:

Այս ուրախանում ենք:

Ճատ լաւ. իսկ եթէ այդ ուրախ համբաւը, աւե-  
տիքը մեծ բանի համար լինէր, որի մասին դուք ամե-  
նեին մտածած չկինէիք՝ ինչ կասէիք:

—Կուրախանայինք: —Վեր վկը կթոշէինք: —Կվա-  
ղէինք մայրիկին կասէինք:

—Ե՛ս կասեմ:

Ասա Ճողեր:

—Կհպարտանայինք:

—Ե՛ս կասեմ:

Ասա Հրանոյշ:

—Չէինք հաւատալ:

—Ե՛ս կասեմ:

Ասա Արեգնազան:

—Կհաւատայինք և կասէինք Ծստուծոյ կամքն է թոգ:

լինի այծպէս՝ ինչպէս նու է կամենում <sup>1)</sup>:

Արեգնազանը լաւ ասաց...

— Ե հարկէ լուր կատի, քոյրը նորան բռլոր դասերը  
սովորյնում է:

Ճամփրամ, այդ ինչ ասացիր. միթէ ուրախ շնս, որ  
նա ասաց. և կամ ուրախ շտիտի լինէիք դուք, երեխաւ-  
ներ, որ ձեր ընկերուհիներից մէկը կամ երկուսը կամ  
շատերը կարողանում են գտնել ուսուցչի տուած հարցի  
պատասխանը:

— Ե՞ս կըսեմ:

Ասա Հրահատ:

— Մեշուշտ ուրախանանք պիտի, վասն զի մեր ա-  
նունին համար ալ լաւ է, երբ մենք ամենքս ալ լաւ  
կսովորենք՝ մեր դասարանն կգովեն. անկէ դատ՝ Դուք  
մեզ սորվեցուցիք — թէ Սիրտ մը ունենալու ենք, Սիրտ  
մը՝ որուն սքրութիւնն ու մաքրութիւնն պակաս պիտի  
շըլլան պայծառ աստղին փայլէն և ազրիւրին ջրի պար-  
զութենէն ու ականակիտ լինելէն. ատանկ Սիրտ մը ու-  
նենալէն ետք՝ հարկաւ ուրախանալ միայն կրնանք մեր  
ընկերուհիներուն բարիքին վրայ և ոչ թէ տխրինք. ան  
առեն մեր աղ Սիրտը տուած կըլլանք Սրարչին. վաճե  
զի նա Սիրտ կռեգէ մեղնէ և ոչ ուրիշ բան մը. ինչպէս  
Դուք մեղի սորվեցուցիք:

Ճատ ապրիս, Հրահատ. ուրախացնում ես դու ինձ  
քո պատասխաններով. քեզ հետ և Արաքսիան, Արեգնա-  
զանը և էլի շատերը ։ Ե հարկէ, որքան էլ ձեր ընկերու-  
հիները շատ գիտենան; շատ պատմեն՝ լաւ պատմեն՝ այն-

<sup>1)</sup> Սաների տուած սոյնանման պատասխաններից իւրա-  
քանչիւրի վերալ կանգ պիտի առնէ ուսուցիչը. և որքան կա-  
րելի է՝ մատչելի բացատրութիւններ պիտի տալ՝ որ սաները  
իրենց ասածի սխալը կամ ուղիղը ըմբռնեն.

քան էլ դուք շատ կսովորէք, լաւ կսովորէք. մանաւանդ  
երբ լաւ լսէք: Ճիշտ է ասածներս:

—Ճիշտ է, շատ ճիշտ. Ըամիրամը սխալուեց. Նե-  
րեցէք, էլ այդպէս չի ասի:

Ճառ լաւ, շառ լաւ. ուրախ եմ, որ ձեր ընկերու-  
հու համար սիրտներդ ցաւում է, միշտ պէտք է միմեանց  
սխալներն ուղղէք, միմեանց համար բարի կամենաք, որ  
մնը սովորած Միրտն ունենաք: 2Է:

—Այս:

Այն ժամանակ էլ ձեր Մեծ Հայրը Բ'նչ կանէ ձեզ:

—Մեզ կսիրէ և կօրնէ և աւելի շնորհք կտայ մեզ:

Ճառ լաւ շառ լաւ: Այժմ մի բան հարցնեմ ձեզ,  
քիչ առաջ Սրաքսիան ասաց—թէ՝ հրեշտակն աւետիք  
տուաւ Սուրբ Կոյս Մարիամին երբ նա կաղօթէր...:  
Յիշնեմ էք:

—Այս.

Հապա տեսնեմ՝ ով ինձ կասէ—Բ'նչ կաղօթէր, Բ'նչ  
կխնդրէր Աստուծուց:

—Ե՛ս կասեմ:

Ասա Աստղիկ:

—Նորա հայրն ու մայրը վազուց վախճանուած  
էին և նա որը էք. ազգական Յովսէփի համար երկար  
կեանք կխնդրէր, որ իրան նայի, ինամի:

—Ե՛ս կասեմ:

Ասա Լուսնթագ:

—Նա կխնդրէր որ Մեծ Հայրը իրան, իբրև մի  
որբի, հայրութիւն էլ անի, մայրութիւն էլ. որ ինքը  
Յովսէփի մահից յետոյ դռնէ դուռը շընկնի, ինչպէս  
որ ես եմ...

Ինչնւ ես լաց լինում, Լուսնթագ, չէ որ Հրահատն  
էլ, երբ գեղարուեստի վերայ պատմում էր, յիշելով իւր  
հօրը՝ սկսեց լաց լինել. ես Բ'նչ ասացի՝ շասացի՝ թէ

որբերի հայրն էլ Աստուած է, որը մենակ չէ այս աշ-խարհքումը, որբի Ըստուածը մեծ է. Նա չի թողնի որ իւր որբ զաւակը կորչի. և էլի շատ այսպիսի խօսքիր ասացի. մոռացած այլպէս շուտով:

— Զէ. չեմ մոռացել. ի՞նչպէս կարող եմ մոռանալ Զեր խօսքերը. բայց ինչ անեմ, ամեն յիշելիս՝ լացո գալիս է ե...

Լուսնթագ, հերիք է. Մեծ Հայրը կնեղանայ—որ դասը խանգարում ես:

— Չեմ խանգարի, էլ չեմ լաց լինի:

Եպրիս, այլպէս պէտք է անես միշտ, որ Մեծ Հայրը քեզ սիրի: Դէ լաւ. այժմ էլի հարցնում եմ— Մարիամ Սսւրը Կոյսը ինչ կազօթէր. թէպէտ մի քա-նիսներն ասացին՝ բայց ուզում եմ իմանալ, կայ արդեօք ձեր մէջ զիտացող՝ թէ ինչ կազօթէր:

— Ես սորվեր եմ այդ պատմութիւնը. կրնամ պատմել:

Սրաքսիա, դու կպատմես. բայց տեսնեմ էլի նվ գիտէ:

— Ե՛ս էլ կարող եմ:

Դու էլ սպասիր, Արեգնազան:

— Ե՛ս ալ կրնամ պատմել:

Դու էլ սպասիր Հրահատ:

էլի նվ.

— Մենք չզիտենք:

Լաւ. ուրեմն թող պատմեն Սրաքսիան, Արեգնա- զանը և Հրահատը:

Սկսիր Սրաքսիա:

— Սուրբ Կոյս Մարիամն տասն և չորս տարեկան հասակն առնելէն ետք՝ Տաճարին քահանայապետն յայտ- նեց անոր իրենց կանոնն—թէ ադ հասակէն վեր աղջիկ- ներուն իրենք պահել չեն կրնար. անոնք պիտի դառ- նան իրենց ծնողներուն: Սուրբ Կոյս Մարիամն յայտ-

նեց քահանայապետին իր ծննդներուն ուխտի մասին, սակայն քահանայապետն օրնեց անսր և ուղարկեց նազարէթ, իրենց տաւնն Սուրբ Կոյսն գիտէք՝ թէ ժամանակն հասեր է երբ գայ պիտի աշխարհի Փրկիչն, սրտով կփափագէր Անոր տեսնել և մեռնիլ. ալ անկէ եաք կեանք չէր ուզեր. քանի որ սրբ էր՝ կմտածէր ծանրութիւն չպատճառել իւր ազգական Յովոչիկին, ան ալ ընտանիք ու որդիք ունէր. ծախքին վրայ ծախք չէր ուզէր աւելցնել...

Բաւական է, Սրաքսիա. շատ լաւ ես պատմում։ Հապա ասացէք ինձ, ով է հաւանում Մարիամ Սուրբ Կուսին, որ նա այնպէս մտածում է իւր ազգականի մասին։

— Ես շատ եմ հաւանում. ի՞նչ լաւ ազջիկ է. ո՞ւֆ հողիս կտայի նրան։

— Ես աւելի լաւ եմ հաւանում. նա որ այժմ լինէր և ինձ ասէր մեռիր ինձ համաշ՝ ես նրա համար կմեռնէի։

Լաւ, լաւ. Յասմիկն ու Սրբուհին այնքան շատ հաւանեցին, որ էլ դրանից աւելի հաւանելու համար խօսք չկալ ասելու. այժմ տեսնեմ՝ ով չէ հաւանում։

— Բոլորս էլ հաւանում ենք, սիրում ենք։ Նրա շարը տանեմ։ Երանի չէ՞ր որ նրա կիսի շափ լինէինք։ Մատաղ ըննեմ նրան...

Հերիք է լաւ. հաւատում եմ, որ բոլորդ էլ սիրում էք և հաւանում Սուրբ Կոյս Մարիամին։ Կռւգէիք որ Աստուած նորա խնդիրքը կատարէր որ նա ապրէր այնքան ժամանակ՝ որ տեսնէր աշխարհի Փրկիչն։

— Կուզէինք, կուզէինք սրտով։

Լաւ. իսկ եթէ աշխարհի Փրկիչը ուշանար, մի հարիւր, երկու հարիւր տարուց յետոյ գալու լինէր՝ կարնդ էր Մարիամ Սուրբ Կոյսը այդքան տարի ապրել։ Այն ժամանակ ի՞նչ կուզէիք։

— Կուգէինք որ ապրէր։  
— Այդքան տարի ապրել կլինի։  
— Կծերաննար էլ ոչ ինչ չէր տեսնի։  
— Ինչնու. եթէ Աստուած ուզէր՝ նա լաւ էլ կապրէր,  
**աշքերն** էլ լաւ կտեսնէին։

Լաւ. տեսնենք Արեգնազանը Բ'նչ կասէ։ Արեգնա-  
զան, դու էլ խոստացար պատմել, հապա շարունակիր։

— Մուրբ Կոյս Մարիամը, երբ դեռ Տաճարումն  
էր՝ լսէլ էր որ աշխարհի Փրկչի գալու ժամանակը մօ-  
տացել է, եկել-հասել է. նա լսել էր էլի իւր ազգական  
Յովսէփից, դրա համար էլ խնդրում էր որ տեսնի աշ-  
խարհի Փրկչին ու այնպէս մեռնի։

Արեգնազանը գտաւ. այդպէս է, ճիշտ է. որովհետե-  
գրէթէ բալոր չըքաները, մինչև անգամ ուրիշ ազգերիցն  
էլ կային գիտացողներ՝ թէ աշխարհի Փրկչի կամ Մե-  
սիայի գալու ժամանակը մօտացել է. և ամենքն էլ  
սպասում էին և ուզում էին տեսնել նորան։ Երբ դուք  
լսում էք թէ Թագաւորը կամ Կաթուղիկոսը գալու է  
Թիֆլիս՝ չեք ուզում այնպէս անել՝ որ կարողանաք  
տեսնել։

— Այս, սպասում ենք անհամբեր. գալու օրը՝ այն  
փողոցում, որտեղ պիտի անցնի թագաւորը կամ կաթողի-  
կոսը, եթէ ազգական կամ բարեկամ ունենք՝ գնում ենք  
նրանց տունը և լուսամուտների առաջ կամ պատշգամբ-  
ներում աթոռներ ենք դնում, նստում ենք կամ կանգ-  
նում և առաւտից շատ վաղ սպասում՝ թէ երբ պիտի  
գայ թագաւորը և անցնի, երբ պիտի գայ չայրիկը և  
անցնի, որ մենք տեսնենք։ Ուրեմն աշխարհի Փրկչին  
աւելի շատ սպասողներ կլինէին. որովհետև նա բոլոր  
աշխարհի համար էր գալի։ Այդ սպասողներից մէկն էր  
և Մարիամ սուրբ կոյսը։

Բաւական է Արեգնազան, լաւ ասառեղ. շարունա-

կիր այժմ չըահատ, դու էլ խոստացար պատմել:

— Անգամ մը, երբ Մարիամ Սուրբ Կոյսն իր սենեկին մէջ կաղօթէր՝ յանկարծ լուսաւոր հրեշտակ մը կտեսնայ իր առջին կանգնած, կվախնալ, գլուխն քաշ կձգէ։ Հրեշտակն կըսէ. «Ուրածիս եղիր Մարիամ, Տէրը քեզ հետ է, և մի վախնար. դուն կծնես որդի մը, անունն կդնես Յիսուս, նա Մեծ կըլլայ, և Բարձրեալին Որդի կըսուի։ Անոր կուտած Կաւթին աթոռը. ան աթոռին վրայ յաւիտեան կթագաւորէ. Անոր թագաւորութեան վախճան ու վերջ շրլլար։

Հապա մի հարց տամ ձեզ—կսպասէր Մարիամ Սուրբ Կոյսը՝ թէ իրանից պիտի ծնուէր աշխարհի Փըրկիչը, թէ ինքը նրա մայրը կլինէր և նա իւր որդին։

— Ե՞ս կասեմ։

Ըսա Մաքրուհի։

— Կսպասէր. որովհետեւ ինքն այնքան սուրբ ու մաքուր աղջիկ էր՝ որ ուզում էր միշտ ծածարում մնալ. այդ շկատարուեց, յետոյ խնդրեց Ստուծուց, տեսնել աշխարհի Փրկչին և մեռնել։ Նա չէր սիրում այս աշխարհը, նա արժանի էր մայր լինելու Փրկչին. ուրեմն կսպասէր։

— Ե՞ս էլ կասեմ։

Ըսա Լուսաբեր։

— Մաքրուհին ասում է—կսպասէր. եթէ նա սպասում էր՝ հապա ինչու էր ուզում տեսնել և մեռնել, ինչու չէր խնդրում՝ որ ինքը լինի նորա մայրը։

— Կընամ պատասխանել։

Կարող ես չըահատ. ասա և վերջացրու պատմութիւնը։

— Մաքրուհին ճիշտ ըսաւ. Մարիամ սուրբ Կոյսն Ստուծոյ առջին արժանաւոր էր. սակայն ինքն մանու-

շակի մը նման համեստ ըլլալով, ինք զինք չէր դովեր,  
իրեն արժանիք ինք չէր գնահատեր, անոր համար ալ  
երբ հրեշտակին աւետիքն առաւ՝ փոխանակ հպարտա-  
նալու, մեծամտելու, ինքինք բանի մը տեղ շղնելով՝ խո-  
նարհաբար պատասխան տուաւ հրեշտակին ու ըստ. «Ես  
Սստուծոյ աղախինն եմ. թող ըլլայ ալնպէս՝ ինչպէս ին-  
քըն Սստուած կլամենայ». աս խօսքէն ետք հրեշտակին  
հեռացաւ. ուրիշ աղջիկ մը կրնար ինքինք մտածել—թէ  
ես արժանի եմ. վասն զի կուզէի կոյս մնալ՝ չթողին.  
ուխտաւոր եմ ծնուած. ես ուրիշ աղջիկներուն պէս՝ աշ-  
խարհ մոնախ բնաւ. մաքէս շեմ անցուցեր. ես գիշեր ու  
ցորեկ աղօթքով կանցունեմ օրս. չեմ գուարճանար, չեմ  
զբոսներ, հագուստներուն ու գարդարանքներուն շեմ փա-  
փաքեր, ինձմէ արժանաւորն ով կլայ. հարկաւ ինձմէ  
ծնուէր պիտի Փրկիչն:

Ճարունակիր Արարսիա:

— Ուրիշ աղջիկ մը ասանկ կմտածէր, իսկ Մարիամ  
սուրբ Կոյսն այլ կերպ կմտածէր—թէ՝ միթէ ես պի-  
տի որ արժանանամ Փրկչին մայր ըլլալու. Ես՝ խեղճ,  
որբ աղջիկ մը. իշխաններուն աղջիկներ կան, մեծա-  
տուններուն աղջիկներ կան, թագաւորներուն աղջիկներ  
կան, ինձմէ շատ աւելօք խելքով, չորհքով աղջիկներ  
կան. ես ինչ արժանիք ունիմ՝ որ արժանի ըլլամ Փրկ-  
չին մայր կոչուելու. ասոր համար ալ ըստ. «Ես Սստու-  
ծոյ աղախինն եմ». ուզելով ըսել—ոչ թէ Բարձրեալի Որ-  
դին ծնելու՝ այլ Սստուծուն աղախին ըլլալու միայն ար-  
ժան զիս կը սեպեմ. սակայն եթէ Սստուած կամեցել է՝  
ես Ծնոր կամքին հնազանդ աղախին եմ:

Ճատ գեղեցիկ: Ծուրբ Կոյս Մարիամի Աւետման յի-  
շատակը մեր Եկեղեցին կատարում է ապրիլի 7-ին:  
Կրկնել խմբովին:

Այս երեք առների պատմութիւնները գալ դասին  
կհարցնեմ <sup>1)</sup>:

Դ. ծնունդ Քրիստոսի.

Խ. Դաս.

Կրկնութիւն:

Կուզէիք ուս հրեշտակի, Մարիամ Սուքը Կուսին,  
տուած աւէտիքը կատարուէր:

— Կուզէինք:

Կուզէիք շնւտ կատարուէր՝ թէ ուշ:

— Կուզէինք շնւտ կատարուէր:

Բայց կարնդ էր և չկատարուել:

— Ո՞չ. հրեշտակը սուտ չէր ասի:

Ո՞վ ինձ կասէ՝ թէ ինչ դաս պիտի առնենք մենք  
այսօր:

— Ես կասեմ:

Սսա Արեգնազան:

— Մեր այսօրուայ դասը պիտի լինի հրեշտակի  
խօսքի կատարուելը. այսինքն մեր տէր Յիսուս Քրիստոսի  
ծնունդը:

Շատ լաւ: Դուք երեխայի ծնուելու մասին գիտէք, չէ:

— Այս:

Երեխայի ծնուելուց առաջ և յետոյ ինչեր են պատ-  
րաստում և կամ ինչ են անում. ով կարող է պատմել:

— Ես կպատմեմ:

Պատմիր Լուսիկ:

— Երեխայի ծնուելուց առաջ պատրաստում են նրա  
համար բարուր:

<sup>1)</sup> Բացատրել սաներին—որ անփոփոխ կամ անշարժ  
առներից երեքը սովորեցինք.

Բարուր չեն ասում. պէտք է առել բալթով կամ խան-  
ձարուր:

Պատրաստում են նրա համար օալուլ կամ խան-  
ձարուր, օրօրոց և օրօրոցի հարկաւոր բաները: Երբ  
երեխան ծնուռմ է՝ բալուլում են նորան և բարձի վերայ  
են դնում, որ փափուկ լինի. իսկ մի քանի օրից յետոյ՝  
օրօրոցումն են դնում:

Հապա տեսնենք այդպէս եղաւ և Յիսուսի ծնունդը:  
—Ե՞ս կըսեմ:

Դեռ չէ Արաքսիա, մի քիչ սպասիր. մի քանի հար-  
ցեր էլ տամ, յետոյ պատմիր: Ո՞վ գիտէ ձեղանից, թէ  
թագաւորը որ ուզում է իմանալ քանի հոգի կամ քա-  
նի ընտանիք են իւր տէրութեան մէջ, որ տեղ են կե-  
նում, ինչնվ են պարապում ինչ է անում, որ իմանայ:

—Ե՞ս կասեմ:

—Ես էլ գիտեմ:

—Ես տեսել եմ թէ ինչ է անում:

—Ես լսել եմ հօրիցս:

Հեղինէ, Շահանդախտ, Եսթեր, Նարգէս. դուք չորսդ  
էլ ասում էք—թէ գիտէք. հապա նարգէս, դու ասա՝ ինչ  
որ հօրիցդ լսել ես:

Հայրս պատմում էք—թէ սորանից շորս թէ հինգ  
տարի առաջ այստեղ Թիֆլիսում պերեպիս եղաւ...

Սպասիր նարգէս. պեղենպիս՝ հայերէն ինչպէս կա-  
մեն, շղիտես:

—Զգիտեմ:

Ո՞վ գիտէ:

—Զգիտենք:

Հրահատ, Արաքսիա դուք էլ շգիտէք:

—Զենք լսել:

Հատ լաւ, ես կասեմ: Երբ թագաւորը կամենում է

իմանալ իւր տէրութեան մէջ ապրող հպատակ ժողովրդի թիւր—թէ ինչքան հոգի են ապրում իւր տէրութեան մէջ՝ հրաման է արձակում որ որոշեալ մարդիկ ընտրեն իւրաքանչիւր քաղաքներից ու գիւղերից, որոնք սպարտաւոր են թաղէ թաղ շրջել, տները մտնել և նշանակել իրենց ցուցակներում՝ թէ իւրաքանչիւր տան կամ ընտանիքի մէջ բանի հոգի են, ինչնի է պարապում իւրաքանչիւրը, նոցա տարիքը մինչեւ անգամ և բնակութեան տեղը։ Այս բոլոր իրենց հաւաքած տեղեկութիւնները յետոյ յայտնում են թագաւորին. և նա իմանում է թէ նրան են իւր տերութեան մէջ ապրող մարդիկը։ Անայս գործողութիւնը ասւում Աշխարհագիր։ Այժմ հասկացած։

— Այս. և չենք մոռանալ։

Լաւ. այժմ մի ուրիշ հարց—Մենք Հայերս որ տէրութեան մէջ ենք ապրում։

— Ես կասեմ։

Ասա Զարմաննդնւխտ։

— Ռուսաց տէրութեան մէջ։

Ուրեմն մենք որ տէրութեան հպատակն ենք։

— Ես կասեմ։

Ասա Աշխէն։

— Մենք Ռուսաց տէրութեան հպատակն ենք։

Եւ ումն ենք հարկ տալիս։

Ես կասեմ։

Ասա Զարուհի։

— Մենք հարկ ենք տալիս Ռուսաց Թագաւորին։

Ճատ լաւ. այժմ ով կարողէ ինձ ասել—Հրէաները որ տէրութեան մէջ էին ապրում, ով էր այդ տէրութեան թագաւորը, ումն էին հարկ տալիս Հրէաները և ինչն։ Զգիտէր... Լաւ. ես կասեմ։

Հրէաները կենում էին իրենց երկրում—Պազեստինում. իսկ Պազեստինը զանուում էր Հռովմայեցւոց իշխանութեան տակ. Հռովմայեցւոց Թագաւորն էր Օգոստոս կայսրը. Հրէաները հարկ էին տալիս Հռովմայեցւոց թագաւորին, որովհետև Հռովմայեցւոց տէրութեան հպատակն էին:

Ո՞վ ինձ կպատմէ—ինչ հբաման արձակեց Հռովմայեցւոց Օգոստոս կայսրը, երբ և ինչ եպաւ:

—Ես կըսեմ:

Ասա Արաքսիա. բայց այս բոլոր հարցերիս պատասխանելով՝ ինչ պատմած կլինես:

—Աս բոլոր հարցերուն պատասխանելով՝ պատմած կըլլամ Յիսուս Քրիստոսին ծնունդն:

Ճատ լաւ, դէ պատմիր. իսկ դուք, երեխայք, լաւ լսեցէք:

—Ես պատմեմ պիտի Յիսուս Քրիստոսի ծնունդն—Հռովմայեցւոց Օգոստոս կայսրն հրաման մը հանեց իր տէրութեան մէջ աշխարհագիր ընելու. և ամենքն ալ ադ համարաթուին ցուցակին մէջ պիտի մտնային. ասոր համար ալ Յովսէփն ու Սուրբ Կոյս Մարիամն ելան Նազարէթէն և գացին Բեթղեհէմ...

Սպասիր Արաքսիա: Ո՞վ ինձ կասէ—ինչն նազարէթում շցուցակագրուեցան. ինչ հարկաւոր էր նրանց Բեթղեհէմ դնալ: Զգիտէք:

—Ոչ, չգիտենք. Դուք պատմեցէք:

Լաւ, ես կասեմ. նրանք գնացին Բեթղեհէմ այն պատճառով, որ հրամայուած էր—պապերի քաղաքում ցուցակագրուել. իսկ Սուրբ Կոյս Մարիամը և նորա աղքական Յօվսէփը Դաւթի ցեղիցն էին. Բեթղեհէմն էլ Դաւթի քաղաք էր ասւում, որովհետև Դաւթի Թագաւորը Բեթղեհէմումն էր ծնուել և պապ էր հաշում

Մարիամ Սուրբ Կոյսին. այդ էր պատճառը՝ որ Մարիամ Սուրբ Կոյսը և նորա տղական Յովսէփը գնացին Բեթ- ղանէմ, այնտեղ ցուցակագրուելու. իրոկ պատական քաղաքում.

Ժարունակիր Արարուիտ:

—Գացին Բեթղանէմ, հակառակին պէս տներն բոլորն բռնուած էին. տղատ տուն մը չգտան, ելան դաշտն ու հոն այլ մը տեսան. ադ այրին մէջ հովիւներն կպահէին իրենց ոչխարներն անձրեւ ու վատ եղանակին. և որով- հետև եղանակն լու էր՝ անոնք դուրսը կպահէին ոշ- խարներն և այրն ազատ էր. մտան այրն և գիշերին ծնաւ մանուկին, խանձարուրին մէջ բալուեցին և մսրին մէջ դրին:

Բառական է. հապալ ասացէք ինձ՝ եթէ Դաւիթը թագաւոր էր և Մարիամ Սուրբ Կոյսն ու Յովսէփն էլ Դաւիթի ցեղիցն էին՝ ուրեմն թագաւորի ցեղիցն էին, չե-  
—Այս:

Լաւ. իսկ Մարիամ Սուրբ Կուսից ճգ պիտի ծնուէր, մէմն էին ովասում Հրէաները, հրեշտակը ինչ աւետիք տնւեց:

—Մարիամ Սուրբ Կուսին ծնուէր պիտի աշխարհի Փրկիչն. Հրէաներն Ըստր կսպասէին. իրին թագաւորի- հրեշտակին անետիքն ալ ադ մտքով էր. վասն զի նու ըսաւ—թէ իր հօր Դաւիթի գահին վրայ պիտի թագա- ւորէ յաւիտեան և Ըստր թագաւորութեան վերջ ըլլա- լու չէ:

Հրահատը լաւ ասաց. բայց տեսէք ինչ կայ—եթէ Սուրբ Կոյս Մարիամից ծնուած մանուկը Դաւիթի ցեղիցն էր, աշխարհի Փրկիչը պիտի լինէր և Հրէաների թագա- ւորը՝ ինչու նա մսուրի մէջ ծնաւ, ինչու պալատների

մէջ շծնաւ, ինչու Բեթղէհէմաւմ մի տեղ շգտնուեցաւ  
Նորա համար: Զէք կարող ասել:

— Դուք ըսէք, աէք հայր, յետոյ մենք<sup>1)</sup>:

— Դուք մեզի ըսիք այոօր և ասկէ առաջ ալ ըսած  
էք—թէ Աստուած ոիրտ կուզէ մեզմէ. հարստութիւն,  
փառք, փափուկ կեանք Անոր համար ոչինչ են. յուսա-  
հատութիւն նա չը սիրէք. նա կուզէ՝ որ աղքատութե-  
նէն մենք շվախնանք. նա կուզէ՝ որ շար գործեր չըլո-  
նենք. աղքատութիւնն թէ որ մեր խելքէն, մեր յիմա-  
րութենէն չէ՝ այլ մեր ծնողներէն է մեզի իջեր՝ ամօթ  
չէ և մենք ամշնալու չենք. ինքն Գաւիթ մարդարէն ալ  
հովութիւն կընէք, ոչխարներ կարածեցուներ, աղքատ  
հօր մը զաւակ: Ասկայն Աստուած անոր բարձրացուց,  
թագաւոր դրաւ Խսրայէլին վրայ. աղպէս ալ հոս կտես-  
նանք—թէն նոյն Գաւիթի ցեղին էին Մարիամ Սուրբ  
Կոյսն և անոր աղգական Յովսէփն՝ բայց աղքատ էին,  
աղքատ ծնողներէն էին. և աղքատութենէն շվախցան,  
փառն զի մեղք մը շոնէին անոր մէջ, և աղոր համար ալ  
այրին մէջ գտան իրենց իջեանն. և Յիսուս Քրիստոս՝  
ոչ աղքատներուն պաշտպանն պիտի ըլլար: նախ ինքն  
առաւ իր վրայ աղքատութեան ծանրութիւնն՝ աղքատ  
մառութին մէջ ծնուելով. ուր ոչ փափուկ բարձեր կային,  
ոչ օրօրս մը և ոչ օրօրոցին պարագայք: որպէս զի մար-  
դիկ աղքատութենէն չվտինան, ոչ ալ ամշնան:

Ճատ լաւ. շարունակիթ. Ըրապսիա:

— Ան ապեն հոգիւներն, որ գիշերուն բացօկեայ  
դաշտին մէջ իրենց ոչխարներուն պահպանութիւն կընէին:  
Դիյս մը տեսան աշքերնուն առջին ահարեկուած կուզէին

<sup>1)</sup> Ուսուցիչը պիտի բացատրէ և սաներից ձեռնհասին  
կրկնել տալ. ինչպէս և ալստեղ է լինում.

փախչել. սակայն հրեշտակն միամտացուց անոնց ըսելով· —մի վախնաք. վասն զի մեծ ուրախութիւն մը պիտի աւետարանիմ ձեզ, որ պիտի ըլլայ բոլոր ժողովրդին համար. այսօր Փրկիչ մը ծնաւ ձեզի համար, որ Դաւթիւն քաղաքին մէջ Օծեալ ծէր է. և աս նշանն կուտամ ձեզի—հոն կգտնաք մանուկ մը խանձարուրին մէջ փաթաթած և մսուրին մէջ դրած։ Հրեշտակին աս, աւետիքէն ետք՝ շատ մը հրեշտակներ երկցան օդին մէջ ու սկսան երդել. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և լերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն...»։

Հատ լաւ. ես կասեմ թէ ինչ են նշանակում այդ խօսքերը—փա՛ռք թող լինի Աստուծուն երկնքում, խաղաղութիւն թող լինի երկրի վրայ և սէր, հաշտութիւն, հաճ ու հաւան յարաբերութիւն թող լինի մարդկանց մէջ. վասն զի Փրկիչը ծնաւ, խաղաղաբարն եկաւ հաշտութիւն բերաւ, չօր սէրը տարածուեց նորա որդոց—բոլոր մարդկանց մէջ։

### Հարունակիր Արաքսիա։

—Աս աւետիքն որ առին հովիւներն՝ իրարու ըսին.— «Եկէք երթանք մինչև Բեթղեհէմ և տեսնանք՝ ինչ պիտի ըլլայ ծիրոջ, մեզի ցուցուցած, նշանն»։ Առին հետերնին ոչխարնին և գնացին. ոչխարնին գուրսը թողին, իրենք այրն մտան, տեսան—Աստուածային Մանուկն խանձարուրին մէջ փաթաթած՝ մսուրին մէջ դրած է։ Ծունկի եկան, խոնարհ երկրապագութիւն մը տուին և առանց ձայն մը հանելու՝ դուրս ելան այրէն։ Մարիամ Աստուածամայրն սքանչացել էր աս անցքին վրայ և կը խորհէր իր մտքին մէջ աս բաներուն վրայ. իսկ հովիւներէն աս անցքի մասին լսողներն՝ կզարմանային հովիւներուն խօսքերին վրայ։ Յիսուս Քրիստոսի ծննդեան

Հիշատակն մեր Հայոց Եկեղեցին Յունվարի վեցին կկատարէ միշտ առփոփնչն՝<sup>1)</sup>:

Հապա երեխայք, լաւ պատմեց Արաքսիան.

— Հատ լաւ պատմեց:

Հասկացաք լաւ:

— Հասկացանք. այժմ հասկանում ենք դրանց լեզուն և շատ լաւ կսովորենք մեր սիրելի Յիսուս Փրկչի ծննդն-դեան պատմութիւնը:

Լաւ պատրաստեցէք:

Յ. ՔԱՌԱՍՆՈՐԵԱՑ ԳՐԻՍՏՈՍԻ ԳԱՅՈՒՄԾՆ Ի ՏԱՃԱՐՆ ԿԱՄ  
ՏԵԱՌՆԸՆԴՆԴԱՌԱԶ.

Քառասուն օրական Քրիստոսին տանում են Տաճարը.

ԽԱ ԴԱ Ա.

Կրկնութիւն:

Չեզանից ով է տեսել—որ երբ նորածին երեխան մկրտուելուց յետոյ քառասուն օրական է զառնում՝ ի՞նչ են անում ծնողները:

— Ես կըսեմ:—Ես ալ կըսեմ:—Ես դիտեմ ու տեսել եմ:— Ես էլ կասեմ, մեր գիւղումը տեսել եմ:

Արաքսիա, Հրահատ, Հերիքնազ, Աշխէն դռւք գիտէք շորսդ էլ. Հապա ընտրեցէք ձեր միջից որին ուզում-էք՝ և թող նա ասի:

— Մենք չենք կարող. Դուք նշանակեցէք:

Հապա դասարանը թող ըստրէ ու նշանակէ:

Հրահատը թող ասի:— 2է. Արաքսիան:— Նրանք յօդ-

1) Սաների ուշադրութիւնը գրաւել—որ երրորդ աշարժ առօնն են սովորում:

Նած կլինեն. Հերիքնազը թող ասի:—2է Աշխէնը առի: Որովհիտե դուք չկարողացաք նշանակել այս շղրսից մէկին՝ ես Արեգնազանին կատիմ, որ նա ասի. կուզէք:—Կուզենք, կուզենք:

Արեգնազան կարող ես ասել:

—Կպրող եմ:

Ասա:

—Երբ նոր ծնուած և մկրտուած երեխան քառասուն օրական է դառնում՝ ծնդղները տանգում են նորան Եկեղեցի. հետներն էլ տանում են երկու աղաւնի. ազաւնիները թողնում են Եկեղեցում, մայրը երեխային գրկած և հայրն էլ կոգքին՝ շոքում են, քահանան շուրջառ ծածկած՝ աղօթքներ է կարդում և յետոյ Խաչով ու Աւեպաքանով «Պահպանիչ» է ասում նրանց, Խաչն ու Աւետարանը գլխների վրայ դրած, Թընում է նրանց և «Հայր մեր»-ով արձակում:

Լաւ ասաց Արեգնազանը. բայց այդ ամեն տեղ և ամենքն են կատարում մեղանում՝ թէ տեղ տեղ և ոժոնք միախ:

—Ես չեմ տեսել:—Մեր երեխաներից ոչ մէկին քառասուն օրական չեն տարել Եկեղեցի.—Մեր գիւղումը 70 տուն չայ կայ. բայց մէկ ընտանիք կայ, որ իւր երեխաներին, երբ դառնում են քառասուն օրադրան՝ պանում են Եկեղեցի:—Մեր կողմերն շատերն կընեն:

Ուրեմն լսեցիք—Եղսոն ասաց—չի տեսել. Արփենիկին ասաց—իրանց երեխաներից ոչ մէկին քառասուն օրական չեն տարել Եկեղեցի. Աշխէնն ասաց—իրանց գիւղում 70 տուն չայերից մէկ ընտանիք միայն կատարում է այդ սովորութիւնը. իսկ չըահատն ու Արաքսիան—որ իրանց կողմերը շատերը կատարում են այդ սովորութիւնը. Պաշանակէ՝ քառասուն օրական երեխային Եկե-

դեցի տանելու սովորակթիւնը պարտադիր չէ ամենի համար. այլ ազատ—ով կամենում է։ Սակայն այդպէս ազատ էր արդեօք և չըէաների մէջ. ով գիտէ։

— Ե՞ս գիտեմ։—Ե՞ս էլ։—Հայրս ինձ պատմել է։—Քոյրս ինձ սովորցրել է։—Ինձ կնքահայրս է պատմել, երբ քրոջս միրտելուց յետոյ տուն ընթան։

Ծան լու. Անտհուր, Զարաւհին, Համասփիւռը, Արնգիազը, Լուսնթազը գիտեն. առաջին երկուան իրենք իրմաց գիտեն. երրորդին՝ հայրն է սովորցրել. շորբարդին՝ քոյրը, հինգերորդին՝ կնքահայրը։ Համասփիւռը թաղ պատմէ։

— Հրէաների մէջ սովորութիւն կար, որ քառասուն օրուայ երեխին ժամ էին տանում...

Ի՞նչպէս պէտք է ասել, որ աւելի սրգիղ լինի։

— Ե՞ս կասեմ։

Ասա Արեգնազան։

— Եկեղեցի՝ էին տանում։

Աւելի ճիշտ կլինի՝ եթէ առէք տաճար էին տանում<sup>1)</sup>։

Չարունակիր Համասփիւռ։

— Տաճար էին տանում. ու էլի յետ տուն էին քերում։ Համասփիւռը շատ կարծ պատմեց։

Նս կպատմեմ, լսեցէք—Հրէաները մի մարզարէ ունէին, անունն էր Մովսէս. Աստուած Մովսիսին օրէնքներ էր տալիս ու սովորցնում. Մովսէսն էլ այդ օրէնքնելը ժողովրդին էր սովորցնաւմ. այդ օրէնքներից մէկն էլ այն էր—որ երբ Հրէայ ընտանիքի մէջ առաջնեկը կտժ առաջին որդին...

1) Բացատրել—թէ բնչու Տաճար և ոչ Եկեղեցի։—Տաճար՝ իբրև աղօթատուն. Եկեղեցի՝ իբրև Հաւատացեալների՝ ժողով կամ համախմբումն.

Հապալ տեսնեմ ով գիտէ—էլի բնչպէս կասեն առաջին որդուն:

—Ես կըսեմ:

Ասա Արաքսիա:

—Առաջին ծնունդն՝ կրսուի անդրանիկ:

Այդպէս է, երբ անդրանիկ որդին տպայ էր ծնւում՝ ծնողները ծնունդից քառասուն օր անցնելուց յետոյ տանում էին Երուսաղէմ. հետներն էլ առնում էին զոհի համար, հարուստները, մի տարեկան գառն, իսկ աղքատները՝ մի զոյգ աղաւնի կամ տարակ<sup>1)</sup>. զօհը ընծայում էին ծանարին, երեխային օրնում էր քահանայափետը: Ուխտի օրերն անցնելուց յետոյ՝ վերադառնում էին տուն:

Կարնդ ես շարունակել Արեգնազան.

—Կարող եմ:

Ճարունակիր:

—Այդպէս էլ արին Մարիամ Սուրբ Կոյսն և Յովսէփը—երբ Յիսուս Քրիստոսը քառասուն օրական եղաւ, առան նորա իրենց հետ մանուկին և մի զոյգ աղաւնի և ճանապարհ ընկան դէպի Երուսաղէմ օրէնքը կատարելու: Այնտեղ Երուսաղէմում ապրում էր մի ծերունի, արդար մարդ՝ Սիմէօն անունով. նա խնդրել էր Աստուծուց—կեանք տալ իրեն մինչեւ այնժամանակ՝ երբ պիտի յայտնուի խոստացած Մեսիան կամ Փրկիչը, ինքը տեսնի նորան իւր աշքով, յետոյ միայն մեռնի: Աստուծած լոել էր նորան և կամեցնել էր—որ ապրի. և ահա նա կենդանի է զեռ. և երբ Յիսուսին տարան ծանարը, նա այդ իմացաւ Սուրբ Հոգու զորհքով և գնաց ծանարը: Ճատ լաւ. շարունակիր Լուսնթագ:

1) Հասկացնել—թէ որն է տատրակ թռչուններ.

—Երբ մտաւ Տաճարը, տեսաւ Մարիամ Սուրբ Կուսանին, մանուկը գրկին, իսկոյն իմացաւ—որ նա է խոստացած Մեսիան. առաջ գնաց, ծունկ շղթեց, երկրպագեց. վերկացաւ, առաւ իւր գիրկը երեխային և ասաց. «այժմ մահ տուր ինձ Տէր. որովհետեւ իմ աշքերը տեսան աշխարհի Փրկչին». օրհնեց և տուեց մօրը:

Ճարովնակիր Լուսնթագ:

—Տաճարումը կար և մի ծեր կին, Աննա անունով, նա 84 տարեկան էր, եօթ՝ տարի ամուսնու հետ ապրելուց յետոյ՝ այրիացել էր և Տաճարում աղօթում էր ցերեկ ու գիշեր և Տաճարին էլ ծառայում էր. նա էլ որ տեսաւ երեխային՝ իսկոյն իմացաւ նրա ով լինելը. և այնտեղ եղողներին պատմում էր—թէ Սա է խոստացած Փրկիչը. Երբ ուխտի օրերը վերջացան՝ նոքա վերադարձան իրենց նազարէթ քաղաքը:

Ե՞րբ է կատարում մեր եկեղեցին Քառասնօրեայ Յիսուսի գալստեան յիշատակը:

—Ե՞ս կասեմ:

Ասա Արեգնազան:

—Քառասնօրեայ Յիսուսի գալստեան յիշատակը մեր եկեղեցին կատարում է միշտ Փետրուարի 14-ին<sup>1)</sup>: Լաւ լսեցիք երեխայք:

—Ճատ լաւ լսեցինք:

Այժմ մի բան հարցնեմ՝ դուք ինձ ասացիք—թէ երբ երեխան քառասուն օրական է դառնում՝ ծնողները երեխային տանում են Տաճարը. հետներն էլ երկու աղաւնի...և այլն. Հապա ասացէք ինձ—ինչու համար էին այդպէս անում. հով կարող է ասել:

<sup>1)</sup> Հարցնել—թէ որ երրորդն է սա անփոփոխ կամ անշարժ տօներից. Թուել տալ նախնթացները, կրկնել տալ խըմբովին:

— Ե՞ս կասեմ: — Ե՞ս ալ կըսեմ: — Ե՞ս ալ.

Արեգնազանը, Արաքսիան և Հրտհատը պիտեն. Էլուն ոք շգիտէ:

— Ես էլ կասեմ. Լուսնթագն էլ գիտէ:

Ուղեմն դու ասա Լուսնթանդ:

— Քառասուն օրական երեխային տանում են Ցածարը նրա համար, որ իրար նայելով ոռվորել են. իրարից օրինակ են վերցնում:

2է Լուսնթագ, այդպէս չէ. ով գիտէ:

— Ես գիտեմ:

Ասա Արեգնազան:

— Քառասուն օրական երեխային տանում են Ցածար, իրեն ընծայ Աստուծուն, որ Աստուած օրհնէ նորան, նա առաջին ծնունդն է. և նրա փոխանակ ընծայում են աղաւնի. իսկ երեխային յետ տուն են բնրում. Լաւ է. բայց էլլի կիսատ է. ով աւելի լաւ կասէ. 2էք կարողանում. ես կպատմեմ<sup>1)</sup>,

Կրկնիր Արաքսիա.

— Քառասուն օրուան մանուկին Նկեղեցի տանելան սովորութիւն Մովսիսին օրէնքէն է առնուած: Խմկ Մովսիսին այդ օրէնքն Արքահամէն կիջնայ. վասն զի Արքահամին իսկական Խսահակ զաւակն ողջակէզ ուզեց իրեն Աստուած: Արքահամին հաւատն օրհնեց Տէր, հաւանեց և անոր փոխարէն ոչխար մը ընդունեց Իրեն իրբեն պատարագ մը. աղ օրինակ մըն էր Յիսուսին պատարագին Խաչին վրայ. Իսկ մերին սովորավթիւն առանկ կրտսեալորուի՝ մենք ամենքս ալ Մեծ Հօր օրդիքն ենք և Անոք կպատկանինք, ագ պարագան օրինակաւ մը ցուցնելու համար անդրանիկ ծնունդն կընծայուի Աստուծուն և Անօր օրհնութիւնն կառնուի, ոչ միայն ան անդրանիկ զաւակին վրայ՝ այլ յետագայ ծնունդներուն վրայ ես, իրբե-

<sup>1)</sup> Ուսուցիչը պատմում է, լետու կրկնել է տալիս լառաշաղէմներին.

Աստուծոյ պարզննորուն վրայ. Երկիրը բացատրութիւնն ալ աս է—թէ ինչպէս որ անդրանիկ զաւակն կընծայուի Աստուծուն՝ անպէս այ մեր սիրտն ընծայենք պիտի. վասն զի ծնողներն կսիրեն իրենց անդրանիկ ծնունդն իրենց տրտին պէս. անոր ընծայելով Արարչին իրենց սիրտն ընծայած կինին:

Հաւ ասացիր, Արտքսիա. այժմ ես ամփոփեմ. հապա երեխաներ, յաեցէք Սրաքսիան ճիշտ առաջ—թէ մենք բռորս էլ Մեծ Հօր որդիքն ենք և նրան ենք պատկանում. եթէ Նրան ենք պատկանում, ինչպէս սովորել ենք, ուրեմն մի կերպ պիտի ցոյց տանք. ուստի մ ընծայում ենք նորան մեր անդրանիկ զաւակը, ուզելով ասել—թէ Մեծ Հայր, այս մեր անդրանիկ զաւակը Դու ես տուել մնա, իբրև Քո սուրբ պարզն. ուրեմն սաքոնն է, ինչպէս և մնաք բոլորս էլ Քոնն ենք, Քո որդիքն ենք. ոորան բերելով Քո սուրբ Տաճարը՝ սորա գոխանակ մեր Սիրտն ենք տալիս Քեզ. և դրա փոխարէն էլ Քո Օրհնութիւնն ենք խնդրում սորա վերայ և Քո Ծնորհը մեր վերայ, որ ինչպէս սա անմեղ է, սուրբ է՝ այդպէս սուրբ և անմեղ մեծացնենք սորան, որ սա ես արժանի լինի Քո որդի կոչուելու և միշտ աղօթենլու Քեզ, ասելով. «Հայր մեր, որ յերկի՞նս ես»:

Այս ոոգորութիւնը շատ գեղեցիկ է. բայց ափսո՞ս որ պարտադիր չէ. այլ ով կամննում է՝ նա միայն կատարում է այդ սովորութիւնը:

Սա Հրահատ Տաճարից մեր ընծայածը յնտ բերելու բացատրութիւնը:

—Վասն զի Աստուծած մեղի է տուեր, որ պահենք, մեծացնենք, կրթենք. իրեն համար բարեպաշտ հաւատացեալ մը. պատրատտենք. մենք սորվեցանք—որ նա մեղի կարօտ չէ, քանի որ ինչ ալ ունինք՝ Անորն է:

Մենք կուտանք Աստուծուն զոյգ մը պատմի կամ տատրակ և կամ տարնոր գառ մը. անոնք ալ չեն մնար Աստուծուն համար. անոնք կերակուր կը բան Եկեղեցւոյն պաշտօնեաներուն կամ ազքատաներուն. սակայն անունն Աստուծունն է։ Պարզ օրինակաւ մը ըսեմ—ազքատին կողորմնք, ընկերներուս կօգնենք, զսհեր-մատաղներ կընենք, դրացիներուս կծառայենք, կոյրերուն, խուլերուն ու համբերուն համար ուսումնարաններ կրանանք, սգաւորներուն, հիւանդներուն, բանտարկեալներուն, օտարականներուն կամ պանդուխտներուն՝ կայցելենք, կմիիթարենք. աս ամենն ընելով անոնց՝ Աստուծուն ըրած կըլլանք։ Աստուած մեզնէ ոչինչ չուզէր. կարօտ չէ մեր ունեցածներուն։ Նա կուզէ—որ մենք իր Սուրբ Անունովն մեր ունեցածներէն մաս մը, բաժին մը հանենք մեր չունեոր ընկերներուն։ Ասանկ ալ հասկնալ պիտի նորածին երեխային իր ծնունդին քառասուն օրէն ետքը Աստուծոյ Անունովն սուրբ Տաճարին ընծայելն։

Հրահատը շատ սիրուն կրկնեց. հասկացաք երեխաք։  
— Հատ լաւ հասկացանք։

Հապա տեսնեմ. ի՞նչպէս պիտի պատրաստէք այս դասը։

— Հատ լաւ կպատրաստենք։

## Զ. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԳՐԻՍՏՈՍԻ.

Յիսուսը մկրտում է Յովհաննիսից։

ԽԲ. Դ ա ս.

Կրկնութիւն

Զեզանից ով է տեսել երեխայի մկրտութիւն։  
— Ես։

— Ե՞ս էլ եմ տեսել:

— Ե՞ս էլ:

Լաւ, գիտեմ որ շատերդ տեսած կլինիք: Մկրտում  
է նվ:

— Մկրտում է քահանան:

Իսկ երեխայի կողմից նվ է այնտեղ խոստում տա-  
լիս:

— Կնքահայրն է խոստում տալիս:

Երբ են մկրտում երեխային, ծնուելուց քանի օր  
յետոյ:

— Ութ օլ:

— Երբեմն էլ մի քանի շաբաթ յետոյ:

— Երբեմն էլ մի ամիս կամ մի քանի ամիս անցնե-  
լուց յետոյ:

— Պատահում է և մի կամ երկու տարի յետոյ են  
մկրտում:

Ի՞նչ էք կարծում: — Քրիստոսը քանի տարի յետոյ  
կմկրտուէր:

— Ե՞ս կասեմ:

— Ես էլ կասեմ:

Ասա զողակաթ:

— Քառասուն օրից յետոյ նորան տաքան ծաճարը.  
ուրեմն մինչև քառասուն օրական դառնալը՝ պէտք է  
մկրտուած լինէր. որովհետև մեր երեխաներից անդրա-  
նիկ ծնուածին մկրտուելուց յետոյ միայն տանում են  
եկեղեցի:

Հապա դու ասա Խւղաքեր:

— Զողակաթը սխալ ասաց, ես լսել եմ որ Յիսուսին  
մեծ հասակում մկրտեց Յովհաննէսը, բայց չգիտեմ քա-  
նի տարեկան էր:

— Ե՞ս կասեմ քանի տարեկան էր:

Ասա Վարդիթեր:

— Երեսուն տարեկան էր:

Ճապահ տեսինմ ով կասէ ինձ որոշեց միրտուեց Քրիստոսը՝ տանը՝ թէ Եկեղեցումր:

— Ես կասեմ:

Ասա Հեղինէ:

— Եկեղեցումը մկրտուեցաւ Քրիստոսը:

— Սխալ ասաց Հեղինէն. Ես կասեմ:

Ասա Նարգէզ:

— Տանը մկրտուեցաւ:

— Նարգէզն էլ սխալ ասաց. Ես կասեմ.

Ասա Հողեր:

— Քրիստոսը մկրտուեց Յովհաննիսից Յորդանանում:

Ի՞նչ է Յորդանան. Ով կասէ:

— Ես կասեմ:

Ասա Վարսենիկ:

— Յորդանանը մեր Քուռ գետը չի:

— Վարսենիկը շփիտէ Ես կասեմ:

Ասա Յասմիկ:

— Յորդանանը Քուռը չէ, ուրիշ գետ է, որտեղ մըկրտուեց Քրիստոսը:

Հապա ով լաւ գիտէ՝ թող պատմէ Քրիստոսի Մըկրտութիւնը:

— Դուք պատմեցէք, յետոյ մենք:

Լաւ Ես կպատմեմ<sup>1)</sup>:

Այժմ ով կարող է կրկնել:

— Ես կըրկնեմ:

Կրկնիր Արաքսիա:

<sup>1)</sup> Ուսուցիչը հատուած հատուած պատմում է. Ճեռնահասներն ու լառաջադէմները կրկնում են. Հատուած հատուած պատմելու նպատակն է հարցեր տալ սաներին.

— Յորդանանն. Պազիստինին գետերէն գլխաւորն. Եթինչպէս երասին՝ Հայաստանին գետերէն. Աղ Յորդանան գետի ափերուն մօտ կքարողէր Յովհաննէսն ու կըսէր. «Ապաշխարեցէր ձեր մեղերն. Վասն զի եկեր հասեր է երկնքին արքայսւթիւնն». Կռւգային անոր մօտ փարիսեցիներն, մաքաւորներն, զինւորներն ու ժազովուրդն, կհարցունէին—ինչ ընենք՝ որ ապաշխարենք. Մն ալ կքաղողէր անոնց և կարսիցներ, որ սրտերնին մաքրեն ասեն տեսակ մեղերէ, ընկերներուն օգնեն հացակ, կերակուրի բաժինավ, հանդերձով և այլն. և անոնցմէ ապաշխարողներաւն կմկրտէր գետին մէջ. Այդ ժամանակներն հեռումն կերենայ Յիսուս. Յովհաննէսն ձեռքն դէմի Յիսուսն մեկնելով՝ կըսէ «ահա Դառն Աստուծոյ». ու կցուցեէ, որ ժողովաւրդն նայէ. Կռւգայ Տէրն մեր Յիսուս. Այսքան ըսիք:

Հար լաւ. այժմ, փօխանակ շարունակիլու, ևս կամենում եմ ձեզ մի քանի հարցեր տալ—հապա տեսնեմ ով ինձ կասէ, ինչու էր եկել Յիսուսը. տեսնելու - թէ ինչ է քարոզում Յովհաննէսը և կամ թէ ինչպէս է մկրտաւմ՝ թէ մի ուրիշ բանի հռմար:

— Ե՞ս կասեմ:

Սսա Լուսիկ:

— Եկել էր տեսնելու՝ թէ ինչ է քարոզում Յովհաննէսը:

— Ծրդպէն չէ, ես կասեմ:

Սսա Արեգնազան:

— Եկել էր մկրտուելու Յովհաննիսից:

Զատ լաւ, բայց որմնք էին մկրտուում Յովհաննիսից, Արեգնազան:

— Մկրտուում էին նրանք՝ որոնք ապաշխարում էին իրենց մեղերը. որովհետեւ, ինչպէս Արարոիսն էլ ասեց,

Ցովհաննէսը քարոզում էր ու ասում. «Ապաշխարեցէք, պատճառ որ մօտեցել է երկնքի արքայութիւնը». և ով որ ապաշխարում էր իւր մեղքը՝ մտնում էր ջուր և մկրտում էր Ցովհաննիսից:

Ճանաչած աւրեմն Ցիսուս ինչու էր եկել և եթէ ուղենար մկրտուիլ՝ Ցովհաննէսը կմկրտէր Ցիսուսին:

Ասա՞ Արեգնազան:

—Ցիսուր եկել էր որ մկրտուի, բայց Ցովհաննէսը չէր մկրտի. նա գիտէր—որ խոստացած Մեսիան է և աշխարհի Փրկիչը. նա մեղաւորներին էր մկրտում. Ցիսուս մեղք չունէր, ուրեմն չէր համարձակուի նորան մկրտել. եթէ մկրտէր՝ չէ որ պիտի լսէր Ցիսուսից—թէ ինչ մեղք ունի. որովհետև մեղքերը հարցնում էր Ցովհաննէսը ժողովրդից և յետոյ ապաշխարողներին մկրտում էր. բայց ինքը ասաց Ցիսուսի համար. «Նհան գառն Աստուծոյ». եթէ Աստուծոյ Գառն ասաց, ուրեմն գիտէր Ցովհաննէսը, թէ Ցիսուսը մեղք չունի և չէր մկրտիլ:

Լաւ. տեմնենք կմկրտէ Ցովհաննէսը՝ թէ կհրաժարուի. շարունակեմ ես, լաւ լսեցէք<sup>1)</sup>:

Այժմ դնե կրկնիր չրահատ:

—Կուղայ Տէրն մեր Ցիսուս. կմտնայ ջուրն՝ Ցովհաննէսէն մկրտուելու. Աղ որ կտեսնէ Ցովհաննէսն՝ յետ կը քաշուի ըսելով. «ինձի՞ է հարկ գալ Քեզի և մկրտուիլ Քեզնէ. իսկ Դու ինձի կուգաս»:

Հապա տեսնեմ ով կասէ ինձ—Ցովհաննէսի այս խօսքերից յետոյ Ցիսուսը կմրտուէր նորանից՝ թէ ոչ:

—Ե՞ս կասեմ:

Ասա՞ Արեգնազան:

—Կմկրտուէր:

1) Երկրորդ հատուածը պատմում է ուսուցիչը և կրկնեց է. առաջիս ինչպէս ասուեցաւ.

Ինչու համար. ով կպէք: Զգիտէք: Հապա Հրահատ, Արաքսիա, Սրեզնազան, Համասփիւռ. ասացէք ինչու համար Յիսուս պիտի մկրտուէր Յովհաննիսից՝ քանի որ մեղք չունէր:

— Ենք ուսեր. չենք լսեր. Դուք սորվեցուցէք մեզի: — Այս Հրահատը ճիշտ ասաց:

Ճատ լաւ ես կպսեմ. բայց լու լսեցէք: — Յիսուս պէտք է մկրտուէր Յովհաննիսից հետևեալ պատճառներով—առաջին՝ որ ամեն մի ծշմարիտ Խրայելացի պէտք է մկրտուէր վերջին մարգարէից. այդ մարգարէն էր Յովհաննէսը. ով ճշմարիտ Խրայելացի չէր՝ նա չէր մկրտուի. ճշմարիտ Խրայելացի այն Հրէան էր՝ որ օրէնքները սրբութեամբ էր կատարում և Յիսուսին հաւատում էր—իբրև խոստացուած Մեսիայի. Յիսուս օրէնքները պահում էր, ուրեմն ճշմարիտ Խրայելացի էր. իսկ ճշմարիտ Խրայելացիները պիտի մկրտուէին Յովհաննիսից. Յիսուսն էլ իբրև ճշմարիտ Խրայելացի՝ օրէնքին հնազանդ էր. և ուրեմն վերջին մարգարէից պիտի մկրտուէր. երկրորդ՝ Յիսուս մկրտումէր. Յորդանան գետի մէջ Յովհաննիսից—աշխարհու համար. ինչպէս՝ երբ Ադամ և Եւան մեղք գործեցին՝ Աստուած անիծեց նրանց...

Այս պատմութիւնը շատերդ լսած կլինէք, չէ:

— Լսել ենք—որ Աստուած Ադամին ու Եւային անիծեց և դրախտից դուրս արեց:

Լաւ:

Նրանց հետ էլ անիծուեցաւ և հողը՝ որից ստեղծուեցան նոքա. և ջուրը՝ որ մտնում է հողի մէջ և մնունդ է տալիս բոյսերին, և այդ ջուրը խմում են թէ մարդիկ և թէ կենդանիք, ինչպէս որ սովորեցիք. ուրեմն ջուրը պէտք է սրբուէր. որովհետեւ բան չկայ, որին

շնարկաւորուի զուրբը։ Յիսուս իւր մկրտուելովը՝ սրբեց  
այդ չուրը Աղաժային անէծքից։ Հասկացմք լաւ։  
— Հասկացանք։

Երրորդ՝ Յիսուս մկրտուելով Յովհաննիսից՝ խո-  
նարհութեան օրինակ ցոյց տուեց մեզ։ Ինչպէս որ մսուրի  
մէջ ծնուելով՝ սորվեցրեց աղքատութիւնից շվախնլ ե-  
շամաշել, այնպէս էլ մկրտութիւնով՝ օրինակ եղաւ մեզ  
խոնարհութեան։ մենք էլ պէտք է խոնարհ լինեք,  
շնարկաւանանք, որովհետև խոնարհներին Սռագուած բարձ-  
րացնում է։

Տորրորդ՝ Յիսուս մկրտուելով Յովհաննիսից Յօր-  
դանանուու՛ հաստատեց Մկրտութեան տուրը խորհուր-  
դը. Կ դորանից յետոյ՝ ով որ հաւատում էր Յիսուս  
Քրիստոսին՝ նորա առաքեալները, աշակերտները, հե-  
տոնդները մկրտում էին հաւատացողներին ջրով, ինչպէս  
որ մենք ենք անում։

Հինգերորդ՝ Յիսուս մկրտուելով Յովհաննիսից՝  
յայտնուեցաւ Մարդկանց սուրբ Երրորդութեան խոր-  
դուրդը – Որդին Աստուած մկրտում էր. Հոգին սուրբ  
Աստուած իջաւ Նորա վերայ աղաւնակերպ. Հայրն Աս-  
տուած վերեից վկայեց – թէ այդ Մկրտուազը իւր սիրե-  
լի որդին է։ Այդ է պատճառը՝ որ երբ գուք խաշակը-  
քում էք երեսներդ՝ ասում էք – Յանոն Հօր և Որդւոյ և  
Հոգւոյն Սրբոյ ։<sup>1)</sup>

Հասկացանք։

— Այս հասկացանք։

Հրահատ, ամփոփիր այդ հինգ պատճառները։

— Իուր մեղի բացատրեցիք ան հինգ գլխաւոր

<sup>1)</sup> Կրկնել տալ դասարանին հինգ պատճառները, որոնք  
ընդգծուած են. Նախ՝ առաջինը, մինչեւ իւրացնելը. մետու-  
միւսները կարգով։

պատճառներն, որնցմէ մենք համեսնք—թէ Յիսուս  
Քրիստոսն պէտք է որ անշուշտ մկրտուեր Յովհաննիսէն.  
առ պատճառներն առոնք են— առաջինն՝ որ հայրենի  
օրէնքն կատարէր պիտի մերջին մարդարէէն մկրտուե-  
լով. երկրորդ՝ Նախածնողներաւն մեզքին պատճառվ  
ջրին անէծքն պիտի վերցանէր և ջուրն պիտի սրբէր  
իր մկրտուելովն. երրորդ՝ խոնարհութեան օրինակ մը պի-  
տի ցուցընէր մեզի. չորրորդ՝ իր մկրտուելովն, Մկրտու-  
թեան Սուրբ Խորհուրդն պիտի հաստատէր. հինգերարդ՝  
իր մկրտութեան ատեն յայտնուեցաւ Սուրբ Երրորդու-  
թեան Խորհուրդն:

Այժմ շարունակեմ դասը <sup>1)</sup>:

Կրկնի՞ Արաքսիա:

— Յովհաննէսն ըստ Յիսուսին, «Փնձի է հարկ գալ  
Քեզի և մկրտափիլ Քեզնէ. իսկ Դռւ ինձի կուգաս», Յի-  
սուս պատասխան առաւ անոր ու ըստ. «Թոյլ առւր.  
վասն զի այսպէս վայել է մեզի արդարաւթեան օրէնքն  
կատարելու: Աս խօսքերէն ետք՝ Յովհաննէսն մկրտեց  
Յիսուսին և ըստեզաւ Մկրտիչ: Եւ երբ մկրտութենէն  
ետք՝ Յիսուս ջուրէն դուրս կելլէր՝ իսկոյն Երկինքն  
բացուեցաւ, Սուրբ Հոգին ազամակերպ իջաւ Յիսուսին  
վրայ և երկնքէն Հօր Աստուծոյ ձայնն լսուեցաւ, որ  
կըսէր «Դա է իմ սիրելի Որդին, Որուն ես հաւնեցայ.  
Չարան լսեցէք»:

Աս տօնը կամ Յիսուսի Քրիստոսի Մկրտութեան  
յիշատակն մենք կկատարենք Յունվարի 6-ին. Ծննդեան  
յիշատակին հետ մէկ տեղ:

Կուզէք երեխայք, կրկնենք մի անգամ:

1) Ուսուցիչը Երրորդ հատուածն է աւանդում և լեռցէ  
կրկնել տալիս:

— Զէ. շատ լաւ հասկացանք <sup>1)</sup>:

Հապա առացէք խմբովին:

— Յիսուսի Մկրտութեան յիշատակը կատարաւ  
Անք միշտ Յունվարի 6-ին ծննդեան հետ միասին:

Ճատ լաւ տեսնեմ ինչպէս կպատրաստէք այս դասը:

— Ճատ լաւ կպատրաստենք:

Ք. Յիսուսի Երուսաղէմ մտնելը կամ Ժաղկազարդ <sup>2)</sup>.

ԽԳ. Դաս.

Ո՞վ գիտէ ձեզանից Մեծ պատի վերջին Կիւրակէի  
անունը, երբ առաւօտեան ժամերգութեանը ժողովրդին  
ուռ են բաժանում և մոմեր. և ժամերգութիւնը աւար-  
տելուց յետոյ՝ ժողովրդը ուռի ոստերն ու մոմերը  
ձեռքերին, մոմերը վառած՝ գնում են իրենց տները:

— Ե՞ս յիշում եմ:

— Ե՞ս էլ:

— Ես գիտեմ թէ ինչպէս են ասում այդ Կիւրակէն:

— Ե՞ս պատմութիւնն էլ գիտեմ:

— Ես ալ գիտեմ. ուսեր եմ հօրմէս:

Նուարդը, Երանեակը, Եղան, Արեգնազմնն ու Ա-

<sup>1)</sup> Պեսուցիչը կարող է դասարանումը ցոլց տալ արդ պատ-  
կերը ալսպէս—մէկին կնշանակէ իբրև Յովհաննէս Մկրտիչ. միւ-  
սին՝ Յիսուս. երբորդը՝ կիխնի պատմողը. իսկ չորրորդը՝ ժողո-  
վուրդը, սոքա նստած կիման տեղերը, իսկ երեքը դուրս կզան  
ուսուցչի առաջ և կպատմեն հերթով. Ալսպէս կարելի է և  
մի քանի դասեր պատկերացնել:

<sup>2)</sup> Շատ համառօտ կերպով պիտի կցել ալս պատմու-  
թեանը—Ոտնալուան, Խորհրդաւոր ընթրիքը, Յիսուսի Մատ-  
նութիւնը, Խաչելութիւնը և Թագումը:

Ժաքսիան գիտեն իմ ասում Կիւրակէի անունը. իսկ Արեգ-  
Նազանն ու Արաքսիան՝ պատութիւնն էլ գիտեն։ Հա-  
պա՞ առացէր ինձ նորարդ, Երանեակ և Եղինկ։

—Մեծ Պատի վերջին Կիւրակէն ասում են Ծաղկազարդ։  
Լաւ։

Էլի ուրիշ կերպ ասում են թէ ոչ։

—Ե՛ս կասեմ,

Սսա՞ նզսօ՞։

—Մեր կողմերում ասում են Ծառզարդաբ։

Լաւ։

Բայց ինչն են ասում Ծաղկազարդ կամ Ծառզար-  
դաբ. նվ կարող է ինձ ասել։

—Ե՛ս կասեմ։

Սսա՞ Արեգնազան։

—Որովհետեւ Մեջ Պատի վերջին շաբթին կամ երբ  
մօտենում է Զատիկլը՝ ծազիկները բացւում են ու զար-  
դարւում, ծառերն էլ կանաչում են ու տերմներսվ զար-  
դարւում. դրա համար էլ ասում են Ծաղկազարդ կամ  
Ծառզարդաբ. այդ լինում է գարունքին։

Արեգնազանը լաւ ասաց. բայց հասկացնք Երեխայք։

—Մենք էլ գիտէինք։

—Մենք շգիտէինք, հիմա գիտենք։

Ճատ լաւ։

Այժմ մի ուրիշ բան հարցնեմ։

Ինչն Ծաղկազարդ Կիւրակէին ուռ ենք բաժանում  
Ժողովրդին։

—Ե՛ս կասեմ։

—Ե՛ս ալ։

—Ե՛ս ալ։

Արեգնազանը, Արաքսիան և Հյահանաբ գիտեն։

Ճատ լաւ. Էլի նվ պիտէ։

— Զգիտենք թող նրանք պատմեն, մենք կոռզորենք =  
չտպա տստ Արեգիազնան:

— Ծաղկազարդ Կիւրակէին ուն բաժանում Յի-  
սուսի Երուսաղէմ. մանելու յիշատանի համար. որովհետեւ  
Երուսաղէմի ժողովուրդը ձեռքերին ոստեր բռնած՝ դուրս  
եկան Յիսուսի առաջ և այնպէս ընդունեցին նորան իրենց  
քաղաքը:

— Կրնամ ես ըսել՝ թէ ի՞նչ ոստեր սևնէին ձեռքեր-  
նուն բռնած:

Սսա Արաքսիա:

— Երուսաղէմին. մօտերքը շատ մը արմաւենիներ ու  
ձիթենիներ կսն. հոն տաք կլիմային պատճառաւ անոնք  
շուտ կծաղկին: Երբ Յիսուս Երուսաղէմ կմտնար՝ ադ-  
ծառերուն ոստերն ունէին ձեռքերնաւն. ադ պատճառաւ  
ծաղկազարդն կըսուի. նաև Արմաւեննաց տօն:

— Մենք չհասկացանք՝ թէ ի՞նչ բան է արմաւենին,  
ձիթենին, որ Արաքսիան ասաց:

Արմաւ՝ նշանակում է խուրմա. իսկ արմաւենին  
խուրմի ծառն է. Զիթապտուղը՝ զիտէք-զէյթունն է.  
կամ զեթիսխիլ որ ասում էք. իսկ ձիթապտղի կամ  
զէյթունի կամ զեթիսխիլի ծառը՝ ասում է Զիթենի-  
թէ արմաւենու և թէ ձիթենու տերեները լայն ու եր-  
կարածե են լինում, չորացած էլ կարելի է պահել: Մեր  
կողմերը գրէթէ շկան. մեր կողմերը ամենից առաջ ու-  
ռենին—ուոփի ծառն է ծաղկում. այդ պատճառով ծաղ-  
կազարդ կիւրակէին ուոփի ոստեր—ճղնիկներ են բաժա-  
նում ժողովրդին: Հասկացանք այժմ:

— Այս հասկացանք. խուրման ու ձիթապտուղը զի-  
տենիք, ուտում էլ ենք. բայց ծառերը չենք տեսել:

Ծան լաւ. այժմ տեսնենք եվ կպատմէ մեզ Յիսու-  
սի Երուսաղէմ մտնելու պատմութիւնը:

—Արաքսիան պատմէ, Արաքսիան. նա լաւ է պատմում։

Ես գիտեմ որ Արաքսիան գիտէ. բայց չէ որ գուրէ էլ պիտի պատմէք. մեղք չէ Արաքսիան. պատմութիւնը երկար է, նա կյոզնէ։

—Մենք շգիտենք։

Իսկ դնւ Արեգնազան։

—Սիալ կպատմեմ։

Ուրեմն ես կպատմեմ։ Լսեցէք<sup>1)</sup>։

Կրկնիր Արաքսիա։

—Ես պատմեմ պիտի Յիսուս Քրիստոսին յաղթական մուտքն Երուսաղէմ—Երբ Յիսուս մօտեցաւ Զիթենեաց լերան մօտ գտնուած Բեթանիա ու Բեթբաղէ գիւղերուն, ան ատեն աշակերտներէն երկուքն կուղարկէ ըսելով—կերթաք ան գիւղն՝ որ մեր հանդէպն է. հոն կդտնաք էշ մը կապած և աւանակը մը անոր մօտ, որուն վրայ ոչ ոք մարգկանցմէ չէ նստեր, կապն կարձակէք և երկուքն ալ կրերէք ինձի. Եթէ կհարցունեն՝ թէ ինչնւ կարձակէք՝ ասպէս կըսէք—իրեն տիրոջն պէտք է։ Գնացին և ինչպէս պատուիրեր. էր Յիսուս՝ անպէս ալ ըրին. բերին և իրենց հանգիրձներն անոր վրայ ձգեցին և հեծուցին իրենց Տէրն անոր վրայ։ Երբ Զիթենեաց լեռնէն կիշնային և Երուսաղէմին կմօտենային՝ աշակերտներն իրենց հանգիրձներն կտարածէին Տիրոջ ճանապարհին վրայ. իսկ ժողովուրգն ընդառաջ գալով Յիսուսին, ծառերէն ոստեր կրադէին, կէս մը ձեռքերուն մէջ բռնած և կէս մը ոտքերուն առաջ ճանապարհին կձգէ-էին ու կերդէին—Օրհնութիւն ըլլայ Դաւթի որդուն.

1) Ուսուցիչը պատմում է. և կրկնել է տալիս ձեռնասներից մէկին.

Թղթնե՞ալ է Ան՝ սր Ցիրոջ Անունովն կռւգայ. խաղաղութիւն երկրին վրայ և փառք ի բարձունս. չոն բժշկութիւններ ըրաւ կոյրերուն, կաղեթաւն. քարոզեց, սորվեցուց և ամեն բարիք ըրաւ ժողովրդին: Ժողովուրդն կը սիրէր Անոր և կուղէին թագաւորցնել իրենց վրայ. աս բանը հաճելի չէր ժողովրդին մեծերուն ու իշխաններուն. անոնք խորհուրդ ըրին կօրանցունել Անոր, որպէս զի ժողովուրդն չաւատայ Անոր...

Սպասիր Ռոպիա, աեսնեմ երեխանները կռւգն որ շարունակենք: Երեխանք կուղէք սովորենք թէ Ցիսուսին ինչպէս մատնեցին, ինչպէս շարշարեցին, խաշեցին և թաղեցին:

—Կուղենք, կուղենք. մի քանիսներս էլ գիտենք,  
լուլ ենք:

Հատ լաւ. ուրախ եմ: Թայց պատմութիւնը կերկարի,  
յնտոյ որ շկարողանաք սովորել:

—Ճշմարիտ ենք ասում որ կարող ենք սովորել:

Դէ լաւ նս կպատմեմ...

Հարունակիր Արեդնազան:

—Յուղան գիտենալով նրանց միտքը, ինքն էլ արծաթասէր լինելով՝ դիմեց նրանց և հարցրեց—թէ ինչքանով կվարձատրեն իրան, եթէ ինքը իւր Ուստիցին մատնէ նրանց ձեռքը: Նրանք էլ վճռեցին տալ նրան երեսսն արծաթ<sup>1)</sup>: Յուղան նշան տուաւ նրանց թէ որին ինքը կհամբուրէ՝ նրան բանեն...

Սպասիր Արեգնազան. ինչն Յուղան խոստացաւ որ ինքը մատնէ, միթէ իշխանները, մեծերը չէին կարող բռնել Ցիսուսին և ամենել Դատաւրի մօտ: Ո՞վ կասէ:

<sup>1)</sup> Բացատրել առներին—թէ երեսուն արծաթը մեր դրամով հաւասար է գրեթէ 28 բուբլուն.

— Ե՞ս կը տեմ:

Հէ Արարտիա, դու շատ ես ասել, ահմաննք ուրիշ ներն էլ գիտեն՝ թէ ոչ Ռշինչ չէք ասում. չգիտէք: իսկ լոնւ չրահատ:

— Չեմ ուսեր:

Դու Արեգնազան:

— Քնյրս պատմել է թէկ՝ բայց լաւ շեմ յիշում. միայն այնքան եմ յիշում — որ ցերեկները դժուար էք Յիսուսին բռնել. որովհետև միշտ ժաղովուրդը նորա շորա կողմը փաթաթուած էին <sup>1)</sup>). Նա նրանց քարոզում էր, սովորցնում էր, բժշկում էր նրանց հիւանդներին. Ժողովուրդը նորան սիրում էր, չէր թողնի որ նրան բռննն:

Լաւ ասացիր, Արեգնազան. ինչո՞ւ չէիր աւդում աւ ոել: Մի ուրիշ բան էլ հարցնեմ, տեսնեմ ով կգտնէ — ինչո՞ւ Յուղան նշան տուեց — թէ ում որ ինքը կ'համ բաւէ՝ նորան բռննն: միթէ չըէաները չէին ճանաշամ Յիսուսին:

— Ե՞ս կասեմ:

Ասա Արեգնազան:

— Չըէաները ճանաշում էին Յիսուսին, բայց ցերեկով չէին կարող բռնել, պատճառը ասացի. պէտք է որ զիշերը բռնէին. գիշերն էլ մթան մէջ չէին կարազ ջոկել — թէ որևէ Յիսուսը, որովհետև Յիսուսն էլ, աշակերտներն էլ մէկ տեսակ շօրեր ունէին հազար. բացի դրանից Յուղան գիտէր — թէ զիշերները Յիսուս որ տեղ է լինում, իսկ չըէաները չգիտէին:

Պատ է, լաւ է. ապրի Արեգնազանը հա:

<sup>1)</sup> Ուղղել և սովորցնել — որ տաեն՝ ժողովուրդը գրեթէ միշտ նորա շուրջը հաւաքուած՝ լսում էին նորա քարոզութիւնը:

— Եպրի, շատ ապրի. մենք էլ սովորեցինք այժմ,  
չենք մոռանայ.

Զարուհակեմ. լսեցէք...<sup>1)</sup>:  
Կրկնիր Հողեր:

— Աւագ-Հինգշաբթի իրիկունը, հաւաքեց Յիսուս իր  
աշակերտներին վերնատան մէջ, ոտքերը լուաց. խոնար-  
հութեան օրինակ տալով նրանց, յետոյ սեղան նստաւ,  
առաւ հացը, օրհնեց, մանրեց և տալով աշակերտներին՝  
առաց. «Ըոէք, կերև. այս իմ մարմինս է, որ կբաշխով  
ձեր և շատերի մեղքերի քաւութեան և թողութեան հա-  
մար». յետոյ առնելով բաժակը՝ գօհացաւ, առեց աշա-  
կերտներին ասելով՝ «Խմեցէք այս բաժակից. այս իմ  
արինն է, որ կթափիմ ձեզ համար և շատերի համար.  
այս կվատարէք իմ յիշատակի համար»: Եւ երբ կուտէին՝  
ասաց Յիսուս. «Ձեզանից մէկը այս գիշեր ինձ պիտի  
մտանէ». աշակերտները շատ տիսրեցան. նրանք չգիտէին  
— թէ ով պիտի լինի իրենց աւագւցի մատնողը, այդ  
պատճառով էլ, մէկ մէկ հարցնում էին և ասում — միթէ  
ես եմ Տէր:

Բաւական է Հողեր, շարունակիր Հրահատ:

— Յիսուս ըստւ անոնց — ան է, որուն կտամ պա-  
տառն, որ թաց պիտի ընեմ. պատառն թաց ըրտւ և  
տուաւ Յաւգային: Յաւգան դաւրս էլաւ և գիշեր էր: Աս-  
կէ ետք Յիսուս երկար խօսեց իր աշակերտներուն հետ,  
յայտնեց անոնց իր սէրն և ան՝ որ մատնութեան գիշե-  
րըն անոնք ամենքն ալ իրեն պիտի թողուն մենակ ու  
փախչին: Պետքուն ըստւ Շնէ ամենքն ալ փախչելու  
ըլլան՝ ես շնմ փախչեր. ես իմ անձս դրել եմ քեզի վը-  
րայ: Յիսուսն ըստւ անոր. «աս գիշեր մինչեւ հաւուն խօ-

2) Պատճում է սասուցիչը և լեռով պատճել է տալիս ձե-  
ռընհասին:

աելն՝ իրեք անգամ պիտի ուրանաս զիս։ Աս խօսքերէն ֆոք՝ ելտն վերնառաւնէն և գնացին Գեթսեմանի պարտէզն. հոն թողուց աշակերտներուն, որ քիչ մը հանգստանան և ինքն հեռացաւ քանի մը քայլ, չոքեց ու սկսաւ աղօթք ընելք Խսկ Յուղան, որ գիտէր Յիսուսին տեղն, առեր էր իրեն հետ զինւորեներուն գունդ մը, քահանայ յապետներուն, փարիսեցիներուն ծառաներէն շատ մը հու զի ու յառաջ կուգային ջահերով, լապտերներով և զէնքերով դէպի մն տեղն ուր կազօթէր Յիսուս, երբ Յիսուս վերջացուց իր աղօթքն՝ ելաւ տեղէն և եկաւ աշու կերտներուն մօտ, անոնք քներ էին, զարթեցուց անոնց ու լսաւ «Գնանք ասկէ, վասն զի եկեր է ան՝ որ զիս մատնէ պիտի»։

Բաւական է. ջարունակիր ջահանդուխտ։

—Մօտեցաւ Յուղան Յիսուսին և համբուրելով նորան՝ ասաց. «Ուզոյն քեզ, ուսուցիշ». Յիսուսը պատասխանեց. «Յուղա, համբուրելով ես մատնում Մարդու Որդուն»։ Յետոյ մոտեցան զինուորները, բռնեցին ու կապեցին Յիսուսին և տարան Կայիշավայ քահանայապետի տունը։ Այս որ տեսան աշակերտները՝ բոլորն էլ փախան։

Ճարունակիր Եսթեր։

—Պետրոսն ու Յովհաննէսը հետեւցին իրենց ուսուցչին. քայլ Պետրոսն ուրացաւ Յիսուսին, երբ քահանայ յապետի տան գաւթումը ասում էին նրան—թէ դու էլ Յիսուսի աշակերտներիցն ես. երբսրդ անգամ երբ ուրացաւ՝ Յիսուսին դուրս էին բերում քահանայապետի տանից, Յիսուս աշքերը ձգեց Պետրոսի վրայ, հաւը խօսեց. «Պետրոսը յիշեց իւր Ուսուցչի խօսքը և սկսեց լաց լինել»։

Ճարունակիր Ջարմանդուխտ։

—Միւս առաւտ Յիսուսին տարան Պիղատոսի մօտ, աւր դատեցին. և վերջը վճռեցին նորան խաչ հանել.

խաշը ինքն էր տանում։ Գողգոս այի վկայ խաշեցին Յիսուսին և նարա երկու կողմերն էի երկու առաջակիններ խաշեցին։ Խաչի վերայ՝ աւանդնեց հազին։

Հարունակիր Լուսնթագ:

—Երկու բարեպաշտ մարդիկ, որ ծածուկ աշտկերա էին Յիսուսի՝ զնացին Պիղատոս գատաւորի մօտ և խընդրեցին—թոյլ տալ իրենց խաչից ցած բերելու մարմինը և թաղելու։ Պիղատոսը թոյլ տուեց նրանց այն ժամանակ՝ երբ ստուգեց—թէ յիրաւի մեռել է Յիսուսը։ Նրանք էլ իշեցրին Յիսուսին խաչից, պատանեցին և տարան թագեցին Գեթսեմանի պարտիզի մէջ։ այդ օրը ուրբ բաթ էր։

Հարունակիր Արևատ:

—Քահանայապետները գերեզմանի քարը կնքեցին։ Իրենց կնիքով և պահապաններ զրին զերեզմանի մօտ, որովհետեւ նրանք կարծում էին—թէ աշխարաները զիշերը կը զան ու մարմինը զերեզմանից կհանեն ու կփախցնեն և կասեն—թէ յարութիւն է առել։

Հատ բաւ բաւական է։ Լաւ հասկացաք երեխայք։

—Ճամ լաւ հասկացանք։

Կուզէք Արաքսիան կրկնէ, թէ յոգնեցիք։

—Ճճնք յոգնել, կուզենք որ Արաքսիան կրկնէ։

Կրկնիր ու ամփափիք Արաքսիա։

## Հ. Յարութիւն Յիսուսի կամ Զատիկ.

ԽԴ. Դաս.

Կրկնութիւն։

Ծաղկազարդ Կիւրակէի երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ինչ է կատարում մեր Եկեղեցին և վերջին

Ժարախն — Եօթնեամիլ ինչպէս է տառամ. ով կասէ-  
2գիտէք:

— 2դիմանք, թող Աքաքսիսն զատմէ:

Ոչ, ես կպատմեմ. իսկ Արաքսիսն կկրկնէ <sup>1)</sup>:

— Եազլազարգ. Կիւքակէի երեկոյին ժամերգութե-  
նէն եազ Դուռնբացէք կկատարէ մեր Նկեղեցին. վերջին  
եօթնեակն ալ Զարշարանաց Հարաթ կըսուի, վասն զի  
Ցիսուտին Մանութեան, Զարշարանքին, Խաչելութեան,  
Մահուան և Թաղման խորհուրդն կոյտէ: Ասկէ զատ  
Աւագ Հաքաթ ալ կըսուի. վասն զի Ցիրոջ տնօրէնու-  
թիններուն մասին կկատարուի Ասաուածպաշտութիւնն:  
Օրերուն խորհուրդն ալ ասիկայ է - Աւագ Երկուշաբթին  
կյիշեցունէ մեզի Արարշութիւն աշխարհի, Նախածնող-  
ներան մեւքի մէջ իյնալն և Փրկչի մասին խնութումն:  
Աւագ Երկորշաբթին՝ կյիշեցունէ մեզի ջրհեղեղն, և Ցիաւ-  
սին Դատաստանն, սր վիրջին օրն պիտի ըլլայ. Աւագ  
Չորեքշաբթին՝ Յուղային մատնութիւնն կյիշեցունէ: Աւագ  
Հինգշաբթին՝ Խորհրդաւոր ընթրիքն Վերնատան մէջ և  
Ռտնալուայն:

Հարունակիր Հողեր:

— Աւագ Ուրբաթը՝ Քրիստոսի Խաչելութեան ու  
մահուան յիշատակն է: Ցերեկուայ ժամերգութեան ժա-  
Մանակ ծունք դնել չէ կարելի, որովհետեւ Հրէաները  
ծաղրելով ծունք էին դնաւմ Խաչի առաջ. մենք ծունք  
չենք դնում, որովհետեւ Ցիսուս դեռ Խաչի վրայ է. իսկ  
Երեկոյեան ժամերգութեան ժամանակ, ծունք ենք դնում,  
որովհետեւ Խաչի վրայ չէ, Խաչից վերցրել են թաղելու  
համար:

Հարունակիր Ցիգրանուհի:

<sup>1)</sup> Ուսուցիչը պատմում է և կրկնել է տալիս ձեռնհաս-  
ներից մէկին.

— Աւագ Շաբաթ օրը՝ յիշեցնում է մեղ Յիսուս Քրիստոսի Թաղումը։ Իսկ Զատիկ Կիւրակէն՝ յիշեցնում է մեղ Յիսուսի Քրիստոսի փառաւոր Յարութիւնը, որ մեր այսօրուայ դասը պիտի լինի։

Ճատ լաւ ասացիք Արաքսիա, Ճողեր, Տիգրանուհի։ ապրիք։ Երեխայք, ինչ որ պատմեցին սոքա, կարնղ էք մտքներդ պահել, եթէ չէք կարող՝ չսովորենք։

— Կարնղ ենք, կարնղ ենք. շատ հարկաւոր է մեղ գիտենալ, տանը կպատմենք։

Կուզէք կրկնեն Սրուսեակը, Ընահիտը, Երանեակը, Միրանոյշը, Նուարդը, Աստղիկը, Լուսաբերը։

— Թող կրկնեն. աւելի լաւ կսովորենք։

Ասացինք թէ Զատիկ Կիւրակէն յիշեցնում է մեղ Յիսուսի Քրիստոսի փառաւոր Յարութիւնը. որը պիտի լինի մեր այսօրուայ դասը, ես կպատմեմ ձեզ. լաւ լսեցէք, որ տեսնեմ—թէ նվ կարող է կրկնել... <sup>1)</sup>։ Այժմ տեսնեմ՝ նվ կլրկնէ։

— Ես կկրկնեմ. ես ալ կլնամ։

Կուզէք որ Արեգնազանը պատմէ, թէ Արաքսիան։

— Արաքսիան շատ է պատմում, մեզ է. Արեգնազանը թող կրկնէ։

Լաւ, կրկնիր Արեգնազան։

— Ուրբաթ գիշեր լոյս Շաբաթ Յիսուսի մարմինը դրին գերեզմանի մէջ, կնքեցին գերեզմանը և պահպաններ կարգեցին։ Յիսուսի աշակերտուհիներից մի քանիսը տեսան հեռուից թէ ուր դրին. նրանը մտածեցին որ միւս օրը—լոյս Կիւրակէ խունկ ու իւղ վերցնեն ու գնան գերեզմանը—օծելու և խնկելու Տիրոջ մարմինը. այդ սովորութիւնը կար չըէաների մէջ։

1) Ուսուցիչը պատմում է։

**Հարունակիր Լուսիկ:**

— Յայց մինչև նրանց գալը՝ դիշերը մեծ շարժում պղաւ. այդ նրանից էր՝ որ Աստուծոյ հրեշտակը իջառ երկնքից, մօտեցաւ գերեզմանին, դէն ձգեց գերեզմանի քարը և Յիսուս յարութիւն առաւ. իսկ հրեշտակը նստեց գերեզմանի քարի վերայ:

**Հարունակիր Միքուշ:**

— Այս որ տեսան պահապանները՝ վախեցած վայր ընկան երեսի վերայ, ուշքները գնաց <sup>1)</sup>. երբ ուշքի եկան՝ փախան քազար և ամենքին պատմում էին—թէ Յիսուսը Յարութիւն առաւ...

**Հատ լաւ. շարունակիր Արաքսիա:**

— Յիսուսին Յարութեան մասին պահապաններուն ասդին անդին պատմած լուրն քահանայապետներուն, իշխաններուն. ու փարիսեցիններուն <sup>2)</sup> ականջն հասնելուն պէս՝ իսկոյն խորհրդի կուգան, ատեան կիազմեն. և կորոշեն—կանչել պահապաններուն, շատ մը ըստակ տալ անոնց և պատուիրել—չըսել թէ յարութիւն է առեր, այլ չըսել թէ իրենց քուներնին տարել էր՝ եկեր են աշակերտներն ու գոլցեր են անոք մարմինն գերեզմանէն:

**Հարունակիր Հրահատ:**

— Կանչեն պահապաններուն, անանկ ալ կըսեն, ինչպէս որոշեցին իրենք. Սակայն պահապաններն կվախնան դատաւորէն և կպատասխանեն. անոնց—մենք Բնչպէս ըսենք թէ քնած ժամանակնիս գոզցեր են մարմինն. դատաւորն մեզի շատ խիստ կպատժէ. Մնո՞ք կապահովցունենք պահապաններուն ըսելով—մենք կհաճեցունենք ա-

<sup>1)</sup> Ուղղել—ուշագնացեղան և կրկնել տալ տպաւուրելու համար.

<sup>2)</sup> Հասկացազութիւն տալ նոցա մասին և թէ՝ նոքա թըշնամի էին Յիսուսին.

Նոնց և ձեզի անհոգ կընենք. դուք տտանկ ըսէք ամենուն, ինչպէս մենք ձեզի խրատ տուինք. Անոնք ալ կը տոէին և տմնեուն կըսէին—թէ իրենք խոր քունին մէջ ընկղմած առանք՝ Յիսուսին աշակերտներին եկան ու անոր մարմինն գործացան:

**Հարունակիր Փառանձեմ:**

—Երբ շաբաթն անցաւ, Մարիամ Մագթագենացին և միւս Մարիամն՝ խունկ պատրաստեցին և գալիս էին օծելու Տիրոջ մարմինը. բայց ճանապարհին մտածամ էին—թէ ով տիտի գլորէ գերեզմանի քարը, որովհետեւ մեծ էր շատ: Երբ մօտեցան գերեզմանին՝ տեսան ոքքարը գլորուած է: Ներս մտան և սպիտակ շտրեռով միերիտոտարդ տեսան և վախսեցան. գա Ծստուծոյ հրիշտավիժ էր՝ որ առաց նրանց—մի վախենաք. դուք խաշնեցեալ Յիսուս նազուվրեցնեն էր որտեսում. բայց քնչաւ կենդանին մեռեների մէջ էք պտրտում. չէ որ նա ձեզ տեսլ էր—թէ երեք օրից յետոյ յարութիւն պիտի առնի:

**Հարունակիր Հրանոյշ:**

—Նա յարութիւն է առել: Գնացէք ասացէք նաքաշակերտներին որ Գալիլեայումը նորան կտեսնեն: Այս որ լսեցին նոքա՝ ուրախ ուրախ գարձան Գալիլեա և պատմեցին Յիսուսի աշակերտներին և աշակերտուհիներին:

**Հարունակիր Հոփփախմէ:**

—Այսպէս ահա քառատուն օր, յարութիւնից յետոյ միտուվ երկրի վերայ երևեցաւ բոլոք աշակերտներին և տմներն էլ հաւատացին—թէ իրենց Տէր և Վարդապետ Յիսուս Քրիստոսը յարութիւն է առել մեռեներից<sup>1)</sup>:

<sup>1)</sup>) Դասը կենդանացնելու և սաների միշողութեան մէջ տպաւորելու համար՝ ուսուցիչը մէկին նշանակում է իրքե-

Յիսուսի Յարութեան յիշտառակը կամ Զատիկը կառարում ենք Հարշարանաց կամ Աւագ շաբաթի Կիւրակէ օրը։

Ծառ լաւ բայց նվ կասէ ինձ՝ ինչու մենք Կիւրակէ օրն ենք հանգստանում մեր գործերից, չէ որ Աստուած աշխարհը վեց օրում ստեղծեց և հանգստացաւ եօթներորդ օրը—որ շաբաթ էր։

—Ե՞ս կըսեմ. ես ադ դիտեմ. հայրս պատմել է ինձի ատոր պատճառն։

Ասն Արաքսիա։

—Ճիշտ է՝ Աստուած իր հանգիստն առաւ Արտրչութեան եօթներորդ օրն, ագ օրն շաբաթ էր. շաբաթ կիշտնակէ հանգիստ. Հրէաներն շաբաթն շատ խիստ կպահեն, գործ մը չեն գործեր. Սակայն որովհետեւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս միաշաբաթ օրն յարութիւն առաւ՝ ուստի ադ հրաշափառ Յարութեան յիշտառակն նորահաւատ Քրիստոնէաներուն յիշողութեան մէջ անմոռաց պահելուն համար՝ որաշեցին փոխանակ շաբաթու՝ միաշաբաթն պահել իբրև օր հանգստի. որն ասուեցաւ Կիւրակէ։

Տեսնեմ, նվ ինձ կասէ—թէ ինչու Զատիկը կարմիր ձւով ենք չնորհաւորաւմ միմեանց։

— Զգիտենք, չենք սովորել. գնաք սովորցրէք մեզ. Հատ լաւ, ես կպատմեմ. լսեցէք...<sup>1)</sup>։

Վրկնիր Հրահատ։

—Երբ կժագաւորէք Տիրերիսս կայսրն Հռավմայ. ան-

---

պատմող, միւսին իբրև հիեշտակ, միւսը Մարիամ Մագթաղենացի, երկուսին աշակերտուհիներ, չորսին պահապաններ և մի քանի հոգի ևս իբրև ատենակալներ։

<sup>1)</sup> Պատմում է ուսուցիչը.

գամ մը Զատկին օրն Սուրբ Պատարագէն եաք՝ երբ Տիրերիոս դահին վրայ նստած կըսպասէր՝ կմթենայ անոր Մարիամ Մագդաղենացին և տալով անոր իր ձեռքին բռնած կարմիր ձուն՝ կըսէ «Քրիստոս յարե՛աւ ի մեռելոց»։ Աղ անցքէն ետք՝ սովորութիւն եղած է Քրիստոնէաներուն մէջ կարմիր ձւով չնորհաւորելու Զատիկն

Կրկնեցէք—իւղաբեր, Սիրուշ, Լուսիկ, Եղիկ, Գոհարիկ, Մանուշակ<sup>1)</sup>։

Հասկացաք, երեխամք։

—Հասկացանք. ի՞նչ լաւն է, տանը կպատմենք. ի՞նչպէս կուրախանան հայրիկն ու մայրիկը։

Մի բան էլ պիտի հարցնեմ—Յիսուսի ծննդեան և Յարութեան տօներին ի՞նչ սովորութիւն կայ մեր մէջ. յոյս ունիմ որ կդժնէք։

—Ես կասեմ։

Ասա Արեգնազան։

—Այդ երկու սեծ տօներին Տնօրննէքի սովորութիւն կայ. քահանաները ման են գալի...

Պէտք է ասել շրջում են<sup>2)</sup>։

—Քահանաներն շրջում են ժողովուրդների տները և օրհնում են։

Հապա տեսնեմ—կարճ էք ինձ ասել—ծննդեան տնօրննէքին ի՞նչ շարական են ասում և ի՞նչ Աւետարան են կարդում։

—Էլի ես կասեմ։

Դու սպասիր տեսնեմ էլ ով կարող է ասել։

—Զգիտենք. Արեգնազանը թող ասի։

Ասա. Արեգնազան։

<sup>1)</sup> Կրկնում են սաները։

<sup>2)</sup> Հասկացնել—աւելի լաւ է ասել շրջում են. թէ՛ւ ալնպէս էլ կարելի է։

— Ծննդեան տնօրհնէքին երգում են ծննդեան շարտկանը — Խորհուրդ մեծ և պքանչելի. իսկ Աւետարանը՝ Մկրտութեանն են կարդում — թէ ինչպէս մըկրտութեանը Յիսուսը Յովհաննէս Մկրտչից Սսմմ և Զատկի աընօրհնէքի մասին։

— Ասաւ։

— Զատկի տնօրհնէքին երգում են Յարութեան շարտկանը — Այսօր յարեաւ ի մեռելոց... իսկ Աւետարանը՝ Յարսւթիւնից յետոյ Աւետարանն են կարդում. որով պատուիրում է Յիսուս իւր աշակերտներին գնալ ամեն աշխարհ և քարոզել Աւետարանը. հաւատացովներին մըկրտել յԱնուն Հօր և Որդւոյ և Հոգոյն Մրբոյ։

Հատ լաւ է.

Մի բան էլ հարցնեմ դասը կվերջանայ — Ծննդեան և Զատկի երկրորդ օրը՝ Բ'նչ օր է և Բ'նչ սովորութիւն կայ։

— Ելի ես կասեմ։

Ասաւ Արեգնազան։

— Ծննդեան և Զատկի երկրորդ օրը՝ Մեսելոց օր է. ժողովուրդը գնում է հանգստարան և քահանաներին. օրնել է տալիս իրենց ննջեցեալների գերեզմանները։

Եյս ևս լաւ ասացիր, մի բան էլ հարցնեմ և վերջ. հապա տեսնեմ՝ նվ ինձ կասէ — Զատիկ. Կիւրակէ. օրը Եկեղեցու գաւթումը կամ բակումը Բ'նչ են բաժանում ժողովրդին։

— Այդ էլ ես կասեմ։

Ասաւ Աշխէն։

— Զատիկ Կիւրակէ Սուրբ Պատարագից յետոյ Եկեղեցու բակումը մեծ պղնձի մէջ միս են եփում և բաժանում Եկեղեցուց դուրս Եկող ժողովրդին, դա ասւում է Ախտա. Ննջեցեալների յիշատակի համար է այդ և

իրրեն բերան բացէք մտի. որովհետև, թէ և ուտիսը բաց-  
ռում է շաբաթ երեկոյեան, բայց նաւակատիք է. միս  
ուտել չէ կարելի, այլ ուտում են կաթնեղին, իւղեղին,  
ձկնեղին. մսեղինի բերան բացէքը լինում է Կիւրակէ  
օրը Սուրբ Պատարագից յետոյ Ախառով։

Հատ լաւ. բայց ես մի բան կաւելացնեմ—Ախառը  
գլխաւորապէս ժողովրդի աղքատ դասակարգի համար  
է, որ տօնի պատճառով բաւականութիւն տրուի նրանց,  
իրրեն եղբայրական ծաշ, որ մնացել է Առաքեալների  
ժամանակից <sup>1)</sup>։

Հատ լաւ, հերիք է. լաւ պատրաստեցէք։

—Հատ լաւ կսփորենք։

#### Թ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՒՄ.

##### ԽԵ. Դաս.

Կրկնութիւն։

Այսօր ձեզ մի սիրուն գաս պիտի տամ, բայց առաջ  
մի բան պիտի հարցնեմ, տեսնեմ ով կգտնէ պատասխանը  
—ի՞նչ տօն կամ ի՞նչ օր է գալիս՝ երբ գնում են ծաղիկ-  
ներ հաւաքելու, յետոյ անխօս ջուր են բերում, յետոյ  
զանազան իրեր են հաւաքում իրարից՝ օրինակ դինտեր,  
մանեակներ, ապարանջաններ, մատանիներ...։

—Գինտեր, մանեակներ, ապարանջաններ չգիտենք  
ի՞նչ են։

Գինտը՝ ականջի օգն է, որ ականջից կախում են  
տեսնել էք։

—Այն, այն. գիտենք։

Մանեակը վզից են կախ անում, մի զարդ է։ այդ  
էլ տեսնել էք։

<sup>1)</sup> Հասկացնել սաներին, մանկական մտքին ըմբռնելի  
կերպով, Առաքեալների ժամանակուալ «Եղբայրական ծաշ»—  
Հասարակաց սեղանի» սովորութիւնը և ալին։

— Այն, տեսել ենք:  
Սպարանջանը՝ բրասլետն է...

— Այն, այդ գիտենք:  
Ուրեմն երեքն էլ գիտէք. այն:

— Այն, գիտենք:  
Ճափ լաւ... ահա այդ իրերը և գրանց նման էլի  
տորիշ բաներ հաւաքում են և վիճակ են հանում «Ճան  
գիւղում»-ը երգելով:

— Ես կասեմ:

— Ես էլ կասեմ: — Իմ քոյրս խաղացել է «Ճան  
գիւղում»-ը Նա պատմել է ինձ՝ թէ այդ ինչ օր է գա-  
գիս և այդ օրը ինչ մեծ տօնել կատարւում:

Ճողեր և Հերիխնազ. դնոք կատէք՝ թէ Արեգնազանն  
ասի:

— Արեգնազանն ասի. Նա լաւ կառի մեզանից:

Ասա՛ Արեգնազան:

— «Ճան գիւղում»-ը լինում է Համբարձման օրը,  
Համբարձումը այն տօնն է՝ որ Քրիստոս իւր Յարուշ  
թիւնից քառասուն օր անց՝ երկինք համբարձաւ, Քրիս-  
տոսի Համբարձման տօնը միշտ հինգշարթի է կա-  
տարւում:

Լաւ է. մի բան էլ հարցնեմ — Քրիստոսի Համբարձ-  
ման տօնի օրը Տփխիսին մօտիկ եղած ուխտատեղինեա-  
րից որին տօնն է, ուր շատ ուխտաւորներ են գնում:

— Ես կասեմ: — Ես միշտ գնում եմ ծնողներիս հետ:

— Ես էլ գիտեմ, երկու անդամ եղել եմ:

— Ես եղել եմ և լսել եմ թէ այդ օրը քանի ուխ-  
տաւորներ են լինում և քանի գլուխ ոչխար ու զառն է  
մորթւում:

Գոհարիկ, Ճամիրամ, Աստղիկ. դնոք կատէք թէ  
Արեգնազանն ասի:

— Արեգնազանը շատ բան ասեց, մենք այդ չգիտենք, նա ասի լաւ է. մենք էլ կսովորենք:

Ասա Արեգնազան:

— Համբարձման տօնին՝ Թեղեթօքա է, այսինքն Թեղեթի Սուրբ Գէորգ Եկեղեցու տօնն է. տսում են—թէ երեք հազարի շափ ուխտաւորներ են հաւաքւում և վեց հարիւրի շափ ոչխար ու դառն է մորթւում իրրե մատադ։ Ուխտաւորները տեղաւորւում են Վանքի սենեակներում, գիւղացւոց տներում և վրաններում. կառքերին, սայլերին, ֆուրգուններին թիւ չկայ։

Հատ լաւ. ուրեմն գտաք—թէ ինչ պիտի լինի այսօր մեր դասը, այժմ տեսնեմ—պատմող կայ՝ թէ եռ պիտի պատմեմ։ Դիտեմ Արաքսիան կարող է պատմել բայց ես կպատմեմ—յետոյ նա կկրկնէ...<sup>1)</sup>:

Կրկնիր Արաքսիա։

— Ես պատմեմ պիտի Համբարձումն Քրիստոսի Յիսուս իր Յարութենէն ետքն՝ քառասուն օր երկրիւ վրայ կշրջէք, իր աշակերտներուն կերևնար և Աստուծոյ պրայութեան վրայօք կիսումէք, կուսուցանէք և շատ մը մութ բանեք կբացատրէք ու կմեկնէք։ Եւ երբ հաց կրեկանէին, կճաշէին անզամ մը՝ պատուէք կուտար աշակերտներուն շմեկնիլ. չհեռանալ երուսաղեմէն, այլ սպասել Հօր աւետիքին, որուն մասին իրմէն լսեր էին։ Հարունակիր Հրահատ։

— Անզամ մը պատուէք տուաւ անոնց գնալ Զիթենեաց լեառն ու ինքն ալ գնաց անոնց մօտ. հոն ալ քարոզեց անոնց ու ըստաւ «Ես կուղարկեմ ձեզ Սուրբ Հոգին և դուք գօրութիւն կառնուք վկայ ըլլալու ինձի երուսա-

<sup>1)</sup> Ուսուցիչը պատմում է և մութ կէտերը բացատրում լետոյ կրկնել է տալիս ձեռնհամներին.

ղիմին, Հրէաստանին, Սամարիային և բոլոր երկիրներուն մէջ։ Այս որ ըստւ, անոնք կնայէին, համբարձաւ և ամժն ծածկեց Անոր աշակերտներուն աչքէն։ Մինչ դեռ անոնք զարմանքով պատած վեր կդիտէին՝ երեցան անոնց երկու մարդիկ սպիտակ հանդերձներու մէջ և ըսին անոնց։ «Ո՞վ Դալիլիացի մարդիկ. ինչու զարմացմամբ կնայիք դէպի երկինք. այս Յիսուս՝ որ վերացաւ ձեզմէ դէպի երկինք, ինչպէս տեսաք Անոր վերանալուն ատեն՝ անանկ այգաբու է որոշեալ օրն»<sup>1)</sup>։

Ճարունակի Արէգնազան։

— Դրանից յետոյ Զիթեսեաց լեառը թողեցին և դարձան երուսաղէմ, և սպատում էին վերնատան մէջ։ Քրիստոսի Համբարձման կամ Երկինք Վերանալու յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Զատկից քառասուն օր յետոյ, միշտ հինգշաբթի օրը։

Ճատ լաւ պատմեցին Արաքսիան, Հրահատը և Արեգնազանը. բայց հաօկացնք ամենքդ էլ։

— Ճատ լաւ հասկացանք։

Այժմ մի հեշտ բան պիտի հարցնեմ, տեսնեմ նզ կդտնէ—Յիսուս որ Համբարձաւ երկինք՝ րաժանուեց իւր աշակերտներից. չէ։

— Այն. բաժանուեց։

Ի՞նչ էք կարծում—աշակերտները կուրախանային՝ թէ կախրէին։

— Ես կատեմ. Ես էլ։

Ծնահիտ, դու ասա. իսկ դու Վարթիթեր նորա պակասը լրացրու, թէ որ կլինի։

1) Ուսուցիչը ընտրում է ձեռնհասներից մէկին՝ իբրև պատմող, միւսին՝ իբրև Յիսուս, որ պատուէր է տալիս. տասն և մէկին՝ առաքեալներ. երկումն՝ հրեշտակներ. և այնպէս պատմել է տալիս իւրաքանչյուրին։

— Աշակերտները շատ կտիրէին, որովհետեւ էլ չէին  
տեսնի նորան:

Էլ ոչի՞նչ:

— Էլ ոչի՞նչ:

Վարդիթեր, կարող ես պակասը լրացնել:

— Կարող եմ:

Ասա:

— Բայի շտեսնելուց՝ չէին էլ լսի նորա սուրբ խօս-  
քերը, նորա քարոզութիւնը, չէին տեսնի նորա բժշկու-  
թիւնները. երեք տարի իրենց սիրող ուսուցչի հետ մի-  
ասին էին. այժմ նա չկայ՝ ինչպէս ուրախանան. հիմա  
որ մեր օրիորդին տանեն ուրիշ դասարան՝ մենք չենք  
տիրի. ի հարկէ կտիրենք, թէպէտ գիտենք—որ մենք  
նրան ամեն օր էլ կարող ենք տեսնել. իսկ նրանք՝ էլ  
չէին տեսնելու ամենեին, մինակ պիտի մնային. տխուր  
չէին լինի:

Գուր ասացիք—թէ կտիրէին. ուրեմն մենք էլ պի-  
տի տիրենք, ու նորան ամենեին չենք տեսել. նրանք  
երեք տարի գոնէ տեսել են, խօսել են հետը, միասին  
են եղել:

— Ես կասեմ:

Ասա Արենատ:

— Մենք ինչու պիտի տիրենք, քանի որ չենք տե-  
սել. շտեսած մարդու համար կարելի՞ է տիրել:

Հապա ինչու համար գուր «ո՛ւֆ, փիս Յուդայ» ա-  
սացիք. երբ դասի մէջ ասուեցաւ—թէ Յուդան մատնեց  
Յիսուսին. յիշնամ էք:

— Այն, ճիշտ է, յիշում ենք:

Ուրեմն տիրեցաք, չէ:

— Եյն տիրեցանք:

Ինչու տիրեցաք. չէ որ Յիսուսին չէիք տեսել. բա-

ցի դրանից, երբ դուք սովորեցիք—թէ Յիսուսի մասին վճիռ կայացրին թէ պիտի խաչուի և խաշը ինքն էր տանում, ծանր խաչը. և խաչեցին Յիսուսին. դուք այս բոլորը լսելուց յետոյ ուրախացաք՝ թէ տխրեցաք:

—Ի հարկէ տխրեցանք:

Ինչու տխրեցաք. տեսել էիք Յիսուսին:

—Զենք տեսել, բայց լսում էինք Զեզանից դասը և տխրում էինք.

—Զէ որ դուք ասացիք—շտեսած մարդու համար կարելի է տխրել. այժմ տեսնում էք—որ ստեսած մարդու համար էլ կարելի տխրել. ճիշտ է:

—Ճիշտ է. մենք սխալուեցինք. ներեցէք:

Այդ ոչինչ. բայց մի ուրիշ բան կայ—ես հարցնում եմ՝ թէ Յիսուսի Համբարձումից յետոյ աշակերտները կտխրէին՝ թէ կուրախանային:

—Ե՞ս կըսեմ:

Ասա Հրահատ:

—Երկուքն ալ կրնար ըլլալ. կտխրէին իսենց ուսուցչին բաժաննուելնուն համար. ադք սովորական է ամենուս համար. կուրախանային նաև՝ որ իրենց ուսուցչի փառքն տեսին. սակայն անոնք սովորականէն դուքս պիտի ըլլային, անոնք չպիտի տխրէին, անոնք ամեն ինչ հասկցած էին իրենց ուսուցչին, բոլոր ըլլալիքներն առաջուլնէ գիտէին. ան ալ գիտէին—թէ իրենց ուսուցիչը հասարակ մարդ մը չէ՝ այլ Աստուած է. Ասկէ հետեցնելու է—թէ անոնք կուրախանային՝ որոնց հաւատոնին ամուր ու պինդ էր. և անոնք կտխուէին՝ որոնց հաւատնին թոյլ էր:

Հրահատի ասածը հասկացաք երեխայք՝ թէ բացատրեմ:

— Շատ լաւ հասկացանք. նա ասում է—թէ այն աշակերտները՝ որոնք հաստատ հաւատ ունէին՝ կուրա-

իտնաւին. իսկ որոնք թոյլ հաւառ ունէին՝ կախըէին. մենք էլ ենք այնպէս—ով մեղանից հաւառ ունի՝ որդուր է. իսկ ով հաւառ շունի՝ մեղքեր է գործում. ով հաւառ շունի՝ ախրում է, երբ մի նեղութիւն է զառահում իրան. իսկ ով հաւառ ունի՝ ուրախանում է:

Ճիշտ ասաց Սրեգնազանք. Բաւական է՝ թէ մի պատմութիւն էլ սովորենք:

—Մէկն ալ սովորենք:

—Սովորենք, սովորենք:

Ժ. ՀՈԳԵԴԱԼՈՒՍՑ.

Լաւ. ով կարող է տօել ինչի մասին պիտի սովորենք:

—Ե՞ս կըսեմ — չոգեգալստեան մտոին:

Ես հարցնում եմ—թէ ով կարող է զառմել, որ իմանամ թէ բացի Սրաքսիան՝ ուրիշներն էլ զիանն, թէ ոչ. Ես գիտեմ որ Սրաքսիան կպատմէ. բայց ես կուզէի որ ուրիշներն էլ պատմէին: Բայց ես կպատմեմ. լսեցէք...<sup>1)</sup>: Կրկներ Սրաքսիա:

—Ինչպէս պատուիրեր էր Յիսուս իր աշակերաներուն շմեկնիլ Երուսաղէմէն և մնալ վերնատունին մէջ մինչև հօր աւետիքն ստանալն՝ անպէս ալ ըրին: Համբարձումէն առն օր անցեր էր. իսկ չըտաներուն Պատէքէն յիսուն օր եաք մեծ տօն մը կուգար, որ Պետականական կըսուէր. ադ կնշանակէ յիսներորդ օր. այսինքն Պատէքէն յիսուն օր ետքը կատարուելիք տօն. ադ օրն էր՝ որ Սուաքեալներն ու Յիսուսին աշակերաներն հաւա-

<sup>1)</sup>) Պատմում է ուսուցիչը և բացարում ճութ աեղերը. Կրկնել է առլիս ձեռնհամներին:

քուեր էին Վերնատոմնին մէջ և կսպասէին Սուրբ Հոգուն:

Ճարունակիր Հրահատ:

—Եւ յանկարծակի երկնքէն Շնչին մը եղաւ և սաստիկ հողմոյ մը նման եկաւ ու տունը լցուց, ուր որ անոնք նստած էին: Եւ կրակի նման լեզուներ երեցան և իւրաքանչիւրին վրայ մէկ մէկ լեզու իջաւ: Ամենք հոն եղողներն լցուան Սուրբ Հոգուվ ու ամեն աեսակ լեզուներով սկսան խօսել: Ճատ մը ժողովուրդ վերնատան շորս դին կանդնած կլսէին. շատերն կզարմանային—թէ ուսկէ և կամ նրբ սորվեցան ասոնք—աս Դալիլիացի տգէտ ձկնորսներն մերին լեզուներն ու բարբառներն, որ կխօսին ասանկ ազատ ու անսխալ. շատերն ալ ծաղրելով կըսէին—խմած, արբած կըլան. իրենք ալ չգիտեն ինչ կխօսին: Ան ատեն Պետրոս առաքեալն սկսաւ անոնց քարոզել. ադ քարոզին վրայ երեք հազար հոգի հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան: Աս տօնը կըւուի Հոգեգալուստ և կկատարուի Զատկէն յիսուն օր՝ իսկ Համբարձումէն՝ տասն օր ետքը:

Ճատ լաւ է, ապրիք: Ո՞վ ինձ կասէ—հարկաւոր էր որ Սուրբալները ամեն լեզու խօսէին և ինչու համար: —Չգիտենք. Դուք պատմեցէք:

Հարկաւոր էր. վառն զի նրանք պիտի երթային ամեն աշխարհ, ամեն աղգերի մէջ և Քրիստոսի Աւետարանը ամենքին և ամեն տեղ պիտի քարոզէին, հաւատացողներին պիտի մկրտէին. Եթէ լեզուներ չգիտենային՝ չէին կարող ամեն աղգերի լեզուվ քարոզել:

Այժմ տեսնեմ ով ինձ կասէ—եթէ Սուրբալները պիտի գնային ամեն աշխարհ քարոզելու՝ ուրեմն մեր աշխարհն էլ կգային, չէ:

—Այս, կգային:

Հաւ. իսկ հվ եկաւ մեր աշխարհը քարոզելու Քրիստոսի Աւետարանը:

— Ե'ս կըսեմ:

Եսա Սրաքսիա:

— Մեր Հայաստան աշխարհն եկան քարոզելու Թագէոս և Բարդուղիմէոս առաքեալները:

Ճատ լաւ. կրկնել խմբովին:

Լաւ. ուրիմն լաւ կպատրաստէք այս դասը. Հետեալ դասին կրկնութիւններ կանենք մեր սովորած տասն գլուխ պատմութիւնների:

ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

### ԽԶ. Դ ա ս.

Անցեալ անգամ խօստացանք կրկնութիւն անել մեր սովորած տասն գլուխ պատմութիւնների: Մեր այս կըրկնութինները նոյն ձեռվ կրինին՝ ինչպէս նախկին երկու ընդհանուր կրկնութիւնները - ամեն մէկիդ մի մի բան կհարցնեմ: Ուրիմն սկսենք Մարիամ Սուրբ կուսի ծըր նունդի պատմութիւնից. բայց նախ՝ ասա ինձ Արեգնացան, ինչպիսի ամուսիններ էին Յովակիմն և Աննան և ինչպէս են մեր ծնողները: Համասփե՛ւր, դու ինձ ասա ի՞նչ էին խնդրում Յովակիմ ու Աննան. յոյս ունենալն է լաւ թէ յուսահատուելը: Տիգրանուհի՛, ինչն Յովակիմ ու աննան ուզում էին անպաճառ որդի ունենալ: Զարունակիր Արաքսիա: Հրահնատ, դու պատմիր թէ որմնիք էին Մարիամ Սուրբ Կուսի ծնողներն և նւր էին բնակում: Տիգրանուհի՛, դու ինձ ասա — ի՞նչ զանազանութիւն կայ այն ուրախութեան մէջ՝ որ ունենում են մեր ծնողները որդի ունենալուց յետոյ. և այն ուրախութեան մէջ՝ որ ունեցան: Յովակիմ ու Աննան: Արեգնացան, ասա ինձ — կան մար-

գիկ՝ որոնց ընծան չէ ընդունում Աստուած։ Հրահնատր-  
բնչպիսի ընծայ է ուզում մեզանից Աստուած։ Տիգրա-  
նուհի՛, երբ է կատարում Մարիամ Սուրբ Կուսի ծըն-  
դեան յիշատակը։ Այժմ Մարիամ Սուրբ Կուսի Տաճա-  
ռին ընծայուելու պատմութիւնը կրկնենք։ Հրահնատ,  
պատմիր ինձ խոստումը կատարելու և չկատալելու մասին։  
Արաքսիա, ինչ կանէին Յովակիմ ու Ըննան՝ երբ իրենց  
աղօթքը լսեց Աստուած ու խնդիրքն էլ կատարեց։ Աղեգ-  
նազան, չէ ին ափսոսալ նոքա ընծայելու իրենց գուստը  
Տաճարին։ Տիգրանուհի՛, ինչ կնշանակէ Տաճարին ընծա-  
յելը։ Համասփի՛ւո, ծնողները ինչու են ընծայում Տաճա-  
րին իրենց աղջիկներին որ կոյս լինեն։ Ինչ պիտի աննե-  
նրանք։ Ճարունակեցէք Հրահնատ եւ Արաքսիա։ Հրա-  
հնատ, քանի տարեկան էր Մարիամ Սուրբ Կոյսը որ տա-  
րան ընծայելու Տաճարին, ով տարաւ և ինչու ծնողնե-  
րը։ Նուարդ, ասա ինձ—ինչու Երուսաղէմ տարան։ Նա-  
զարէթում տաճար չկար։ Ճարունակեցէք Շողե՛ր եւ Երա-  
նե՛ակ։ Արաքսիա ուղիբ նուարդի, Ճողերի և Երանեա-  
կի սխալը։ Արեգնազանն, պատմիր ինձ—քանի օրուայ-  
ճանապարհ էր նազարէթից Երուսաղէմ և ինչպէս կտա-  
նէին երեխային։ Հրահնատ, ինչ կանէին Յովակիմ ու  
Ըննան Երուսաղէմ համնելուց յետու։ Արաքսիա։ գու  
ինձ պատմիր—թէ ինչ կանէր այնտեղ Մարիամ Սուրբ  
Կոյսը և միշտ կմնար այնտեղ։ Տիգրանուհի՛, երբ է կա-  
տարում Սուրբ Կոյս Մարիամի Տաճարին ընծայուելու  
յիշատակը։

Այժմ Մարիամ Սուրբ Կոյսի Աւէտման պատմու-  
թիւնը կրկնենք։ Աստղի՛կ, ինչ կաղօթէր Մարիամ Սուրբ  
Կոյսը կամ ինչ կինդրէր Աստուածուց։ Ճարունակիր Լու-  
սընթագ։ Արաքսիա, դու ասա թէ ինչ կաղօթէր և  
ինչ կմտածէր իւր ազգական Յովսէփի մասին։ Աղեգ-

Նազան գու պատմիր—թէ ամն էին սպասում չըէտնեցք, նրանց հետ և Մարիամ Սուրբ Կոյսը. մնկը էլ եթէ մէկին սպասում ենք՝ Բնշ ենք անում: Հըահնատ, պատմիր—Բնշ աւէտիք տուեց հրեշտակը Մարիամ Սուրբ Կուսափն: Մաքրունի՛, կոպատէր Մարիամ Սուրբ Կոյսը պյտպիսի մի մեծ աւէտիքի: Ծարունակիր Լռասարեց: Ծարունակիր Հրահնատ և լրացրու: Ե՞րբ է կտարւում Մարիամ Սուրբ Կուսի Աւէտման յիշատակը:

—Այժմ Յիսուսի ծննդեան պատմութիւնը կրկնենք: Արեգնազմն, դու ինձ պատմիր—թէ հրեշտակի տուած աւէտիքը կկատարուէր թէ ոչ: Լուահիկ, դու ինձ պատմիր—թէ Բնշ են պատրաստում երեխայի համար ծնուելուց առաջ: Թագաւորը, որ ուզում է իմանալ Բնշքան հօգի են ապրում իւր աէրութեան մէջ՝ Բնշ է անում— Սոսա նարգիս: Հրահնատ, դու պատմիր աշխարհագրի մասին: Մենք՝ Հայերս որ տէրութեան մէջ ենք ապրում, մամ հպատակն ենք, ումն ենք հարկ տալիս—ասացէք Զարմանդուխտ, Անահիտ, Աշխեն եւ Զարուհի: Իսկ դու, Արեգնազմն, ասա Հրէաների մասին: Արաքսիա, դու ինձ ասա Բնշ հրաման հանեց Օգոստոս կայսրը և պատմիր Յիսուսի ծնունդը: Արեգնազմա՞ն—ինչն Յովաէկին ու Մարիամ Սուրբ Կոյսը նազարէթում չցուցակագրուցան, այլ գնացին Բեթղեհէմ: Ծարունակիր պատմութիւնը, Արաքսիա: Մարիամ Սուրբ Կուսից ով պիտի ծնուէր և ումն էին սպասում Հրէաները. ասա ինձ Հրահնատ: Եթէ Մարիամ Սուրբ Կուսից ծնուած որդին պիտի լինէր Փրկիչ և իւր հօր Դաւթի աթոռը պիտի ժառանգէր կամ Թագաւոր լինէր՝ ինչն ուրեմն այրի մսուրի մէջ ծնաւ և ոչ փառաւոր և հոյակապ պալատներում. ասա Հրահնատ, Ծարունակիր պատմութիւնը

Արաքսիա: Ցիուլի Քրիստոսի ծննդեան յիշտառկը  
նրբ ենք կտարում, Արաքսիա:

— Այժմ կրկնենք Հառասուն օրական Ըրիստոսին  
Տաճար տանելու պատճելթինը: Մեր մէջ երբ երեխան  
մկրտուելուց յիսոյ քառասուն օրտիսն է գտանում՝ ինչ  
են տնում ծննդները, ինչ սպառութին կոյ. առան  
Արեգնազան: Մեր մէջ պարտովիր չէ քառասուն օրտ-  
կան երեխային Եկեղեցի տանել՝ իսկ Հրէտների մէջ  
ինչպէս էր. պատմիր Համասփիւր. շարումտկիր Արեգ-  
նազան. շարումտկիր Լուսնթագ. շարումտկիր Արեգնա-  
զան. պատճելթինը վերջացրն Լուսնթագ: Ինչն հա-  
մար քառասուն օրտկան երեխային Եկեղեցի էին տա-  
նում. պատմիր Լուսնթագ. զու պատմիր—Արեգնազան:  
Հապան Արաքսիա, զու պատմիր. նրանք կիսուս պատ-  
մեցին: Հրանատ, զու ասու ինձ—թէ ինչն երեխային  
կրկին յետ տուն ենք բերում. ինչն Տաճարում շենք  
թողնում: Արեգնազան, երբ ենք կտարում քառասուն  
օրտկան Քրիստոսին Տաճար տանելու յիշտառկը:

ԽԵ. Դ Ա Ա.

Այսօր պիտի կրկնենք մեացած միւս հինգ պատ-  
ճելթինները: Այժմ կրկնենք Յիսուսի Մկրտութեան  
պատճելթինը: Մեզանում երբ են մկրտում երեխային.  
առան Արեգնազան. Քրիստոսին երբ կմկրտէին. առան  
Շողակաթ. զու Խողաքեր. զու ասու Վարդիթեր: Ո՞ր-  
աեղ մկրտուեց Քրիստոսը. ասան Հեղինէ. զու Նարգէս.  
զու Շողեր: Ինչ է Յորդանանը. ասան Վարսենիկ. զու  
Յասմիկ: Պատմիր Արաքսիա Քրիստոսի Մկրտութինը:  
ինչն եկաւ Յիսուս Յորդանան Յովհաննիսի մօտ, ասան  
Լուսիկ. զու ասա, Արեգնազան: Որոնք էին մկրտում

Յովհաննիսից, ասաւ Արեգնազան։ Ինչու էր մտնում Յիսուս ջուրը և եթէ ուզէր մկրտուիլ՝ Յովհաննէսը կմկրտէր նորան։ ասաւ Արեգնազան։ Ճարունակիր պատմութիւնը, Արաքսիա։ Ինչու էր մկրտում Յիսուս Յովհաննիսից, քանի որ մեղք շունէր—Հրահան։ Ճարունակիր պատմութիւնը, Արաքսիա։ և ասա—Երբ է կատարում Յիսուսի Քրիստոսի Մկրտութեան յիշատակը։

— Եյժմ կրկնենք Յիսուսի երուսաղէմ մտնելը կամ ծաղկազարդ։ Ի՞նչպէս է ասում Մեծ պասի վերջին Կիւրակէն։ առացէք ինձ նուարդ, Երանեակ, Եղափկ։ Այդ կիւրակէն ինչու է ասում ծաղկազարդ կամ ծառզարդար, ասաւ Արեգնազան։ ծաղկազարդ Կիւրակէին ինչու սստեր են բաժանում, ասաւ Արեգնազան։ Իսկ Երուսաղէմի ժողովուրդը ի՞նչ ոստերով գնացին ընդ առաջ Յիսուսի և Էլի ի՞նչպիսի Կիւրակէ է ասում։ ասաւ Արաքսիա։ Իսկ դու Արեգնազան, ասա ի՞նձ—ծաղկազարդ Կիւրակէն ինչու է ասում Արմաւենեաց տօն և ի՞նչ են արմաւենին ու ձիթենին։ Նոցա փոխանակ մեր կողմը որ ծառն է ծաղկում ամենից առաջ։ Պատմիր Արաքսիա ։ Յիսուսի Երուսաղէմ մտնելու պատմութիւնը և Յուղայի մտադրութիւնը։ Ասա ի՞նձ Արեգնազան, ի՞նչ հարկ կար որ Յուղան մատնէր Յիսուսին, ինչու իրենք չըկաները չէին բռնում և ինչու նշան տուաւ՝ միթէ չըկաները չէին ճանաշում Յիսուսին։ Արաքսիա, պատմիր Ոտնալուան և Խորհրդաւոր Ընթրիքը, Յիսուսի դուշակութիւնները—Յուղայի մատնութեան, Սշակերտների փախչելու և Պետրոսի ուրացութեան մասին, Յիսուսի աղօթքը Դէմուհմանի պարտեզսւմ, Յուղայի մատնելը Յիսուսին, Աշակերտների փախչելը, Պետրոսի ուրացութիւնը, Պիղատոսի վճիռը, Յիսուսի Խաչուիլը, Մահը և Թաղումը։

—Այժմ կրկնենք Յիսուսի Յարութիւնը։ Պատմիր Արաքսիա—թէ ծաղկազարդ Կիւրակէ երեկոյեան ժամերգութիւնից յետոյ Բնշէ է կատարում մեր Եկեղեցին. վերջին շաբաթը Բնշպէս է ասւում և իւրաքանչիւր օրուայ խորհուրդը։ Արելուազնն, պատմիր ինձ Յիսուսի Յարութիւնը. շարունակիր Արաքսիա. շարունակիր Արեգնազան և ասա ինձ—երբ ենք կատարում Զատիկը։ Արաքսիա, դու ինձ ասա—թէ Բնշնւ մենք Քրիստոնեաներս Կիւրակէ օրն ենք հանգստանում։ Հրահատ ասա ինձ—Բնշնւ Զատիկը կարմիր ձւով ենք շնորհաւորում։ Խննդեան և Զատկի տնօրհնէքների և Մեռելոցների մասին պատմիր ինձ Արեգնաղան։ Ոխառի մասին դու ասա, Աշխէն։

—Այժմ կրկնենք Յիսուսի Համբարձումը։ Պատմիր ինձ Արեգնազան «Հանգիւլում»-ի և Թելէթի տօնի մասին։ Իսկ դու, Արաքսիա, պատմիր Քրիստոսի Համբարձումը։ Յիսուս որ Համբարձաւ երկինք՝ բաժանուեց իւրաշակերտներից. նրանք կտխրէին՝ թէ կուրախանային։ ասացէք ինձ—Անահիտ, Վարդիթեր, Արեւատ, Հրահատ։

—Այժմ կրկնենք Հոգեզալուստը, և կրկնութիւնները կաւարտենք։ Դու պատմիր, Արաքսիա, ամբողջ պատմութիւնը։ Իսկ դու Հրահանտ. ասա ինձ—հարկաւնը էր՝ որ Առաքեալները ամեն լեզու խօսէին և Բնշնւ էր հարկաւոր։ Արաքսիա, Յիսուսի Շռաքեալներից արմնք եկան մեր Հայաստան աշխարհքը քարողելու Քրիստոնէութիւնը։ Ե՞րբ է կատարւում այս տօնը Արաքսիա։

---

Ս Խ Ա Վ

բաժիններ  
միտքն.  
համար  
և  
կրկնութիւ  
ների  
կտալ,  
կարձելի  
հասուկտո  
արդէն,  
զուցէ,  
Բազրատո  
Տէռուչ  
մալիկին,  
խօսքը,  
մալիկը  
ունին,  
անցնել  
տան,  
Արտ.  
Նրանից  
Մասներ  
առողջէ  
պահում  
սիրում,  
աշխատո  
ունի,  
աղբարձ  
ինասմբ  
ի հարի  
լինի  
բային  
այնուն  
Ուրիշ  
գործող  
արդեւ  
շուրջ  
արդեւ  
շուրջ  
Դաւ

**Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Ր**

Ուղիղ	Հ	Սիալ	Ուղիղ	Հ
բաժինների.	5	համա	համա	34
միայն	"	— ջեր	ջեր	36
համար	"	Այն	— Այն	"
և'	6	— զէ	զէ	37
կրկնութիւնների	"	կողմում	կողմերում	"
կտակ	"	ասում են	ասում են	38
կարծ մի	7	Այն	— Այն	40
հատուկտոր	"	Այն	— Այն	41
արդէն	"	կոլսերի	— կոլսերի	"
գուցէ,	8	Ժամկոչը	— Ժամկոչը	"
Բազրատունի	"	Այն, ալո:	— Այն, ալո:	43
Տեսուչ	11	Շատ լաւ	— Շատ լաւ	"
մալրիկին,	19	— լաւ ալժմ	լաւ, ալժմ	"
խօսքը,	"	— լաւ.	լաւ.	44
մալրիկը	"	զիտացողները	զիտցողները	"
ունին,	"	կրկնի	կրկնիր	"
անցնել	"	Ասասէք խմբո-	Ասացէք խմբո-	
տամ,	20	վին: —	վին:	45
Այն,	"	Տեսնում է որ	— Տեսնում է որ	"
— նրանից՝	"	պաս պահելն է	պաս պահելն է	48
Ծնողներ—	"	հաւատում	հաւատում	"
առողջ են,	"	Ասան	Ասան	50
պահում են,	"	իմաստներ	իմաստներ	51
սիրում և	"	ծունը զնել:	Ծունը զնել.	54
աշխատանք	"	Ասան նողակաթԱսան նողակաթ	57	
ունի,	"	Ուսումը լտւ	Ուսումը լաւ	"
, աղքիւրներով.	21	հառկանում	հասկանում	58
Խնամքը	"	Յիշում էք	Յիշում էք	"
ի հարկէ	23	Լոյս ունի	— Լոյս ունի	60
լինի	"	քողերիս	քողերիս	"
բոպէին	23	ունիք	ունիք	"
այնտեղ	"	ուսումնարա-	ուսումնարա-	
Ուրեմն	"	նումը	նումը	62
ժողովրդի	"	հեշտ	հեշտ	63
արդեօք	25	Ասան նազլու.	Ասան նազլու:	"
1)	28	կտսեմ և կտրմ	կտսեմ	64
հսկն	29	ինքներդ տես-	ինքներդ տես-	
դուք	30	նում է—քոր	նում էք որ	66
քաշելով	"	Հոծարարձու-	Հոգաբարձու-	
ու քոլեր	33	ները	ները	"

<b>բան</b>	<b>բան</b>	<b>67</b>	<b>շատ՝ լաւաթիւն- շտա լաւու-</b>	
հեմ համար շի- ում համար է շի-	նուած	69	ներ թիւններ	
շորով	շորով	70	կսիրենք ու կսիրենք ու	
կասեմ	կըսեմ	"	պաշտենք կաշտենք 150	
Ալդ	Ալդ	72	որ լերկինս ես որ լերկինս ես-151	
Էլ էլի ով կասէ— էլի ով կասէ	"		մտ լաւ անտցիր շնան լաւ 153	
ալժմ երգենք— ալժմ երգենք	73	կասէք ես կարճ կասէք. ես	154	
թջ. Դաս	թջ. Դաս.	"	կասեմ	
գործը սկսելէն— գործն	74	համար ենք խնդրում	155	
առաջ		ինդրում		
խօսած դառը լսելխօսած դասն	"	ճաշակում է. ու ճաշակում է ու	161	
ես' կասեմ	ես կասեմ	76	Փաստաբութեան Փաստաբան.	171
ծնէր ու սնուցէր ծնէր ու սնուցեր	77	ոտացան	180	
ինչպէս	ինչպէս	"	կղկկուէր կսկսէր	
դասական զոգծը գործն	82	չտա պատմեն չտա	199	
մեզի	մեզի	"	Նս աւելի լաւ եմ Նս աւելի շտա	198
ալդ ամենը	ալդ ամենը	84	— Եո Էլ դիտեմ — Եո Էլ դիտեմ 203	
— Երգենք «մար Երդենք	"	Ես կասեմ	204	
մին		Հրահ ատը թող — Հրահատը	209	
Շարունակիր	Շարունակիր	85	ասի	
Վարդուհի		— Նրանք լոգ- — Նրանք լոգ-		
Գիտենք բայց — Գիտենք	87	նած կինին. նած		
չենք		աշարժ տօնն անշարժ		
— Լաւ. ալժմ թողլաւ. ալժմ	88	Արեգնազը Արեգնազանը	211	
Աշակերտները — Աշակերտները	"	Լուսնթանգ Լուսնթագ:	214	
Առանց աղմուկ — Առանց	"	Արեգնազանն ու Արաքսիա	225	
— Զեղաւ	Զեղաւ.	Արաքսիան		
Զարոհի	Զարոհի	Բեթքաղէ Բեթքագէ	227	
զասարան	զասարան	Սպասիր Արաք- Արաքսիա:	228	
— Ամփոփիր	Ամփոփիր	սիա,		
Հրահատ		Ոչինչէք ասում. չգիտէք:	229	
Շարունակի	Շարունակիր	չգիտէք:		
պատմիր, Արաք-պատմիր Արաք-	91	ոտքերը լուաց. ոտքերը լուաց	230	
սիա,	92	օրինակ տալով օրինակ ցոյց աս-		
ծանօթներից	ծանօթներից	նրանց, լով նրանց.	"	
մէկը		մոտեցան զին- մոտեցան	231	
շատ ցաւերից	շատ ցաւերից —	ւորները,		
բանտից,	բանտից,	Կրկնիր Արաքսիա:	233	
Անահիտ	Անահիտ	ԺաՄանակ ժամանակ	"	
Գանձակումը	Գանձակումը	ծունո ենք զնումծունը	"	
կան թէ լուսնին քան թէ	142	թէ Արաքսիան Արաքսիան	284	
— Շտա լաւ.	Շտա լաւ.	չ սր նա Նա	236	
նրանց էլ էր սո- սովորցնում,	149	լարն աւ լարնաւ	237	
վորցնում		— Զբ որ Զբ որ	241	
մաքուր պահեն մաքուր պահեն.	«	ստեսած չտեսած	"	
		իսենց	"	

